



一个学术性教育性
出版机构

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中国文化读本(俄文版)

作者

叶 朗
朱良志

外语教学与研究出版社
北京

Readings on Chinese culture

Authors:

Ye Lang
Zhu Liangzhi


/Armenian version/

PUBLISHING RESEARCH AND
TEACHING OF FOREIGN LANGUAGES
BEIJING

Vogi-Nairi

ԶԻՆԱՏԱՆԻ ՄԵՎԿՈՒՅԹԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

Հեղինակներ՝
Ե Լանգ
Զժու Լյանչժի



«Ոգի-Նահրի»
Ստեփանակերտ 2015

ՀՏԴ 008(51)(091)
ԳՄԴ 71+63.3(52)
Զ 509

Չժու Լյանչժի, Ե Լանգ
Զ 509 Չինաստանի մշակույթի քրեստոնատիա:
Թարգմանություն՝ ռուսերենից:
Ստեփանակերտ, «Ոգի-Նախրի» հրատ., 2015 - 236 էջ:

Թարգմանիչ՝ Նվարդ ԱվագՅԱՆ

Քրեստոնատիկ սկզբունքով կազմած սույն գրքում առաջնային գիտելիքներին զուգահեռ՝ հանգամանորեն տրված են Չինաստանի մշակույթի գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական պահերը:
Չեղինակները ներկայացնում են չինական մշակույթի ոգին ու կարեւորագույն արժեքները, հատկապես այնպիսիք, որ ունեն համաշխարհային նշանակություն:
Չայ ընթերցողին կգրավեն անկաշկանդ ու հանրամատչելի լեզվով շարադրված տեքստերը եւ դրանց ուղեկցող նկարազարդումները, որոնք յուրաքանչյուր կենդանացնում են չինական մշակույթի վեհաշուքությունը:

ISBN 978-9939-1-0251-1

ՀՏԴ 008(51)(091)
ԳՄԴ 71+63.3(52)

Original Chinese Text © Ye Lang, Zhu Liangzhi
© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)
All rights reserved.

© «Ոգի-Նախրի» (թարգմանության համար), 2015

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քսաննեկերորդ դարի սկզբից համաշխարհային հանրությունը մեծ ուշադրություն է դարձնում Զինաստանին: Աշխարհի բոլոր մարդիկ ցանկանում են ավելի խոր ու բազմակողմանի գիտելիքներ ստանալ Զինաստանի մշակույթի մասին: Օլիմպիական խաղերը Պեկինում լավ հնարավորություն դարձան դրա համար: Բարեկամներն աշխարհի բոլոր կողմերից ընթացական այս երկորի հինգիազարամյա մշակույթն ու տեսան, թե իրականում ինչ է ներկայացնում իրենից ժամանակակից Զինաստանը:

Յուսերի սույն ժամանակաշրջանում պրոֆեսորներ ե Լանգն ու Չժու Լյանչժին գրել են այս գիրքը՝ չինական մշակույթի իրենց ընկալումներն ընթերցողի հետ կիսելու համար:

Մի քանի տարի առաջ ես ծանոթացած պրոֆեսոր Ե Լանգի հետ, երբ երկուսով աշխատում էինք երեխաների ու երիտասարդության գեղագիտական կրթությանը նվիրված նախագծի վրա՝ փորձելով բարելավել այդ կրթության ընդհանուր պայմանները: Պրոֆեսոր Լանգն ազդեցիկ, ինաստասեր ու գեղագետ գիտնական է ժամանակակից Զինաստանում: 2002-2003 թվականներին նա միաժամանակ Պեկինի համալսարանի երեք բաժինների դեկանն է եղել՝ փիլիսոփայության, կրոնական ուսմունքների եւ արվեստների:

Սույն գրքի մյուս հեղինակն է՝ պրոֆեսոր Չժուն, երկար ժամանակ զբաղվում է չինական ինաստասիրության եւ արվեստների ոլորտի ուսումնասիրություններով: Նա, մասնավորապես, մասնագիտանում է Չեն Բուդուիզմի, կերպարվեստի, գեղագրության եւ բնանկարային այգեգործության մեջ:

Այս գրքում ներկայացված հիմնական գիտելիքներին զուգահեռ՝ հանգամանորեն տրված են Զինաստանի մշակույթի հազվագյուտ առանձնահատկություններն ու հիմնական պահերը: Յեղինակները ձգտել են ներկայացնել չինական մշակույթի ոգին ու կարեւորագույն արժեքները, հատկապես՝ նրանք, որ ունեն համաշխարհային նշանակություն: Յեղինակները նմանապես ջանացել են ցույց տալ չինացիների ներաշխարհի, կենսահայացքների եւ բարոյական հետաքրքրությունների օրինակները եւ հույս ունեն, որ գիրքը Զինաստանում ու նրանից դուրս ընթերցողներին չինական մշակույթին հաղորդակցող հանրածանոթ ներածություն կծառայի, եւ

6 / Զինաստանի մշակույթի քրեստոնատիա

որ իրենց հայացքներն ընթացող ժամանակի հետ կօգնեն՝ հետաքրքրություն առաջացնել ընթերցողների մեջ, որոնք ապագայում կցանկանան ավելի խորը ճանաչել չինական մշակույթի հասկացությունների հիմքերը:

Գրքում արծարծված թեմաները տարատեսակվում փոփոխակվում են՝ հնության իրաշքներից /ինչպիսին են Արգելված քաղաքը, Զինական մեծ պարիսպը, Թրծակավե զորքը, չինացիների ավանդական կացարանները/ մինչեւ հաստատուն արվեստը, գեղագրությունը, բնանկարային այգեգործությունը, Պեկինի օպերան եւ ճենապակին: Յեղինակի գրչի տակ արվեստի այդ առարկաները ներծծված են կենդանի ոգով՝ չինացիների կենսական հետաքրքրությունների մարմնավորման համար: Նույնիսկ «գո» խաղում են հեղինակները նկատել «սրտաբուխ բարեկամությունը» խաղացողների միջեւ, որոնք «լավ խաղ» են խաղում համագործակցության ու փոխգոյակցության սկզբունքով: «Ցիմին տոնի ժամանակ գետի մոտ պատկերի» կամ հին Պեկինի, հին Շանհայի նկարագրության ու վերլուծության մեջ հեղինակներն ընթերցողին պատկերացում են տալիս աշխարհի ու ներդաշնակ կյանքի հանդեպ չինացիների գոհության մասին: Յնարավոր է, որ դա՝ չինական մշակույթի՝ հազարամյակներով գոյատեւելու պատճառներից մեկը:

Անկաշկանդ ու գրավիչ լեզվով շարադրված տեքստը եւ նրան ուղեկցող նկարագրումները չեն միայն, որ կենդանացնում են չինական մշակույթի բազում պահերի վեհաշությունը: Ես գտնում եմ, որ համայն աշխարհի մեր բոլոր բարեկամները հսկայական հետաքրքրություն կցուցաբերեն այս գրքի նկատմամբ:

外語教：

Լի ԱԱՆՑԻՆ

ՉԺՀ փոխվարչապետ՝ 1993-2003 թթ.

Բովանդակություն

Իմաստնություն եւ հավատ

1. Կոնֆուցիուսի հայացքները կյանքի եւ մարդկության վերաբերյալ -----	14
Կոնֆուցիուսը երկնքի մասին. ամեն ինչի աղբյուրը -----	15
Կոնֆուցիուսը մարդկանց մասին. ժեն եւ լի -----	16
Կոնֆուցիուսը կյանքի վիճակի մասին -----	18
2. Լառ Ցզիի չգործունության փիլիսոփայությունը -----	21
Բնականությունը եւ չգործունեությունը -----	22
Չկայածության փիլիսոփայությունը -----	24
Վերադարձ առ նախածին վիճակին -----	26
3. Ցուն Ցզիի «Պատերազմի արվեստը».	
Աղբյուր պատերազմների մասին բոլոր գրքերի համար -----	28
Սուն Ցզիի ռազմավարական մտածողությունը -----	28
Սուն Ցզիի դիալեկտիկական մտածողությունը -----	31
Սուն Ցզիի նախազգուշացումը պատերազմի դեմ -----	33
Իմաստնության գերակշռությունը ռազմական ուժի նկատմամբ -----	34
4. Երկնքի տաճարը. մեծարանք եւ երախտագիտություն -----	35
Կայսերական զոհաբերություններ -----	35
Վախը բնակության նկատմամբ -----	37
Ծփումը մարդկության ու երկնքի միջեւ -----	38
5. Բնապահպանության հասկացությունը չինական	
ավանդական նշակույթում -----	40
«Կյանքի» փիլիսոփայությունը -----	40
Բնապահպանության գեղագիտությունը -----	43
Մարդիկ եւ նրանց վերաբերմունքը	
Մյուս կենդանի էակների նկատմամբ -----	43

Ստեղծագործական ունակություններ եւ փոխանակում

6. Զինական իիերոգլիֆները -----	48
Տրամադրության խորհրդանշանները -----	48
Օլիմպիական նրբագեղ խորհրդանշանները -----	50
7. Մետաքսի մեծ ծանապարհը -----	52
Չժան Ցյանը՝ նախագնաց -----	53
Յայտնագործություն «Արեւմուտքի» համար -----	54
Կուչեի քարայրների որմնանկարները -----	56

8 / Զինաստանի մշակույթի քրեստոնատիա

8. Մեծ Տանի բացորոշությունը -----	59
Արվեստ աշխարհի բոլոր մասերից -----	60
Կրոնական բազմազանություն -----	61
Բուդդայական ծշմարտության որոնումներում -----	62
Չանանը՝ գործարար ու մշակութային կյանքի կենտրոն -----	64
9. Զժեն Խեի ճանապարհորդությունը դեպի Արեւմտյան ծովեր -----	66
Առաջադեմ նավագնացության քաղաքակրթությունը -----	67
Խաղաղության տարածում -----	67
10. Զինական մեծ պարիսպը -----	71
Խաղաղության ձգտում -----	71
Բաժանում եւ միավորում -----	72
Զինական մեծ պարսպի ոգին -----	74
Զինական մեծ պարսպի հրաշքները -----	75
11. Արգելված քաղաքը. գեղեցիկ ու տպավորիչ -----	77
Վիշապի փակ ուրվագծերը -----	77
Արգելված քաղաքի գույները -----	80

Արվեստ եւ գեղագիտություն

12. Երաժշտություն. կառավարում է երկիրը, սնում է մտքերը -----	83
Կառավարում երաժշտության միջոցներով -----	83
Մտքի մխիթարությունը երաժշտության օգնությամբ -----	86
13. Բրոնզե շինվածքների հոգեւոր էությունը -----	88
Յսկա դինը յուի համար -----	88
Լոտոսի եւ կրունկի կաթսայիկները -----	89
Թռչող ծիծեռնակից առաջ անցնող վարգաձին -----	91
14. Թրծակավե զորքը -----	93
Թրծակավե զորքի հայտնաբերումը -----	93
Կենդանի քանդակներ -----	95
15. Բուլղարի հավերժական ժայռը -----	99
Մոգան քարայրի գեղեցիկ գուանինը -----	99
Մայզղիշանի քարայրների ժպտացող Բուլղար -----	101
Լունմենի քարայրների Լուսավոր Բուլղար -----	102
Ցինչոնուի Կարեկցող Բուլղար -----	103

16. Գեղագորության թոշող տողերը -----	105
Ոիբնը գեղագորության մեջ -----	105
Վաճ Սիչժին եւ Լանտին տաղավարի հավաքածուի համար Նախարանը -----	108
Զեռագիր տառատեսակի «փակ ոճը» -----	109
17. Ողողված թանաքի արվեստի իրապույրը -----	110
Մել-սպիտակ աշխարհ -----	111
Կերպարի ձեւավորումը նմանության սահմանից անդին -----	112
Սուն եւ Յուան հարստությունների բնանկարային գեղանկարչությունը -----	115
Նորույթները Մին եւ Ցին հարստություննրից հետո -----	117
18. ճենապակին չինական մշակույթի այցետոնսը -----	119
Բնական առարկան -----	120
Կապտաճերմակ ճենապակին -----	122
Խորաթափանց ու «փակ» աշխարհը -----	123
Զեւն ու կերպարը -----	125
19. Յանցզի գետից դեպի հարավ այգիները -----	127
Յիշարժան վայրերը տանող դարձդարձիկ ճանապարհները -----	127
Դյութիչ քարերը -----	129
Տարածության զգացողությունը -----	130
20. Պեկինի օպերան -----	136
Պեկինի օպերայի դիմակների հնայքները -----	136
Պեկինի օպերան. Երգեր, բանաստեղծություններ, գործողություններ եւ մարտարվեստ -----	137
«Վիրտուալ աշխարհի» գեղեցկությունը -----	140
«Շետեւելով պիեսին՝ հետեւում ես մեծ դերասաններին» -----	142
Պեկինի օպերայի մեծագույն դերասան Մեյ Լանֆանը -----	143
21. Արանչելի ժողովրդական արվեստի բազմազանությունը -----	145
Կլուազոնե. նյութական մշակույթի առարկաներ՝ անգին քարերի փայլով -----	145
Տոնական տրամադրությունը բարձրացնող ամանորյա նկարները --	146
Թղթից կտրածոներ. մկրատի ստեղծած աշխարհ -----	148
Ասեղնագործություն. տասը մատները՝ հանց գարնանային քամի ---	149
Ստվերային պիես. լույսի եւ ստվերի արվեստը -----	150

Ժողովրդական բարքեր

22. Քաղաքային սովորույթները գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ -----	154
Բյանիս գետի բնանկարը հորիզոնական թղթագլանի վրա -----	154
Յուլիսային Սուն հարստության ժամանակների քաղաքային կյանքը -----	158
23. Յին Պեկինի սովորույթներն ու հրապույրը ----- Ուտելիքը հին Պեկինում -----	161
Ծառուղիները ու վաճառորդների աղմկալից կանչերը -----	163
Աղմկաշատ Տյանցգյան -----	164
Տոնավաճառները հին Պեկինի տաճարներում -----	166
Ժամանցը հին Պեկինում -----	167
24. Յին Շանհայի ժամանակակից նրբագեղությունը ----- Ամենաբաց քաղաքը -----	170
Նորաձեւություն որոնողները -----	173
Շիկումնենը եւ ծառուղիների սովորությունները -----	175
25. Ավանդական հագուստը ----- Տան հարստության նրբագեղ նորաձեւությունը-----	179
Գեղեցիկ չեղնասամը -----	180
Բնական մոմից կնիքներ -----	181
Թատերական շքեղ կոստյումներ -----	184
26. Զինաստանի խոհարարական նրբահամակները----- Տեղական չինական խոհանոցը -----	186
Յուրաքանչյուր կերակրատեսակ իր պատմությունն ունի -----	188
Ձերմություն եւ հյուրընկալություն՝ արտահայտված ուտելիքում ---	190
Զին խոհարարների գերազանց ընդունակությունները -----	191
27. Կյանքը բուրումնալից թեյի հետ ----- Թեյի կախարդական հատկությունները -----	193
Թեյի հաճույք ստանալու ուղիները -----	194
Թեյի հաճույք ստանալու ուղիները -----	196
Թեյընապումը եւ ժողովրդական սովորությունները -----	200
28. Բնակելի շենքներն ու ծառուղիները ----- Սըխեյուանը Պեկինում -----	202
Յին քաղաքը Լիցոյանում -----	205
Անխուեյի սպիտակ պատերն ու սեւ կղմինդրը -----	208
Սիտանը խաղաղ ջրի աշխարհ է -----	210

29. Մարտական արվեստները Եւ Ցուցայույլ	-213
Մարտարվեստները Շառլին տաճարում	-213
Սահուն մարտ ստվերի դեմ	-215
Մարտարվեստներ սրտից	-216
Ցուցայու՝ դեպի բարձր երկինք	-217
30. Գո՝ ուղեղների խաղ	-222
Խաղը Փտած կացնի սարում	-222
Խաղի իմաստնությունը	-223
Խաղաղ խաղ	-224
Խոսակցություն ձեռքերով	-226
Զինաստանի պատմության համառոտ ժամանակագրություն	-227
Տեղանունների տեղեկատու	-229

Իմաստնություն եւ հավատք

Մարդկությունն իր գլխին լոկ մեկ երկինք ունի: Այն, թե մենք ինչպես ենք դասավորում մեր կյանքը, եւ այն, թե ինչպես ենք ներդաշնակության մեջ ապրում՝ չինական ավանդական մտածողության էությունն է: Զինական մշակույթում մարդկային կյանքն ամենից առաջ դիտվում է որպես բնության մի մասը, եւ որպես այդպիսին՝ մեզ համար գոյատեւելու միակ միջոցը բնության հետ ներդաշնակ ապրելն է: Քաղաքակրության հիմնարար նշանակությունը կայանում է ամբողջ աշխարհում խաղաղություն ստեղծելու, ինչպես նաև՝ մարդու եւ բնության միջեւ հակամարտություններից խուսափելու մեջ: Բնությանը թելադրելու փոխարեն մարդիկ պետք է երախտագետ լինեն նրան:

Զինական մշակույթի երկրորդ առանձնահատկությունը նրա հատուկ ուշադրությունն է մարդկանց միջեւ ներդաշնակ հարաբերությունների նկատմամբ: Անհատը չի կարող ապրել առանց համայնքի եւ հասարակության: Այսպիսով, չինական մշակույթը ներդաշնակության է ձգտում աշխարհում՝ անհատների միջեւ բարեկամության, ընտանիքների միջեւ փոխօգնության եւ ազգերի միջեւ հարգանքի ստեղծման միջոցով:

Երրորդը. չինական մտածողությունն ընդգծում է ինքնարտացոլումը: Մարդիկ պետք է պատկերացում ունենան ոչ միայն արտաքին աշխարհի մասին, այլև, որ շատ ավելի կարեւոր է, բարելավեն իրենց մտքի վիճակը: Սիայն այն ժամանակ, երբ մարդիկ կդադարեցնեն բնության դեմ կովելու իրենց բոլոր փորձերը, մենք կկարողանանք ապրել բնության հետ ներդաշնակ կյանքի փիլիսոփայության համաձայն:

Զինաստանի մշակույթի քրեստոնատիա / 13





1. Կոնֆուցիուսի հայացքները կյանքի եւ մարդկության վերաբերյալ

Կոնֆուցիուսը /մ.թ.ա 551-479թթ./, չինական արտաքերմանբ՝ Կուն Ցզի /Ցյու ազգանուն եւ Չժունի նականուն/, ապրել է Լու իշխանության Չունցյու ժամանակաշրջանուն /մ.թ.ա.770-476 թթ./, Ցզոռուիում /այժմ՝ Շանդուն նահանգի Ցյույֆու/: Մեծ մտածող ու մանկավարժ, կոնֆուցիուսականության հիմնադիր Կոնֆուցիուսը համարվում է հին չինական ինաստուն: Նրա բառերն ու կյանքի պատմությունը գրի են առել հետեւորդներն ու վերջիններիս աշակերտները՝ Լունյույ գրական ժողովածուի մեջ /«Զրույցներ եւ դատողություններ»/:

Չինական մշակույթի դասական ստեղծագործություն հանդիսացող «Զրույցներ եւ դատողություններ»-ը Կոնֆուցիուսից հետո Չինաստանի 2000-ամյա պատմության ընթացքում ազդեցություն է գործել բոլոր մտածողների, գորդների ու քաղաքական գործիչների վրա: Առանց այդ գոքի ոչ մի գիտնական չէր կարող ստույգ հասկանալ Յին Չինաստանի մշակույթը կամ բնակչի ներաշխարհը:

Աշխարհի ու մարդկանց մասին Կոնֆուցիուսի դատողությունների մեծ մասը համապարփակ մարդկային արժեքներ է արտահայտում: Յնարավոր է, որ հենց դրա համար են Կոնֆուցիուսի դատողությունները 21-րդ դարում էլ գրավում ոչ միայն չինացիների, այլև ամբողջ աշխարհի մարդկանց ուշադրությունը:

Կոնֆուցիուսը Երկնքի մասին. ամեն ինչի աղբյուրը

Շան /մ.թ.ա.1600-1046/ եւ Չժոու /մ.թ.ա.1046-2565/ հարստությունների տիրապետության ժամանակներում Երկնքի տարածված հասկացությունը եղել է Աստծո մարմնավորումը, ինչն ազդել է Կոնֆուցիուսի դատողությունների վրա: Թեեւ անբողջությամբ վերցված՝ Կոնֆուցիուսը Երկինքը հանարել է բնության մաս: Նա ասում էր. «Երկինքը բառերով չի արտահայտվում: Այն արտահայտվում է տարվա չորս եղանակների փոփոխությամբ եւ կենդանի բաների աճով»: Կոնֆուցիուսի մոտ ակնիայտ է Երկնքի՝ որպես բնության մասի, ընկալումը: Ավելին, Երկինքը չի եղել մարդկությունից պարզապես անջատ կենսական մեխանիզմ: այն եղել է կյանքի մեջ աշխարհ եւ կյանքի արարման գործընթաց: Մարդկային կյանքը եղել է բնության մի մասը:

Երկնքի համեմատությունը կենսարարման հետ եղել է կյանքի նկատմամբ նոր հայացք: Կյանքի ստեղծման բնական գործընթացը «Երկնային ուղի» էր: Յետագայում այս գաղափարը մշակվել է «Փոփոխությունների գրքում» /Իցգին/: Որպես կյանքի արարման բնական գործընթաց՝ Երկինքը եղել է կենդանի ամեն ինչի եւ բոլոր արժեքների աղբյուրը: Դա եղել է «Երկնքի առաքելությունը»: «Փոփոխությունների գրքում» ասվում է. «Երկրի ու Երկնքի մեջ առաքելությունը կյանքի արարման մեջ»: Կյանքի ստեղծման բնական գործընթացում Երկնքի խնդիրներն էին. կյանքի արարունը, նրա պաշտպանությունը եւ բարելավումը: Երկինքն ստեղծել է մարդկությանը, եւ մարդիկ պարտավոր են հետեւել այդ նպատակներին: Այլ կերպ ասած՝ մարդիկ ծնվում են «Երկնային առաքելության» համար: Մարդկային կյանքի նշանակությունը հենց դա է:

Երկինքը Կոնֆուցիուսի մոտ ունեցել է նաեւ անձեռնմխելիության տարր՝ ելնելով նրանք, որ այն հանդիսանում է կյանքի աղբյուր: Այսպիսով՝ Կոնֆուցիուսը մարդկանցից պահանջում էր վախենալ Երկնքից: Նա ասում էր՝ արժանապատիվ մարդը պետք է «հարգի իր Երկնային առաքելությունը», հնագանդ լինի եւ ապրի կյանքի մասին հոգալու, այն բարելավելու Երկնային նպատակով:

Կոնֆուցիուսի ազդեցության ներքո իին չինացիները զարգացրել են Երկնքի հանդեպ ակնածանքի ու հավատի զգացումը: Նրանց համար Երկինքը եղել է խոր գաղտնիքով ամենաբարձր անձեռնմխելիության եռւթյուն, որը մահկանացուների կողմից երբեք չի կարող լիովին հասկացված լինել: Այն չի եղել գերբնական, մարմնացյալ աստվածություն. Եղել է կենսածին աշխարհ: Որպես բոլոր էակներից ամենաբանականը՝ մարդը պետք է լրջորեն վերաբերվի Երկնքի առաքելությանը, կյանքին վերաբերվելով հոգատարորեն: Եթե որեւէ մեկը «տգետ է եւ իր Երկնային առաքելության հանդեպ անհարգալից»՝ սպանելով ու հաշմելով կյանքը, նա պետք է պատժվի

Երկնքի կողմից: Կոնֆուցիուսն ասել է. «Երկնքին վիրավորողն աղոթելու ոք չունի»: Կոնֆուցիուսի հարգանքն ու հավատը երկնքի նկատմամբ իրենից հին չինացիների կրոնական սպիրիտուալիզմի տեսակ էր ներկայացնում: «Երկնքին երկյուղի ու խորհրդի» կոնֆուցիուսական նախազգուշացումը 21-րդ դարում էլ է պահում իր նշանակությունը, քանի որ մարդկային հանրությունը հսկայական ուշադրություն է հատկացնում բնապահպանությանը: Մարդիկ, իրոք, պետք է ունկն դնեն բնության ձայնին, հարգեն ու սիրեն այն՝ որպես կյանքին անհրաժեշտ աշխարհի: Դա մեր սուրբ առաքելությունն է, որն ինաստ է տալիս ամբողջ մարդկային կյանքին:

Կոնֆուցիուսը մարդկանց մասին. Ժեն (仁) եւ Լի (礼)

Ժեն եւ լին մարդկանց մասին Կոնֆուցիուսի երկու հիմնական ուսմունքն են: Եթք ուսանող Ֆան Չին նրան հարցրեց Ժենի մասին, Կոնֆուցիուսն ասաց. «Մարդկային սերն է»: Սա Ժենի ամենակարեւոր մեկնությունն է: Կոնֆուցիուսի կողմից: մարդկանց հանդեպ սերը բազմակողմանի է: Յետագայում Կոնֆուցիուսն ընդգծել է, որ սերը պետք է սկսվի «ծնողների հանդեպ սիրուց»: Նա հավատում էր, որ ոչ ոք չի կարող սիրել մարդկանց՝ եթե չի սիրել իր սեփական ծնողներին: Կոնֆուցիուսը Ժենի հիմքերին է վերագրել «հարգանքը ծնողների նկատմամբ ու եղբայրական պարտքը»: Կենտրոնականում եւ անփոփոխականում /Չժուն յուն/ մեջբերում են Կոնֆուցիուսին. «Մարդկանց հանդեպ մեծագույն սերը՝ դա սերն է ծնողների նկատմամբ»: Նա նաեւ ասել է. «Երեխաները չպետք է հեռանան ծնողներից, քանի դեռ նրանք կենդանի են: Եթե նրանք ընտրության տեղ չունեն, ապա պետք է իմանան չափը»: Նա նկատի չի ունեցել, թե Երեխաներն ընդհանրապես չպետք է քողնեն ծնողներին: Այն, ինչ նկատի է ունեցել ինքը, այն է, որ Երեխաները քանի դեռ հեռու են տնից՝ չպետք է այնպես անեն, որ ծնողներն անհանգստանան: Եվ էլի. Կոնֆուցիուսն ասել է. «Չավակները չպետք է նոռանան իրենց ծնողների տարիքի մասին: Նրանք պետք է ուրախանան ծնողների առողջության ու երկարակեցության համար: Նրանք նաեւ պետք է անհանգստանան ծնողների տարիքի մասին»:

Ժենի ներքո Կոնֆուցիուսը Ենթադրել է բազմակողմանի սերը ծնողների նկատմամբ: Այդ դեպքում մարդիկ ինչպես սպիտի սիրեն միմյանց: Կոնֆուցիուսն ասել է. «Մարդը պետք է իմանա այն մասին, որ ուրիշների մոտ էլ կարող են լինել այնպիսի ցանկություններ, ինչպիսին կան իր մոտ: Կատարելով մյուսների ցանկությունները, նա այդպիսով կատարում է իր ցանկությունները»: Յետքնարացին նա ասել է. «Ուրիշներին մի՛ արա այն, ինչը չէիր ուզենա, որ անեն քեզ»: Այսպիսով, անհատից ընտանիքին, ընտանիքից հասարակությանը մարդու մոտ պետք է զարգանա սերն ուրիշ մարդկանց նկատմամբ: Կոնֆուցիուսականության մեծ գիտնական Սենցիուսը /մ.թ.ա. 382-289/ ընդհանրացրել է կյանք հասկացությունը. «Սեր ծնողների նկատմամբ, սեր մարդկանց նկատմամբ, սեր աշխարհում ամեն ինչի հանդեպ»:



«Եղմիկի լացը թխկիների անտառում». Ակարը պատկանում է Սուն հարստության անհայտ գեղանկարչի վրձնին: Կոնֆուցիոսի աշակերտների կողմից բարձր գնահատվող՝ գոհության ու ներդաշնակության պատկեր:

Կոնֆուցիոսի «Մի՛ արա ուրիշներին այն, ինչը չէիր ցանկանա, որ անեն քեզ» դոկտորինը մարդկության համար մինչ այսօր էլ ճշմարիտ է:

Լին կապ ունի ծիսակատարությունների, ավանդույթների եւ սոցիալական կյանքի նորմերի հետ: Դրանցից Կոնֆուցիոսն առանձնացրել է թաղման ծիսակարգն ու վաղնջական պաշտամունքի ծեսը՝ որպես ամենակարեւորները, որովհետեւ դրանք արտածվում են մարդկային զգացմունքներից: Նա ասում էր. «Երեխան չաետք է ծնողական գիրկը թողնի՝ քանի դեռ չի լրացել երեք տարին»: Իրեն բնորոշ է եղել սերը ծնողների նկատմամբ: Մահացած ծնողների համար եռամյա սուգը զավակների սիրո եւ հիշողության արտահայտություն է եղել:

Կոնֆուցիոսը լիին հատուկ ուշադրություն է դարձել՝ որպես հասարակարգի պահապանի, կայունության եւ ներդաշնակության: Անալեկտներում ասված է. «Լիի դերն այն է, որպեսզի մարդկանց շրջանում ներդաշնակություն պահպանի»:

Լին նաեւ փիլիսոփայական իմաստ է ունեցել: Այն դեպքում, երբ անհատն ունի կյանքի սահմանափակ տեւողություն, կյանքը բնությունում հավերժական է: Այն տրվում է ծնողների կողմից եւ շարունակվում երեխաների միջոցով: Այս դեպքում անձի սահմանափակ կյանքը միանում է բնության անսահմանափակ կյանքի հետ. այդպիսով, անձի ցանկությունն առ հավերժական կյանքը վերածվում է իրականության: Թաղման ծիսակարգի եւ վաղնջական պաշտամունքի ծեսի միջոցով մարդիկ կարող են զգալ կյանքի հավերժական տեւողությունը՝ ուշադրության առնելով կյանքի արժեքը: Դա մարդկանց փոխաբերականորեն միխթարություն է տալիս:

Կոնֆուցիուսը կյանքի վիճակի մասին

Կոնֆուցիուսից առաջ միայն ազնվականությունն ուներ սովորելու իրավունք: Նա եղել է մասնավոր կրթության նախաձեռնողը չինական մշակույթում: Պատմական գրառումներին համապատասխան՝ Կոնֆուցիուսը դասավանդել է շատ տարիներ եւ ունեցել է 3000 աշակերտ: Նրանցից 72-ն աչքի են ընկել «Վեց արվեստներում» /ծեսեր, երաժշտություն, նետաձգություն, սայլավարում, գեղագրություն եւ մաթեմատիկա/: Մեծ մանկավարժ Կոնֆուցիուսը հետագա սերունդների կողմից մեծարված է եղել որպես «հիմաստունյաց իմաստուն»:

Կոնֆուցիուսը հավատում էր, որ սովորեցնելու իիմնական նպատակն «արժանի անհատի» զարգացումն է, որը պետք է ունենա ուժեղ բնավորություն եւ հոգեւոր խելք: Այդպիսի անհատը պետք է կարեւոր սոցիալական պատասխանատվություն վերցնի իր վրա եւ իր ավանդը ներդնի հասարակությանը: Կոնֆուցիուսն առանձնացրել է բարձր իդեալները, մեծ առաքինությունը, «Վեց արվեստների» սերը՝ որպես կրթության իիմնական սկզբունքներ: Դրանցից ամենակարեւորը առաքինությունն է: Նրա աշակերտները ներգրավված են եղել տարբեր մասնագիտություններում՝ ներառյալ քաղաքականությունը, առեւտուրը, կրթությունը, դիվանագիտությունը, ծիսակարգերը եւ հին գրքերի դասակարգումը: Ինչով էլ որ նրանք զբաղվելիս լինեին՝ բոլորը ցանկացել են հարստացնել գիտելիքները մարդասիրական գիտություններից եւ բարձրացնել իրենց առաքինությունը:

Կոնֆուցիուսը ուշադրություն է հատկացրել բարոյագիտական կրթությանը: Նա ասում էր. «Երգերի գիրքը /Շի զգին/ ուսումնասիրելը ոգեւորում է ոգուն եւ օգնում զնահատել գեղեցկությունը:

Չժոռու հարստության /Չժոռու լի/ ծեսերն ուսումնասիրելը մարդուն օգնում է իրեն պահելու լուսավորյալին վայել: Երաժշտություն ուսումնասիրելը բարձրացնում է ոգին եւ օգնում կյանքից հաճույք ստանալուն: Նա նաև ասում էր. «Բավական չէ պարզապես իմանալ առաքինության ամենաբարձր չափանիշը /այսինքն մարդկանց նկատմամբ սերը/, հարկավոր է այն դարձնել նպատակ»:

Մի անգամ Կոնֆուցիուսն իր աշակերտներից մի քանիսին խնդրել է խոսել ցանկությունների մասին: Ցզի Լուն եւ Ժուն Ցուն ցանկացել են պետությունը կառավարելու հնարավորություններ: Գումանուն Զին ցանկացել է դառնալ ծեսերի վարպետ: Ցզին Դյանն էլ ասել է. «Իմ ցանկությունը տարբերվում է մյուսների ցանկությունից»: Դա ընդունելի է՝ ասել է Կոնֆուցիուսը: «Մենք խոսում ենք միայն մեր անձնական ձգտումների մասին,- ասել է Ցզին Դյանը:- Իմ երազանքն է ուշ գարնանը հագնել գարնանային հանդերձ եւ լողանալ գետում հինգ կամ վեց հասուն մարդկանց ու վեց կամ յոթ երեխաների հետ: Մենք բավականություն կստանայինք քամուց՝ որտեղ մարդիկ աղոթում են անձրեւի մասին: Յետո բոլորս կգնայինք տուն՝ երգելով»:



Տիգր գետի մոտ ժպտացող երեք բուդայական վարպետներ: Սուն հարստության անհայտ գեղանկարչի կտորվ: Ցզին արեւելյան հարստության /334-416/ բուդայական վարպետ Խուեյ Յուանը մայրամուտին հրաժեշտ է տալիս երկու հյուրի:

Կոնֆուցիոնականության գիտնական եւ բանաստեղծ Տառ Յուանմինին /մոտ. 365- 427/ եւ դառյականության հոգեւորական Լու Ցզինչժիին /կյանքի տարիները հայտնի չեն/: Նկարում նրանք ժպտում են՝ անցնելով Տիգր գետը, անգամ չնկատելով, որ հասել են մյուս ակը: Դրամով Խուեյ Յուանը խախտում է սեփական սկզբունքը. հյուրերին ճանապարհել՝ գետը չանցնելով:

Կոնֆուցիոնը թեթեւացած շունչ է քաշել. «Ես կիսում եմ Ցզին Դյանի ցանկությունը»: Չորս ուսանողների տարբեր ցանկություններն արտացոլել են նրանց հայացքները կյանքի նկատմամբ: Ցզին Դյանի հետ Կոնֆուցիոնի համաձայնությունը ցույց է տալիս, որ թեեւ նա ընդգծել է անհատի ներդրումը հասարակությանը, միեւնույն ժամանակ գտել է, որ կյանքի բարձրագույն վիճակը եղել է մարդկանց միջեւ ներդաշնակությունը եւ մարդկանց ու բնության միջեւ ներդաշնակությունը: Նա կյանքի նկատմամբ ունեցել է իսկական գեղագիտական հայացք: Կոնֆուցիոնի ազդեցության ներքո հետագա սերունդների չին մտածողները հավատում էին, որ ուսանողներն ու գիտնականները պետք է ոչ միայն բարձրացնեն իրենց գիտելիքները, այլեւ, ինչը շատ կարեւոր է, ընդլայնեն ճանաչողության սահմաններն ու բարոյական կերպարը: Այլ կերպ ասած պետք է անընդմեջ որոնեն կյանքի լավագույն նշանակությունն ու արժեքը: Արդի շատ գիտնականներից շատերը գտնում են, որ չինական իմաստասիրության մեջ կյանքի նկատմամբ հայացքի տեսությունն ամենաարժեքավորն է, եւ ամենն սկսվել է Կոնֆուցիոնից:



Եջ Անալեկտներից՝ Սուն հարստության
կոնֆուցիոնականության մեջ գիտնական
Զժու Միի /1130-1200/ անոտացիաներով:



Խամբի տաղավարը
Ցզյանսու գավառի
Ցզիչանի զրուայգում:
«Խամբի»՝ նշանակում է
«առգուալիչ կանաչ»,
ինչը

կոնֆուցիոնականության
կատարելատիա է
ներկայացմուն,
բանականության
բացություն եւ
բովանդակություն:



2. Լառ Ցզիի չգործունության փիլիսոփայությունը

«Լառ ցզի» գիրքը գրվել է մոտավորապես մ.թ.ա. վեցերորդ դարում: Նրա հեղինակը համարվում է Լառ Դանը /կամ՝ Լառ Ցզի/: Նա Գարնան ու Աշնան ժամանակաշրջանի /մ.թ.ա. 770-476/ ճգնավոր էր: Լառ Դանի մասին քիչ գրառումներ են պահպանվել: Ասում են, որ նա մի ժամանակ ցածր պաշտոն է զբաղեցրել՝ Եղել է Չժոռու հարստության /մ.թ.ա. 1046-256/ թագավորական դատարանի արխիվային փաստաթղթերի պատասխանատուն: Լառ Դանի հսկայական գիտելիքների պատճառով նույնիսկ Կոնֆուցիուսն է շատ մղոններ կտրել անցել՝ նրա հետ խորհրդակցելու համար:

«Լառ Ցզին», նույնչափ հայտնի՝ որբան «Դասական ճանապարհն ու Առաքինությունը /Տրակտատ Դաոյի մասին/», կազմված է ընդամենը 5000 հիերոգլիֆից: Գրի 81 պարագրաֆները բաժանված են 2 մասի. Դառ /Ուղի/ եւ Դէ /Առաքինություն/: Իր երթյամբ համառոտ այդ գիրքը նշանակալից դեր է խաղացել չինական մշակույթում: Այն դարձել է դառսիզմի՝ Յին Չինաստանում կոնֆուցիուսականությանը զուգահեռ գոյություն ունեցած իմաստասիրական դպրոցի, հիմքը: «Լառ Ցզի» միտքը հիմք է ձեւակերպել դառյականության համար, որը տեղական կրոնական ամենաազդեցիկ դպրոցն էր Չինաստանում: Այն նմանապես ազդել է չին ազգի բնութագրի, մտքի եւ էթնիկական ընկալման ձգտումների վրա: Եվ ներկայումս էլ է «Լառ Ցզին» դեր խաղում չինական մտածողության զարգացման մեջ:

«Լառ Ցզին» եվրոպական աշխարհին առաջին անգամ ներկայացվելէ մոտավորապես 15-րդ դարում ու դարձել Յին Չինաստանի՝ առավել թարգմանվող գիրքը: Լառ Ցզիի խրատաբանական հայացքներից շատերը հիմնվել են նրա «բնականության եւ չգործունության» փիլիսոփայության վրա:

Բնականությունը եւ չգործունեությունը

Բնականությունը Լառ Ցզիի փիլիսոփայության կարեւոր հայեցահամակարգն է: Այն վերաբերում է կեցության բնական վիճակին, բնությանը հետևելու դիրքորոշմանը: Լառ Ցզին ընդգծում էր, որ աշխարհում ամեն ինչ ունի կեցության ու զարգացման իր վիճակը. հավքը թեւում է երկնքում, ձուկը՝ լողում ջրում, ամպերը՝ սահում երկնքով, ծաղիկները՝ ծաղկում ու թառանում: Այդ բոլոր առեղջվածները հանդիպում են անկախ ու բնականորեն՝ առանց մարդու միջամտության, եւ մարդը պետք է ձգտի բնական ոչինչ չփոխել: Լառ Ցզին մարդկանց պատվիրում էր ձեռք քաշել աշխարհը կառավարելու ցանկացած փորձից: Բնական ուղիով առաջնորդվելն է մարդկանց ու աշխարհի միջեւ հակամարտությունների լուծնան ուղին:

Չգործունեությունը Լառ Ցզիի փիլիսոփայության մյուս կարեւոր հայեցահամակարգն է: Դա «բնականության» երաշխիքն է: Լառ Ցզին ասում էր. «Դառն կամ ուղին գործում է չգործունեության միջոցներով», դրա տակ նա հասկանում էր այն, որ մարդը պետք է չգործունորեն սպասի ձեռքբերումների՝ ընդունին ոչինչ չանելով: Նա նմանապես չի ժխտել մարդու ստեղծագործական ընդունակությունները: Այն, ինչ նա է նկատի ունեցել՝ այն է, որ մարդու գործունեությունը պետք է կառուցված լինի բնականության հիմունքի վրա՝ ոչ թե բնության ոիթմերին միջամտելու փորձերի: Մարդու ստեղծագործական գործունեությունը պետք է համաձայնեցված լինի բնական ուղու հետ:

Լառ Ցզին ասում էր. «Մեծ արվեստը սովորաբար պատկերացվում է որպես հիմնարություն»: Դա «բնականության» եւ «չգործունեության» երթյունն է: «Մեծ արվեստը» պատկանում է Վարպետության բարձր մակարդակին, ծագում է այնպես բնականորեն, որ ընդհանրապես արվեստի նման չէ: Մարդ կարող է արվեստի հասնել մարզումների միջոցով, բայց «մեծ վարպետությունը» գերազանցում է արվեստին:

Լառ Ցզիի համար խարեւության միջոցներին դիմելն անօգուտ ծշմարտություն է, որը հանգեցնում է միայն բացասական արդյունքի: Նրանք, ովքեր դիմում են խարեւության միջոցներին, խելոք չեն, ուրեմն եւ՝ բնական չեն: Խարեւությունը վնաս է հասցնում բնականությանը եւ դրանով իսկ՝ կյանքի ներդաշնակությանը:

Ինաստասեր Զժուան Ցզին /ն.թ.ա. 369-286/, որ Լառ Ցզիի փիլիսոփայության կողմնակիցն էր, պատմում էր «անօգուտ ծառի» մասին պատմությունը:

*Լառ Ցզիի գրառումներով բամբուկե
տողազուերը, որոնք հայտնաբերվել են
Գոդյանում /Խուրեյ գավառ/, պեղումների
ժամանակ: Նրամբ գտնվում էին Չու ուղելից
ազնվականի /որն ապրել է մոտավորապես
մ.թ.ա. 300 թվականին/ դաճարանում:
Այսօրվա վրա դա Լառ Ցզիի տեքստերի
ամենավաղ հիշատակումն է:*

...Ատաղձագործն իր աշկերտի հետ
գնում էր Ցի գավառը՝ ճանապարհին դեմ
են առնում տեղի Երկրի Աստվածություն
տաճարի մոտ գտնվող հսկա ծառին: Վեր-
ջինիս բունը մի քանի տասնյակ մետր
լայնություն ու սարի բարձրություն ուներ:
Նրա ճյուղերի տակ կարող էր հազար խոշոր եղջերավորների նախիր տե-
ղավորվել: Մինչ մարդիկ խնբված՝ խոնարհվում էին հիասքանչ ծառին,
ատաղձագործն անցնում է՝ չնայելով իսկ նրա կողմը: Աշկերտը, սակայն,
հիասթափված էր: Ծառը մանրազնին ուսումնասիրելուց հետո նա վազեց
հասավ վարպետին ու հարցրեց. «Նույնիսկ ձեր աշկերտը դառնալով՝ ես եր-
բեք չեմ տեսել այդպիսի գերազանց փայտելեն: Բայց դուք անցաք կողքով՝
չնայելով ծառին: Ինչո՞ւ»: Վարպետը պատասխանեց. «Այդ ծառի փայտն
անօգուտ է: Եթե դու նրանից նավակ պատրաստես, այն կիսորտակվի: Եթե
դագաղ պատրաստես՝ շուտով կփսի: Եթե ամանեղեն պատրաստես՝ արագ
կմաշի: Այդ ծառի փայտն անօգուտ է: Դրա համար էլ այդ ծառն այդքան եր-
կար ժամանակ տեղում կանգնած է»: «Անօգուտ ծառի» մասին իմաստու-
թյունն ընկած է ուղիղ նրա անօգուտության կամ բնականության մեջ:



Լառ Ցզիի տեքստերը՝ Յուան հարստության գեղագիր Սյամյույ Շուի կատարմամբ
/1246-1302/:

Զկայացածության փիլիսոփայությունը

«Բնականության» եւ «անօգուտության» հիմքում Լառ Ցզին ենթադրել է «թույլ լինելով՝ ուժեղին հաղթահարելը»: Լառ Ցզիի կյանքի դարաշրջանը հագեցած է եղել վերջ չունեցող պատերազմներով: Դրա համար էլ պատերազմը կարեւոր թեմա է եղել իմաստասերների համար, եւ հակապատերազմական մտածողությունն էլ եղել է նորմա: Նույնիսկ մեծ ռազմավար Սուն Ցզին հանդես է եկել պատերազմում հանուն «հաղթանակի՝ առանց մարտի», դեռ չխոսելով Կոնֆուցիուսի մասին, որը համոզված ջատագովն է եղել սիրո՛ վրա հիմնված պետության: Նրանց ժամանակակից՝ մոհզմի հիմնադիր Մո Ցզին /մ.թ.ա. 468-376/ նույնպես դատապարտել է պատերազմները՝ կոչելով «ամենի հանդեպ սիրո»/:

Ըստ Լառ Ցզիի՝ պատերազմները բռնկվում են մարդկության ուռճացած ցանկությունների պատճառով: Յականարտությունը ծագում է իրենց ցանկությունները բավարարելու համար մարդկանց պայքարից, եւ հակամարտությունը վերածվում է պատերազմի: Յետեւապես, Լառ Ցզիի փիլիսոփայությունը հիմնված է «չկայացածության» վրա: Նրա կարծիքով, մրցակցային պայքարում մարդկանց ջանքերը ոչ այլ ինչ են, քան՝ անկնան պատճառը. բնական կենսակերպը պետք է առանց ավելորդ ցանկությունների լինի:

Լառ Ցզին ասել է. «Մեծ առաքինությունը նման է ջրի»: Նա իր «չկայացածության» փիլիսոփայությունը համեմատել է ջրի հետ՝ այն տարբերելու համար ջունգիների օրենքից: Նա ասում էր. «Չուրը սնում է ամեն ինչի եւ չի պայքարում ոչնչի համար»: Նրա խոսքով՝ մարդիկ, որպես կանոն, փնտրում են ավելի բարձր դիրքեր՝ այն դեպքում, երբ ջուրը հոսում է միշտ դեպի ցած: Ցանկություններով առաջնորդվող մարդկանց դրւը է գալիս այն ամենը, ինչ նրանց կարծիքով բարձր է, նրանք արհամարհում են ամենը՝ ինչ իրենց կարծիքով ցածը է: Իսկ ջուրը միշտ հոսում է լանջն ի վար: Որպես

կյանքի աղբյուր՝ ջուրը սնուցում է Երկրի վրա գտնվող ամեն ինչի: Կենդանի ոչինչ չի կարող գոյություն ունենալ առանց ջրի: Ջուրն իր ճերդումն է կատարում կենդանի ամեն ինչի մեջ՝ առանց եկամուտ կամ կորուստ հաշվի առնելու: Ցածր ու հանգիստ մնալով՝ ջուրն ընդգրկում է Երկնքի տակ գտնվող ամեն ինչ եւ ամենեցուն: Այդպիսով՝ ջուրը բացարձակապես տարբերվում է ազահ ցանկություններով մարդկանցից:

*Ցայանսու գավառի
Յանչժոուի Գեյուան
գրոսայգին: Բնանկարն
արտացոլում է
բնականության կոնցեպտը
դրասիզմի փիլիսոփայության
մեջ:*



Բայց Լառ Ցզիի փիլիսոփայությունն ամենեւին թույլ չէ: Ընդհակառակ՝ այն լի է զորությամբ: Լառ Ցզիի կարծիքով՝ ջուրն իր թուլության ու հանգստության մեջ մեծ ուժ է պարունակում: Նրա ուժը կարող է աշխարհում ցանկացած արգելք հաղթահարել: Նա ասում էր:

«Աշխարհում ջրից թույլ չկա ոչինչ, եւ չկա աշխարհում ոչինչ ջրից ուժեղ՝ երբ խոսքը գնում է ուժեղ ինչ-որ բանի հաղթահարման մասին»: Ջուրը՝ դա ուժին հաղթող թուլության տիպական օրինակն է: Ջուրն անհաղթ է այն պատճառով, որ չի ցանկանում ոչինչ եւ չի պայքարում ոչնչի համար:

Լառ Ցզին ասում էր. «Սույնիսկ գիտակցելով սեփական ուժը, հարկավոր է լինել թույլ»: Դա չի նշանակում, թե Լառ Ցզին սատարել է ձախողումը: Լինելով ուժեղ՝ պետք չէ ճնշել թույլին: Ընդհակառակը. հարկավոր է սկսել իր թույլ տեղերից, ցածում գտնվելով՝ ուժ կուտակելով, ինչպես ջուրը: Իր գե-

րազանցությունն ի ցույց դնելու ցանկությունից հրաժարվելը՝ հիմքն է բարգավաճման:

Թույլ մնալը ոչ միայն բարգավաճման ուղի է, այլեւ՝ կյանքի պահպանման: Լառ Ցգին թուլությունը համարել է կյանքի խորհրդանիշ եւ դա բացատրել է կյանքի ու մահվան օրինակով. Երբ մարդը կենդանի է, նրա մարմնից փիսրուն է եւ թույլ, երբ վախճանվում է՝ մարմնից դառնում է պինդ: Բույսերի մոտ էլ է նույնը. Կենդանի բույսերի մոտ ճկուն տերեւներ են ու գեղատեսք ծաղիկներ՝ այն դեպում, երբ մեռած բույսերը դառնում են չոր ու պինդ: Լառ Ցգին այդ օրինակը բերում է ցույց տալու համար, որ թուլությունը կյանքի պահպանման ուղին է: Թույլերի ուղին՝ դա հականարտությունից խուսափելու լավագույն միջոցն է:

Վերադարձ առ նախածին վիճակ

Լառ Ցգին աշխարհին նայում էր որպես աշխարհիկ ունայնության: Նա ընտրել է հասարակ ու խաղաղ կյանք, որպեսզի իրեն չենթարկի գայթակղությունների: Ասել է՝ նախընտրում է մնալ «նորածին մանուկ»:

Դա չի նշանակում, թե Լառ Ցգին ցանկացել է մնալ մանկորեն անիրազեկ: Նա հավատում էր, որ ճգնավորները բարձր առաքինության մարդիկ են՝ մանուկների պես: Չարգացման ամենաբարձր մակարդակը՝ դա վերադարձն է նորածին վիճակի:

Նորածին վիճակը գիտելիքների, ցանկությունների, կեղտի ու կեղծիքի բացակայությունն է: Նորածին վիճակը Լառ Ցգին վերաբերել է «բացարձակ անմեղությանը»՝ մոր արգանդը բողոնող երեխայի անարատ, մաքուր առաջին ճիշը, որն, ըստ Լառ Ցգիի, հանդիսանում է իսկական կյանքի կանչը:

Երբ մարդիկ զալիս են այս աշխարհը, սկսում են աստիճանաբար ձեռք բերել արտաքին գիտելիքներ եւ իրենց մարմնի զարգացման հետ մեկտեղ ընդունել սոցիալական նորմեր: Նրանց անմեղ մտքերը քայլ առ քայլ լցվում են քառային գույններով: Տարիքի առաջ ընթանալու հետ նրանք դառնում են ավելի կեղծակոր: Ապամշակութայնացման գործընթացը սեփական եսի կորստի գործընթաց է:

Ըստ Լառ Ցգիի, քաղաքակրթությունը՝ դա «ինքն իրենից ինչ-որ չափով շենքել է նշանակում»: Մարդկային մշակույթի զարգացումը «հանդերձի» գործընթաց է. հագուստը որպես մարմնի զարդ է, տունը՝ կյանքի միջոցի զարդ, լեզուն՝ փոխչփան զարդ եւ պետությունը՝ որպես մարդկային հասարակության զարդ:

Այդպիսի «զարդերը» հաճախ վերածվում են ուռճացված ցանկությունների: Ցանկություններով առաջնորդվող մարդիկ կովում ու խարում են միմյանց, ինչը հանգեցնում է պատերազմի: Լառ Ցգին համեմատություններ է կատարել բնության եւ մարդկային օրենքների միջեւ: Բնությունը վերցնում է ավելը՝ նրանով անբավարարությունները փակելու համար՝ ինչպես քանին է հավասարեցնում ավագե բլրակները, եւ ջուրը՝ որ ողողում է հողն ու

քարը: Մարդկային աշխարհում ուղիղ հակառակն է, այսինքն՝ աղքատներին թալանում են եւ թույլերին հալածում:

Ուռճացած ցանկությունները փչացրել են արտաքին աշխարհը եւ թունավորել մարդկային միտքը: Լառ Ցզին ասել է. «Գեղեցիկ ծաղիկները աչք են կուրացնում, խճողված երաժշտությունը վնաս է ականջներին, թանձր բուրմունքները թուլացնում են ճաշակը, որսն ու ծիարշավը գրգռում են միտքը»: Ցանկությունները խախտում են ոգու անդորրը: Ընկնվելով ցանկությունների աշխարհը՝ նարդը երբեւէ կխորտակվի:





3. Յուն Ցզիի «Պատերազմի արվեստը». աղբյուր պատերազմների մասին բոլոր գրքերի համար

Յուն Ցզիի /Սուն ցզի բինֆա/ «Պատերազմի արվեստը» հինավուրց դասական ստեղծագործություն է պատերազմական ռազմավարության մասին: Այն կազմված է 13 գլխից եւ շուրջ 6000 հիերոգլիֆներից: Սուն Ուն, որին պատկառանքով կոչում էին Սուն Ցզի, ծնվել է մոտավորապես մ.թ.ա. 550-540 թվականներին կամ՝ Գարնան ու Աշնան ժամանակաշրջանի վերջին /մ.թ.ա.770-476 թվականներ/։ Ցի գավառում: Բայց հետո տեղափոխվել է Ու գավառ՝ դարձել կառավարչի վստահված ռազմավարը: Քանի որ նրա գրքի մեջ մասը նկարագրություններ է պարունակում «Պատերազմող պետությունների ժամանակաշրջանից /մ.թ.ա.475-221 /, որոշ գիտնականներ ենթադրում են, որ գիրքը գրվել է հենց այդ ժամանակաշրջանում: Այն պարունակում է Սուն Ուի կազմակերպած՝ Սուն Ցզիի դպրոցների՝ պատերազմների տեսություններ: Ցին ժամանակաշրջանից /մինչեւ մ.թ.ա.221 թվականը /սկսած՝ մինչեւ Ցին հարստության կառավարման շրջանը /մ.թ.ա.1616-1911թթ./ ներառյալ՝ պատերազմական ռազմավարության մասին գրվել է ավելի քան 3000 գիրք: Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը» պատերազմական ռազմավարության մասին դասական մեծագույն ստեղծագործությունն է: Այն ռազմավարությունների, փիլիսոփայական հիմքի եւ տակտիկական կիրառման մշակումների առումով գերազանցում է մնացածներին: Դարերի ընթացքում այն եղել է կարդացվող՝ որպես «պատերազմների մասին բոլոր գրքերի հիմք»:

Սուն Ցզիի ռազմավարական մտածողությունը

Սուն Ցզիի ռազմավարության վերաբերյալ մտքերից մենք ընտրել ենք մի քանի օրինակ միայն:

Առաջին օրինակը. «Պլանավորում պատերազմի մտնելուց առաջ»:

Պատերազմի մտնելուց առաջ հարկավոր է համեմատել ու վերլուծել երկու կողմի բոլոր գործոնները: Դա հիմնականում ներառում է. բարոյական վիճակը, եղանակը /կլիման/, տեղանքը, զորահրամանատարներին եւ վա-

րելակարգը: Բարոյական վիճակը ներառում է ժողովրդի համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Ժողովրդի համաձայնությունն առած բանակն աջակցություն է ստանում, իսկ առանց ժողովրդի հավանության չի ստանա այս: Կլիման իր մեջ ներառում է տարվա եղանակը պատերազմի ժամանակ: Տեղանքը՝ տարածությունը /նոտիկությունը կամ հեռավորությունը/, դրությունը /մատչելիություն կամ դժվարանատչելիություն/, տեղանքի չափը եւ բարձրությունները: Վարելակարգը ներառում է կառավարումը բանակում: «Ո՞վ պետք է հրամաններ տա: Ի՞նչն է հանդիսանում զինվորների համապատասխան ուժը: Ո՞վ է պատասխանատու գործերի վարժեցման համար: Ո՞վ է որոշում պարգևատրման եւ պատժի խնդիրները»: Այս հինգ տեսանկյունները, որոնք հարկ է ուշադրության առնել պատերազմի ժամանակ, գերմանացի ռազմական փորձագետ Կառլ Ֆոն Կլոզվիցն անվանել է «ռազմավարական գործոններ»: Այդ գործոններից մեկում կամ երկուսում ծագող խնդիրները կարող են վճռական գործոն դառնալ պատերազմի հնարավորությունների եւ հանգամանքների մասին դատողության համար: Բոլոր այդ գործոնները եւ նրանց համակցությունները պետք է ուշադրության առնվեն: Նման մտածողությունն, ամբողջությամբ վերցված, Սուն Ցզիի «Պատերազմի արվեստ»-ի առանձնահատուկ գիծն են:

Երկրորդ օրինակ. «Պատերազմը կարելի է շահել՝ եթե գիտես քեզ ու թշնամուն»: Սա Սուն Ցզիի «Պատերազմի արվեստ»-ից առավել շատ մեջբերվող կոնցեպտն է:

Վերոշարադրյալ հինգ ասպեկտները հարկ է ինանալ պատերազմող երկու կողմից: Թշնամուն հասկանալն այնքան էլ հեշտ չէ, որովհետեւ նա կանի հնարավոր ամեն ինչը, որպեսզի թաքուն պահի իր գաղտնիքները, եւ կողմի խարեւության ամեն միջոցի: Նմանապես հեշտ չէ եւ ինքն իրեն ճանաչելը: Ի՞նչ են մտածում մարդիկ պատերազմի մասին: Ինչպիսի՞ն են զորահրանատարի մտքի հնարավորություններն ու վիճակը: Ինչպիսի՞ն է զորքերի բարոյական վիճակն ու վարժեցվածությունը: Նման գործոնները սովորաբար առանց մանրազ նին վերլուծության էլ ակներեւ են լինում, եւ սխալ պատկերացման տակ կարելի է մոլորվել: Պատմության մեջ շատ են օրինակները, երբ զորահրանատարը պատերազմական արշավի ելնելու թույլտվություն է ստացել տիրակալից՝ նրան չհայտնելով, որ զորքն իրականում ի գորու չէ կոչելու: Արդյունքն ակնհայտ է: զորքը լիովին պարտություն է կրել: Այդ առթիվ Սուն Ցզին ասել է: Կարելի է կռվել ու հաղթել հարյուրավոր պատերազմներում, եթե գիտես ինքը քեզ ու թշնամուն: Միայն ինքը քեզ ճանաչելով՝ հաղթանակը հիսունով հիսուն է: Նա, ով չգիտի ոչ իրեն, ոչ էլ թշնամուն՝ դատապարտված է պարտության»: Եվ ավելացրել է. «Նա, ով գիտի, որ իր զորքը պատրաստ է գրոհի, բայց չգիտի, որ թշնամու զորքը պատրաստ է պաշտպանության, հիսունով հիսունի հնարավորությունն ունի: Նա, ով գիտի, որ թշնամու զորքը խոցելի է գրոհի հանդեպ, բայց չգիտի, որ իր զորքը պատրաստ չէ գրոհի, նույնպես հաղթելու հիսուն տոկոսի հնարավորությունն ունի: Նա, ով գիտի, որ հակառակորդը խոցելի

է գրոհի հանդեպ, եւ գիտի, որ իր զորքը պատրաստ է գրոհի, բայց չգիտի, որ տեղանքը հարմար չէ առճակատման համար, ունի էլի նույն հնարավորությունը։ Դրա համար էլ, պատերազմ հայտարարելով, ռազմական փորձագետները պետք է հաշվի առնեն ամեն ինչ, եւ նկատի ունենան գործողությունների բոլոր ձեւերը՝ ցանկացած իրավիճակում։ Հաղթանակն ակնհայտ է, եթե լավ գիտես քեզ ու թշնամուն, եւ ակնհայտ՝ ավելի՝ եթե գիտես եղանակային ու տեղագրական պայմանները»։

Երրորդ օրինակը. «Բանակը կենդանի է մնում դավաճանության հաշվին»։ Սուն Ցզին ասել է. «Ուժի օգտագործումը՝ դա նաեւ դավաճանության օգտագործումն է»։ Իր «Պատերազմի արվեստ»-ում» «Ռազմավարության» մասին բանավեճում Կառլ Ֆոն Կլոզեցն այն վերագրում է «դավաճանությանը»։

«Դավաճանության» տակ Սուն Ցզին ենթադրել է այն, որ զորքն իրեն պետք է անընդունակ ցույց տա՝ երբ ընդունակ է, առճակատման անպատրաստ՝ երբ պատրաստ է, նահանջող՝ երբ առաջացող է, եւ ընդհակառակը՝ հարձակվող, երբ նահանջում է։ Այլ կերպ ասած՝ հարկավոր է իր մասին կեղծ պատկերացումներով խարել թշնամուն։

«Դավաճանությունը»՝ դա «քալանով գայթակղված թշնամու հարձակումն է՝ երբ նա պատրաստ չէ, գոտեմարտի պատրաստ լինելը՝ երբ ուժերը հավասար են, թշնամուց խուսափելը՝ երբ նա ավելի ուժեղ է, սրել դրությունը՝ երբ թշնամի չարացած է, թշնամուն ինքնավստահություն ներշնչել՝ երբ նա բանական է, հոգնեցնել թշնամուն՝ երբ նա հանգստանում է, երկպառակություն սերմանել՝ երբ միավորված է։ Մի խոսքով՝ դավաճանությունը՝ դա թշնամուն տարբեր կարգի սխալներ կատարելու գայթակղության մղելն է, նրան պարտության մատնելը՝ երբ կգտնվի անկարգ վիճակում։ Ինչպես նաեւ՝ հակառակորդի վրա հարձակվելն է անսպասելի ժամանակում եւ անսպասելի տեղում»։ Օգտագործելով խարեւությունը՝ ռազմական փորձագետը մշակում է ռազմավարություն, գտնվելով շտաբում՝ հաղթանակի է ուղղորդում հազարավոր մղոններով հեռու գտնվող իր բանակին։

Չորրորդ օրինակը. «Պատերազմը շահել առանց ճակատամարտի»։ Սուն Ցզին հավանություն չէր տալիս զանգվածային սպանություններին, որոնց դասում էր վատագույն ռազմավարությունների շարքին։ Սուն Ցզիի համար պատերազմի նպատակը հաղթելն է, ոչ թե ինչքան կարելի է շատ մարդկանց սպանելը։ Ընդհակառակը, «հարկավոր է խուսափել թշնամուն ուժով պարտության մատնելուց եւ այնքան կյանքեր ոչնչացնելուց՝ որքան հնարավոր է։ Քաղաքին հաղթելու ամենալավ միջոցն այն անվճառ պահելն է եւ հաղթելը նվազագույն թվի զոհերով»։ Դա «ազնիվ հաղթանակի» սկզբունքն է։

Սուն Ցզին պնդում էր, որ «պատերազմում ձեռք բերած հաղթանակը լավագույն հաղթանակը չէ։ Լավագույնը առանց մարտի նվաճած հաղթանակն է։ Դրա համար էլ պատերազմի բարձրագույն արվեստը թշնամուն ռազմավարորեն խորամանելն է։ Երկրորդ մակարդակը դիվանագիտություն կի-

բառելն է, երրորդը՝ գրոհելը նրա բանակի վրա եւ ամենացածրը՝ գրոհել քաղաքի վրա: Քաղաքի վրա գրոհելը կարող է կիրառվել որպես վերջին միջոց: Այլ կերպ ասած՝ մարտով պատերազմը չի ողջունվել: Ավելի լավ է հաղթանակի հասնել մարտից տարբերվող միջոցներով, այնպիսին ինչպիսին են քաղաքականությունը, դիվանագիտությունը եւ այլ կասեցնող միջոցներ: Դարձակումը քաղաքի վրա ամենանվազ նախընտրելի միջոցն է, որովհետեւ Սուն Ցզիի ժամանակներում քաղաքներում կային տոհմական շատ տաճարներ ու դամբարաններ: «Պաշտպանվող կողմը սովորաբար կմարտնչի կենաց ու մահու, ինչը կհանգեցնի հոկայական չափի մահ ու ավերածության: Սուն Ցզիի այս հայացքներն արտացոլում են խոր ընթացումն այն բանի, ինչը մենք անվանում ենք «անվնաս պատերազմ»:

*Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը»
ստեղծագործության տեքստով բամբուկե
տողագույքը: Դրանք հայտնաբերվել են
վաղ ժամանակների Արեւմտյան Խան
հարստության դամբարանում, Շերկայիս
Շանդուն գավառում, Խնցուէ լեռան վրա:
Այսօրվա դրույյամբ դա ամենավաղ
հիշատակությունն է այդ
ստեղծագործության մասին*



Սուն Ցզիի դիալեկտիկական մտածողությունը

Սուն Ցզի՝ իմաստասիրական մտքերով հարուստ «Պատերազմի արվեստը» իին չինական փիլիսոփայության ավելի ու ավելի շատ գինականների ուշադրությանն էր արժանանում:

Իրադրությունը պատերազմում փոխվել կարող է ամեն րոպե: «Պատերազմը շահելու համար զորավարը պետք է գործի արագ՝ հարմարվելով այդ փոփոխություններին: Սուն Ցզին ասում էր. «Չկա զորքի վարման ոչ մի սահմանված կարգ, ինչպես որ չկա որոշակի ձեւ՝ ջրի համար: Ով կարող է հաղթանակի հասնել՝ հարմարվելով թշնամական զորքի փոփոխություններին, նա կլինի պատերազմի արվեստի վարպետը»: Սուն Ցզին հատուկ ուշադրություն է դարձնում հակառակ ուղղությամբ շարժվող ուժերի փոփոխության՝ ասելով. «Քառսը համեմատվում է կարգուկանոնի հետ,, վախկուտությունը՝ խիզախության եւ թուլությունը՝ ուժի հետ»: Այդ հակադիր իրավիճակները կարող են փոխվել իրենց հակադրություններին: Այսպես՝ հաղթանակը ոչ հազվադեպ կարող է շրջվել պարտության եւ՝ հակառակը: Սուն

Ցգին զորավարներին հիշեցնում էր շահառությունը /պատերազմական ավարի մասին է խոսքը/ եւ կորուստները դիտարկել երկու կողմից՝ դրական ու բացասական: Նա ասել է. «Որոշ երթուղիներով կարելի է գնալ, բայց դա չափետք է անել, որոշ թշնամական զորքեր խոցելի են, բայց գրոհել նրանց վրա պետք չէ, որոշ թշնամական քաղաքներ կարելի է գրավել, բայց դրանք չափետք է գրավվեն»: Սա նախազգուշացում է զորավարներին առ այն, որ նրանք պետք է մտածեն ոչ միայն հնարավոր հարստության մասին, այլև՝ հնարավոր կորուստների: Սուն Ցգին զորավարներին հետայնու խորհուրդ է տվել. «Մի կանխարքոնեք դեպի իր երկիրը նահանջող թշնամուն, պաշարման ժամանակ թշնամու համար ճեղք թողեցեք եւ մի հարձակվեք հուսահատված հակառակորդի վրա»: Այլ կերպ ասած, Սուն Ցգին դեմ է եղել ռազմական սրշավանքի ժամանակ թույլատրելիի սահմանն անցնելուն, որովհետեւ երբ իրերը հասնեն ծայրահեղության, կվերածվեն իրենց հակադրություններին:

Վերլուծելով հակադիր փաստերը պատերազմում, Սուն Ցգին ընդգծել է դրանք յուրայինների օգտին, իր զորքի օգտին մղելու միտքը: Նա ասել է. «Երբ մենք գիտենք թշնամու դրությունը, բայց նա չգիտի մեր դրությունը, մենք կարող ենք մեր զորքը պահել միասին՝ այն դեպքուն, երբ թշնամին պետք է բաժանի իր զորքը: Այժմ, երբ մեր զորքը հավաքված է մի տեղում, իսկ թշնամունը՝ ցրված տասը տեղ, մենք կարող ենք նրանց վրա գրոհել տասնապատիկ առավելությամբ: Այդպիսով՝ մեր զորքը կլինի բացարձակ գերազանցության մեջ՝ այն պարագայուն, երբ թշնամին կլինի բացարձակ փոքրամասնության մեջ»: Սուն ցգին «Պատերազմի արվեստը» լի է դիալեկտիկական ննան մտածողությամբ: Սուն Ցգին ասում էր. «Դիտմամբ ընտրելով դարձարձիկ ուղի, թշնամուն փոքր հարստության գայթակղության մղելով մենք կարող ենք տեղ հասնել ավելի արագ, թեեւ թշնամուց ուշ ենք մեկնարկել: Դա ոլորուն ճանապարհն ուղղի վերածելու ռազմավարություն է»: Ճամառու տեսությունում Սուն Ցգին ասել է. «Փորձառու զորահրամանատարը կարող է այնպես անել, որ թշնամին հետեւի իր հրահանգներին՝ եւ ոչ թե՝ հակառակը»:

Սուն Ցզիի նախազգուշացումը պատերազմի դեմ

Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը» որպես պատերազմի մասին ստեղծագործություն՝ ներկայացնում է պատերազմում հաղթանակի ռազմավարությունների եւ մարտավարությունների լրիվ ցուցակը: Պարադոքս է, որ գիրքը տիրակալներին չի խորախուսում լինել ագրեսիվ, բայց նրանց վերստին ու նորից նախազգուշացնում է առանց խորապես խորհելու պատերազմի մեջ մտնելուց:

Դենց սկզբում գիրքը մատնանշում է. «Զորքի օգտագործումը հանդիսանում է զինվորների, մարդկանց ու երկրի կյանքի եւ մահվան հարցը»: Հարկավոր է դա միշտ լուրջ ընկալել: Գրքի վերջում Սուն Ցզին նախազգուշացնում է մեկ անգամ եւս. «Պետության ղեկավարը չպետք է պատերազմ վարի կարճատեւ վատ տրամադրությամբ: Նա պետք է դիտարկի ազգի բոլոր շահերը՝ պատերազմ հայտարարելով կամ դրանից ձեռնպահ մնալով: Զայրութը կարող է վերածվել հիացմունքի, վատ տրամադրությունը՝ լավի, բայց երկրի պարտությունը՝ դա պարտություն է ընդմիշտ, եւ զոհվածներին չես վերադարձնի: Դրա համար ել իմաստուն տիրակալը պատերազմի մասին որոշումն ընդունելիս պետք է խորապես մտածի, եւ լավ զորավարները, գեներալներն էլ դա պետք է դիտարկեն մեծ զգուշավորությամբ, դա երկրի ու բանակի փրկության հիմնարար սկզբունքն է»:

**Ֆանյան սուլը՝ Պատերազմների
ժամանակաշրջանում օգտագործված սառը
զենքը: Դայտնաբերվել է Լոյանում /Խենան
գավառ/, պեղումների ժամանակ:**



Երկու ստեղծագործություններ՝ Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը» եւ Սուն Բինի «Պատերազմի արվեստ», ընթերցողին զգուշացնում են պատերազմի վտանգներից: Այդ ռազմավարները ցույց են տվել իրենց անհանգստությունն ու հոգատարությունը մարդկային կյանքերի նկատմամբ: Այնպես, ինչպես արդի աշխարհում միջուկային պատերազմի՝ սպառնալից չափեր ընդունող վտանգի մասին նախազգուշացումն է՝ Սուն Ցզիի եւ Սուն Բինի զգուշացումները եւս արժանի են այն մարդկանց ուշադրությանը, ովքեր կարող են սեղմել «կոճակը»:

Իմաստնության գերակշռությունը ռազմական ուժի նկատմամբ

Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը» աշխարհին է ներկայացել Տան հարստության տիրակալության ժամանակ /618-907/: ճապոնացի ուսանող Կիբինակիրին գիրքը տուն է տարել 734 կամ 752 թվականին: Կորեային այն ներկայացվել է 15-րդ դարում՝ ժոսեն հարստության տիրակալության ժամանակ: Մինչեւ 17-րդ դարը ճապոնիայում Սուն Ցզիի «Պատերազմի արվեստի» հիման վրա հրատարակվել է ավելի քան 170 գիրք: 1772 թվականին ֆրանսիացի ճիզվիտ միսիոներ Զոն-Ժոզեֆ-Մարի Ամիոտը /1718-1793/ Ֆրանսիայում հրապարակել է գրքի թարգմանությունը: Այդ ժամանակ Նապոլեոն Բոնապարտը եղել է երեք տարեկան /1769- 1821/: Ռուսական թարգմանությունը հրապարակվել է 1860 թվականին: Գրքի ուշ թարգմանությունները վերաբերում են անգլերենին, գերմաներենին, իտալերենին, չեխերենին, վիետնամերենին, հրեերենին եւ ռումիներենին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհի մեծ ստրատեգների եւ գիտնականների մոտ նոր հետաքրքրություն առաջացավ Սուն Ցզիի «Պատերազմի արվեստի» նկատմամբ: Բրիտանացի ֆելիմարշալ Բեռնարդ Լոու Սոնդհոններին /1887-1976/ այդ պատերազմի ժամանակ հայտարարել է, որ աշխարհի բոլոր ռազմական ակադեմիաները պետք է իրենց դասընթացի մեջ ներառնեն այդ գիրքը: Դրանից հետո հրապարակվել են գրքի նոր թարգմանությունները եւ ռուսումնասիրությունները:

Սուն Ցզիի «Պատերազմի արվեստի» տարածմամբ նրա գերակշռությունը ռազմական գիտություններում փոխանցվել է նաեւ մյուս ոլորտներին՝ Էկոնոմիկային, քաղաքականությանը, մշակույթին ու դիվանագիտությանը: Այդ գիրքը շատերն են համարում ոչ միայն ռազմական բնույթի ստեղծագործություն, այլեւ՝ պատերազմական ռազմավարություններին վերաբերող ռազմավարության փիլիսոփայություն՝ որպես հիմնական մեթոդներ եւ սկզբունքներ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում: 2001 թվականին «Ամազոն» համացանցային խանութը գիրքը ներկայացրել է որպես հումանիտար կարգի գրքերից ամենաշատ վաճառվողը: Ժամանակակից շատ գիտնականներ են Սուն Ցզիի իմաստնությունը համեմատում Կոնֆուցիուսի իմաստնության հետ:



4. Երկնքի տաճարը. մեծարանք եւ երախտագիտություն

Երկնքի տաճարը կառուցվել է Մին հարստության /1368-1644/ Յուն Լե կայսեր /1403-1424 /տիրապետության ժամանակ: Կառույցն ավարտվել է 1420 թվականին՝ մոտավորապես նույն ժամանակ, ինչ՝ եւ Գուգուն պալատը: Երբ Յուն Լե կայսրը 1420-ին մայրաքաղաքը Նանգենից տեղափոխեց Պեկին, Երկնքի տաճարում Երկնքին ու Երկին ընծայաբերման կարեւոր ծես անցկացվեց:

Այսօր էլ՝ 600 տարի անց, Երկնքի տաճարն անվճառ կանգնած է Պեկինում: Իր գբաղեցրած տարածքով Գուգուն պալատից չորս անգամ մեծ՝ այն իր կողմն է գրավում աշխարհի չորս ծագերի գրոսաշրջիկներին: Տաճարը լոկ գեղեցիկ պատկեր չէ, այն իրենից ներկայացնում է Երկնքի եւ մահկանացուների միջեւ ներդաշնակության նկատմամբ չինացիների ձգտումը:

Կայսերական զոհաբերություններ

Կայսրը Երկնքին զոհաբերություն էր մատուցում տարին Երկու անգամ՝ գարնանն ու ձմռանը:

Հնձի աղոթքների դահլիճը գարնանային ծիսակատարության անցկացման վայրն էր, որտեղ հավաքվում էին կայսրն ու իր նախարարները՝ հանուն լավ բերքի զոհաբերություն կատարելու համար: «Երկնքի զոհասեղանը» տաճարային համալիրի գլխավոր շինությունն է: Այստեղ կայսրերն ամեն տարի ձմեռային արեւադարձի օրը զոհաբերություն են մատուցել Երկնքին: Երաշտի կամ ջրհեղեղի ժամանակ կայսրն իր պալատականներով ու զորավարներով գալիս էր աղոթելու Երկնքին, որ անձրեւ ուղարկի կամ վերջ տա հեղեղին: Երկնքի տաճարում աղոթել կարող էր միայն կայսրը: Յասարակ ժողովուրդը մուտքի չուներ այնտեղ: Սակայն Երկնքին պաշտելն ու հարգելը ոչ միայն կայսեր, այլև հասարակ ժողովողի բաժինն էր:

Երկնքի պաշտանունքը չինացիների մոտ սկսվել է ավելի քան 3000 տարի առաջ: Մեր նախնիները հավատացել են, որ Երկինքը, որը նաեւ կոչվել է «Երկնային աստվածություն» ու «Երկնային կայսր», գերբնական ուժ է, որը

կառավարում է Երկրի վրա գտնվող ամեն ինչը, օրինակ՝ բնական բերքն ու ճակատագիրը: Երկինքն իրենից ներկայացնում էր արդարություն: Բնական կործանարար ցնցումները Երկրի վրա դիտվում էին որպես նախազգուշացում՝ մարդկանց կողմից մինյանց հանդեպ վատ արարքներ գործելու համար: Աղետների ժամանակ մարդիկ, որպես կանոն, ասում էին. «Դա Երկինքն է պատժում մեզ»: Կայսր Գուան Սյույի տիրապետության ժամանակ /1875-1908/ հրդեհից այրվել է Հնձի աղոթքների սրահը: Լսելով այդ նորությունը եւ հավատալով, որ դա վատ նշան է Երկնքի կողմից, կայսրը կորցրել է ինքնատիրապետումը, նախարարների դեմքն էլ դարձել է գորշ մոխրավուն: Սակայն իին չինացիների համար Երկինքն ավելի շատ հակված է եղել սիրո եւ հանդուրժողականության՝ մարդկանց պատժելով միայն առանձին դեպքերում: Դրա համար էլ մեր նախնիները միշտ երախտագետ են եղել Երկնքին:




Երկնքի տաճարն աստվածային մաքրության տեսքով՝ ծյուն գալուց հետո:

Վախը բնության նկատմամբ

Երկնքի տաճարի ճարտարապետական կառույցներն իրենց մեջ հանձարեղորեն արտացոլել են բնության նկատմամբ վախի կոնցեպցիան: Այն դեպում, երբ երկնագույնը տաճարի հիմնական գույնն է, երկնքի տաճարի երեք հիմնական շինությունները կանգնած են եռահարկ սպիտակ հիմքերի վրա: Այդ գույներն օգտագործվել են նրա համար, որպեսզի հարուցեն մաքրության եւ վեհության զգացումներ. հատկանիշներ՝ որոնք չինացիները վերագրում են երկնքին:



Երկնքի
գոհասեղանը
/տեսքը՝
բոիչքային
բարձունքից/:



Հնձի
աղոթքների
դահլիճը:


Իր էլությամբ Երկնքի տաճարը պետք է մերձ լինի Երկնքին: Ուշադիր այցելուները կարող են նկատել Երկու հիմնական շինությունների՝ Երկնքի զոհասեղանի եւ Հնձի աղոթքների դահլիճի կենտրոնաձիգ կառուցվածքը: Նման աստիճաններով բարձրանալով՝ ստանում ես դեպի Երկինք Վերելքի զգացողություն:

Երկնքի զոհասեղանը կլոր, եռահարկ շինություն է: Աստիճաններով բարձրանալով դեպի զոհասեղանը, կարեւոր չէ չորս կողմերից որով, քեզ զգում ես կենտրոնաձիգ աշխարհում: Բարձրագորուն հարկում գտնվում է կլոր քար՝ շրջապատված սալիկներից կազմված շրջաններով: Կլոր քարը ներկայացնում է Երկնքի սիրտը եւ այդպես էլ կոչվում է «Երկնքի սիրտը»: Ցուցանակը քարի վրա տեղադրվել է ձմեռային արեւադարձի ժամանակ, երբ կայսրը կատարել է իր զոհաբերությունը: Երկնքի սրտին դիմելու գործընթացն իրենից ներկայացնում էր Երկնքին դիմելու գործընթաց: Երկնքի զոհասեղանը տաճիք չունի, ծածկված է լոկ անսահման կապույտ Երկնքով:

Շփումը մարդկության ու Երկնքի միջեւ

Դիմ չինացիները հավատում էին, որ մարդիկ կարող են շփվել Երկնքի հետ, ու դրա համար կառուցվել է Երկնքի տաճարը: Երկնքի զոհասեղանի եւ Երկնքի Կայսերական դամբարանի տարածքում հնչող արձագանքն է ապացույց այն բանի, որ մեր նախնիները հավատացել են իրենց ու Երկնքի միջեւ շփմանը. Եթե Երկնքի զոհասեղանում կանգնես Երկնքի սրտի վրա, կարող ես ձայներ լսել ոտքերիդ տակից եւ արձագանք՝ զոհասեղանի պատերից: Արձագանքն, ինչպես մտածել են նախագծողները, արտահայտել է Երկնքի պատասխանն այն ամենին, ինչ խնդրել է քարի վրա կանգնածը:

Եթե կանգնես Կայսերական Երկնքի դամբարանի արտաքին դահլիճի ներսում եւ խոսես դեմքով դեպի պատը կանգնած, հեռվում գտնվողն մարդը պատի մոտ կլսի քո արձակած հնչյունները՝ ինչպես եթե զանգած լինես հեռախոսով: Այդ առեղծվածը, շրջանաձեւ պատի շառավղի համեմատությամբ կարծ ձայնային ալիքի պատճառով, ստացել է «պատ-արձագանք» անվանումը:





5. Բնապահպանության հասկացությունը չինական ավանդական մշակույթում

Ներկայում շրջակա միջավայրի պահպանությունն ավելի ու ավելի մեծ ուշադրություն է գրավում: Այժմ, երբ ամբողջ աշխարհը տառապում է բնապահպանական լուրջ ճգնաժամից, սկսել են ավելի շատ ուշադրություն հատկացնել էկորարոյագիտության ու էկոփիլիսոփայությանը: Այդ ոլորտի գիտնականները նշում են, որ շրջակա միջավայրին մարդու պատճառած մեծ վնասն սպառնալիք է ողջ մարդկության համար:

Բնապահպանության երիկայի եւ փիլիսոփայության գլխավոր գաղափարը «մարդկային ցենտրիզմի» փոխարինումն է «բնապահպանական խոլիզմով»: Սա նշանակում է, որ Երկրի կենաուրուտում ապրող բոլոր էակներն օժտված են նույն իրավունքներով, ինչ՝ մարդք, կամ էլ՝ կենդանի մնալու եւ զարգանալու իրավունքով:

Ուսումնասիրելով ավանդական չինական մշակույթը, մենք կարող ենք տեսնել, որ հնուց անտի Չինաստանում ուշադրություն են հատկացրել բնապահպանական գիտակցությանը, այսինքն՝ բնապահպանական երիկային ու բնապահպանական փիլիսոփայությանը:

«Կյանքի» փիլիսոփայությունը

Ավանդական չինական փիլիսոփայությունը «կյանքի» փիլիսոփայություն է: Կոնֆուցիուսն այն կոչել է «Երկնային աղբյուր ամեն ինչի»: Նա կյանքի արարումը դիտարկել է որպես «Երկնային ուղի» ու «Երկնային առաքելություն»: Իր տեսակետն իմաստաերը բացատրում է Փոփոխությունների Գրքում /Խցզին/. «Կյանքի անվերջանալի արարումը՝ դա փոփոխություններ են» եւ «Երկնքի ու Երկրի մեծ առաքելությունը՝ կյանքի արարումն է»:

Կոնֆուցիուսականության մեծ գիտնական Մենցիումը /372-289/, որ ապրել է Կոնֆուցիուսից հետո հաջորդ դարում, ասել է. «Հարկավոր է սիրել ընտանիքին, սիրել մարդկանց, սիրել աշխարհի ամեն ինչը»: Կոնֆուցիուսականության՝ հաջորդ սերունդների մտածողները առաջ են քաշել այն գաղափարը, որ «Երկինքն ու Երկիրը կյանք են տալիս աշխարհում ամեն ինչի» եւ ընդգծել սերն ու բարությունն ամեն ինչի նկատմամբ:

Թրթռացող կյանքի
պատկեր: Ոչ մեծ լիճ
Յանչժոուի /Ցզյանսու/
գավառ/ արեւմուտքում:



«Խոլործը ժայռերի վրա»: Այս նկարը պատկանում է
Ցին հարստության ժամանակների գեղանկարիչ
Չժեն Բանցյանին /1693-1765/: Այն կատարված է
մաքուր ու կենսական ոճով:



Օրինակ՝ կոնֆուցիոնականության՝ Սուն հարստության /960-1279/ շատ գիտնականներ պաշտպանել են ուսուցչի հայացքները: Չժոու Դունն /1017-1073/ ասել է. «Երկինքը կյանք է ստեղծում յանի միջոցներով եւ սնում է կյանքը ինի միջոցներով»: Չեն Ին /1033-1107/ ասել է. «Կյանքի եռթյունը սերն է»: Չժան Ցզյայը /1020-1077/ ասել է. «Աշխարհի բոլոր մարդիկ իմ եղբայրներն են եւ բոլոր արարածներն իմ ուղեկիցները»: Չեն Խաոն /1032-1085/ ասել է. «Նրանք, ովքեր սիրում են կենդանի արարածներին վերաբերվել՝ ինչպես իրենք իրենց»: Յիմնվելով նրանց կարծիքների վրա, կարելի է հասկանալ, որ կոնֆուցիոնական սերն սկսվում է ընտանիքի եւ մյուս մարդկանց հանդեպ սիրուց՝ մինչեւ աշխարհում կենդանի ամեն ինչը: Մարդիկ եւ մյուս կենդանի արա-

րածները հավասար են միմյանց առջեւ:

Իր ընտանիքին հղած նամակում Զժեն Բան Ցյաոն՝ Ցին հարստության /1616-1910/ մեջ գեղանկարիչը, գրել է, որ սիրում է աշխարհի բոլոր էակներին՝ լինի մրցյուն թե ցանկացած միջատ: Այդ նա է ասել. «Կամքը երկնքինն է, եւ մարդիկ պետք է հասկանան երկնքի կանքը»: Նա դեմ է եղել, որ մարդիկ «թռչուններին պահեն վանդակում»՝ ասելով. «Զի կարելի նրանց պահել վանդակում՝ ցանկությանը հագուրդ տալու համար միայն, հալածել նրանց եռթյունը՝ իր եռթյանը բավարարելու համար»: Նույնիսկ ամենակատաղի գազանները, ինչպիսին գայլերն ու վագրերն են, պետք է պարզապես հեռու բնակվեն մարդկանցից: Մարդիկ իրավունք չունեն նրանց սպանել իրենց ցանկության համաձայն: Նա շարունակում էր կրկնել, որ եթե մարդիկ իրոք սիրում են թռչուններին, ապա պարտավոր են տնկել ավելի շատ ծառեր, որ պեսզի դրանց վրա բույն հյուսվի: Այդ պարագայում մարդիկ, առավոտյան արթնանալով քնից՝ կլսեն հավերի դայլայլը, եւ բոլորը երջանիկ կլինեն: Նա նկարագրել է այնպիսի երջանիկ տեսարան՝ ինչպիսին «Իրենց համապատասխանող բնության մեջ ապրող բոլոր կենդանի էակներն» է: Մարդը լոկ այդպես կարող է կողքին ապրող կենդանի էակների հետ կիսել իսկական երջանկությունը:



«Եպուոք եւ լոտոսի ծաղիկը». Ակարը պատկանում է Ցի Բայշիին /1864-1957/: Այն իրենից ներկայացնում է գեղանկարչի կենտրոնացվածությունն անմեղ, բայց միաժամանակ կենդանի ոճի վրա:

Բնապահպանության գեղագիտությունը

Չինական ավանդական մշակույթում բնապահպանության գեղագիտությունը նույնպես կապ ունի բնապահպանական բարոյագիտության ու բնապահպանական փիլիսոփայության հետ:

Չին չինական մտածողները բնությանը, մերայալ՝ մարդուն, դիտել են որպես կյանքի աշխարհ: Բոլոր կենդանի էակներն աշխարհում ունեն իրենց սեփական կյանքն ու կեցության վիճակը: «Կյանքն ու նրա կեցության վիճակն արժանի է ճանաչման»: ասել է Չեն Խառն: Ըստ այդ իմաստասերների՝ նման ճանաչումից մարդիկ պետք է հսկայական հաճույք ստանան: Սուն եւ Մին հարստության կոնֆուցիոնական գիտնականներն ուսումնասիրել են «կենդանի էակների կեցության վիճակը»: Չժոռու Դունն, օրինակ, երբե չի հնձել իր պատուհանի տակ աճող խոտը: Երբ հարցրել են՝ ինչո՞ւ, բացատրել է, որ խոտի բնական աճը վերաբերում է կենդանի էակների նկատմամբ իր գաղափարին: Նա «աշխարհի կենդանի էակների կյանքի ծագումն ու կեցության վիճակը» դիտարկել է խոտի միջոցով: Խոտի կեցության վիճակը եղել է այնպիսին՝ ինչպիսին՝ եւ նարդու՝ կեցության վիճակը, եւ այդ նմանությունից նա ստանում էր մեծ բավականություն: Չեն Խառն «մեծ ուրախություն էր ստանում կենդանի էակների ուսումնասիրությունից»: Նա միշտ արժեւորել է ձկանը եւ ձուկ աճեցրել: Յաճույք էր ստանում դիտելով ճտերի դուրս գալը ձվերից: Նրա համար կենդանի ու զարմանագեղ ծուտիկները լավագույնս էին արտացոլում «կեցության վիճակը»:

Մարդիկ եւ նրանց վերաբերմունքը մյուս կենդանի էակների նկատմամբ

Շատ հաճախ հնագույն արվեստի եւ գրականության ստեղծագործություններում կարելի է հանդիպել երկրի վրա բոլոր կենդանի էակների հանդեպ սիրո եւ նրանց կեցության վիճակի նկատմամբ երախտագիտության:



Սուչժոուի /Ցյանսու գավառ/
Ցանլան տաղավարի պատի
մանրամաս:
Տաղավարի աղեղնաձեւ քիվերը
թռչնի թեւեր են հիշեցնում: Դա
շարժման զգացումը եւ
գեղագիտական կառարելատիկան է
Չինաստանի
ճարտարապետությունում:



**Սուչժոուի /Ցզյանսու/ գավառ/ Ցանլան
տաղավարի պատի ճանրամաս:
ճապոնական բանանածառի կանաչ
տերենները արտակարգորեն
ընդգծվում են պատի սպիտակ
պաստարին:**

Մին հարստության տիրապետության օրոք մեծ գեղանկարիչ Դուն Ցի Չանը /1555-1636/ բացատրել է, որ նկարիչների մեծ մասն ապրել է Երկար, որովհետեւ նրանք բավականություն էին ստանուն իրենց ստեղծածից, որը լի էր կյանքով: Սուն հարստության կոլեկցիոներ ու գիտակ Դուն Յուն /ծննդյան ու մահվան թվականները հայտնի չեն/ ընդգծել է, որ նկարիչները պետք է պատկերեն բնության մեջ գոյություն ունեցող կյանքի վիճակը: Դրա համար նրանք պետք է սովորեն բնությունից: Ցին հարստության տիրապետության օրոք ապրած Վան Գայը /1654-1710/ ընդհանրացրել է ձուկ նկարելու բոլոր գաղտնիքները. պատկերել նրանց կենսունակությունը՝ երբ լողում են ջրում: Նա ձկան երջանկությունն իր բնական աշխարհում համեմատել է մարդկանց երջանկության հետ՝ վերջիններիս բնական աշխարհում: Թոշունները, ձկները, միջատները եւ ծաղիկները միշտ կենսալից են նրանց վրձնի տակ:

Ցին չինական գրականության մեջ էլ կարելի է հանդիպել նման ուղղության: Տան եւ Սուն հարստությունների տիրապետության օրոք, երբ չինական բանարվեստը եղել է իր զարգացման կիզակետում, թոշուններն ու գաղանները պատկերվել են այնպես, ասես նույն զգացումներն ունեն, ինչ՝ մարդիկ: Պուն Սուն Լիի /1640-1715/ «Տարօրինակ պատմվածքներ ստուդիայից» /Լյառչժայ չժի/ ստեղծագործության մեջ մարդիկ ու գազանները պատկերվել են որպես միասնական սեռ: Շատ պատմվածքներում խոսվում է տղամարդկանց ու գեղեցիկ կանանց միջեւ սիրո մասին՝ արտացոլված բույսերի եւ կենդամիների մեջ: Օրինակ՝ «Սյան Յու» պատմվածքի հերոսութիններ Սյան Յուն եւ Ցզյան Սյուեն պատկերված են Լա Շան լեռան վրա /դանսականության սուլը լեռն է. /գտնվող մենաստանի ծաղկիկների՝ քաջվարդի ու քամելիայի տեսքով: Սյան Յուն սիրահարվում է մենաստանում ուսանող խուան Շենին: Ցզյան Սյուեն դառնում է նրանց մտերիմը: Դժբախտաբար, մենաստանի այցելուներից մեկին շատ է դուր գալիս սպիտակ քաջվարդը, եւ նա բույսը տուն է տանում իր հետ, որտեղ այն թառանուն է: Խու-

ան Շենը կոտրված սրտով գրում է բանաստեղծությունների մի ամբողջ ժողովածու՝ այն վերտառելով «Ողբ առ ծաղիկը»: Առ ժամանակ անց մենաստանի հոգեւորականն ուզում է քամելիան էլ կտրել արմատից, որպեսզի տեղում նոր սենյակ կառուցի, բայց խուան Շենը կանգնեցնում է նրան: Որոշ ժամանակ հետո քաջվարդի նոր ծիլ է աճում հնի տեղում: Խուան Շենը երազում տեսնում է, որ Սյան Յուն իրեն խնդրում է ամեն օր ջուր տալ քաջվարդի ծիլին, կատարում է նրա ասածը, եւ բույսն աճում է՝ օրեցօր դառնալով ավելի փարթամ: Յաջորդ տարում քացվում է մեծ ծաղիկ, որի վրա նստած էր փոքրիկ մի գեղեցկուիկ: Նույն պահին գեղուիին գետին է ցատկում, ու պարզվում է, որ նա Սյան Լյուն է: Եռյակը վերստին ապրում է երջանիկ կյանքով: Յետո խուան Շենը լրջորեն հիվանդանում է: Նա երկտող է թողնում ծեր հոգեւորականի մոտ. «Սահտակ քաջվարդի արմատից կարմիր ծիլ կբարձրանա: Այդ ծիլը կունենա հինգ տերեւ: Դա ե՞ս կլինեմ»: Խուան Շենի մահից տարի անց, իրոք, կարմիր ծիլը դուրս է գալիս: Ծեր հոգեւորականը մշտապես ոռոգում է այն, եւ ծիլը դառնում է մետրանոց բույս, սակայն չի ծաղկում: Յոգեւորականի մահից հետո նրա սաները կտրում են բույսի վերգետնյա մասը՝ «քանի որ երբեք չի ծաղկել»: Դրանից հետո քաջվարդը թառամում է, հետո էլ՝ քամելիան:

Ժու Սուն Լիի «Սյան Յու» եւ մյուս պատմվածքները լի են երկրի վրա բոլոր կենդանի էակների հանդեպ սիրով: Դրանք արտահայտում են այն միտքը, որ մարդիկ եւ մյուս կենդանի էակները մեկ տեսակ են եւ այս աշխարհում կիսում են բարօրությունն ու վիշտը:

*Տեսարան Սուչժոուի
/Ցզյանսու գավառ/
Տույսը գրուսայգուց:
Գետափի բնամկարի՝
գեղածեւավորումն
իրենից
մերկայացմում է
«երկնքում սավառնող
բազեների եւ ջրում
լողացող ձկների»
կատարյալ պատկեր:
Նման պատկերները
ոգեշնչել են չհնացի
փիլիսոփաներին*



Ստեղծագործական ունակությունները եւ փոխանակությունը

Զինացիները 5000-ամյա պատմության ընթացքում աշխարհին ներկայացրել են բազմաթիվ գյուտեր, ներառյալ՝ չինական ավանդական բժշկությունը, մետաքսը, ճենապակին, կողմնացույցը, բուլղը, տպագրությունը, վառողը: ճարտարապետության այնպիսի նշանողերը եւս, ինչպիսին են Չինական մեծ պարիսպը եւ Գուգուն պալատը, ընդգծում են չին ժողովրդի հնարանտությունը:

Չին ժողովուրդը միաժամանակ միշտ բաց է եղել արտասահմանյան բարեկամների ու մշակույթների առջեւ: Օրինակ՝ Տան հարստության /618-907/ բարգավաճումը մեծ մասամբ եղել է Տայ Ցզուն կայսեր /627-649/ ջանքերի արդյունքը, նա կապ է պահել արտերկրյա պետությունների հետ: Մին հարստության տիրապետության օրոք /1368-1644/ Յուն Լի կայսրը /1403-1424/ դեպի Արեւմտյան ծովեր է ուղարկել տեւական 7 ճանապարհորդությունների պատվիրակների: Նրանք հասել են մինչեւ Մեքքա՝ Արեւմտյան Ասիայում եւ Սոգամբիկ՝ Աֆրիկայում: Ուր էլ որ ուղեւորվեին չին ճանապարհորները, իրենց հետ փոխանակման նպատակով տանում էին մշակութային իրեր ու առարկաներ՝ ելնելով «Մենք եկել ենք խաղաղությամբ» սկզբունքից:

Զինաստանի մշակույթի քրեստոնատիա / 47





6. Զինական հիերոգլիֆները

Վերջին ժամանակներս չինական լիզուն ուսումնասիրողների թիվն աշխարհում աճում է օրեցօր: Ում մայրենի լեզուն հնչյունաբանական լեզուներից է՝ դժվար է տրվում չինական հիերոգլիֆների ուսումնասիրությունը, բայց դա ես չի պահում նրանց... Չէ՞ որ հիերոգլիֆների ուսումնասիրման ընթացքում քեզ համար բացում ես լեզվի պատմական ու մշակութային հիմքերը:

Տրամադրության խորհրդանշաններ

Չինական հիերոգլիֆների որոշ պատկերագրական խորհրդանշաններ արտահայտում են նարդկային դիտողականությունը եւ աշխարհաճանաչողությունը: Դրա համար էլ որոշ եվրոպացի բանաստեղծներ գտնում են, որ չինական հիերոգլիֆներն իրենց ոգեշնչում են: Եզրա Փառնդն, օրինակ /1885-1972/, հիացել է չինական հիերոգլիֆներով, որոնք նրան մղել են ստեղծագործելու: Այ հիերոգլիֆը բառարանում նրան ցայգալույսի արեւ է հիշեցրել:

Փառնդի բանաստեղծական պատրանքները լիովին հիմնավորված են: Վերցնենք, օրինակ, Այ հիերոգլիֆը. նրա վերին մասն արեւ է խորհրդանշում՝ այն դեպքում, եթե ստորին մասը խորհրդանշում է հորիզոնը: Այլ կերպ ասած՝ հիերոգլիֆն իսկապես նշանակում է «հորիզոնից ելնող արեւ»: Ֆունդանը, որ Շանհայի հռչակավոր համալսարանն է, կազմված է երկու հիերոգլիֆից՝ 复 եւ Այ: «Փաստաթղթերի գրքի մեկնաբանություններ» դասական մեջ՝ ստեղծագործության մեջ /Շանշու դաշտուան/ կա հետեւյալ դարձվածքը. «Արեւն ու լուսինը ելնում են ամեն օր»: Այդ հիերոգլիֆն է ընտրվել՝ որպեսզի ուսանողները նոր գիտելիքներ ստանան ամեն օր:

Չիերոգլիֆներն իրենց մեջ պարունակելով թ -ն՝ որպես տարր, բոլորն էլ առնչություն ունեն արշալույսի կամ մայրամուտի հետ: Օրինակ՝ 東 հիերոգլիֆի /արեւելք/ ավանդական գրելաձեւը նման է անտարից դեպի վեր ծագող արեւի: «Առավոտյան արեւ» հիերոգլիֆի ավանդական գրելաձեւերից մեկը սա է՝ (繁): Զախ մասը կազմված է «արեւ» եւ «խոտ» նշանակող խորհրդանշանից, աջ մասը՝ «գետ»-ից: Չիերոգլիֆն ամբողջության մեջ նշանակում է «առավոտյան ծագող եւ գետը լուսավորող արեւը»: 暮 հիերոգլիֆն ի սկզբանե գրվել է այսպես 莫՝ նշանակելով «մայրամուտն անտարի գլխին»: Նրա ձախ մասը 明 ի սկզբանե խորհրդանշել է «լուսամուտ» իմաստում այն դեպքում, երբ աջ մասն արտացոլում է «Լուսնի լույսը պատուհանում» իմաստը: Մի՛թե բանաստեղծական մատուցում չէ դա: «Գեղեցկություն» հիերոգլիֆի ավանդական գրելաձեւն է 麗, որը նշանակում է «սարով միասին վազող երկու եղնիկ»: Գեղեցիկ պատկեր է, չէ՞:



Գուշակի ոսկորը՝ գտնված
Անյանում /Խենան գավառ/,
պեղումների ժամանակ:




Սոտավորապես
Պատերազմող
պետությունների
ժամանակաշրջանի Ցին
հարստության ժայռափոր
արձանագրության պատճենը,
որը պատրաստել է Ու Չանշոն
/1844-1927/:

Օլիմպիական նրբագեղ խորհրդանշանները

2008 թվականի օլիմպիական խաղերը խորհրդանշանների հավաքածու են փոխառել, որպեսզի ներկայացվի չինական գեղագրության ամբողջ գեղեցկությունը: Միավորելով չինական հիերոգլիֆների ավանդական տարբեր գույնաձևերի գծերը, այդ խորհրդանշանները թվում են կենդանի եւ հստակ պատկերացում են տալիս սպորտի մասին, որն այն արտահայտում են:

Թեեւ չինարենը պատկերագիր լեզու է, այն կազմված չէ նախշազարդային գրերից: Վաղ պատկերագրային լեզուները մեծ մասամբ ներկայացված են եղել նախշազարդային գրով, որը ննանակել է իրերի արտաքին բնութագրերը: Այդպիսի լեզուների համար լեզվական նշանները չեն տարբերվել նախշանկարից, ինչպես օրինակ՝ Յին Եգիպտոսի պատկերագրային հիերոգլիֆները: Սկզբուն չինարենը եւս պարունակել է նախշազարդային գրի տարրեր, վերջինիս ներկայությունը նվազել է ին ժամանակաշրջանի ոսկրագրերում: Յիերոգլիֆների մեծամասնությունը կազմված է եղել հասարակ գծերից: Օրինակ՝ «շան» համար ինական գիրը ոսկրի վրա՝ (ﾂ): Նախշանկարի փոխարեն օգտագործվել են հասարակ, բայց իրենց տեսակի մեջ շատ խորհրդանշանային գծեր, որոնք ուրվագծել են շան պատկերը:

Գեղագրական խորհրդանշանները Պեկինում օլիմպիական խաղերի համար նախագծվել էին այնպես, որպեսզի ներկայացնեն «տպագրության հիերոգլիֆների ամբողջ գեղեցկությունը»:



Չժան Ցզինի /կյանքի տարեթվերը հայտնի չեն/
գերեզմանի ցուցանակը: Ցուցանակի վրա
Խան հարստության ժամանակներում
օգտագործված պաշտոնական ծեռագիր
տարերով մակագրություն է: Ավելի ուշ այդ
աշխատանքը գեղագրություն ուսումնասիրող
ուսանողների համար դարձել է
ամենատարածվածը:

«Տպագրության հիերոգլիֆները» տպագրությունում հաճախ օգտագործվող չինական գեղագրության հիերոգլիֆներն են: Գոյություն ունի տպագիր հիերոգլիֆների երկու տեսակ. դաշտուան /մեծ տպագրություն/ եւ սյառչուան /փոքր տպագրություն/: Առաջինը հայտնի է նաեւ «բրոնզե գիր» անունով, որովհետեւ հին ժամանակներուն այն օգտագործվել է բրոնզե շինվածքների վրա մակագրությունների համար էլ: Փոքր տպագրությունը պաշտոնական գիր է եղել առաջին կայսր Ցինի կառավարման /մ.թ.ա. 246-210/ օրոք: Ուստի վրա ին-ական գրից փոխառված տպագիր հիերոգլիֆները պատկերվել են սահուն ու ռիթմիկ գծերով, ինչն ավելի գրավիչ արտաքին տեսք է ունեցել:

«Լողի» խորհրդանշանը



游 泳

L o g

Վերին մասը խորհրդանշում է մարդուն՝ այն դեպքում, երբ ստորին մասը՝ ջուրը: Լողորդը թափով լողում է ջրում՝ արտահայտելով շարժման ուժեղ զգացողություն:

Եթե նայելու լինենք ՞ «քայլք» տպագիր հիերոգլիֆին, առանց դժվարության կարող ենք տեսնել օլիմպիական խորհրդանշանի եւ հիերոգլիֆի նմանությունը. Վերին մասը պատկերում է «ձեռքերի տատանումները»,

ստորին մասը նշանակում՝ «ոտքերը շարժման մեջ են»: Ստորին մասում օլիմպիականխորհրդանշանի նույրը ու սահուն գծերը նման են «ջուր» նշանակող տպագիր հիերոգլիֆին՝ ՞՞ :



跳 径

Մարմնամարզություն

Խորհրդանշան «թեթեւ մարմնամարզության» համար

Այս խորհրդանշանը վերցված է «պար» նշանակող տպագիր հիերոգլիֆից: Գլուխը քիչ-ինչ մի կողմի վրա հակած պարողը մարմինը թեքում է առաջ, ձեռքերը թափով մեկնում աջ ու ձախ՝ ոտքերը՝ մեկնարկա-

յին դիրքում: Այս մարզական ու միաժամանակ նրբագեղ խորհրդանշանը եւս փոխառված է /«տրիաթլոնի» ու «ֆուտբոլի» համար/:

Այդ խորհրդանշանները ցույց են տալիս, որ ժամանակակից օլիմպիական խաղերը թարմացրել են իին չինարենի հնայքը:



7. ՄԵՏԱՔՍԻ ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐԻԾ

Յին Զինաստանը Կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպական մայրցամաքի հետ կապող փոխադրաերթուղին կոչվում էր «Մետաքսի մեծ ճանապարի»: Այն երեւան է եկել մեր թվարկության երկրորդ դարում: Այդ ժամանակ նրանով հիմնականում երթեւեկում էին մետաքսավաճառ առեւտրականները: «Մետաքսի ճանապարի» եզրույթը, գերմաներն՝ «Seidenstrasse», առաջին անգամ օգտագործել է գերմանացի աշխարհագրագետ Ֆեռնանդ ֆոն Ռիխտոֆենը՝ 19-րդ դարում:

Մետաքսի ճանապարին սկսվում էր Չանանից /ներկայիս Շաանսի գավառի կենտրոնական քաղաք Սիանի տարածքը/, Գանսույով ու Խինցզյանով անցնում դեպի Կենտրոնական ու Արեւմտյան Ասիա եւ միջերկրածովյան տարածաշրջան: Մինչ այդ չինացիների եւ միջերկրածովյան տարածաշրջանի բնակիչների միջեւ գոյություն չի ունեցել ոչ մի կապ: Մ.թ.ա. 7-րդ դարում հին հույններն սկսել են ուսումնասիրել Արեւելքի քաղաքակրթությունները՝ շատ քիչ բան ինանալով արեւելքի նաևին: Յնագիտական պեղումների համաձայն, մինչեւ Մետաքսի մեծ ճանապարից գոյություն է ունեցել Դեղին եւ Ինդոս գետերից մինչեւ Եփրատ, Տիգրիս ու Նեղոս ծգվող առեւտրական երթուղի, այդուհանդերձ՝ Կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի հետ Զինաստանի իսկսկան կապը զարգանալ է սկսել Մետաքսի ճանապարիի զարգացման հետ:

Այդ ճանապարից գործել է ոչ միայն որպես առեւտրական երթուղի, այլև՝ հին քաղաքակրթությունները /Զինաստանի, Յնագիտականի, Մեսոպոտամիայի հարթավայրերի, Եգիպտոսի, Յունաստանի/ միմյանց հետ կապող յուրօրինակ կամուրջ: Այն նպաստել է նաև Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ փոխանակությանը՝ գիտության ու տեխնիկայի ոլորտում: Մետաքսի մեծ ճանապարիը Յին Զինաստանին ծառայել է որպես իրեն՝ մնացյալ աշխարհին, եւ այլ մշակույթները, որոնք քիչ ներդրում չունեն չինական մշակույթի զարգացման մեջ՝ Զինաստանին, ներկայացնելու գլխավոր ուղի:


Յունչան /«հավերժական բարգավաճում»/. Խան Արեւելյան հարստության ժամանակների պարզա: Այս նմուշը հաստատում է այդ ժամանակաշրջամի գործվածքային տեխնոլոգիամերի բարձր մակարդակը:



Չժան Ցյանը՝ նախագնաց

Մետաքսի ճանապարհի նախագնացը եղել է Խան Արեւմտյան հարստության /մ.թ.ա. 206-25/ գեներալ Չժան Ցյանը /մ.թ.ա.164-114/: Այն ժամանակ Չինաստանի գիտելիքները Կենտրոնական ու Արեւմտյան Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի մասին աննշան էին, թեեւ չինացիները գիտեին, որ արեւմուտքում գոյություն ունեն այլ երկրներ ու նշակույթներ:

Ու կայսեր տիրապետության օրոք /մ.թ.ա. 140- 87/ Չինաստանին էին պատկանում Արեւմտյան մարզերը /ներկայիս Սինցյանի եւ մասամբ Կենտրոնական Ասիայի տարածք/: Նետազայում դրանք բոլորը նվաճվեցին գունճների կողմից, որոնք ուղիղ սպառնալիք էին Խան Արեւմտյան հարստության համար եւ շրջափակել էին դեպի Արեւմուտք տանող Վերջինիս ուղին: Նման հանգամանքներում Ու կայսրը Չժան Ցյանին նշանակում է Արեւմտյան մարզեր ուղարկվող ավելի քան հարյուր պատվիրակների խմբի ղեկավար: Նրան առաջադրանք էր տրվել հնդկա-սկյութական ցեղերին նիավորել գունճների դեմ, որոնք մի անգամ սպանել էին նրանց առաջնորդին: Չժան Ցյանի թինը ճանապարհ ընկավ մ.թ.ա. 138 թվականին, բայց հենց որ նրանք նտան Խեսիի միջանցքը /ներկայիս Գանսու գավառի հյուսիս-արեւմտյան մասում/, բռնվեցին գունճների կողմից: Ավելի քան 10 տարի մնալով տնային կալանքի տակ՝ մ.թ.ա. 126 թվականին Չժան Ցյանին ու պատվիրակներից մեկին հաջողվեց փախչել: Կայսրն ու իր նախարարներն իմացան Արեւմտյան մարզերում տիրող դրության մասին:



Խան Արեւմտյան հարստության ժամանակների
շեղանկյունանախշ ասեղնագործություն:

Յետագա 20 տարում Ու կայսրը երեք արշավանք կազմակերպեց գունների դեմ՝ փորձելով նրանց վրնդել Արեւմտյան մարզերից: Մ.թ.ա. 119 թվականին նա Չժան Ցյանին նորից է ուղարկում Արեւմտյան մարզեր, եւ այդ անգամ վերջինիս հաջողվում է խորանալ Արեւմուտքում, իսկ օգնականներին՝ հասնել Հարավային ու Արեւմտյան Ասիայի եւ միջերկրածովյան ավելի քան տասը երկրներ:

Արեւմտյան մարզերն ուղարկված Չժան Ցյանի երկու պատվիրակությունները ճանապարհ բացեցին դեպի Արեւմուտք: Ու կայսրը որոշ միջոցներ ծեռնարկեց Արեւմտյան մարզերի հետ կապն ամրապնդելու նպատակով, ներառյալ՝ Արեւմտյան մարզերում ապրող իր հպատակների համար խրախուսանքն առեւտրում: Շուտով կարելի էր տեսնել քազմաքիվ ուղտերից բաղկացած եւ զանգակների զնզանգոցի ներքո քայլող աղմկոտ քարավաններ, որոնք տարբերազան ապրանքներ էին տանում: Մետաքսի մեծ ճանապարհի շնորհիվ բարգավաճեց Զինաստանի առեւտրուր Կենտրոնական, Հարավային ու Արեւմտյան Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի հետ: 116 թ. Մետաքսի մեծ ճանապարհով Չանան ժամանեցին Ցոռնի պատվիրակները եւ հիմնեցին դեսպանություն:

Մետաքսի ճանապարհը նաեւ նպաստել է Հարավարեւելան Ասիայի՝ Արեւմտյան Ասիայի, Աֆրիկայի, ու Եվրոպայի հետ առեւտրի աշխուժացմանը: Տարբեր մայրցամաքներից նոր ապրանքների եւ տեխնոլոգիաների փոխանակումը նպաստեց այդ քաղաքակրթությունների զարգացման մակարդակի բարձրացմանը:

Հայտնագործություն «Արեւմուտքի» համար

Մետաքսի մեծ ճանապարհն ամգնահատելի ազդեցություն է գործել չին ժողովրդի կյանքի վրա: Այն դեպքում, եթե չինական մշակույթն ու տեխնոլոգիաները, ինչպիսին թուղթն ու տպագրությունն էին, ներկայացվեցին Արեւմուտքի երկրներին, Զինաստանն էլ ընդունեց որոշ տարրեր այլ երկրների արվեստից, փիլիսոփայությունից ու կրոնից: Դա օգնեց այլ մշակույթների ուղղությամբ երկրում վարվող բաց քաղաքականության բարելավմանը, Խան հարստությունից սկսած՝ մինչեւ Տան հարստությունը:

Սետաքսի մեծ ճանապարհը՝ դա մի ժամանակաշրջան էր Չինաստանի պատմության մեջ, երբ չինացիներն Արեւմուտքը պատկերացրել ու ներկայացրել են որպես մնացյալ աշխարհ տանող ուղի: Չինաստանն արեւելքում Խաղաղ օվկիանոսի կղզիներից ու ճապոնիայից բացի, սահմանակցում էր միայն օվկիանոսին: Արեւմուտքում, ընդհակառակը, կային շատ երկրներ՝ Արեւմտյան մարզերում ու դրանցից անդին: 10-րդ դարում արդեն չին հետազոտողները գիտակցել են հարուստ երկրների, գրավիչ ապրանքների եւ արվեստի առարկաների, ինչպես նաև տարբեր ժողովուրդների առկայությունն Արեւմտյան մարզերից այն կողմ: Դա նպաստում էր «Արեւմուտքի» հանդեպ հին չինացիների մոտ մեծ հետաքրքրության առաջացմանը:

Բուդդայականությունն, օրինակ, առաջին անգամ Արեւմտյան մարզերի խոտան թագավորությունում /Ներկայիս Սինցյան գավառի Խյատյան տարածք/ ներկայացվել է 87 թվականին հետո Մետաքսի ճանապարհի երկու հարավային ու հյուսիսային ուղղություններով աստիճանաբար տարածվելով դեպի Կենտրոնական հարթավայրերը:



Շիվան եւ Պարվատին

Այդ կրոնը հետագայում հսկայական ազդեցություն է թողել չինացիների ոչ միայն դավանանքի, այլեւ մտածողության զարգացման վրա: Նեստորականությունն ու իսլամը նույնպես չինացիներին ներկայացել են Մետաքսի ճանապարհով:

Ուրիշ երկրների մշակույթն արժեքավոր ժառանգություն է թողել այդ ճանապարհի ողջ տարածքի վրա: Ինչպես օրինակ՝ Գառչանի որմնանկարները, Կուչեի եւ Շունխուանի քարայրները, որոնք իրենցից ներկայացնում են չինական ու արեւմտյան մշակույթների եւ արվեստների խառնուրդ:



Զարդամկար՝ թոշումներ ու ծաղիկներ: Սուն հարստության ժամանակների ասեղնագործություն:

Կուչեի քարայրների որմնանկարները



Կուչեում գտնվող Սյուչե քարայրի
որմնանկար: Սինցզյան:

Դեպի արեւելք բուդդայականության տարածնան հետ Մետաքսի մեջ ճանապարհի ուղղությամբ օազիսներում սկսել են կառուցել հսկայական տաճարներ ու քարայրներ, որոնցում տեղադրվել են նրբագեղ արձաններ, արվել որմնանկարներ: Դրանց մեծամասնությունը դարերի ընթացքում ոչնչացվել է, բայց որոշներն ել պահպանվել են մինչեւ մեր օրերը:

Որմնանկարները հատկապես լավ են պահպանվել քարայրներում: Դրանցից առավել մտապահվողները

Ցյու Ցի հարստության ժամանակների որմնանկարներն են, որոնք գտնվում են ներկայիս Սինցզյան գավառի Կուչե տարածքում:

Այն դեպքում, եթե Կուչեի քարայրային որմնանկարներում մեծ մասամբ պատկերված են բուդդայական պատմություններ, որոշներում էլ կարելի է հանդիպել պատկերների, որոնք Զինաստանի, Ճնդկաստանի, Եգիպտոսի, Հունաստանի, Մեսոպոտամիայի եւ Կենտրոնական Ասիայի հին մշակույթների խառնուրդ են ներկայացնում:



Կուչեի /Սինցզյան գավառ/ Մոգույ քարայրի
որմնանկար /«Սատանան»/:

Որոշ նկարներում պատկերված է Բուդդան՝ ձեռքերից, ոտքերից ու կրունկներից արտածվող գերբնական լույսով: Սավառնող ապսարները պատկերված են տարբեր նվազառների՝ պիպայի, սրճի ու ֆլեյտայի վրա նվագելիս: Արեւի աստվածը պատկերված է երկանիվ կառքի վրա նստած, իսկ ուսկեգույն թոշնոց արքան՝ կամ երկգլխանի արծվի, կամ մարդկային գլխով արծվի տեսքով: Թեևավոր ծովածիուկներն ու դելֆինները թռիչքի մեջ են, կտցին՝ ծաղիկներից հյուսված պսակ: Այդ ամենը հունական արվեստի հետ հստակ նմանություն է ցույց տալիս:



Կուչեհ /Սինցյան գավառ/
Յուեշի քարայրի որմնանկար
«Երաժիշտ»/:



Կուչեհ քարայրներից մեկի
որմնանկար. Երկնքի
Աստվածք:



Քարայրներում պատկերված է նաև Եռաձեռք ու մարդկային երեք եւ կենդանական մեկ գլխով Շիվան՝ հագած վառ զգեստ: Յնդկական աստվածուիի եւ Շիվայի երկրորդ կին Պարվատին ականջօղերով է, գլխին, ոտքերին ու ձեռքերին՝ ուկե գեղեցիկ զարդեր: Որոշ որմնանկարներում պատկերված է Պարսկաստանի թագավորը՝ ռազմահանդերձով եւ իր ասպետների հետ, ինչպես նաև նկարչներ՝ եգիպտական ոճով, սեւ կեղծամներով, վրձինը ձեռքներում:

Չափ նկարներում պատկերված են երգեր ու պարեր: Որմնանկարներում նվազարանների թվում կան այնպիսիք, ինչպիսին են չինական սրինգը, ժուանյանը /Երիթային երաժշտական գործիք/, պարսկական պիպան, սոնան /փողային գործիք/, ուղղահայաց կունխոունը /25 լարանոց լարային գործիք/, հնդկական կորացված կունխոունն ու հնգալար գործիք, հունական լիլան /Երիթալարային գործիք/, կարելի է հանդիպել նաև մեծ քանակությամբ ֆլեյտաների, փողոցների եւ թմբուկների:

Որմնանկարների պարողներին կարելի է բաժանել երկու խմբի՝ մենապարողներ ու զուգապարողներ: Արական սեղի մենապարողները սովորաբար պատկերված են իրենց երկար շարժերով, որոնց ծայրերը, երբ պարողը պտտվում է, թրթում են օդում: Մենապարուիիները թեթեւ թիկնոցներով են, նաև՝ մերկ մարմիններին մարգարտե ու նեֆրիտե ուլունքներով: Զույգը կազմված է տարբեր մարմնակազմություն ունեցող տղամարդուց եւ կնոջից: Տղամարդիկ սովորաբար պատկերված են բուդդայական հանդերձում, մի ձեռքը՝ կնոց ուսին կամ նրան թեթեւ-ինչ գրկած, կանայք՝ կլոշ տաքարներով, ամենականացի դիրքերով, կոր կունխոուի վրա նվազելիս:

Երգող Աստվածուիին. Կուչեհ քարայրներից մեկի
որմնանկար:

Արական ու իգական մարմինները որմնանկարներում գալարվում են անգլերեն Տ-ի նման, նրանք կանգնած են համարյա ոտքերի մատնածայրերի վրա: Պարի այդ ոճը ներկայացնում է հնդկական ու արեւմտա-ասիական պարերը: Կուչեի ամենահայտնի որմնանկարներում պատկերված են մեծ քանակությամբ մերկ մարմիններ, հատկապես՝ կանացի ու գեղանի:

Առավել հայտնիների շարքին է պատկանում նաև այն որմնանկարը, որում Բուլղարյին ունկնդրում են մեծաքանակ օգնականուիինները: Հիմնական դիրքերը՝ Տ-գալարուն մարմիններով պարուիիններ՝ լի կրծքերով ու կլոր հետույքներով: Այդ պատկերները ցուցանում են Յնդկաստանի եւ Չունաստանի /հատկապես Բուլղարները՝ Յնդկաստանի/ արվեստների անժխտելի ազդեցությունը: Նման որմնանկարի լավ օրինակ է, ինչպես գիտնականներն են անվանում՝ «Մախամայայի լոգանքը»: Ոտքերը խաչաձեւած, ծառի տակ նստած գրեթե մերկ հասուն աղջիկ: Նա մարմնին կրում է մի քանի ժապավեն, պարանոցին ու դաստակներին՝ զարդեր: Երկու աղախիններ ծնկի են իշել նրա առջեւ: Եվս երկու աղջիկ, ջրի սափորներն ուսերին, քայլում են ծառի կողմը: Նրանց շրջազգեստի ալիքաձեւ նախշերն ու մուգ դեղին երիզը, ինչպես նաև սափորները, հունական արվեստի ազդեցության զգացողություն են հարուցում: Մի խոսքով՝ որմնանկարներն արտացոլուն են երկու՝ հունական եւ հնդկական արվեստների ոճը:

Յունական ու հնդկական մշակույթների ազդեցությունը հստակ կարելի է տեսնել եւ մյուս որմնանկարի վրա, որտեղ պատկերված են քագավորն ու թագուիին: Դեղնագունատ դեմքով թագավորը նստած է կենտրոնում ոտքերող խաչաձեւած: Նրա աջ կողքին գտնվող կինը՝ ծախ ձեռքը դրել է ամուսնու ուսին: Թագուիու մերկ մարմինը կրում է ոսկերչական զարդեր, ներառյալ՝ իրանի երեք ոսկե շղթաները: Նա կրում է օձանման բազկապաններ, իսկ ականջօղեր՝ եւ տղամարդը, եւ կինը: Թագավորն ունի գրավիչ արտաքին ու պարզ գույնի աչքեր: Նա բռնել է երեխայի ձեռքից, եւ բուլղայական հոգեւորականը ծնկի է իշել նրա առջեւ: Յունական զգեստով կինը կանգնած է երեխայի թիկունքում եւ ինչ-որ քան է ասում թագավորին: Երկու ծառաներ կանգնած են տիրոջ եւ տիրուիու հետեւում, եւ նրանց ափերը նույն դիրքում են, ինչ՝ բուլղայական ողջույնի ժամանակ:

Կուչեի քարանձավի որմնանկարները հուշում են Մետաքսի մեծ ծանապարիի բողած հարուստ ժառանգության մասին: Նրանք այն քանի պատմական հաստատումն են, որ քաղաքակրթությունների փոխանակությունն ու միաձուլումն իրենց հետ բերել են այդ քաղաքակրթությունների արվեստը:



8. ՄԵԾ ՏԱՆԻ բացորոշությունը

«Անալեկտները» /Լունյի/ սկսվում է Կոնֆուցիուսի պատվիրանից. «Մի՞թե հաճելի չէ դիմավորել հեռվից եկած բարեկամներին»: «Ճեռվից»-ը նշանակում է ուրիշ ապրելակերպ կամ փիլիսոփայություն: Ճիմնվելով Կոնֆուցիուսի այդ տեսակետի վրա, կարելի է տեսնել հեռվից եկած մեծարգոն մարդկանց հարգելու եւ նրանցից բան սովորելու ցանկությունը: Միաժամանակ գոյություն է ունեցել օտարների առջեւ իրեն լավ կողմից ցույց տալու ցանկություն: «Անալեկտներ»-ից մեկ այլ մեջքերուն. «Ենթագավառից մի աստիճանավոր մի անգամ Կոնֆուցիուսին հարցրել է կառավարման մասին, ինչին նա պատասխանել է. «Լավ կառավարումն այն է, եթք քո հարեւանները գոհ են, եւ մարդիկ հեռվից գալիս են, որպեսզի քեզնից կառավարում սովորեն»:

Զինական ոգու շիտակության ու բացորոշության լավագույն օրինակներից մեկն այն է, որի մասին գրել է Կոնֆուցիուսը: Դա բարգավաճ Տան հարստությունն է /618-907: Տան հարստության տիրապետության օրոք, սկսած Տայցզուն կայսրից /627-649/, Վերաբերմունքն ուրիշ նշակույթների նկատմամբ, որոնց բախսվել է հիշյալ հարստությունը, փոխվել է դեպի լավը՝ դեպի սոցիալական կյանքի բոլոր ասպեկտների բարգավաճման տանող վերաբերմունք՝ մերժելու եւ հակամարտելու փոխարեն:

Արվեստ աշխարհի բոլոր մասերից



Ժպտացող կնոջ կավե
Եռագույն արձանիկ /Տաճ
հարստություն/:

Տաճ եւ Սույ /581-618/ հարստությունների տիրապետության օրոք պաշտոնական ճաշկերույթների եւ արարողությունների ժամանակ մեծ ուշադրություն է հատկացվել երգերին ու պարերին: Սույ հարստությունում բնութագրական են եղել ինը սիմֆոնիաներից բաղկացած սեկցիաները, իսկ Տաճի օրոք ավելացվել է եւս մեկ սեկցիա: Խաճ՝ ինչպես եւ Սինցզյանին բնորոշ երաժշտություններից բացի, երկու սիմֆոնիաներում էլ ներկա են եղել արտասահմանյան /ներառյալ՝ Յնոլկաստանի, Բուրմայի եվ Կամբոյիայի/ մշակույթի տարրեր: Աշխարհի այլ մասերի երաժշտության հանդեպ սերը դուր է եկել ոչ միայն կայսրին ու պալատականներին, այլեւ հասարակ ժողովրդին: Լոյանում Տաճ հարստության երկրորդական մայրաքաղաքում, յուրաքանչյուր ընտանիք այրվում էր տարրեր ազգությունների երաժշտությունը սովորելու ցանկությամբ: Այն ժամանակ տարածված երաժշտական գործիքներից են եղել պիպան, բիլին /եղեգնյա փողածայրոցվ բամբուկե սրինգ. նվագարան՝ Պարսկաստանից/ եւ կունխուն /25 լարանց նվագարան՝ Յնդկաստանից/: Յորիգոնական ֆլեյտան կոչվում էր Ցյան ֆլեյտա: Յնդկական ծագման այդ գործիքը ներկայացվել է հյուսիս-արեւմտյան ու հարավ-արեւմտյան Զինաստանին, որոնց բնակիչները Ցյան էին կոչվում: Ասում են, թե «Յավերժահարսի պերճաշուր հանդերձի մասին մեղեղին» գոել է Սյուան Ցզյու կայսրն /712- 756/ այն բանից հետո, երբ այցելել է լուսին: Իրականում կայսրն արեւմտյան մարզերից փոխառել է «Բրահմանի մեղեղիներից» մի մաս: Այդ փաստը կարելի է վերագրել այլ ազգությունների երաժշտության հետ Խաճ երաժշտության ներդաշնակեցմանը:

Այդպիսի երաժշտությունն ուղեկցվել է նաև այլ ազգությունների պարերով: «Պտտվող պար»-ը, որն այն ժամանակ շատ հայտնի ժամանակակից պար է եղել Ուզբեկաստանի տարածքում, եւ «Ցատկերի պար»-ը /ժամանակակից Տաշքենդից/ համարվել են ժամանակի ամենահռչակավոր պարերը: Տաճ հարստության Նոր Ջրոնիկներում «Պտտվող պարի» մասին այսպես է ասված: «Պտտվող պարողը կանգնած է գնդակի վրա եւ պտտվում է քամու նման»: Այն ժամանակների գրական ստեղծագործություններում եւս կարելի է հանդիպել «Պտտվող պարի» մասին հիշատակման: Կայսերական պալատը եղել է տարրեր ներկայացումների, երաժշտության ու պարերի վայր:

Սյուան Ցզյուն կայսրն ինքն էլ գերազանց նվազում էր ֆլեյտայի եւ ցգե թմբուկի /գուննական երաժշտական գործիք/ վրա: Նմանապես արտասահմանից կայերական պալատ էին գալիս դերասաններ, երաժշտներ, պարողներ:

Կրոնական բազմազանություն



Պիպայի վրա նվազող
կմոց կավե արձանիկ
/Տան հարստություն/:

Քրիստոնեության ճյուղերից մեկը հանդիսացող նեստորականությունը Չինաստան է ներկայացել Տայցզուն կայսեր տիրապետության օրոք: Այդ կրոնի հիմնադիր Նեստորիոսը /386-451/ հերետիկոսության համար դատապարտված ու արտաքսված է եղել Յոնմի Եկեղեցու կողմից: Յետագայում նա աքսորված էլ մահացել է արեւմտյան Եգիպտոսի անապատներում: Նրա հետեւորդները բաժանվել են Յոնմի Եկեղեցուց եւ սկսել իրենց կրոնը տարածել արեւելքում: Արքեպիսկոպոսներից մեկը՝ Օլոպենը /ծննդյան ու մահվան տարեթվերը հայտնի չեն/ 635 թվականին իր շքախմբի հետ ժամանել է Չանան՝ իրենց անվանելով նեստորականներ: Վարչապետ Վան Սյուանլինը /579-648/ կայսեր կարգադրությամբ դիմավորել է նրանց, նաեւ ներկայացրել կայսերական գրադարանը՝ նրանց կրոնական սկրիպտների թարգմանության համար: Պետության կողմից նաեւ որոշակի գումար է հատկացվել նեստորական Եկեղեցու շինարարության համար:

Մյուս երկու կրոնները եղել են զրադաշտությունը եւ մանիսնեությունը: Մրանք եւս Չինաստանի տարածքում երեւան են եկել Տան հարստության տիրապետության ժամանակ: Զրադաշտության արմատները ծագում են Պարսկաստանից, որտեղ այն երկու անգամ պետական կրոն է եղել: Զրադաշտությունը Չինաստանին ներկայացրել են Սուգուդայի վաճառականները, որոնք երկիր են ժամանել 4-րդ դարում, իսկ պաշտոնապես այն ճանաչվել է Տան հարստության տիրապետության սկզբնական շրջանում: Մանիսնեությունն ստեղծել է ծագումով պարսկաստանցի Մանին /216-274/, ում հետագայում վրնդել են զրադաշտականները: Այն բանից հետո, երբ Մանին 277 թվականին մահացու տանջահարվել է պարսից բազավոր Բահրամ Առաջինի հրամանով, նրա հետեւորդները փախել են արտասահման եւ այնտեղ սկսել տարածել իրենց կրոնը: Քրոնիկներում կարելի է հանդիպել այն փաստի հաստատմանը, որ մանիսնեությունը Չինաստան է հասել կայսր Գաոցզունի /650-683 թթ./ օրոք: Մանիսնեության ուսմունքին սատարել է եւ Ու կայսրուհին, որը Տան հարստությունը կառավարել է 690-ից մինչեւ 705 թվականը:

Բուդդայական ճշմարտության որոնումներում

Միայն Տան հարստության ներկայացուցիչները չեն, որ աջակցել են օտարերկրյա բարեկամներին ու նրանց մշակույթներին, այլեւ հասարակ ժողովողի շատ ներկայացուցիչներ, որոնք ճանապարհորդել են արտասահմանում՝ տեղի մշակույթներն ուսումնասիրելու համար: Դրա երկու մեծագույն օրինակն են Սյուան Ցզանը /602-664/ եւ ի Ցզին /635-713/, երկուսն էլ եղել են բուդդայականության ուսուցիչ:

Սյուան Ցզանը Չինաստանը թողել է 627 թվականին եւ ճանապարհորդել Հարավային Ասիայում: Չանան է վերադարձել միայն 645-ին: 17 տարվա ճանապարհորդության ընթացքում նա այցելել է Արեւմտյան մարզերի ավելի քան 100 փոքր երկրներ, ինչպես նաև Հարավային Ասիա՝ ողջ լայնք ու երկայնքով: Այնտեղ նա ուսումնասիրել է բուդդիզմը եւ Չինաստան վերադառնալով՝ իր հետ բերել բուդդայական 657 ձեռագրեր: Տայ կայսրն անձամբ է դիմավորել նրան եւ 10 օր անցկացրել Լոյանում զրուցելով նրա հետ: Կայսրը նաև ավելի քան 50 հոգեւորական է հատկացրել՝ թարգմանությանն օգնելու համար: Սյուան Ցզանը նշանակվել է այդ ձեռագրերի գլխավոր թարգմանիչ:



Երաժշտա-երգային ներկայացում պալատում: Նկարել է Չժոու Ֆանը /կյանքի տարեթվերն անհայտ են/: Տան հարստության ժամանակների ստեղծագործություն:

Նա պարտականությունները բաժանել է հոգեւորականների միջեւ. ոմանք օգնել են տեքստը թարգմանելուն, մյուսներն՝ ստուգել թարգմանվածի համապատասխանությունը սանսկրիտին, երրորդները՝ խմբագրել արդեն պատրաստ թարգմանությունը եւ այլն: Սյուան Ցզին հետագա 19 տարին անցկացրել է գիշեր ու օօր թարգմանելով այդ ձեռագրերը: Թարգմանել է հասցրել դրանցից լոկ 75-ը, եւ դա կազմել է 1335 հատոր: Նա նաեւ թելադրել է «Տան հարստության գրառումներն Արեւմտյան շրջանների մասին» 12 հատորով հիշատակարանը /Դատան սիյու ցզի/, որը գրի է առել նրա աշակերտ Բյան Ցզին /ծննդյան ու մահվան թվականները հայտնի չեն/: Գրքում նկարագրված են Սյուան Ցզանի ճանապարհորդությունները, այն ինչ նա վերապրել ու լսել է Արեւմտյան մարզերի 138 պետություններում: Գիրքը պատմում է այդ երկրների աշխարհագրության, տրանսպորտի, կլիմայի, մթերքների, մարդկանց, լեզուների, պատմության, կրոնի, քաղաքականության, տնտեսության, մշակույթի եւ սովորութների մասին: Արդի գիտնականներն այդ գիրքը դասում են ՉարաՎային Ասիայի պատմության, փիլիսոփայության, կրոնի եւ գրականության մասին հիշատակող հազվագյուտ գրքերի շարքին:

Ի Ցզինը եւս ուղեւորվել է ՉարաՎային Ասիա՝ բուդդայականության ուսումնասիրման նպատակով: Բայց նա ընտրել է այնտեղ տանող ուրիշ ճանապարհ՝ ծովը: Նա Գուանչժոուից դուրս է եկել 671 թվականին, Չնողկաստան հասել Սումատրայով: Չինաստան է բերել բուդդայական 400 ձեռագիր: Կայսրուիի Ուն պալատից դուրս գալով՝ անձանք դիմավորել է նրան: Ավելի ուշ Չժուն Ցզուն կայսրը /705-710/ Չանանի Դացզյան տաճարում այդ ձեռագրերի թարգմանության ինստիտուտ է հիմնադրել: Դրանց թարգմանության վրա 16 տարի գրալվել են 83 թարգմանիչներ, որոնք հաղթահարել են 56 ձեռագիր՝ կազմելով ընդամենը 230 հատոր: Թագմանիչների խմբում այլ երկրներից եղել են 13 հոգի եւ 32 աստիճանավոր, որոնցից 11-ը՝ վարչապետներ: Նման նակարդակի թարգմանչական թիմը Տան հարստության բացորոշության եւս մեկ հաստատումն է օտարերկրյա մշակույթների նկատմամբ:



Տղամարդու կավե արձանիկ
/Տան հարստություն/:

Զանանը՝ գործարար ու մշակութային կյանքի կենտրոն

Տան կայսրության մայրաքաղաքը եղել է Զանանը: Յնարավոր է, որ այդ քաղաքն է ժամանակին եղել աշխարհի գործարար ու մշակութային կյանքի մեծագույն կենտրոնը: Արեւելքից-արեւմուտք այն փոքած է եղել 10 կմ երկարությամբ, հյուսիսից հարավ՝ ավելի քան 8 կմ: Ունեցել է 84 քառակուսի կիլոմետր ընդհանուր տարածք եւ միլիոնից ավել բնակչություն: Դա Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսից 200 հազար բնակչով ավելին է:

Արտերկրյա մշակույթների նկատմամբ բաց քաղաքականությունը Զանանին հնարավորություն է ընձեռել դառնալու աշխարհի ամենազարգացած մշակութային ու գործարար կենտրոնը: Օտարերկրյա պատվիրակները, վաճառականները, ուսանողները հազվագյուտ չեն այնտեղ: Խուճլու տաճար էին այցելում բազմաթիվ պատվիրակներ՝ 70 երկրներից, ներառյալ՝ մեծ խմբերը ճապոնիայից, Կորեայից եւ Տանգահից /ժամանակակից Սիրիա, Քուվեյտ, Իրաք, Լիբիա/: Տան հարստության տիրապետության օրոք ճապոնիայից Զինաստան են հղել ավելի քան 10 պատվիրակություններ, ներառյալ՝ ուսանողների, հոգեւորական հետազոտողների, արհեստավորների եւ տարբեր մասնագիտությունների տեր անձանց: Յուրաքանչյուր պատվիրակություն կազմված էր լինում առնվազն մի քանի հարյուր հոգուց: Ճապոնիայից եկած ամենամեծ խումբն իր կազմում ներառել էր 800 ներկայացուցչի: Կորեայից եկած 100-200 ուսանողներ Զանանում սովորում էին կանոնավոր հիմունքով: Տան հարստության Յին գրառումներոի համաձայն՝ 837 բվականին Զանանում եղել է կորեացի 216 ուսանող:



Ուղիղ վրա նստած
երաժիշտներ. կավե եռագույն
շինվածք
/Տան հարստություն/:

Ե՛վ ազնվականները, ե՛ւ սովորական մարդիկ ծանոթ էին արտասիմանյան ուտելիքներին ու սովորույթներին: Այն ժամանակվա հագուստի տարածված տեսակներից մեկը եղել է «փոքրամասնության տարազը»՝ Արեւմտյան մարզերի ու ներկայախ Ուգբեկստանի տարածքի բնակչության բնորոշ հանդերձը: Մարդիկ փառաբանում էին նեղ թեզանիքներով կարծ ժակետը, այն հարմար է ծի հեծնելու եւ որսի զնալու համար: Կանանց շրջանում նախընտրության արժանացած թիկնոցն այն ժամանակ ինդկական ոճի էր: Իսկ ամենատարածված մարզածելը պոլոն էր, որն ի սկզբանե խաղացվել է Պարսկաստանում:

Պոլոն սկզբում ներկայացվել է Թուրքիային ու Յնդկաստանին, իետո նաեւ Զինաստանին: Պատմական փաստաթղթերում կարելի է տեղեկության հանդիպել առ այն, որ կայսրեր Սյուլան

Ցգունն ու Սի Ցզունը /874-888/ եղել են պոլոյի լավ խաղացողներ: Միջին ու Արեւմտյան Ասիայի մեծ թվով վաճառականներ Չանանում՝ ունեցել են գինու, ոսկերչական եւ այլ կարգի խանութներ: Նրանց գինու խանութները հռչակավոր էին ոչ միայն ընթելիքի հիանալի համով, այլեւ աղջիկների երգչախմբով՝ կազմված Արեւմտյան մարզերի գեղանի օրիորդներից: Այն ժամանակ գինու խանութներում երգչախումբ պահելը շատ էր ընդունված: Տան հարստության մեծ բանաստեղծ Լի Բայը /701-762/ մի շարք բանաստեղծություններ է գրել նրանց գեղեցկության մասին. «Գեղեցիկ՝ ինչպես ծաղիկը» /Կնոջ ժպիտը գինու խանութում/ Չեփյուր է գարնանային», «Գնալու տեղ չիք գարնանավերջին, /Ժպտալով մտնեմ խանութը գինու՝ /Լի աղջիկներով ուրիշ հողերի»:

Մշակույթի ու ոճի՝ դրսից փոխառելու պրակտիկան ներկայացրել է Տան հարստության բարձավագող դինամիզմը՝ հիացմունք պատճառելով հաջորդ սերունդների գիտնականներին:



9. ԶԺԵՆ ԽԵՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵԿԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԾՈՎԵՐ

1405 թվականին լուսնային օրացույցի 7-րդ ամսվա 11-րդ օրը 208 նա-
վից կազմված մեծ նավատորմիղ դուրս եկավ բաց ծով։ Նավերում ընդհա-
նուր թվով 27500 մարդ կար։ Դա աշխարհում երբեւ եղած նավատորմիղ-
ներից ամենամեծն էր։ Նավերը տաճում էին ճենապակի, մետաքս, թեյ եւ
անհաշիվ քանակության այլ հարստություններ։ Շրջանցելով Յնդկական
օվկիանոսը, ծովային քարավանը Յարավ-չինական ծովով ու Մալակայի
նեղուցով ընթանում էր դեպի Ասիայի ու Աֆրիկայի ծովափնյա երկրներ։ Յե-
տագա 28 տարում համարյա նույն չափի եւ ընդհանուր թվով ավելի քան
100 հազար ուղեւորով 6 նավատորմիղներ էլ են ուղեւորվել Արեվմտյան ծո-
վերի կողմն իրենց ճանապարհին այցելելով ավելի քան 30 երկիր։ Յին Զի-
նաստանում «Արեվմտյան ծովեր» էին անվանում Յարավ-չինական ծովի
արեվմտյան մասում գտնվող շրջանները։ Արեվմտյան Ասիայում նրանք եղել
են սուրբ Մեքքայում, Աֆրիկայում՝ հասել մինչեւ Պորտա Բեյրա /ժամանա-
կակից Մոզամբիկի տարածք/։

Նավատորմիղի հրամանատարը եղել է Մին հարստության /1369-1644/
Յուն կայսեր /կառավարման թվականները՝ 1403-1424/ բարձրաստիճան
պալատական ԶԺԵՆ ԽԵՒ /1371-1433/։ Ծնված լինելով իսլամադավան ըն-
տանիքում, նա հավատում էր նաեւ Բուդդային ու Մացզուին /ծովերի չինա-
կան աստծուն/։ Բարձրակիրք լինելու եւ նավագնացությանը լավ տիրապե-
տելու համար կայսրը նրան է արժանացրել բոլոր յոթ արկածախնդրական
առաքելությունների դեկավարը լինելու պատիվը։

Առաջադեմ նավագնացության քաղաքակրթությունը

15-րդ դարից սկսած՝ մարդկությունն արագացրել է օվկիանոսների «սանրումը»: Քրիստափոր Կոլումբոսն /1451-1506/ Ամերիկյան մայրցամաք հասավ 1492 թվականին՝ իսպանական նավատորմիդի հետ հատելով Խաղաղ օվկիանոսը: Վասկո դե Գամայի /1460-1524/ գլխավորությամբ պորտուգալական նավատորմը շրջանցելով Յուսո հրվանդանն Աֆրիկայում՝ Հնդկական օվկիանոսով 1498 թվականին հասավ Կոժիկողա՝ Հնդկաստանի արեւմտյան ծովափ: Ֆերդինանդ Մագելլանը /1480-1521/ եւ նրա իսպանական նավատորմը ջրով շուրջերկրյա ճանապարհորդություն կատարեցին 1522 թվականին:

Այդ ճանապարհորդությունների հետ համեմատած՝ Զժեն Խեն իր ուղեւորությունները կատարել է շատ ավելի վաղ եւ ավելի մեծ նաշշտաբով: Դեպի Արեւմտյան ծովեր յուրաքանչյուր ճանապարհորդությունում նրա նավատորմիդը բաղկացած էր ավելի քան 100 նավից, որոնցից 62-ը մեծ ու միջին չափսերի էին եւ կազմում էին նավատորմիդի հիմնական մասը: Անձնակազմի հետ միասին՝ մարդկանց ընդհանուր թվակազմը գերազանցում էր 20 հազարը: Այն դեպքում, եթե Կոլումբոսի նավատորմը բաղկացած էր ընդհանունը երեք նավից եւ 88 մարդուց՝ անձնակազմով հանդերձ: Ակնհայտ է, որ Զժեն Խենի նավատորմիդը յուր ժամանակին իր չափսերով եղել է նմանը չունեցող, սակայն նավագնացության տեխնոլոգիան, կազմակերպվածությունն ու հարմարությունները թույլ չեն տվել կատարել ավելի հեռավոր լուղարկություններ:

Զժեն Խենի նավերն էլ էին կառուցված բարձր տեխնոլոգիաների ու վարպետության միջոցով: Նավատորմիդի մեծ նավերն ունեցել են 150 մետր երկարություն, 60 մետր լայնություն, 12 մետր բարձրություն: Նրանց բեռնատարողունակությունը եղել է 1000 տոննա: Թիմի անդամների եւ ուղեւորների համար նավում եղել են քառահարկ առանձնախցեր: Տախտակամածը կազմում էր 9 հազար քառակուսի մետր՝ մոտավորապես ֆուտբոլի դաշտի չափ: Նավն ուներ 9 տասներկուառագաստանոց կայմեր: Նրա երկարյածանը դեկը բարձրացնելու համար պահանջվում էր 200 մարդ: Զժեն Խենի մեծ նավերը անգամ հինա էլ անսովոր մեծ կերեւային:



Սին հարստության
ներկայացուցիչ Սյուանդեի
/1426-1435/ տիրապետության
ժամանակների կապտասպիտակ
քաս:

Խաղաղության տարածում

Յուն Լե կայսրը Զժեն Խեին ուղարկելով Արեւմտյան ծովեր՝ ցանկացել է ցույց տալ Մին կայսրության բարգավաճումը, ինչպես նաև կենսագործել իր գաղափարները, ձեռք բերել նոր բարեկամներ՝ խաղաղություն տարածելով մոտ ու հեռու Երկրներում: Զժեն Խեի հսկայական նավատորմիդը Զինաստանի հզորության եւս մեկ հաստատումն էր այն ժամանակներում: Զժեն Խեն միաժամանակ կատարում էր կայսեր ներկայացուցչի գործառույթը միջազգային հարաբերությունների զարգացման գործում:

Զժեն Խեի ընտանեկան քրոնիկներում, որոնք լույս են տեսել 1930-ական թվականներին, կան մեկնարկից առաջ կայսեր կողմից տրված պատվիրաններ. «Ընթացիր Երկնքի եւ խաղաղության ուղիներով, չվախեցնես փոքր կամ թույլ Երկրներին, խաղաղություն տարածիր»: Եվ իր բոլոր ուղեւորություններում Զժեն Խեն հետեւել է Երկրի եւ իր տիրոջ պատվիրաններին:

Թեեւ բոլոր ճանապարհորդություններում Զժեն Խեն իր հետ զինված ջոկատ էր տանում, 28 տարում նրանից օգտվել է լոկ Երեք անգամ: Առաջին անգամ՝ Պալեմբանգի /արդի Սումատրայի հարավային ծովափ/ տարածքում ետ մղելով ծովահեններին: Երկրորդ անգամ՝ պաշտպանվելով Ցեյլոնի /Չի Լամկա/ թագավորի գրոհներից, ու Երրորդ անգամ՝ Սումատրայի տարածքում խռովարարների ավազակախմբից: Այդ գործողություններից ոչ մեկով Զժեն Խեն չի խախտել Յուն Լեի պատվիրանած խաղաղության սկզբունքը:



Մին հարստության ներկայացուցիչ՝
Խունու կայսեր /1368-1398/
տիրապետության ժամանակների
կապտասպիտակ թաս:



Գորշկանաչավում
ծաղկաման
Յաղչժողովի
արվեստանոցից
/Սումատրա/:

Ամենուր, որտեղ եղել է Չժեն Խենն իր նավատորմիղով, նրանք երբեք չեն ներկալել օտար տարածքները, չեն հափշտակել ուրիշի սեփականությունը, ոչ մի օտար երկրում չեն բողել իրենց գինվորներից եւ ոչ մեկին: Ընդհակառակը, որտեղ էլ լինում էին, նվերներ էին հանձնում տարբեր ծագման թագավորներին ու նրանց ընտանիքներին, տարբեր մակարդակի առաջնորդներին եւ բուդդայական տաճարներին. դրամական միջոցներ, մետաքս, ծենապակի, հագուստ, երկաք, պյունձե, արծաթե եւ ոսկե ամանեղեն: Նա նաեւ իր հետ Չինաստան բերեց այսուսներ, սալիկներ, ջնարակված սալիկներ՝ Հարավ-արեւմտյան Ասիայի որոշ մասերում տաճարներ կառուցելու համար: Յետեւելով ազատ առեւտրի սկզբունքին՝ Չժեն Խենի թիմը ճենապակին, մետաքսը, թեյը եւ մետաղյա ամանեղենը իշխանությունների կամ սովորական բնակիչների հետ փոխանակում էր զարդերով, համեմունքներով, դեղամիջոցներով եւ հազվագյուտ կենդանիներով:

Նրանք տեղի բնակիչներին նաեւ ծանոթացնում էին չինական օրացույցի, ավանդական բժշկության, գյուղատնտեսական տեխնոլոգիաների, արտադրության, նավագնացության եւ նավաշինության հետ:

Ամեն անգամ Չինաստան վերադառնալով՝ Չժեն Խեն իր հետ բերում էր օտարազգի պատվիրակների: Օրինակ՝ լուսնային օրացույցի 1422 թվականի իններորդ ամսում Յուն Լե կայսեր կառավարման 20-ամյակի պատվին նրա հետ Չինաստան էին եկել Հարավային Աֆրիկայի 16 երկրների ավելի քան 1200 պատվիրակներ: Չժեն Խենի նավերով նմանապես Չինաստան էին եկել մի քանի թագավորներ, որոնցից երեքը՝ Սուլուլից /ներկայիս Ֆիլիպինների Սուլուլ արշիաթելագ/՝, Բորնեոյից /այժմ՝ Կալիմանտան կղզին/ եւ Գրան Սուլուկասից /ժամանակակից Ֆիլիպինների Մինդանաո կղզի/, մինչեւ իրենց մահը մնացել են Չինաստանում: Եթի հիվանդությունից վախճանվեց Բորնեոյի թագավորը, Յուն Լե կայսրը եռօրյա սուզ հայտարարեց:

Ասիական որոշ երկրներում մարդիկ մինչ այսօր էլ հիշում են Չժեն Խենին: Կարելի է անգամ հանդիպել նրա պատվին կառուցված շինությունների, ինչպես օրինակ՝ Չժեն Խեն տաճարը Ինդոնեզիայի Սեմարանգ քաղաքի նավահանգստում: Մալակայի նեղուցում կարելի է հանդիպել նի տեղանքի, որը, հավատալիքների համաձայն, սարքել է Չժեն Խեն: 2004 թվականին Մալազիայի ու Չինաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների ստեղծման 30-ամյակի կապակցությամբ կուալա Լեմպուրի Թագավորական օպերային թատրոնում երկու լեզվով դրամա է ներկայացվել: Յիմնվելով Սեյարա Սելայուի /նալազիական տարեգրության/ վրա՝ դրամայուն պատմվում է Մալակայի տիրակալ Սուլթան Մանսուր շահի հետ Յուն Լե կայսեր դստեր՝ արքայադուստր Խան Բաոլիի ամուսնության պատմությունը: Չժեն Խենն ու 500 հոգուց բաղկացած շքախունբն ուղեկցել են արքայադստերը: Դա Չժեն Խենի ուղեւորությունների մասին հետարքիր պատմություններից մեկն է:

70 / Զինաստանի մշակույթի քրեստոնատիա





10. Զինական մեծ պարիսապը

Չկա Զինաստանի մասին որեւէ երկխոսություն, որտեղ շրջանցված լինի հիշատակումը Զինական մեծ պարսպի մասին: 2000 տարվա ընթացքում, մ.թ.ա. 7-րդ դարից՝ մինչեւ 16-րդը, կայսերական 19 հարստություններ կառուցել են 100 հազար կիլոմետրանոց այդ պարիսապը, որն արմատական վերանորոգման է ենթարկվել 3 անգամ. առաջինը՝ 8ին հարստության /221-206/, երկրորդը՝ Խան /206-220/ ու երրորդը՝ Մին հարստության /1369-1644/ օրոք: Ժամանակակից Զինական պարիսապը Մին հարստության ժառանգությունն է: Այն ձգվում է 6700 կիլոմետր՝ արեւմտյան անապատի Ցյայույ լեռնանցքից մինչեւ արեւելյան ծովափի Շանհայ լեռնանցքը: Զինական պարսպի ողջ երկարությանը կան բազմաթիվ կտրված տեղեր: Նրա ամենալավ պահպանված տեղանասը Պեկինի հյուսիսային ծայրամասում է:


Խաղաղության ձգտում

Իր շինարարության մասշտաբով, ինչպես նաև աշխատանքում ընդգրկված մարդկանց թվով ու բարդությունների մակարդակով Զինական մեծ պարիսապը չունի նմանը: 8ին հարստության առաջին կայսեր տիրակալության ժամանակ /մ.թ.ա. 246-210/ Զինաստանի յուրաքանչյուր քսան մարդուց մեկը մասնակցել է պատի կառուցմանը:

Դարց է ծագում. ինչու՞ են չինացիները կառուցել այդ պարիսապը: Եղած պիտի լինի, չէ՞, որեւէ պատճառ, որպեսզի հինավուրց ազգը 2000 տարի շարունակ զբաղվի նման պարսպի շինարարությամբ:

Զինական մեծ պարսպի վաղ մասերը կառուցվել են չընդհատվող պատերազմների պայմաններում: Դրանցից տառապող մարդիկ հասկացել են, որ ավելի լավ է պարիսպ կառուցել՝ պաշտպանվելով պատերազմից, քան՝ պատերազմից հետո զրկվածներին բաղել խրամուղիներում: Սակայն պատեր կառուցելը բարդ աշխատանք է, որը երբեմն կյանք է արժենում: Այդու-

ամենայնիվ՝ արյունալից պատերազմների փոխարեն մարդիկ ընտրեցին պարսպի շինարարությունը: Այդպիսով, Չինական մեծ պարիսպը կառուցվել է հենց պաշտպանության համար: Այն արտացոլում է խաղաղ կյանքի հանդեպ չինացիների ցանկությունը:



Չինական մեծ պարսպի հսկման ու պաշտպանության աշտարակներից մեկի տեսքը:

Բարձր է Չինական մեծ պարսպի նշանկառությունը պատմության մեջ: Պողպատե ժամանակաշրջանում այն անվիճելիորեն կարեւոր դեր է կատարել՝ որպես պաշտպանության միջոց հատկապես հարավի ֆերմերների վրա հարձակվող հեծյալ հյուսիսիներից: Պարիսպն անվտանգության զգացում եւ հենց անվտանգություն է տվել հողագործներին: Նրանք կարող էին հանգիստ աճեցնել իրենց բերքը:

Բաժանում եւ միավորում

Չինաստանի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները հին ժամանակներում հանգեցրել են երկու որոշակի մշակույթների առաջացման: Զորի հողերով ու տաք կլիմայով հարավը հարմար էր հողագործության համար, հովվական հողերով եւ ցուրտ կլիմայով հյուսիսն՝ անասնապահության: Յարավի գյուղատնտեսությունը համեմատաբար զարգացած էր, հյուսիսինը՝ ոչ: Յողագործ բնակչության համար շատ կարեւոր էր կայունությունը, մինչդեռ հյուսիսցիները հովվական կյանքի հրամայականով հաճախ էին տեղաշարժվում: Անասնապահության սահմանափակ եւ անկայուն եկամուտը հյուսիսցիներին ստիպում էր կախվածության մեջ լինել հարավցիների գյուղներքներից: Քոչվոր ժողովուրդների ներխուժումը հարավ պատմականորեն եղել է ավիլի շուտ անհրաժեշտություն՝ քան տիրապետության սահմաններն ընդլայնելու ցանկություն:

Ավելի քան 2000 տարի առաջ, սկսած Ցին հարստությունից ու մինչեւ հաջորդ հարստությունները, հարավ ներխուժող ժողովուրդներն էին սյան-յունը, գունները, տուցօքեն, խույխսեն, ցիդանը, նյուեշտենը եւ մոնղոլները: Չարավցիները հյուսիսցիների հեծելազորի շարժունակության պատճառով միշտ անշահավետ դրության մեջ էին: Նման պայմաններուն Չինական մեծ պարհապջ նրանց թեեւ ոչ այնքան կատարյալ՝ բայց արդյունավետ պաշտպանության հնարավորություն էր տալիս:

Այդպիսով՝ Չինական մեծ պարհապջ ժողովուրդներին բաժանեց հարավցիների եւ հյուսիսցիների ու արգելապատնեշ դարձավ նրանց միջեւ: Այն նվազագույնի է հասցրել ժողովուրդների միջեւ հակամարտությունը եւ նրանց հնարավորություն տվել օարգանական էկոնոմիկային եւ նպաստում հարավի մթերայնության օարգացմանը: Այն միաժամանակ հյուսիսի ժողովուրդներին ստիպել է հրաժարվել հարավը կողոպտելուց եւ ձեռք օարկել սեփական քաղաքակրթության օարգացմանը: Դա դարձել է հարավի եւ հյուսիսի միջեւ հետագա փոխանակության ու կապի սկիզբ:



Չինական մեծ պարսպի մասերից
մեկը: Մուտյանյու /Պեկինի
հյուսիսային ծայրամասեր/:

Առանց Զինական մեծ պարսպի Զինաստանը կունենար միանգամայն ուրիշ պատմություն: Դոկտոր Սուն Յաթսենը /1866-1925/, որը գլխավորել է Ցին հարստությանը /1616-1911/ տապալած՝ 1911թվականի հեղափոխությունը, ասել է. «Եթե չկանոնավոր Զինական մեծ պարհսպը, չինական քաղաքակրթությունը կը մասնաւոր կառավարման վերջում կամ խան հարստության կառավարման սկզբում՝ Սուն /960-1279/ եւ Մին հարստությունների ծագումից շատ առաջ: Եվ այդ դեպքում չեր լինի խան ու Տան /618-907/ հարստությունների զարգացումը, եւ չեր լինի հյուսիսինների ու հարավցինների միավորումը»:

Այն ժամանակ Զինական պարսպի ողջ ձգվածությամբ եղել են մի քանի տասնյակ տնտեսական գոտիներ, որտեղ մարդիկ փոխանակվել են տնտեսական ու մշակութային արժեքներով: Զինաստանի պատմությունում երկար ժամանակ հարավի հողագործական եւ հյուսիսի անասնապահական տնտեսությունները լրացրել են միմյանց եւ կախված են եղել այդ փոխանակությունից: Այսպիսո, Զինական մեծ պարհսպը կարեւոր դեր է խաղացել երկու կողմերի համար՝ նոր տնտեսական մշակույթի հիմնադրման գործում:

Զինական մեծ պարսպի ոգին

Զինական մեծ պարսպի կառուցման դժվարությունները վեր են պատկերացումից: Յսկայական թվով մարդիկ հարկադրված են եղել թողնել իրենց տներն ու ընտանիքները՝ հյուսիս գնալու համար, որտեղ աշխատել են տարիներ շարունակ: Պարսպի կառուցման 2000 տարում նրանցից շատերն այնտեղ էլ թողել են իրենց կյանքը: Նպատակին հասնելու չինական իդիոմն ասում է՝ համատեղ ձգտումները Զինական պարհսպ կառուցեն:

Զինական մեծ պարսպի մասին լեզենդներից ամենատարածվածը տիկին Մեն Ցօյանի պատմությունն է: Նա ապրել է Ցին հարստության առաջին կայսեր կառավարման օրոր: Ամուսնու՝ Զինական մեծ պարսպի շինարարություն գնալուց հետո Մեն Ցօյանը շատ էր կարոտում նրան: Մի անգամ էլ կինը ելավ տնից ու գնաց նրան որոնելու: Երբ վերջապես հասել էր պատի կառուցվող մասի մոտ, մի հայրենակից հայտնեց, որ ամուսինը գոհվել է ու թաղված է պատի տակ: Կոտրված սրտով կինը երեք օր ու գիշեր այնքան է լաց է լինում սիրեցյալի համար, որ պատը մաս-մաս է լինում:

Մարդիկ շատ բան են տվել պատի կառուցմանը: Տիկին Մեն Ցօյանի լեզենդը ցույց է տալիս մարդկանց տառապանքը: Այն նաեւ ցուցանում է ժողովրդի ատելությունը Ցին հարստության առաջին կայսեր նկատմամբ: Նրանք Զինական մեծ պարսպի շինարարությունը չեն, որ դատապարտում էին: Մարդիկ վրդովվելու պատճառ չունեին դրա համար, պատը պաշտպանում էր իրենց: Զինական մեծ պարսպի շինարարները, ինչպես ժողովրդն էր ասում, «թաքնվող վախճաներ» չեն, այլ միահամուռ ցանկության եւ անհամեմատելի ուժի տեր մարդիկ:



Չինական մեծ պարսպի մասերից մեկը: Սըմատայ /Պեկինի հյուսիսային ժայռամասեր/:

Դարերի ընթացքում Չինական մեծ պարիսպը դարձել է չին ժողովրդի միաբանության եւ ուժի խորհրդանշական կերպ: Խորհրդանշում է այն, որ մեծ նվաճումները կարող են ձեռք բերվել ընդհանուր ցանկության եւ համաձայնեցված ջանքերի շնորհիվ: Օրինակ՝ ճապոնական ագրեսիայի դեմ պատերազմի ժամանակ /1937-1945/ գրված Չինաստանի ազգային հիմնը կոչում է՝ «Մեր մարմնվ ու արյամբ կառուցենք նոր Չինական պարիսպ»:

Չինական մեծ պարսպի հրաշքները

Չինական մեծ պարսպի հրաշքը նրա հոյակապ շինությունն է եւ տարբերագան կառուցվածքը: Որպես պաշտպանական շինություն՝ այս պարիսպն ամենեւին էլ պատերի միապաղադ շինություն չէ: Ընդհակառակը, այն կազմված է պաշտպանության տարբեր ծեւերի համար տարբեր մասերից, իր մեջ ներառում է բլոկպոստեր, կայազորներ եւ անցումներ՝ կառուցված ռազմավարական կարեւոր տեղերում, ազդանշանային աշտարակներ՝ պատի ողջ երկարությամբ:



Զինական մեծ պարսպի՝ Սըմատայի
ուղղաբերձ մասը:

Զինական մեծ պարսպի՝ Պեկինից շատ հեռու չգտնվող Սըմատայ տեղամասն իրենից ներկայացնում է պատի ալիքաձեւ ու ռիթմիկ մաս: Ինչպես հայտնի արտահայտությունում՝ է ասված՝ Սըմատայն արտացոլում է Զինական մեծ պարսպի իրաշքն՝ իր կտրտուն հատվածներով:

Կտրուկ լեռնաշղթաների վրա գալարվող Սըմատայի որոշ հատվածներն անցնում են ժայռապարունակների ու ժայռածերպերի վրայով, իսկ մյուս մասերում դեպի հովտի խորքը ձգվում: Սըմատայի ամենագրավիչ տեղերը կոչվում են «Սանդուղք դեպի ամպերը» եւ «Երկնային կամուրջ»: Առաջինն զգալիորեն ավելի նեղ է, քան պատի միջին լայնությունը /միջինով՝ 3-5 մետր/, պատի ամենանեղ մասը լայնքով մեկ մետր է: Այդ մասի զույգ կողմերում վտանգավոր ժայռեր են, այնտեղ բարձրանալու համար հարկավոր էր սանդուղքով մագլցել մինչեւ ամպերը: Դասնելով «դեպի ամպերը սանդուղքի» զագարին, մեկեն դեմ ես առնում «Երկնային կամուրջին»: Դա հարյուր մետրանոց պարանակյուս կամուրջ է լեռնագագաթներին, որի երկու կողմում փոշած են խոր հովիտները:

Սըմատայի ամենաբարձր կետը Վանցզին աշտարակն է՝ ծովի մակարդակից 986 մետր բարձրության վրա: Այստեղից կարելի է դիտել դեպի հեռու արեւմուտք ու արեւելք ձգվող Զինական մեծ պարիսպը: Նայելով դեպի հարավ՝ կարելի է աղոտ տեսնել Պեկին մայրաքաղաքը: Զինական մեծ պարսպի գերազանցությամբ ու գեղեցկությամբ հիանալու համար այս աշտարակը լավագույն տեղերից մեկն է:



11.Արգելված քաղաքը. գեղեցիկ ու տպավորիչ

Արգելված քաղաքը նաեւ հայտնի է որպես Պալատ-քանգարան, դա մի վայր է, որտեղ Մին /1368-1644/ եւ Ցին /1616-1911/ հարստությունների 24 կայսրեր գահաթողին նստած նիստեր են գումարել: Դա ամենահոյակապ պալատային համալիրն է Պեկինում եւ իր տեսալի մեջ՝ ամենից լավ պահպանվածն աշխարհում: Նրա տպավորիչ ճարտարապետությունը եւ հավաքածուների մեջ քանակությունը հաստատում են երկորի պատմականությունը:

Վիշապի փակ ուրվագծերը

Երբ Յուն Լե կայսրը /կ.տ. 1403-1424/ որոշեց մայրաքաղաք դարձնել Պեկինը, վճռեց քաղաքի ձեռուտեսքը քողմել այնպիսին, ինչպիսին եղել է նախկինում, երբ Դադու էր կոչվում եւ հանդիսանում էր Յուան հարստության /1206-1368/ մայրաքաղաքը: Մին հարստության կայսրը միաժամանակ նաեւ մի քանի փոփոխություն նշցրեց: Յոյակապ քաղաքի կառուցումը պահանջեց մի քանի տասնյակ տարի եւ միլիոնին մոտ բանվորներ:

Մին հարստության մայրաքաղաքը կառուցվել է հարավից հյուսիս առանցքով՝ 8 կմ երկարությամբ, շենքերն ու լանդշաֆտն՝ այդ առանցի երկու կողմերով, շենքերը՝ առանցքի հետ համաչափ, ինչը հազվագյուտ տեսք էր հաղորդում:

Առանցքն սկսվում է հարավում Յավերժական անդորրի դարպասներից: Նրա արեւելյան ու արեւմտյան մասերում վեր են խոյանում, համապատասխանաբար, երկնքի աստոն եւ Մշակման աստոն տաճարները: Երկուսն էլ կառուցված են համաչափորեն:



*Առջեւի Դարպասների
գիշերային տեսքը Տյանամնեն
հրապարակում:*

Այս վայրերը եղել են զոհաբերության վայրեր՝ իրոք արժանի կոչվելու սկիզբ առանցքի: Սկզբից ուղիղ ու լայն ճեմուղին տանում էր դեպի Առջեւի դարպասները, վերջիններիցս հյուսիս կանգնած էին քարե կամարն ու կամուրջը եւ ավելի հյուսիս՝ Զինաստանի դարպասները, որոնք քանդվեցին 1959 թվականին՝ դեպի Տյանամնեն հրապարակը ճանապարհ կառուցելու համար:

Հրապարակից դեպի հյուսիս գտնվում են Երկնային հանգստության դարպասները, որոնք Մին հարստության կառավարման ժամանակներուն կոչվում էին Երկնային բարենպաստության դարպասներ: Տյանամնենից դեպի արեւելք գտնվում էր Կայսերական ընտանելկան սրբավայրը /որտեղ կայսրն աղոթում էր իր նախնիների համար/, իսկ դեպի արեւմուտք՝ Կայսերական պետական սրբավայրը /որտեղ օրհնում էին հողի եւ բերքի աստվածներին/: Յետագայում վայրն այս վերանվանվեց բանվորների մշակութային պալատ, իսկ ներկայումս Սուն Յաթսեն գրոսայգին է:

Միանման հիմքերի վրա Երկու տաճարների տեղադրվածությունը կապված է չինական ագրարային հասարակության հետ: Ազնվության՝ ապա եւ Միջօրեական դարպասների միջով կենտրոնական առանցքը տանում է դեպի Արգելված քաղաքը եւ այն հատում մինչեւ հյուսիսային դարպասները, Աստվածների կամքի դարպասները, որոնցից դեպի հյուսիս գտնվում է Բարգավաճնան բլուրն՝ Արգելված քաղաքի ետնաբակում: Բլրի կենտրոնական գագաթը զարդարում է տաղավարը՝ կենտրոնական առանցքից վեր: Բարգավաճնան բլրից հյուսիս գտնվում են Չմեռային հանգստության դարպասները, որոնցից սկսած՝ ուղիղ ճեմուղին տանում է դեպի Թմբկային աշտարակն ու Չանգակատունը, որոնք եւ նշանակում էին Պեկինի կենտրոնական առանցքի վերջը:



Գուգումը
/Արգելված
քաղաք/
թռչքային
բարձրությունից:



Ուկե
կամուրջները՝
Տյանանմենի
բարձրաբեմից
հյուսիսից:

Արգելված քաղաքի ընդհանուր տարածքը կազմում է 720 հազար քառակուսի կիլոմետր: Այն կազմված է երկու մասից. Ներքին պալատ՝ հյուսիսուն եւ Արտաքին պալատ՝ հարավում: Արտաքինում կայսրն զբաղվել է պետական գործերով, Ներքինում ապրել է կայսերական ընտանիքը: Արտաքին պալատի հիմնական շինություններն են. Բարձրագույն ներդաշնակության, Լրիվ ներդաշնակության եւ Ներդաշնակության պահպանման դահլիճները: Բարձրագույն ներդաշնակության դահլիճը գտնվում է արգելված քաղաքի ամենակենտրոնում: Երեք գլխավոր դահլիճներից հյուսիս գտնվում է Գրական փառքի, սրանից հյուսիս՝ Ռազմական արիության դահլիճը:

Ներքին պալատի գլխավոր շինություններն են Երկնային մաքրության, Միավորման ու խաղաղության, Երկրային հանգստության դահլիճները, որոնց երկու կողմում՝ կայսերական հարծերի կացարանները։ Արգելված քաղաքի տարածքում գտնվում են ավելի քան 8 հազար դահլիճներ ու սենյակներ, եւ բոլորը՝ կառուցված համաչափորեն։

Դարավից հյուսիս ձգվող կենտրոնական առանցքը հիշեցնում է վիշապի աղոտ ուրվագծեր։ Կենտրոնական գծի գոյգ կողմերի շինությունները չափսերով ու ծեւավորմանք տարբեր են։ Ութ կիլոմետրանոց առանցքի սկզբը Դավերժական հանգստության դարպասներից սկսած մինչեւ Առջեւի դարպասներն իրենից վեհաշուր սկիզբ է ներկայացնում՝ այն դեպքում, երբ Առջեւի դարպասներից մինչեւ Բարգավաճման բլուրն ու Վերջինիս գագաթ Թնբկային աշտարակն ու Զանգակատունը առանցքի վերջն է։ Գնահատել հին Պեկինը նույնն է, ինչ՝ գնահատել Երաժշտական շարժման 3 աստիճանները։

Արգելված քաղաքի գույները

Արգելված քաղաքի ցանկացած այցելու անպայման ուշադրություն կդարձնի նրանում առկա գույներին։

Դեղինն ու վառ կարմիրը հանդիսանում են Արգելված քաղաքի հիմնակազմից գույները։ Դիմ Զինաստանում դեղինը խորհրդանշել է կայսերական ուժը, կարմիրն էլ՝ երջանկությունը։ Տաք գույնը լինելով՝ դրանք ջերմություն ու կիրք են հաղորդել։

Արգելված քաղաքի առանձին կանգնած շենքերից յուրաքանչյուրի տանիքը պատված է ոսկեգույն վերնիծե սալիկներով, իսկ պատերը ներկված են վառ կարմիրով։ Շենքի ծանրությունը պահող սյուների կարմիր գույնը նույնպես տեսողական էֆեկտ ունի։ Պարզկա օրով սալիկների փայլող ոսկեգույնը երկնային կապույտի եւ Արգելված քաղաքը շրջապատող կանաչ ծառերի հանադրությամբ հիշեցնում է Երազանքների աշխարհ։

Համակշռված ազդեցություն գործելու համար օգտագործված են նաև այլ գույներ։ Օրինակ՝ քիվատակերի շորսուները սովորաբար պատվում էին սառը գույների նախշերով, ինչպիսին են կապույտն ու սպիտակը։ Կարմիր սյուները, դժոներն ու պատուհանները կանգնած էին քարե սպիտակ հատակի վրա։ Սպիտակ քարե սանդղավանդների վրա կանգնած, ոսկեգույնով ու կարմիրով պատված շենքերը գունային հակադրություն էին ստեղծում։ Վերցնենք, օրինակ, Բարձրագույն ներդաշնակության դահլիճը։ Եթե այն դիտես արեւելյան կողմից, ապա մարմարե եռահարկ հսկա սանդղավանդի վրա կանգնած հիշեցնում է ճերմակ ամպերի մեջ սահող Երկնային գունեղ պալատ։

Այն դեպքում, եթե վառ գույները՝ դեղինն ու կարմիրը, վեհություն են հաղորդում կայսերական հզորությանը, սառը գույները, ինչպիսին են սպիտակն ու կապույտը, շենքերին հաղորդում են նրբագեղություն։ Օրինակ՝

ընդարձակ բակն՝ Ազնվության /հարավում/ եւ Բարձրագույն ներդաշնակության /հյուսիսում/ դարպասների միջեւ լիովին պատված է գորշ աղյուսիկ-ներով: Մարմարե հինգ կամուրջներ են ծգված Ներքին ոսկե գետով: Այդ գորշ պատկերի դիմաց վեր են խոյանում Բարձրագույն ներդաշնակության դարպասներն՝ իրենց դեղնակարմիր գույնով արտահայտելով վեհագեղություն:

Արգելված քաղաքի յուրաքանչյուր այցելու կիհանա Պեկինի կենտրոնում գտնվող այդ պատմական հրաշքով:



Արգելված քաղաքի երկու դիտաշտարակներից մեկի տեսքը գիշերով: Աշտարակները տեղադրված են քաղաքի հյուսիս-արեւելյան եւ հյուսիս-արեւմտյան անկյուններում:

Արվեստը Եւ գեղագիտությունը

Զինացիներն ստեղծել են արվեստի հազվագյուտ շատ տեսակներ. բրոնզե հոյակապ սպասքը, նրբագեղ եղնամուշտակները, բնական թանաքանակարները, մաքուր ճենապակին, Տան բանարվեստը, գեղագրությունը, Բուդդայի հավերժական արձանները եւ Պեկինի վառ օպերան: Արվեստի այս տեսակները բացահայտում են չին ժողովրդի ներաշխարհը, ներկայացնում գեղագիտության հազվագյուտ զգացումը չինացիների մոտ:

Զինացիներն արվեստը համարում են կյանքի որակի կատարելագործման եւ մտքի հանգստացման մեթոդ: Դա կյանքի չինական փիլիսոփայության զարգացումն է:






12. Երաժշտություն. Կառավարում է Երկիրը, սնում է մտքերը

Չինական երաժշտության ավանդույթների արմատները գալիս են հին ժամանակներից: Երաժշտության միջոցներով կառավարել երկիրն ու սնել միտքը՝ այդ ավանդույթի երկու գլխավոր գործառույթն են:

Կառավարում երաժշտության միջոցներով


Ըստ հին չինական մշակույթի՝ ծիսակատարությունները սահմանել են մարդկանց վարքի կանոնները: Նպատակը հասարակական կարգի պահպանումն էր: Երաժշտությունն ստեղծվում էր մտքի մշակման ու արտահայտման համար: Նրա գործառույթը եղել է կյանքի նկատմամբ մարդկանց հայացքների բարելավումն ու եռանդով եւ ստեղծագործությամբ նրանց ներշնչելը: Այդպես նրանք կարող են ավելի ներդաշնակորեն ու երջանկորեն վայելել կյանքը: Անհատական բավարարվածությունը տանում է դեպի սոցիալական ներդաշնակություն, ինչպես նաև՝ մարդկանց ու բնության միջեւ դեպի ավելի ներդաշնակ հարաբերություններ: Չինական երաժշտության բարձրագույն մակարդակը ներկայացվել է բնության հետ հոգեւոր ներդաշնակությամբ:

Երաժշտության նկատելի աճը Հին Չինաստանում բացատրում է հնուց անտի բարդ նվազարանների երեւան գալը: Դրա օրինակն են երաժշտական զանգակները: Առաջին անգամ օգտագործվելով Շան հարստության ժամանակ /1600-1046/, դրանք հանրահայտ են դարձել Արեւմտյան Չժոռ հարստության /1046-771/ օրոք: 1978 թվականին Խոլբեյ գավառում պեղումների ժամանակ գտնվել է գերազանց պահպանված երաժշտական զանգակների համակազմ: Գտածոն հայտնաբերվել է Պատերազմող պետությունների ժամանակաշրջանում /475-221/ ապրած՝ տեղական ֆեոդալ Մարկիզ Իի դամբարանում:



*Մարդիկ իի
Երաժշտական
զանգակները /հատված/:*

Նրա Երաժշտական եռաշար զանգակները կազմված են 65 զանգակից: Առաջին շարքում 19 հատ նյու զանգակներ են, երկրորդում ու երրորդում՝ 45 յուն զանգակ: Զանգակները յուրաքանչյուր շարքում տարբերվում են չափսերով ու համապատասխանաբար՝ իրենց հնչյուությամբ: Գումարած՝ եւս մեկ առանձին զանգակ՝ չափսով՝ ավելի մեծ, որը լրացնում է հնչյունի բարձրությունը: Շրջանակը եւս, զանգակների նման, պատրաստված է բրոնզից, եւ այդ ամենը կշռում է ավելի քան 5 տոննա: Զանգակների ընդհանուր քաշը 440 կիլոգրամ է: Այն դեպքում, երբ զանգակները պատված են ավելի քան 2800 հիերոգլիֆներով, որոնք վերաբերում են Երաժշտությանը, շրջանակի վրա փորագրված են նախշեր: Նման գործիքները ժամանակին շատ հազվագյուտ էին:



*Չինական ցիտրամ՝ առջեւից ու
հետեւից: Տան հարստության
ժամանակների երաժշտական
գործիք:*

Այս գործիքի վրա նվազելու համար պահանջվել է հինգ մարդ: Յարվածի տեղից անկախ՝ յուրաքանչյուր զանգակ արձակել է երկու հնչյուն: Զանգակի բոլոր զանգակիկները արձակել են նույն հնչյունները, ինչ՝ ժամանակակից դաշնամուրը: Մարկիզ Իի երաժշտական զանգակի վեհությունն ու ճշգրտությունն արտացոլում են երաժշտության նկատմամբ Յին Չինաստանի հասարակության հատուկ վերաբերմունքը՝ որպես անհատի զարգացման ու սոցիալական ներդաշնակության խթանում:

Պատերազմող պետությունների ժամանակաշրջանի կոնֆուցիոնականության մեջ մտածող Սյուն Ցզին /325-235/ երաժշտությանը տվել է նույնափիսի նշանակություն, ինչպիսին ծեսերին՝ ասելով. «Երաժշտական կրթությունը մտքի մաքրություն է տալիս մարդկանց: Ծեսերն ստեղծված են մարդու վարքի զսպման համար: Երաժշտության ու ծեսերի հետ մարդիկ ներծծված են ավելի մաքրուր, ավելի բանական ու հնագանդ մտքով: Նրանք նաև նպաստում են մարդու պահելաձեւերի բարելավմանը: Այդպիսով՝ երկրում կտիրի գեղեցկության ու կարենցության հետ միմյանց լրացնող խաղաղությունը»:

Երաժշտությունը ներդաշնակություն է բերում. սա կարեւոր կոնցեպցիա է, որը հազարամյակներ շարունակ ազդել է չինական մշակույթի վրա: Այն շեշտում է ներդաշնակությունը՝ որպես մշակույթի գլխավոր արժեք:



«Յիտրայի վրա նվազ՝ սոճու տակ»: Նկարը՝ Յուան հարստության գեղանկարիչ Չժու Ղեժունի /1294-1365/: Այն հարուցում է ներդաշնակության զգացում, որը հեղինակին ոգեշնչել է այդ ստեղծագործությանը կյանք տալուն, որտեղ երաժիշտը մենակ է՝ բնությանը դեմ-համդիման:

Մտքի միսիթարությունը երաժշտության օգնությամբ

Անհնարին է խոսել չինական երաժշտության մասին՝ չիշատակելով յորլարանի երաժշտական գործիքի՝ չինական ցիտրայի նասին, որը նշանավորում է նրբագեղ ուսմունքի կիզակետը հին ժամանակներում։ Որպես ամենահին նվագարան, ցիտրան բանաստեղծների սիրելին էր։ Եթե երաժշտությանը տալիս էին ներդաշնակության միջոցով երկիրը կառավարելու նշանակություն, ապա չինական ցիտրան եղել է ավելի անհատական նվագարան՝ միսիթարության եւ ինքնարժեվորման համար։

Հին Չինաստանի գրողները ցիտրան դիտարկել են որպես նրբասիրտ անձնավորության համար անհրաժեշտ պայման։ Նրա նրբահունչ մեղեդիներն օգնում են հանգստի եւ հավասարակշռության կարգավորմանը։ Իրադրությունը չինական ցիտրայի վրա նվագելու համար կարեւոր պայմաններից մեկն էր։ Ցզին Արեւելյան հարստության /317-420/ կառավարման ուշ շրջանի եւ Յարավային հարստությունների /420-589/ կառավարման սկզբնական շրջանի գեղանկարիչ եւ գրող Ցզուն Բինը /375-44/ ցիտրայի վրա նվագելու հաճույքը վայելել է լեռներում՝ գետի ափին։ Յենց որ նա մատները դիպցնում էր գործիքի լարերին, մոռանում էր, թե որտեղ է գտնվում։ Ցիտրայի հնչյունները խառնվում էին լեռանց արձագանքի հետ, ու երաժիշտը բնության հետ մնում էր մենակ։

Չյան վրա ցիտրայով նվագելը նույնպես հնագույն արվեստի գործիչների սիրելի ժամանցից է եղել, նրանք գտնում էին, որ ցիտրան աշխարհի ամենամաքուր նվագարանն է։ Ի՞նչը կարող է ավելի հաճելի լինել՝ քան նվագելը ծյուներում։ Ու Վեյը /1409-1508/, Մին հարստության /1368-1644/ հոչակավոր գեղանկարիչը, այդ տեսարանը ներկայացրել է իր կտավներից մեկում։ «Սալորի ծաղկի փնտրությում ծյուների մեջ»։ Անթացուառով մարդն անցնում է ծյունածածկ կամրջով։ Տղա սպասավորը քայլում է նրա հետեւից՝ ծեռքում պահելով ցիտրան։ Յալչող ծյան տակից երեւում են գետաքարերը։ Այդ նկարը հին չինական դերասանների եւ գիտնականների համար իրենից ներկայացնում էր երազանքների երկիր։

Լուսնկաթով լի գիշերը եւս կատարյալ ժամանակ է եղել ցիտրայի վրա նվագելու համար։ Տան հարստության /618-907/ մեծ բանաստեղծ Վան Վեյը /701-761/ ցիտրայի վրա սիրել է նվագել մուր գիշերով՝ բամբուկի անտառում։ Նրա «Բամբուկի անտառում» բանստեղծության մեջ կան այսպիսի տողեր։ «Նստած մենության մեջ բամբուկի անտառի, /ես նվագում եմ ցիտրայի վրա՝ ինք էլ սուլելով, /եւ չկա ոչ ոք՝ լուսնյակից բացի»։

Չինական ցիտրան արձակում է հավասարակշիռ հնչյուններ։ Դրա օրինակը «Վայրի սագերն իջնում են քարե ափի վրա» ստեղծագործության մեղեդին է։ Նրա առաջին մասի թույլ դանդաղ ոիթմը աշնան մաքուր երկնքի տակ հանգստահոս Յանցզի գետի տպավորությունն է տալիս։ Երկրորդ մասն անցնում է ավելի կենսունակ ոիթմի՝ հիշեցնելով ծլվլացող շատ թշունների։ Երրորդ մասը հաղորդում է Յանցզի գետի քարե ափին վայրի սա-

գերի վայրէջքի զգացողությունը: Զինացի երաժիշտներն ու երաժշտության սիրահարները վայրի սագերի բավարարվածությունը պատկերացրել են մարդկային սրտի հանգստությամբ:

Ցիտրան նաեւ կապի միջոց է ծառայել իին դերասանների ու գիտնականների միջեւ: «Ծաղկած սալորի երեք բանատուն» ստեղծագործության, որը վերագրվում է Ցզին Արեւելյան հարստության ժամանակաշրջանին /317-420/, համրահայտ կոմպոզիցիան ցիտրայի վրա բանաստեղծ Վան Ցզըյուի /338-386/ եւ ֆլեյտահար Խուան Իի /"- 420/ պատմությունն է: Մի անգամ պոետը գետի վրա նակույկով նավարկելիս ինչոր հնչյուններ է լսում մյուս ափից: Դա Խուան Ինի նվազն էր: Թեեւ այդ երկուսը ծանոթ չեին միմյանց, բայց հիանում էին մեկը մյուսի ստեղծագործությամբ: Իր սոցիալական խավին չնայելով՝ Ցզըյուն ընտանիքի անդամներից մեկին ուղարկում է Խուան Իի մոտ՝ խնդրելու, որ նվազի իր համար: Առանց խնդրի քննարկման Խուանը նվագեց «Ծաղկած սալորի երեք բանատուն»-ը եւ ավարտելով՝ վերստին նստեց իր սահնակն ու գնաց: Ցզըյուն էլ իր հերթին սահնակ նստեց եւ շարունակեց ճանապարհորդությունը: Երկուսով բառ անգամ չփոխանակեցին միմյանց հետ, բայց սրտերում կապ առաջացավ երաժշտության միջոցով: Նետագայում «Երեք բանատուն»-ը վերածվել է կոմպոզիցիայի, որը դարձել է ցիտրայի վրա կատարվող կոմպոզիցիաներից ամենահայտնին:



13. Բրոնզե շինվածքների հոգեւոր էությունը

Բրոնզե դարի սկիզբը մարդու կողմից բրոնզից պատրաստած աշխատանքի գործիքների օգտագործման սկիզբն է: Բրոնզե դարը Զինաստանում տեւել է 1500 տարի՝ սկսած Սյա հարստությունից /մ.թ.ա. 2070-1600/ եւ մինչեւ Գարնան ու Աշնան ժամանակաշրջանը /մ.թ.ա. 770-476/: Պեղումների ժամանակ հայտնաբերված մշակույթի առարկաների մեջ քանակությունը Զինաստանում բրոնզե քաղաքակրթության բարձր մակարդակի հավաստումն է: Դրանք ցույց են տալիս այդ ժամանակաշրջանի քաղաքական ու կրոնական թեմաները եւ այդ պատճառով ել իրենցից ներկայացնում են բարձր գեղարվեստական արժեք:

Մեծ դիմում յուի համար

Դիմում սկզբնապես եղել է կերակրի եռոտանի ու երկկանք կարսա, իսկ հետագայում առարկա՝ ծիսակատարությունների համար: Յուի համար մեծ դիմի օրինակներից մեկը 3000 տարի առաջ՝ Զժոռու Արեւմտյան հարստության քան թագավորի /մ.թ.ա. 1020-994/ տիրապետության ժամանակներում ձուլվածն է: Այժմ Զինաստանի պատմության բանգալանում պահվող մեծ դիմում, որ մետրի չափ բարձրություն ունի, արտահայտում է այն ժամանակի ծիսական առարկաների կարեւորությունը: Շան եւ Զժոռու հարստությունների կառավարման օրոք կարեւոր մարդիկ ծեսերի համար բրոնզից հսկայական իրեր էին ձուլել տալիս, որպեսզի ցույց տան իրենց հղորությունը:

Չինական բրոնզե դարը ներկայացնող
աշխատանքներից մեկը՝ մեծ դինը յուի
համար:



Այն ժամանակներում թագավորն իր իշխանությունն ընդգծելու համար բրոնզե իրեր էր նվիրում ենթականերին, վերջիններս էլ դրանք ընդունում էին պատկառանքով: Դրա օրինակը յուի համար մեծ դինն է: Այն զարդարված է 291 հիերոգլիֆներով, նման քանակությունն այն ժամանակ հազվագյուտ է եղել: Նրա վրա գրված են քան թագավորի պատվիրանները գեներալ Յուին, որոնք գգուշացնում են ոգելից ընպելիքներից: Այդ ժամանակ գեներալն ուղեւորության էր մեկնում, եւ թագավորը նրան իրազեկում է Շան հարստության անկման եւ Չժոու Արեւմտյան հարստության գահակալության գալու մասին: Յուի համար մեծ դինի իրանին ու երեք ոտնակներին պատկերված է Տառտե լեգենդար կենդանին՝ հայտնի սննդի հանդեպ իր անհագությամբ: Այն մեծ բերան ունի եւ չունի մարմին: Այնքան էլ հասկանալի չէ, թե անկուշտ որկրանոլի պատկերն ինչու է ծիսական առարկաների շարքում հռչակ վայելել: Պատճառներից մեկը կարող է լինել նման սարսափազդու տեսք ունեցողի միջոցով չար ոգիներին վախճանելը:

Լուսուի եւ կռունկի կաթսայիկները

Գարնան ու Աշնան ժամանակաշրջանի բրոնզեդարյա հռչակավոր առարկաների թվին են պատկանում եւ երկու քառանկյուն կաթսայիկները: Անվանումները տրվել են դրանց վրայի զարդանկարի համար: Չժոու Արեւմտյան հարստության ժամանակների բրոնզե իրերի կարծրության ու հանդիսավորության համեմատ՝ քառանկյուն կաթսայիկներն ավելի թեթև են ու նրբագեղ: Քառանկյուն կաթսայիկներն իրենցից քառակուսի չեն ներ-

կայացրել, քանի որ նրանց չորս կողմերը լայնքով հավասար չեն միմյանց: Բերանը փոքր-ինչ նեղ է, քան մարմինը, որը դեպի հատակ գնալով լայնանում է: Վիշապանման երկու գազաններ ամրացված են երկու կողմից, հնարավոր է՝ դրանք օգտագործվել են որպես կանք: Լեզենդար գազանները կցված են ստորին չորս անկյուններին: Երկու տարօրինակ գազաններ կաթսայիկի յուրատիպ ոտքերն են ու ներքեւից պահում են անոթը: Խուփի զարդարված է լոտոսի ծաղկի երկողի թերթիկներից կազմված շրջանով, ինչը ծաղկող լոտոսի տպավորություն է ստեղծում: Լոտոսի կենտրոնում կանգնած է վիզուալ ուղղած ու թեւերը տարածած կռունկը: Մեծ կաթսան ու փոքր կռունկը սազում են իրար, ինչպես նաև էկզոտիկ զարդանախշերն են համապատասխանում կռունկի նրբագեղ դիրքին:

Բացի թռչող կռունկից եւ հատակը պահող՝ պոչները ոլորած երկու գազաններից, կաթսայիկի վերին ու ստորին մասերում պատկերված են թռչող ու լողացող վիշապներ: Այդ ամենը հաղորդում է շարժման զգացողություն: Մասնավորապես՝ լոտոսի թերթիկների «բացվելը» պատկերում է ամպերը, որոնց վրայով թեւում է կռունկը:



Լոտոսի եւ կռունկի կաթսայիկը: Թեւերը բացած կռունկը շարժման զգացում է հաղորդում:

Թռչող ծիծեռնակից առաջ անցնող վարզաձին

Խան Արեւելյան հարստության օրոր /25-220/ ձուլված «Թռչող ծիծեռնակից առաջ անցնող վարզաձին» քանդակագործական անմահ ստեղծագործություններից մեկն է Չինաստանի արվեստի պատմության մեջ:

Չին Չինաստանում քանդակագործական արվեստի կարեւոր օբյեկտներից մեկն է եղել: Այն իրենից պարզապես ձի չէ, որ ներկայացնում է, այլ՝ շարժման մեջ գտնվող ձի, որը երբ ամբողջ արագությամբ արշավում է, թվում է, թե սավառնում է ամպերում: Դրա համար էլ հին չինացիներն արագ ընթացող ձիուն պատկերացրել են որպես «ամպերում ճախրող երկնային նժույգ»: Արագընթաց ձիուն քանդակը սովորաբար պատկերվում էր ամպերում լողալիս: «Թռչող ծիծեռնակից առաջ անցնող վարզաձին» քանդակում կենդանու մի ոտքը գտնվում է թռչող ծիծեռնակի վրա, իսկ մյուսներն օդում են: Լայն բացված աչքերով ձին գլուխը պահում է բարձր, ռունգերը փքված են, ականջները՝ ցից: Բաշի մի մասը խոհիվ նիտված է վեր՝ այն դեպքում, երբ պոչն օդում է: Մարմնի ուժեղ ու սահուն մկանները հուշում են այն մասին, որ ձին արշավում է: Արշավող ձին վազանցում է ծիծեռնակին՝ ետ շրջված ու զարմացած նայելով նրան:

Սովորաբար մենք թռչող ծիծեռնակին պատկերացնում ենք ավելի արագ շարժվելիս, քան` վազող ձիուն, իսկ այս քանդակում ձին առաջ է անցնում ծիծեռնակից, ինչը մեզ տալիս է այն զգացողությունը, թե որքա՞ն արագ է վազում ձին:

Տան հարստության /618-907/ հռչակավոր բանաստեղծներից մեկը՝ Լի Բայը /701-762/ գրել է «Երկնային ձիու երգը» բանաստեղծությունը, որի երկու տողով կարելի է նկարագրել այդ քանդակը. «Ճրջվելով ետ ու սեւ ծիծեռնակին նայելով /Չին/ ծիծաղում է նրա դանդաղկոտությամբ»:

«Թռչող ծիծեռնակից
առաջ անցնող
վարզաձին»:
Խան Արեւմտյան
հարստության
ժամանակների
արվեստի
ստեղծագործություն՝
ամպերում արշավող
ձիու պատկերով:



92 / Չինաստանի մշակույթի քրեստոնաւիա





14. Թրծակավե զորքը

Առաջին կայսր Ցինի /մ.թ.ա. 246-210/ Թրծակավե զորքը, որ համարվում է աշխարհի «Ութ իրաշալիքներից» մեկը, ոչ միայն նրա ռազմական հզորության մեջ ժառանգությունն է, այլև՝ իին չինական ազդեցության բարձր օրինակ:

Թրծակավե զորքի հայտնաբերումը

1974 թվականի գարնանը, երբ Սյանյանի /Շաանսի գավառ/ բնակիչները ջրհոր էին փորում, դեմ առան կավե անսովոր դրվագների: Դրանցից որոշ-ները հիշեցնում էին մարդկային, մյուսները՝ կենդանիների կերպարանքներ: Գտածոն հետաքրքրեց հնագետներին, եւ շուտով պեղման վայրում հայտնաբերվեցին թրծակավե զինվորներ ու ծիեր, որոնք Առաջին կայսեր հետ թաղվել էին ավելի քան 2000 տարի առաջ:

Պեղվել էին 4 բացիանք եւ հազարավոր թրծակավե զինվորներ: Դամար 1 բացիանքում, որն ամենամեծն է՝ 14000 քառ.մետր տարածքով, գտնվում են հազարավոր ռազմիկներ ու նժույգներ՝ մարտական վիճակում եւ ամբողջ հասակով մեկ: Առաջին օդակը կազմված է 3 շարք կազմած 210 զինվորներից՝ հրամանատարի հետ կանգնած: Շուրջ 6000 զինվորներ կազմում են զորքի գլխավոր ուժերը: Նրանք կանգնած են 38 զորասյունով, որոնցից մի քանիսը՝ 180 մետր երկարությամբ: Նրանք ռազմահանդերձով ու զենք-զրահով են, ձեռքում պահում են բրոնզե զենքեր: Կենտրոնական օդակի յուրաքանչյուր կողմից 180 զինվորից քաղկացած շարք է կանգնած: Շետեւում կանգնած են 100 ռազմիկներ՝ ասես թե նրանց թիկունքը պահե-

լու համար, ինչպես նաեւ թրծակավե 32 նժույգներ, որոնք փայտե ռազմակառքեր են քարշ տալիս: Լինելով գտածոյի ամենապատկառելի մարտական դասավորությունը՝ հավանաբար դա եղել է Առաջին կայսեր զորքի բնական պատճենը:



Դ.2 բացիանքում հենց նոր գտնված՝
Թաքնվող ռազմիկի թրծակավե կերպարանքը:
Արձանիկը տեղ-տեղ դեռ հողոտ է:

Դ.2 եւ հ.3 բացիանքերը հայտնաբերվել են 1976 թվականին:

Դ.1 բացիանքում գտնվում են չորս մարտական դասավորություններ՝ ներառյալ 1300 զինվոր ու ծիեր, ավելի քան 80 սայլակառքեր եւ տասնյակ հազարավոր բրոնզե գենքեր: Բացիանքի արեւելյան մասում կանգնած է նետաձիգների խումբը: Առջեւոն ողջ հասակով մեկ կանգնած են 60 նետաձիգներ, իսկ հետեւում 160-ական նետաձիգներով 8 զորայուներ՝ մեկ ծունկը գետնին հպած: Նրանցից աջ՝ 8-ական շարքով 64 ռազմակառքեր: Յուրաքանչյուր ռազմակառք քաշում են չորս ծիեր: Ամեն մի ռազմակառքի հետեւում կանգնած են երեք ռազմիկներ. նա, ով կանգնած է մեջտեղում, ձեռքում պահում է երասանները, իսկ ովքեր կողքից են՝ զինված են լիովին:

Դ.2 բացիանքի կենտրոնում ռազմական երկու այլ դասավորություններ են՝ կազմված 19 ռազմակառքից, 264 հետեւակայինից եւ 8 հեծյալից: Նրանք բոլորը բաժանված են 3 շարքի: Յուրաքանչյուր ռազմակառքի առջեւում կանգնած է մեկ զինվոր՝ մի ձեռքում պահած երասանները, մյուսում՝ ձգված աղեղը:

Ք. 2 բացհանքում գտնված՝ կանգնած նետաձիզի գլուխը: Նետաձիզը հայացով հետեւում է մոտեցող թշնամուն:



Անեն ռազմակառքի հետեւում 3 կառապաններ են ու մի քանի հետեւակայիններ: Ռազմակառքերից ձախ 108 հեծյալներից եւ 11 շարքով 180 թամբված ձիերից կազմված դասավորություն է:

Ք.3 բացհանքը գտնվում է հ.1-ից դեպի արեւմուտք: Դա գտնված բոլոր բացհանքերից ամենափոքրն է: Նրանում կան ընդամենը 68 ռազմիկներ: Առջեւում կանգնած է ռազմակառքը: Այս բացհանքը հիշեցնում է բանակի ձախ, կենտրոնական եւ աջ դիվիզիաների կենտրոնակայան: Բայց երեւում է բացհանքի կառուցումը մնացել է կիսատ:

Ք.4 բացհանքը հայտնաբերվել է բավականին ուշ: Այն գրադարձնում է շուրջ 5000 քառ, մետր տարածք: Տեղադրված լինելով հ.2 եւ հ.3 բացհանքերի միջեւ՝ նրանում, ամենայն հավանականությամբ, պետք է որ տեղադրվեր կենտրոնական դիվիզիան, որը սակայն, չի լրացվել զինվորներով ու ձիերով:

Կենդանի քանդակներ

Թրծակավե զորքի ու ձիերի գտածոն ցնցող հայտնագործություն էր ոչ միայն զորքերի թվաքանակի, այլև՝ քանդակների վարպետ փորագրության առումով:

Բոլոր ռազմիկներն ու նժույգները քանդակված են հասակով մեկ: Զինվորները՝ մոտավորապես 185 սմ, ձիերը՝ 160 սմ բարձրությամբ: Ի սկզբանե բոլոր կերպարանքները ներկված են եղել, բայց հողում անցկացրած տարիների հետ գույներն աղոտացել են: Քանդակներն արվել են կենդանի մոդելների հիման վրա՝ առանց չափազանցման ու աղավաղման: Բոլոր ռազ-

միկները տարբերվում են իրենց մազերով, աչքերով, հոնքերով, քթերով, շրութերներով, ականջներով ու մորուսով, որոնք ցույց են տալիս նրանց տարիքը, դիրքը հասարակության մեջ եւ անձնավորությունը: ԵՎ զինվորները, եւ ծիերը կենդանի են երեւում եւ արտահայտում են դինամիկ շարժման զգացում:

Օրինակ՝ հ. 2 բացիանքից կիսանստած եւ ծունկը գետնին հպած նետաձիգները մազերը հավաքել ու ագուցել են գլխներին, հագել նետաձիգային հարմարանքներով ռազմական հագուստ:



Հ. 2 բացիանքում գտնված՝ կիսանստած
նետաձիգը: Այն ժամանակվա քամդակային
արվեստի լավ նմուշ:

Մեկ ծունկը հենած գետնին՝ նրանք կիսանստել են, եւ մարմինները փոքրինչ մղված են առաջ, իսկ ձեռքերը ձգում են աղեղնալարը: Թեեւ ոչ մի աղեղ ու նետ չեն պահպանվել մինչեւ մեր օրերը, նետաձիգների դիրքը ցոյց է տալիս նետարձակման գործընթացը: Կանգնած նետաձիգների կերպարանքները շատ են լարված. իրար բերած հոնքեր, թեթևակի փքված ռուճգեր, լարված ականջներ: Զգացվում է, որ կանգնած սպասում են գրոհի հրամանին: Նույնիսկ նրանց ռազմական հանդերձանքներն են տարբեր դիրքերում, ինչը ցոյց է տալիս յուրաքանչյուր զինվորի շարժումը, կիսանստած նետաձիգները եւս տարբերվում են մեկը մյուսից: Մանրամասների նման ներկայացունը դիտողին կենդանի զինվորների պատկերացուն է տալիս:

Երեք բացիանքերում գտնվում են ավելի քան 600 ծիեր: Դրանք եւս կենդանի ծիերի տպավորություն են թողնում: Այն դեպքում, երբ որոշները քաշում են ռազմակառքները, մյուսները հեծելակի մաս են կազմում:



Պահպանված քառածի ռազմակառքերից մեկը:
Բրոնզից պատրաստված գերազանց աշխատանք:

Վերցնենք, օրինակ, հ. 2 բացիանքի հեծելակի ծիերից մեկին: Այն շատ անուր կանգնած է հեծելակ զինվորի հետեւում: Կարծես թե ուզում է բարձրացնել առջեւի ոտքերը՝ այն դեպքում, եթե հետեւինն ամուր մնում են գետնի վրա: Զին գլուխը բարձր է պահում՝ այն դեպքում, եթե բաշը փոքր-ինչ է միտված վեր: Այդպիսին է եւ ձիու պոչը: Նրա գլխի գծերը հստակ ուրվագծված են, ինչն առողջության ու մաքրության զգացողություն է հաղորդում: Լայնացած ռունգերով, փակ բերանով ու լայն բացված աչքերով ձին թվում է կենդանի եւ գգոն:

Առաջին կայսր Ցինի թրծակավե զորքը բազմաթիվ զինվորների, ծիերի ու մարտակառքերի կենդանի ներկայացմանը ժամանակակից մարդկանց հասկանալ է տվել 2000 տարի առաջ ստեղծված՝ քանդակագործական մեծ արվեստը:





15. Բուլղայի հավերժական ժպիտը

Բուլղայականությունը Չինաստանում սկիզբ է առել մեր թվարկության առաջին դարի սկզբին: Այն շատ խորն է ազդել չինական մշակույթի վրա եւ իր ավանդը ներդրել նրանում: Բուլղայի արձանները երկրի տարածքում շատ վայրերում են կարեւոր մաս կազմում, այդ թվում՝ Շանսի գավառում Յունգանի, Գանսու գավառում Մոգաոյի, Խենան գավառում՝ Լունմենի քարայրները, Չունցինում՝ Դացզուի քարե հուշարձանները, ինչպես նաև բազմաթիվ տաճարներ: Բուլղայի արձաններն իրենց տեսակի մեջ ցույց են տալիս Չինաստանի քանդակագործական արվեստի ձեռքբերումները:

Մոգաո քարայրի գեղեցիկ Գուանինը

Մոգաոյի քարայրները Դունխուանում՝ քարայրային արվեստի ակնառու ներկայացուցիչներն են: Դունխուանը, որ Մետաքսի մեջ ճանապարհի երթեմնի ռազմավարական կարեւորության քաղաքներից էր, գտնվում է Չինաստանի հյուսիս-արեւմտյան Գանսու գավառի կենտրոն հանդիսացող Լանչժոու ժամանակակից քաղաքի տարածքում:

1000 տարվա ընթացքում, սկսած 4-րդ դարից՝ մինչեւ 14-րդ դարը, հսկայական թվով մարդիկ են եկել այստեղ՝ քարայրների կառուցման համար: Մինչա լեռան կտրուկ ժայռերի վրա կառուցված քարայրներն այդ վայրն անհերքելիորեն վերածում են արվեստի գանձարանի՝ համատեղելով ճարտարապետությունը, նախշազարդ արձանները եւ դամբարանները: Քանի որ արձաններն ու նախշանկարները մեծ մասամբ պատկերում են Բուլղային, մարդիկ այդ տեղն անվանում են նաև «Բուլղայի 1000 արձանների քարայր»:



Բուդդայի արձանը. գթասրտությունը սիրո հետ
սրտում /Դումխուանի h. 45 քարանձավ/:

Գուանինը, կամ Գթասրտության աստվածուիին, նույնպես հայտնի է՝ ինչպես Բոդխիսատվամ, որը բուդդայականության հիմնադիր Շակյամունիից հետո երկրորդ հմաստունն է: Նա նշանավոր է իր առատաձեռնությամբ եւ ընկճախտի մեջ գտնվողներին օգնելու պատրաստակամությամբ: Կա հավատալիք, թե աղետի մեջ հայտնված կամ վտանգի ենթակա ցանկացած մարդ Գուանինի անունը կրկնելով ազատվում է այդ խնդրից: Զինացիները նրան պաշտում են արդեն 1000 տարի՝ Զինաստանի որոշ վայրերում մինչեւ այսօր էլ գոյություն ունեցող արարողությունների միջոցով: Յաշմանդամների պարողական խմբի ուժերով ցույց տրված՝ «Գուանինի 1000 ձեռքերը» ներկայացումը լավ ընդունվել է աշխարհի կողմից: Այդ պարն իրենից ներկայացնում է նվիրվածություն Գթասրտության աստվածուիուն:

Մոգաոյի քարայրները Գուանինի պաշտամունքի ծեսերի տպավորիչ արտացոլումն են: Դրանցում կան Գուանինին պատկերող շատ արձաններ, ինչպիսին են՝ Գուանինը 1000 ձեռքերով, Գուանինը 1000 աչքերով եւ Գուանինը 11 դեմքով: Յնդկական բուդդայականության մեջ Գուանինն ի սկզբանե եղել է արական սերի, բայց Զինաստանում աստիճանաբար ձեռք է բերել կանացի կերպար: Գթասրտության աստվածուիին ներկայացրել է մարդկային լավ գծեր՝ քննչություն, բարություն, համբերատարություն:

Հ.45 քարայրում գտնվում է Գուանինի՝ Տան հարստության օրոք /618-907/ պատրաստված 2 արձան: Երկու դեպքում էլ Գուանինը պատկերված է գլխին շինյոնով, մարմնի կեսը ծածկող երկնագույն զգեստով, կիսալուսնաձև հոնքերով, նուրբ ու լուսավոր աչքերով, բարի ժայռով: Երկուսն էլ կանգնած են ճապուկ դիրքում՝ մի ոտքը գետնի վրա, մյուսը՝ նրբորեն կիսաբարձրացրած, իսկ մարմինները՝ քննչորեն հակած մի կողմի վրա:

Ներկազարդ երկու արձաններն ունեն բարի ժպիտ, սեր՝ աչքերում եւ հմայիչ կեցվածք: Նրանք այնքան կենդանի են թվում, որ ավելի շատ նման են երկրային գեղեցիկ օրիորդների, քան՝ աստծու: Այդ քանդակները ցույց են տալիս մարդկանց հավատարմությունը Գուանդինին եւ մայրական սիրո ու կանացի գեղեցկության փառաբանումը:

Մայցգիշանի քարայրների ժպտացող Բուդդան

Լինելով Չինաստանի ամենահռչակավոր քարայրներից մեկը՝ Մայցգիշանի /Դիզափայտ/ քարայրը գնահատվում է լավ պահպանված քանդակների թվով ու որակով: Գանսու գավառի Տյանչույ քաղաքից դեպի արեւելք գտնվող Մայցգիշանն անվանումն ստացել է դեզի հենափայտի տեսք ունենալու համար:

Մայցգիշանի քարայրների քանդակները հարուցում են հնդկական արվեստի սուր զգացում: Բուդդայի եւ նրա աշակերտների արձաններն արտացոլում են մարդկային շատ հատկանիշներ: Նրանց դեմքերն արտահայտում են համեմատական հանգիստ՝ ոչ թե նման արձաններին հատուկ սառնություն ու չորություն: Արձանների մեծ մասի դեմքերն արտահայտում են բնական ժպիտ, իսկ նրանց հագուստը հարթուսահուն է ու վետվետուն:

Նման քանդակների օրինակ է հանդիսանում հ. 44 քարայրի քանդակախումբը՝ պատրաստված Վեյ Արեւմտյան հարստության /535-556/ ժամանակ: Բուդդայի գլխավոր արձանը գտնվում է խմբի կենտրոնում, ունի 160 սանտիմետր բարձրություն եւ կանացի դիմագծեր: Մազերը շինյոնացված են ամպի տեսքով: Նախշանկար հանգույցը զարդարում է կուրծքը, կասայան ծածկում է ուսերը, զգեստի ուրվագծերը շատ հստակ են: Նրա հագուստին ու մազերին կարելի է նկատել ներկի մնացորդներ: Երկար ու բարակ են հոնքերը, փոքր-ինչ թերված՝ գլուխը, ժպիտը՝ բարի ու խորհրդավոր: Միայն պատկերացնել կարելի է, թե որչափ գեղեցիկ է եղել արձանը նախասկրնական տեսքով:

Բուդդայական սուտորանների համաձայն, Շակյանունին քարոզներ կարդալիս միշտ ժպտացել է: Ժպիտը նրա միայն դեմքին չի եղել. միշտ թվացել է, թե ժպտում է քարոզչի անբողջ մարմինը: Նրա դեմքի ժպտացող արտահայտությունը եւ մարմնի նուրբ ուրվագծերը ցույց են տվել մեծահոգություն, անդորր ու վայելչազեղություն:


Այդ արձանների ստեղծման ժամանակներում Չինաստանն ապրում էր իր պատմության վատ շրջանը՝ անվերջ պատերազմներն անհաշիվ թվով մարդկային կյանքեր էին խլել, կենդանի մնացածներն էլ՝ ընկել տառապանքների անհատակ ծովը: Արձաններն ընկճված աշխարհը դիմավորում էին իրենց ժպիտներով ու մեծահոգությամբ՝ դրանով իսկ հույս ներշնչելով մարդկանց:



Բուդդայի արձանը. աշխարհիկ վիատ աշխարհը
դիմավորելով ժայռով /քարայր 44, Մայզզիշան/:

Լունմենի քարայրների Լուսավոր Բուդդան

Լոյանի /Խենան գավառ /հարավային մասում գտնվող Լունմենի քարայրները 1500 տարվա պատմություն ունեն:



Լուսավոր Բուդդան Լունմենի քարայրում
/Լոյան, Խենան գավառ/:

Տան հարստության ժամանակներում Ու կայսրուիին /690-704/ հովանավորել է Լունմենի ամենամեծ քարայրի՝ Վաղնջական պաշտամունքի տաճարի շինարարությունը։ Տաճարի ներսում գտնվում է Սարխոզա-կայա Բուդդայի, կամ՝ Լուսավոր Բուդդայի, մեծ արձանը, որի քանդակումը տեսլ է 3 տարի։ Քանդակնան վերջին օրը Ու կայսրուիին իր նախարարների հետ միասին ներկայացել է տաճար՝ Տան հարստության արվեստի ամենակարեւոր կառույցի բացմանը։

Նստած Լուսավոր Բուդդայի արձանը 17 մետր բարձրություն ունի։ Այն ամենախոշորն է Լունմենի քարայրներում գտնվածների թվում։ Բուդդայական աղբյուրները Լուսավոր Բուդդային նկարագրում են որպես Շակյանունիի ռեինկոռնացիայի կատարելատիա։

Իր լույսի ուժով նա կարող է լուսավորել ամբողջ աշխարհը եւ լուսավորություն պարգետել հասարակ մարդկանց։ Վաղնջական պաշտամունքի տաճարի կենտրոնում խաղաղ ու վայելչորեն նստած Լուսավոր Բուդդան հանգիստ է եւ աշխարհին դիմավորում է դեմքի վեհանձն արտահայտությամբ։ Նա թեթեւակի ժատում է եւ գլուխը թեքում առաջ, ինչը նրան հնարավորություն է տալիս տեսնել՝ ինչն իրենց ցածում է։ Նրա շուրջ անդորրն է հշուում։

Ցինչժոուի Կարեկցող Բուդդան

1996 թվականին Շանդուն գավառի Ցինչժոու քնակավայրի շինհարթակներից մեկի տարածքում գտնվել է մի քարայր։ Դնագետներն այնտեղ հայտնաբերել են Բուդդայի ավելի քան 400 եզակի արձաններ՝ Ցի Ցյուսիսային հարստության ժամանակներից /550-577/։ Դա Չինաստանում 20-րդ դարի հնագիտական ամենամեծ գտածոն է։ 2001 թվականից սկսած՝ այդ արձանները եղել են Գերմանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում՝ արժանանալով ցուցահանդեսների այցելուների մեջ հետաքրքրությանը։

Արձանները կամ կանգնած են շրջանով, կամ՝ մեջքով դեպի պատը։ Նրանց դիրքը, նստած թե կանգնած, այնքան կենդանի է, որ կենսականություն է հաղորդում համը քարայրին։ Մասնավորապես՝ անմեղ ու սիրելի Բուդդայի կերպարանքներից մեկը, որը կանգնած է՝ մեկ ոտքը լոտոսի պատվանդանի վրա, մյուսի կրունկը՝ ձախ ծնկին։ Անգամ երբ չի պահպանվել ձախ ծնոքը, վերջինիս վերջավորություններից կարելի է հասկանալ, որ այն եղել է ձախ ծնկան վրա։

Նստած Բուդդայի մյուս արձանը թեթեւ ու ձկում է թվում, նրբին կեցվածք ունի, զգեստի կորագծերը կրկնում են մարմնի կորագծերին, դիմագծերը գեղեցիկ են ու նրբազգաց, իսկ մարմինը՝ վայելչակազմ։ Մի ձեռքը վնասված է, իսկ մյուսը բարձրացած՝ կրծքի մակարդակով, ձեռքերի ափերը կարծես ողջունի համար են իրար բերվում։



*Բուդդայի գունազարդ արձանը՝ խորհրդավոր ժպիտով եւ
լուսավորվածությամբ: Ցի Յուսիսային հարստության
ժամանակմերի արձամ՝ գտնված Շանդուն գավառի
Ցինչժոուի պեղումնավայրում:*

Բուդդայի արձաններից ընդհանրապես դեմքի բնական ու հանգիստ արտահայտություն է միշտ ճառագայթում, բայց Ցինչժոուի քանդակագործներն իրենց ստեղծագործություններում մեծ նշանակություն են տվել Բուդդայի շարժումներին: Պատկերելով հեռու երկրներից եկած բուդդայական ուսմունքների ոգին՝ այդ արձաններն ավելի շատ ցույց են տվել տեղական առանձնահատկությունները:

Ցինչժոուի արձաններում ամենաանմոռացը ժպիտներն են: Ժպտացող Բուդդայի արձանները չափազանց հանրահայտ են, բայց Ցինչժոուի արձաններն ունեն իրենց տարբերիչ առանձնահատկությունը, եւ դա այն է, որ Ցինչժոուի արձանների ժպիտն անդորրիկ է, սիրելի եւ զուսակ ոչ թե սովորականի պես խորհրդավոր: Երկար ու նեղ աչքեր, բալանճան թերան, թույլ ժպիտով այտեր, որոնց նվիրական աշխարհի վարակիչ բերկրանքը հոգուց մարմնին է անցնում՝ ընդունած դիրքերի եւ անգամ զգեստների միջով:

Ցինչժոուի քարայրների արձանների գուածոն ժպիտներն անցյալից տեղափոխել է արդի մարդկային աշխարհ:



16. Գեղագրության թռչող տողերը

Ով գոնե մի քիչ ծանոթ է չինական մշակույթին՝ գաղափար ունի չինական հիերոգլիֆների մասին: Դա գրի հազվագյուտ արվեստ է, բայց՝ բավականին ոչ հասարակ, կարելի է անգամ ասել՝ գրավիչ: Թեեւ մենք այդ գիրն անվանում ել ենք գեղագրություն, սակայն բառը չի արտահայտում տվյալ արվեստի ողջ իմաստն ու արժեքականությունը:

Չինական գեղագրության էվոլյուցիան օգուտ է քաղել երկու գործոնից. առաջինը քառակուսի պատկերագրային գիրն է, որի գեղեցիկ ձեւերը գեղագրության արվեստի հիմքն են դրել, իսկ երկրորդ գործոնը վրձինն է գրի համար, որը չինական մշակույթի կարեւոր գյուտերից մեկն է: Գրային վրձինը սովորաբար պատրաստվում է ոչխարի բրդից կամ ճագարի, գայլի մազերից եւ շատ փափուկ է, ճկուն, էլաստիկ ու պլաստիկ: Այն ազդել է գեղագրական արվեստի ծագման վրա:

Ոիթմը գեղագրության մեջ

Գեղագրությունը գծերի եւ վրձնահարվածների արվեստ է: Չինական Տայվանից հոչակավոր պարող եւ «Դարպասներ դեպի երկինք» պարային խմբի տնօրեն Լին Խուամինը մի անգամ բեմադրեց «Թռչող ձեռագիր տառը» կոչվող կոլեկտիվ պարը, որը նրան համաշխարհային ճանաչում բերեց: Այդ պարի ստեղծման ոգեշնչանքը եկել է չինական գեղագրությունից: Նրանով պարողները կենդանացրել են գրի արվեստի ոգին: Պարողը բեմի վրա արդեն պարող չէ, այլ՝ գեղագիր: Գերազանց տիրապետելով վրձնին, նա ամեն մի շարժումից վայրկյան անց անշարժանում է ու հետո թանաքով գրում թղթի վրա: Մի դեպքում նրա շարժումներն արագ են, սահուն ու նրբագեղ, մյուսում՝ դանդաղ, նուրբ ու հմայիչ: Ներկայացման ժամանակ հանդիսատեսներն զգում են հետաքրքրահարույց գեղագրության արվեստը:



Աշնանակեսին. չինական գեղագրության նորին
աշխատամբ՝ գրված Վան Սյամցժիի կողմից /344-386/:

Տան հարստության /618-907/ գեղագիր վարպետ Չժան Սյույը /ծննդյան ու մահվան տարեթվերը հայտնի չեն/ հիմնովին տարված էր գեղագրության աշխարհով: Նա պատճենում էր նախորդ հարստությունների գեղագիրներին, սակայն ապարդյուն: Մի անգամ հարստության մայրաքաղաք Չանանի փողոցներից մեկում հանդիպում է մի ամբոխի, որը դիտում էր ժամանակի մեծ պարուիի Գունառունի պարը: Վերջինս կատարում էր «Արի պարն» այնպես, որ համարյա գալարվող մարմինն ու զգեստը կրկնում էին սրի շարժումները: Չժան Սյույը զմայլվել էր եւ այդ պարի շնորհիվ իր համար բացահայտեց գեղագրության ողջ գեղեցկությունն ու մեծ առաջադիմության հասավ մասնագիտության մեջ:

Ժամանակակից պարողը մեծ իմաստություն ստացավ գեղագրությունից, գեղագիրն էլ ոգեշնչվեց նրա պարով: Դա միանշանակ մատնացույց է անում, որ այդ երկու արվեստներն ունեն այնպիսի ընդհանուր հատկանիշ, ինչպիսին ներքին կենսաեռամդն է, իսկ գեղագրության հոգին էլ նույնն է, ինչ պարի հոգին:

Ինչ-որ մեկը մի անգամ նկատել է, որ գեղագրությունից ստանում ես նույն հաճույքը՝ ինչ «ստվերի դեմ մարտից», որտեղ բռնցքամարտիկը շարժվում ու ետ է շրջվում օդում կատարելով պարի նման ոդթմիկ շարժումներ:

Գուան Յու տաճար. Մին
հարստության տիրապետության օրոք
ապրած Չժու Յունմինի /1460-1527/
Վրձնի ստեղծած ձեռագիրը:




Չինական գեղագրությունում «մեկ վրձնահարվածով հիերոգլիֆը» ներքին էներգիա է պարունակում եւ նշանակում է հիերոգլիֆ, որը գրվում է վրձինը թղթից չկտրելով։ Յիերոգլիֆի գծերը կարող են արտաքնապես միացած չլինել, բայց միացած են ներքուստ։ Առանց ներքին միացածության հիերոգլիֆն անկենդան է երեւում։

«Մեկ վրձնահարվածի հիերոգլիֆն» առաջին անգամ ներկայացրել է Վան Սյանչժին /344-386/, որը եղել է Ցզի Արեւելյան հարստության ժամանակների / 317-420/ հոչակավոր գեղագիր Վան Սիչժիի /303-361/ որդին։

Վան Սյանչժիի «Յատոու Վան»-ը մինչ այժմ պահպանված գլուխգործոց է, որը գրված է ռիթմիկ գծերով, կենսական ներուժով ու մեկ վրձնահարվածով՝ ընդմիջումներին միայն թույլ տված խախտումներով։ Գնահատելով արվեստի նման աշխատանքը, հանդիսատեսները խորապես տպավորվում են ու ոգեւորվում նրա ներքին գծերով։

Չինական գեղագրության մեջ առկա է այսպես կոչված՝ «թանաքային խոզը»։ Դա գեղագրության մի ձեւ է, երբ գեղագրական աշխատանքը կատարվում է ծանր ու թանձր ներկերով, որոնք եռանդուն վրձնահարված կատարել չեն թողնում, ինչի արդյունքում թանձր գծերն ու ծանր գիրը ճարպակալած խոզ են հիշեցնում։ Նման վիճակը կենսագծերի ու ներքին ներուժի բացակայության պատճառ է հանդիսանում։



Նախարանը Հանտին տաղավարի հավաքածուի համար՝ գրված Վան Սիչժիի
կողմից /303-361/: Չինական գեղագրության այգարացը Ցզին
հարստության տիրապետության ժամանակ։

Վան Սիչժին եւ Լանտին տաղավարի հավաքածուի համար Նախարանը

Պալատական թանգարանում Ոգու զարգացման դահլիճում գտնվում է Եռակի ուսմունքը: Այն իր սկիզբն առնում է ամենաարժեքավոր երեք գեղագրական աշխատանքներից, որոնք պահպում են այդտեղ իսկ: Երեք արժեքավոր աշխատանքներն ել բարձր գնահատվել՝ ու եղել են Ցին հարստության /1736-1795/ 8յան Լուն կայսեր պաշտամունքի առարկաները: Դրանք են. Վան Սիչժին կողմից գրված «Արեւոտ պատկերը»՝ «Արագ ձյուն»-ից հետո, եւ Վան Սիչժին, Բոյուանի, Վան Սյունի /349-400/ կողմից գրված «Աշնանակեսին»: Յայր ու որդի լինելով՝ Վան Սիչժին ու Վան Սյանչին հայտնի են եղել որպես «Երկու Վան»: Նրանց աշխատանքները հայտնի են աշխարհով մեկ՝ որպես չինական գեղագրության բարձունք:



Մարդիկ բարձր էին գնահատում Վան Սիչժին աշխատանքները: Վերջինս ձեռագրերը նրանք համեմատում էին «չարաճի վիշապի» հետ՝ կենսալից, նրբին, վայելչագեղ: Նրա «Նախարանը» հայտնի է որպես չինական գեղագրության՝ իր տեսակի մեջ ամենաներկայանալի մարգարիտը:


Գեղագրության այդ գլուխգործոցը տարբեր սերունդների գեղագիրներ լայնորեն խորամեծարել են դինամիկ արտահայտչականության եւ արտակարգ վայելչագեղության համար, թեև այն, ինչ պահպանվել է մինչ օրս, ստեղծագործության ճշգրիտ՝ բայց պատճենն է: Ասում են, թե բնօրինակը Տան հարստության Տայցզուն կայսեր /627-649/ հետ միասին թաղվել է, ու հետագա սերունդները հենց բնօրինակով հիանալու հնարավորություն չեն ունեցել: Դրանից, սակայն, չի նվազել նրա փառաբանումը: Այդ աշխատանքը փաստորեն սնել է գեղագիրների շատ սերունդների:

Ձեռագիր տառատեսակի «փակ ոճը»

Զինացիները հատուկ նշանակություն են տալիս կեցվածքի «փակության» այնպես՝ ինչպես որ՝ գեղագրային աշխատանքներում: «Փակությունը» մի պահանջ է, որը գեղագիրը միշտ պիտի պահի մտքում: Տան հարստության գեղագիր վարպետ Յան Չժենցինը /709-785/ հայտնի է իր «յան» ձեռագրային ոճով:

Գեղագիտություն ուսումնասիրող սկսնակները միշտ սկսում են յան ոճից: Երիտասարդ Յան Չժենցինը մի անգամ գնաց Չժան Սյույի մոտ՝ սովորելու, Չժանը նրան ասաց. «Երբ ես ցանկացա ուսումնասիրել գեղագրությունը, ինձ մոտ ոչինչ չէր ստացվում: Մի անգամ ես ու ընկերս քայլում էիմք գետափով, եւ այդ պահին ջուրը բյուրեղային մաքրություն ուներ, գետավազը փայլուն էր, եւ սպիտակ գետափը կարելի էր տեսնել հեռվից... ու ինձ թվաց, թե ես գրում եմ: Թեեւ այդ պահին մոտս ոչ վրձին կար, ոչ՝ թուղթ: Բարեբախտաբար, կար երկաթե մախար: Սկսեցի նրանով գրել ավագի վրա: Բայց բառերը կիսով չափ հավասարվում էին ավագին՝ թողնելով լոկ հետքեր: Գլխումն նեկեն առկայթեց այն միտքը, որ գեղագրությունն իրականում ննան է գրի՝ ավագի վրա, որտեղ փակ է ամենագլխավորը: «Փակ» գեղագրային աշխատանքն իր էռթյամբ խորն է եւ հարուստ, ու ոճով՝ կենսալից ու հարուստ»:

Յան ընտանիքի տաճարում ցուցանակի վրայի
մակագրություն, որ արել է ձեռագիր յան տառատեսակի
ներկայացուցիչ Յան Չժենցինը /709-785/:



Յան Չժենցինը հասկացել է պատմության էռթյունը, եւ այդպիսով, փակությունը կամ այլ կերպ՝ գաղտնիությունը դարձել է նրա գեղագրության ամենաբարձր հատկանիշը: Յենվելով դրա վրա՝ նա զարգացրել է յան ոճը, որը չափազանց խորն ազդել է ընդհանրապես չինական գեղագրության վրա: «Գաղտնիությունը» նշանակում է, որ գժերն սկզբում ու վերջում սահուն են՝ առանց կտրուկ եւ ճնշող վրձնահարվածի որեւէ հետքի:

Յան ընտանեկան տաճարի ցուցանակի մակագրությունները Յան Չժենցինի կյանքի ուշ շրջանի գլուխգործոցներ են, որոնք լայնորեն արտացոլում են փակությունը: Այդ աշխատանքը եղել է դեպի փակ գիրը տանող խթան եւ իրենից ներկայացնում է Յան Չժենցինի բարձրագույն նվաճումը գեղագրության մեջ:



17. Ողողված թանաքի արվեստի հրապույրը

Ողողված թանաքը չինական ավանդական գեղարվեստի հազվագյուտ ժամրն է: Այդ ժամրում չեն օգտագործվում ներկեր, կամ էլ օգտագործվում են բացարձակապես աննշան չափով: Նրանում կիրառվում է տարրեր նրբերանգմերի սեւ թանաք՝ սպիտակ մետաքսի կամ թղթի վրա: Ողողված թանաքը չինական գեղարվեստում նույնքան կարեւոր է, որքան՝ ներկերը եվրոպական գեղարվեստում: Դա չինական ավանդական գեղարվեստի տիպական ներկայացուցիչն է, չինական կերպարվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկը:

Տան հարստության /618-907/ մեջ թանաստեղծ վաճ Վեյը /701-761/ ճանաչված է որպես ողողված թանաքի ոճն օգտագործած առաջին արվեստագետը Զինաստանի պատմության մեջ, թեեւ այսօր նրա աշխատանքի միակ նմուշը Սուն Կրեմտյան հարստության ժամանակների «Առվակը ծյուներում» ստեղծագործության պատճենն է հեղինակի ինքնագրով: Այդ նկարում պատկերված է ծյունածածկ առվակն անարատ բնության մեջ: Նկարն արված է սեւ թանաքով: Իններորդ դարի երկրորդ կեսին՝ Տան հարստության տիրապետության մայրամուտին եւ Սուն հարստության /960-1279 օրոր, ողողված թանաքն աստիճանաբար դարձել է չինական ավանդական գեղարվեստի իիմնական ծեւը: Նրա ազդեցությունը տեւել է ավելի երկար ու լայն, քան՝ պատկերումը ներկերով: «Ողողված թանաքով պատկերման գերազանցությունը կերպարվեստի մյուս ոճերի հանդեպ» գաղափարը երկար ժամանակ եղել է չինական ավանդական գեղարվեստի գլխավոր փիլիսոփայությունը:

ՍԵԼ-ԱՊԻՏՈՎԱԿ ԱՇԽԱՐԻ

«Առվակը ծյուներում»: ԳԵՂԱՆԿԱՐԸ՝ Տաճ
հարստության բանաստեղծ ու նկարիչ Վան Վեյի
/701-761/:



Ողողված թանաքի արվեստի ծագումն ու զարգացումն, ըստ Երեւույթին, կապ ունեն նյութական ու դերասանական ավանդույթների մեթոդների հետ:

Ողողված թանաքը սովորաբար պատկերվել է թղթի կամ մետաքսի վրա, եւ հիմնական նյութը եղել է թուղթը: Թղթի արտադրությունը Զինաստանում շատ զարգացած է եղել: Տարբեր, օրինակ՝ բարակ տեքստուրայի եւ կլանող, որակների թուղթը եղել է այդ գեղարվեստական ժամրի ծագման ամուր հիմքը: Միեւնույն ժամանակ, չինական գեղագրության ավանդույթներն ուղիղ ներգործություն են ունեցել նրա վրա, թեև գաղափարաբանական գործոնն ավելի շատ է ազդել ծագման ու զարգացման վրա:

Զինացի գեղանկարիչները յուրօրինակ սեր ունեն սել-ապիտովակ արվեստի նկատմամբ՝ սախտակ թղթի կամ մետաքսի վրա նկարների հասարակ պատկերման ձեւով: Նրանց սել-ապիտովակ աշխարհի աշխարհ է առանց վառ գույների: Զինական կերպարվեստն ընդիանրապես ուշադրություն է դարձրել գույներին: Դրա վառ օրինակն են այսպես կոչված՝ «կարմրականաչ գույնի» նկարները: Զին գեղանկարիչները «գույնի պատկերման համար գույնի կիրառման» կողմնակից են: Աշխարհի վերարտադրությունը տարբերագան գույներով՝ գեղագետի պարտականությունն է: Այդուհանդերձ, ողողված թանաքի ժինական կերպարվեստի մնացած ժանրերի նկատմամբ գերակշռություն է ունեցել:

Վառ գույները չինական մշակույթում փաստորեն օգտագործվել են զգուշությամբ: Եթե տեւականորեն նայես վառ գույներին, կարող ես «խրվել» դրանց մեջ եւ գլխապտույտ զգալ: Բացի դրանից, շռայլ գույները կարող են դառնալ ցանկության աղբյուր եւ բանական վիճակի գրգռիչ: Զինական փիլիսոփայության համաձայն՝ արտաքին շքեղությունն ու փթթումը միշտ չեն, որ ներկայացնում են աշխարհի իրական ճշմարտությունը: Աշխարհի իսկական նշանակությունն իմանալու համար հարկավոր է նայել մակերեսային երեւույթների միջով: Այս մտածողությունը չին նկարիչների մոտ

ազդել է արվեստի արտահայտման վրա. ողողված թանաքը փոխարինել է վառ գույներին: «Ծայրագույն շքեղությունն ավարտվում է հասարակի մեջ»՝ այս արտահայտությունը ներկայացնում է չինական կերպարվեստի կարեւոր հայացքը: Առանց որեւէ զարդարանքի, պարզապես սեւ-սպիտակ երեւացող աշխարհը լավ է արտացոլում մարդկանց ձգտումը պարզ ու նա-քուր աշխարհի նկատմամբ:

Չին նկարիչները հավատում են, որ «թանաքի օգտագործումը կարող է հինգ գույն արտահայտել», թանաքի կիրառումը տարբեր գույների տպա-վորություն է ստեղծում, տպավորություններ՝ որոնք գույներով չեն կարող արտահայտել: Մին հարստության /1368-1644/ ականավոր գեղանկարիչ Դուն Ցիչանը /1555-1636/ մի անգամ մատնացույց անելով ողողված թանա-քով արված ստեղծագործությունն, ասել է. «Սա ամենահիճարքանչ աշ-խարհն է»: Ողողված թանաքի արվեստի ծագումից հետո չինական գեղար-վեստն ավարտել է այլ ձեւերի հետ նմանության որոնումները: Չին գեղան-կարիչների ձգտումը դարձավ «աշխարհին նայելը բանականության միջոց-ներով»:

Կերպարի ձեւավորումը նմանության սահմանից անդին

Չին չինական նկարիչներն իրենց չեն կապել հեռանկարների սկզբուն-քին եւ անգամ երբեմն գիտակցարար հրաժարվել են «առ ապագան հա-յացքից»: 16-րդ դարից սկսած՝ շատերն են՝ այդ թեման ենթարկել կասկած-ների ու հարցերի: Օրինակ՝ Չենդրիկ Վիյան ֆան Լունը /1882-1944/: Իր «Մարդկության արվեստը» գրքում ասել է, որ «միայն երեխաների ու չինա-ցիների մոտ է բացակայում «հայացքն առ ապագա»: Այդ պատճառով նա ծաղրանքով մերժել է չինական գեղարվեստը:

Չինաստանը կարող է պարծենալ 1500-ամյա արվեստին վերաբերող իր մեթոդական գրքերով: Արեւմտյան հարստության /420-589/ արվեստի քն-նադատ Սե Խեն /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ իր «Դասական գեղան-կարչության փառաբանման» /Գուխուա պինլու/ մեջ առաջարկել է «Վեց ու-ղիների տեսությունը», կամ՝ գեղարվեստի վեց հիմնական սկզբունքները, որոնց թվում «ճաշակի ու երանգի վառ արտահայտումը» եղել է առաջինը՝ որպես չինական գեղանկարչության գլխավոր սկզբունք: 1500 տարի շա-րունակ գեղանկարչության մեջ ճաշակին ու տոնին ավելի մեծ ուշադրու-թյուն է դարձվել, քան՝ ձեւի նմանությանը: Սուն Յյուսիսային հարստության արվեստագետ Սու Շունապոն /1036-1101/ ասել է. «ևա, ով գեղանկարչու-թյունը գնահատում է նմանության տեսանկյունից՝ նման է երեխայի»: Գե-ղանկարչության հանդեպ այդ հայացքը լիովին հակասում է ֆան Լունին, որն ասում էր, թե ապագայի նկատմամբ հայացքի եւ նմանության բացակա-յությունը չինական գեղանկարչությանը պահել է մանկական մակարդակի վրա: Շատ հետարքիր է, որ գեղանկարչության հանդեպ չինական ու եվրո-պական հայացքները լիովին հակասում են իրար:



*«Անտառը ձյուն տեղալուց
հետո». բնանկարը՝ Ֆան
Կուանի կողմէից
տարեթվերը հայտնի չեն։
Սուն հարստության
ժամանակների կտավ է,
որտեղ պատկերված են
անտառի բարձրությունն ու
բերեւությունը ձյուն գալուց
հետո։*

Առ ապագան հայացքի հարցով Չինաստանում մի անգամ տաք բանավեճ է եղել։ Տան հարստությունից Վան Վեյը եղել է ավանդական նկարիչ, որը խախտել է ապագայի հանդեպ հայացքի՝ սահմանված տարբուն։ Իր ստեղծագործություններից մեկում՝ «Յուանանը քնած է ձյան վրա», նա տարվա չորս եղանակները ներկայացրել է մեկ նկարում։ Այնտեղ պատկերված է արմավեճին՝ ձյան մեջ։ Բոլորին հայտնի է, որ աշնանն արմավեճու տերեւները թափվում են, բայց այդ նկարում նրանք առկա են։ Որոշ արվեստագետներ այդ առթիվ հեղինակին քննադատել են, թեեւ շատերն էլ հանաձայնվել են, որովհետեւ վստահ էին, որ գեղանկարչությունը պետք է արտացոլի գգացումները՝ ոչ թե նմանությունն առարկայի հետ։ Այստեղ ձյան մեջ արմավեճու տերեւները գեղանկարչի մտքի երեւակայությունն են, որը կտավի վրա, անշուշտ, վերարտադրել կարելի է։

Իրականում եղել է չինացի մի նկարիչ, որը պատկերել է ապագան։ Դա եղել է Սուն Յյուսիսային հարստության տիրապետության վաղ ժամանակների բնանկարի վարպետ Լի Չենը /919-967/։ Նա օբյեկտները սովորաբար պատկերել է որոշակի տեսանկյունից։ Օրինակ՝ երբ շենք է նկարել, կանգնել է քիվի տակ՝ մի որոշակի տեղում ու նկարել այն, ինչ այդ դիրքում տեսանելի է իրեն։ Դա իրատեսական էր։ Թեեւ նույն հարստության մեջ գիտնական Շեն Կոն /1031-1095/ հետագայում լուրջ քննադատել է այդ ստեղծագործությունները։



«Վաղ գարուն». Ակարի հեղինակը Սուն
հարստության ժամանակների գեղանկարիչ
Գո Սին է /1023 - մոտ. 1085/:



«Ժունսի»: Նի Յունյուլին /1301-1374/ իր այս
նկարում բարձր լեռների ու լայն գետի պաստառի
վրա պատկերել է փոքրիկ խրճիթ՝ արտահայտելով
մարդու վիճակը տիեզերքում:

Նա գտնում էր, որ նկարիչը «պետք է փոքրին նայի մեծի հայացքով» / Լի Չենի հայացքի հակառակը/, ինչը նշանակում է, որ հանճարեղ արվեստագետը չպետք է կենտրոնանա կոնկրետ մանրամասների վրա, որոնք տեսնում է, այլ իրերին նայի «բանականության աչքերով»: Նկարիչները պետք՝ է աշխարհը ներկայացնեն իրենց բանականության մեջ՝ ոչ թե սահմանափակվեն նրանով, ինչ տեսնում են: Դա էլ իրենց նշանակում է «մեծի հայացքով նայել փոքրին»: «մեծն» այստեղ մարդկային բանականության ուժն է:

Չինական գեղանկարչության մեջ պատկերվել է երեւակայական, ինչպես եւ իրգեւոր աշխարհը: Օրինակ՝ Սուն Շարավային հարստության ժամանակների /1127-1279/ գեղանկարիչ Սա Յուանը /1140-1225/ ստեղծել է «Զկնորսություն մենության մեջ՝ Ցուրտ գետի վրա» կտավը, որտեղ ներկայացված է շատ հասարակ պատկեր, որի էռևյունը, սակայն, խորն է ու հարուստ: Անդորր գիշեր, խաղաղ գետի վրա, որտեղ մենավոր ու փոքրիկ նավակ կա, իր լույսն է նետել լուսինը: Նավակում նստած է մի տղամարդ, նրա մարմինը քիչ-ինչ թեքված է առաջ, ուշադրությունը լիովին ջրի կողմն է: Նավակի հետեւի մասը կիսաբարձրացած է, ջրի մակերեսին՝ թռվլ շրջաններ, ինչն այն տպավորությունն է ստեղծում, որ նավակը դանդաղ սահում է հոսանքի ուղղությամբ: Այդ ամենը խնամքով արտացոլում է իրգեւոր աշխարհը՝ նյութականից ազատ. խոր ու անդորր գիշեր, սառը կիսալուսին, փոքրիկ նավակ եւ մարդը՝ մենակ այդ խաղաղիկ աշխարհի հետ: Նկարիչը փաստորեն մտահոգված չի եղել ձկնորսությամբ: Նրա նպատակն այն իրգեկան-իրգեւոր աշխարհը ներկայացնելն է եղել, որում ինքն է ապրում: Սա չինական գեղանկարչության կարեւոր առանձնահատկությունն է:

Սուն Եւ Յուան հարստությունների բնանկարային գեղանկարչությունը

Խոսելով Չինաստանի բնանկարային արվեստի մասին, հնարավոր չէ չիիշտակել Ցուն Եւ Յուան հարստությունների /1206-1368/ բնանկարային գեղանկարչությունը: Դա եղել է ողողված թանաքի ժամրի կատարելագործման վկա-ժամանակաշրջան: Այդ ժամրի տեխնիկան այն ժամանակ կիրառվել է բնանկարչության մեջ: Ողողված թանաքի ժամրի՝ այն ժամանակվա մասնագետների թվին կարելի է դասել Դուն Յուանին /՝ 962թ./, Ցզյու ժանին /կյանքի տարեթվերը հայտնի չեն/, Լի Չենին եւ Գուռ Սիին /1023-1085/, որոնք նպաստել են բնանկարի ձգման գաղափարի զարգացմանը, որն իրենից ներկայացնում է բանականության զորացման գաղափար:



Ցին հարստության ժամանակների գեղանկարիչ Բաղաջանժենի
/1626-1705/ պատկերած մենավոր թռչնակը: Նկարն
արտահայտում է վերջինիս անկախ ոգին:

Նի Յունլինը /1301-1374/, Ու Չժենը /1280-1354/,
Խուան Գունվանը /1269-1354/ եւ Վան Մենը /1308-
1385/ Յուան հարստության չորս ամենաականավոր
բնանկարիչներն են: Քայտնի «Յուանի չորս վարպետ-
ներ» անվանք՝ նրանք վարել են ճգնավորական կյանք՝
բնության գրկում վայելելով ճերմակ ամպերի ու կանաչ
լեռների հաճույքը:



Ցին հարստության ժամանակների գեղանկարիչ Չժեն
Բանցյաոյի /1693-1765/ պատկերած բամբուկն ու ժայռը:
Նկարն արտացոլում է թեթևությունը եւ միաժամանակ՝ ուժը:

Նրանք բոլորն օգտագործել են գեղանկարչության
ազատ, բնական ու աներկրային ոճը՝ արտահայտելով
կտրվածության զգացումը, անտարբերության նրբագ-
ծերով հանդերձ: Չորսից ամենասիմվոլիկը եղել է Նի
Յունլինը:

Նիի նկարում /Ժուն Սիի արվեստանոց/ պատկեր-
ված է գետը՝ զույգ ափերով: Նկարի ստորին մասում
տարօրինակ ձեւի մի քանի քարեր կամ ու երեք չոր ու ծեր ծառեր: Կենտրո-
նում ջուրն է, նրանից վեր՝ ափը, երեւում են հեռավոր սարերը: Նկարում
ամեն ինչ լռության մեջ է, ջուրը, ամպերը, անգամ քանին: Չկան ոչ մարդիկ,
ոչ ձկնորսական նավակներ, լոկ մի վրան է կանգնած սարերի դեմք, եւ աշ-
նանային «անշարժ» գետն է շրջապատում մենավոր ծառերին: Դա «սառը
լեռների ու բարակ ջրերի» տիպական գեղարվեստական կոնցեպցիան է:

Այս նկարներում լիովին բացակայում են գույները, եւ կիրառված է «մակարդակի ու հեռավորության» մեթոդ՝ խաղաղության ու անկախության էֆեկտի հասնելու համար: Նկարում պատկերված աշխարհը իր՝ նկարչի աշխարհն է: ցուրտ լեռները եւ անբովանդակ ջրերն արտահայտում են նկարչի ցանկությունը՝ լքել երկրային աշխարհը: Չոր ծառերն արտահայտում են ազատության փնտրտուքը նկարչի կողմից, թեև դա նաև նշանակում է մենություն: Փոքրիկ վլանը ծառերի մոտ՝ դա ժունսի արվեստանոցն է: Այդ ամենը Տիեզերքում մարդու ցածր դիրքի արտացոլումն է: Կտավն ամբողջությամբ նեղացումի իմաստ չի հաղորդում, նրանից խաղաղ իրադրություն է ցոլանում:

Նորույթները Մին եւ Ցին հարստությունից հետո

Մին եւ Ցին հարստությունները ողողված թանաքի գեղանկարչության հետագա զարգացման վկաներն են եղել: Նկարիչներն այդ ժամրի միջոցով ավելի հարուստ անձնական փորձ ու հետաքրքրություններ են պատկերել: Այն դեպքում, երբ Յյուսիսային Սուն հարստության գեղանկարիչներն աչքի են ընկնում պահի արտահայտման արվեստով, եւ Յուան հարստության նկարիչները՝ աշխարհի ու տարակայության պատկերմամբ, Մին ու Ցին հարստությունների գեղանկարիչները անհատականության նկատմամբ իրենց ուշադրությունն արտահայտել են նկարելու իրենց մաներայով, ինչպես, օրինակ՝ Բադաշանմենը /իսկական անունը՝ Չժու Դա, 1626-1705/ եւ Շի Տան /1630-1724/, կամ էլ՝ ֆոկուսավորման միջոցներով՝ չհաղթահարելով տիեզերքի արտահայտման պայմանականությունները՝ ինչպես այն իրենք էին ընկալում: Օրինակ՝ Չժեն Բանցյան /1693-1765/ «Յանչժոուի ուր էքսենտրիկ նկարիչներից» մեկը:

Բադաշանմենի ոգեշնչող կտավներից մեկն է «Մենավոր թռչունը»: Նկարի ստորին ձախ անկյունում պատկերված է չորացած ոստ, որի ծայրին նստած է միակնաճի միայնակ թռչուն: Նրա կիսաբաց թեւերն ու փոքրիկ, բայց հանգիստ աչքերը գրավում են դիտողի ուշադրությունը: Չոր ոստ, միաչքանի-միոտանի թռչուն. ավելի միայնակ ի՞նչ կարող է լինել: Այդ կտավն արտահայտում է հեղինակի անկախ ոգին:

Բադաշանմենի մյուս ներկայանալի աշխատանքն է «Թռչունը եւ լոտոսը», որն ստեղծել է 67 տարեկանում: Այդ նկարում պատկերված է լոտոսի բունը, որը ձախից աջ տարածվում է պաստառով մեկ: Չեն երեւում ոչ լճակը, ոչ տերենները, միայն կիսաբացված կոկոնն է: Թռած եկած թռչունն ասես երկմտում է՝ իջնե՞լ այդ բնի վրա, թե՞ ոչ: Մեկ մագիլով նա կառչել է առէքքից, իսկ թեւերը բացված են, ասես կասկածներ ունի, բայց միաժամանակ էքստագի վիճակում է: Այդ անիրականության եւ անկայունության միջոցով նկարիչը ցույց է տվել ամբարտավանության գաղափարը հավերժական աշխարհում:

Ցի Բայշի /1864-1957/. «Փոքրիկ ծովախեցգետիններ»:
Առանց ջրի պատկերման է՝ նկարն աշխարհն ուրվագծում է
շարժման մեջ:



Չժեն Բանցյանն եղել է Ցին հարստության ժամանակների հեղինակավոր գեղանկարիչ: Նա գեղանկարչությունում առաջ է գնացել՝ պատկերելով խոլորձներ, բամբուկ ու քարեր, «թանաքն բանբուկ» հայտնի ստեղծագործության մեջ պատկերել է իր տեսակի մեջ պերճաշութ, բայց անբռնազբոս կոնպողիցիա:

Ցին չինական նկարիչները սիրում էին պատկերել սալոր, խոլորձ, բամբուկ եւ քրիզանթեմ, որոնք չինական մշակույթում հայտնի էին որոպես «չորս պարոններ»: Եվ դա՝ ոչ թե այն բանի համար, որ ավելի լավ բույսեր են, քան մյուսները, այլ՝ որ արտահայտում են մարդու բնավորությունը: Այդ պատճառով էլ Չժեն Բանցյանն իր գեղանկարչական կտավների մեջ մասը նվիրել է «ծաղիկ եւ թռչուն» թեմային: Նա ասում էր. «Բամբուկը հյուծված է, բայց էլի՛ լիքը ոգով, օտարված է, բայց՝ հպարտ, միշտ ձգտում է առ երկինք ու երբեք չի կորանում ձյան տակ. դա առաքինության աղնկելի ոգին է, որը երբեք չի հանձնվում: Դրա համար էլ երբ ես բամբուկ եմ նկարում, պատկերում եմ ոչ միայն նրան, այլև նրա ոգին»:

20-րդ դարում ողողված թանաքի ժանրը ենթարկվեց որոշ փոփոխության՝ պահպանելով հիմնական ավանդույթները: Այդ ժամանակի մեծագույն վարպետ է եղել Ցի Բայշին /1864-1957/, որը մեծ հաջողության է հասել ինչպես հին, այնպես էլ ժամանակակից արվեստում: Ցիմնվելով այն ամենի վրա, ինչ ուստումնասիրել է Բարաշանժենի եւ Շի Տաոյի ոճում, նա արտահայտել է իր անձնական ընկալումն ու յուրատիպությունն աշխատանքներում, հատկապես՝ ծովախեցգետինների պատկերման մեջ: Նա նկարում հաճախ էր պատկերում լոկ մեկ կամ երկու ծովախեցգետին, իսկ մնացած մասը թողնում դատարկ: Այդ պարզ կտավը միշտ հմայել է արվեստի գիտակներին, քանի որ դրանք այն զգացողությունն են հաղորդում, թե նկարում ամեն ինչ շնչում է ոչ երկրային որակներով: Նման պատկերման օրինակներից մեկն է Ցիի «Գետում կրկռացող գորտը»: Պատկերելով միայն լողացող երկու շերեփուկի, նկարիչն արտահայտել է գետակի աշխույժ աշխարհը՝ կյանքով ու ներուժով լի:



18. ճենապակին՝ չինական մշակույթի այցետոմսը

Անգլերեն լեզվում «Զինաստան» եւ «ճենապակի» բառերը հնչում են միաննան: Դա ապացուցում է, որ ինը ժամանակներից սկսած՝ Զինաստանը հայտնի է Եղել իր ճենապակիով: Ճենապակին առաջին անգամ Եվրոպային է ներկայացվել 15-րդ դարում՝ կարեւոր տեղ գրավելով Զինաստանի եւ ուրիշ երկրների միջեւ ապրանքափոխանակության մեջ: Գերմանական Կեցել Ռենդի թանգարանում կա Մին հարստության /1368-1644/ ժամանակների ճենապակե մի թաս: Բազում տարիների ընթացքում Զինաստանն ու Ասիայի այլ երկրներ ճենապակու լայն առեւտուր են արել Եվրոպայի հետ: 1602-1682 թվականներին հոլանդական Արեւելա-հնդկական ընկերությունը Եվրոպա է տեղափոխել ավելի քան 16 միլիոն միավոր ճենապակե առարկաներ: Ճենապակե իրերը Զինաստանի համար լավ հեղինակություն են ստեղծել իրենց նրբագեղության շնորհիվ: Ճենապակին 17-18-րդ դարերում կարեւոր դեր է խաղացել Եվրոպայի կողմից Զինաստանի իդեալականացման մեջ: Այդ ժամանակ Եվրոպայում տարածված ռոկոկո ոճում մեկնեկ կարելի էր նկատել «չինական նորաձեւությունը՝ չինական ճենապակու եւ չինական այգիների տեսքով:

Ճենապակին կարեւոր տեղ է գրավում չինական քաղաքակրթության զարգացման պատճենության մեջ: Կավե ամանեղենը Եղել է ճենապակու նախակարապետը՝ այն դեպքում, երբ Չինարակած ամանեղենը ճենապակու երեւան գալու հիմքն է հանդիսացել: Մոտավորապես մ.թ. 1-ին դարում Զինաստանի տարածքում սկսվել է ճենապակու արտադրությունը:



Թեյ խմելու թաս՝ հավերի ու ծաղիկների պատկերով: Մին հարստությունից Չեն Խուայի կառավարման ժամանակի /1465-1487/ առարկա:



Ծաղկանկարով թաս՝ Մին հարստությունից
Սյուանդեհ կառավարման /1426-1435/
ժամանակներից:



Ծաղկանման եզրերով կապտագորշ թաս՝ Սուն
հարստության ժամանակներից:

Այն ծագել ու զարգացել է Սուն հարստության տիրապետության օրոք: Այդ հարստության ճենապակե ամանեղենը ճենապակու արտադրության տեխնիկայի գագար է հանդիսանում: Ճենապակու արտադրության հանրահայտ հիմք վայրերն էին Ցզունը, Դինը, Գուանը, Գեն եւ Շուն: Դրանք եղել են գյուտարարական յուրատիպ արտադրություններ, որոնց արտադրանքը հետագայում նմանակման առարկա է դարձել շատ դարերի սերունդների համար: Յուան հարստության օրոք /1206-1368/ ճենապակու արտադրության կենտրոն դարձավ Ցզինդեչժենը: Չինական ճենապակին բարձր է գնահատվում իր բաց մանուշակագույնի, բյուրեղային կավի, նուրբ ձեւավորման ու յուրօրինակ ձեւի համար: Չինացիների շրջանում շատ տարածված են բրոնզե ամանեղենը, խեցեղենն ու ճենապակին, թեեւ դրանք բոլորը շատ են տարբերվում ոճով: Խեցեղենը պարզ է ու նախվ, բրոնզե առարկաներն ավելի հանդիսավոր են, իսկ ճենապակին՝ ամենանրբագեղն է ու թեթեւը: Ճենապակին կարելի է անվանել չինական մշակույթի այցետոնսը, որն իրենից ներկայացնում է չինական մշակույթի մաքրությունն ու չին ժողովողի բարոյական ձգտումների մարմնավորումը:

Բնական առարկան

Յուրաքանչյուրը, ով ծանոթ է չինական ճենապակուն, գիտի, որ ճենապակե շինվածքները պատված են անհավասար ճաքերով: Ճենապակու արտադրության եզրութաբանությունում դա կոչվում է կրեկիրացում:

Բարձր ջերմության ու ճնշման տակ թրծված ճենապակու վրայի ճաքերն սկզբում արդյունք էին վարպետության պակասի, բայց ժամանակի ընթացքում նախշ հիշեցնող նման ճաքերով առարկաները մտան Սուն հարստության նորաձեւության մեջ: ճաքանախշերով առարկաները ներկայումս հանդիսանում են ճենապակու արտադրության ոճերից մեկը:

Ճենապակու արտադրության համար «գե» վառարանը տեղադրված էր ժամանակակից Լունցյուանի տարածքում /Չժեցզյան գավառ/ ու Եղել է ճաքերով ճենապակու արտադրության՝ Սուն հարստության ժամանակի տիպական արհեստանոցը:

Յուան հարստության ժամանակների խմկաման՝ ձկնածեւ կամքերով:



Ծովի ալիքի գույնի թաս: Սուն Արեւելյան հարստություն:



Այժմ Շանհայի թանգարանում առկա է գեում պատրաստված՝ ճաքերով երկու ճենապակե առարկա: Դրանցից մեկն արեւածաղկի նկարով շրջանաձեւ թաս է, մյուսը՝ եւս, բայց՝ ծաղկանախշերով: Երկուսի վրա էլ հատվող ճաքեր են: Նույն տեղն արտադրված ճենապակե էլի մեկ առարկա գտնվում է Տայբեյի Պալատական թանգարանում: Դա խմկաման է՝ ձկնանման կանթերով: Ձնարակված ու կրեմագույն այդ առարկան միմյանց հետ ազատորեն հատվող շատ սիրուն ճաքերով է, որոնք հիշեցնում են ծառերի տերեւների՝ իրենց «երակներով» ու «մազանոքներով»:

Չինացիներին դուր են գալիս ճաքանախշ առարկաները, որովհետեւ դրանք հիշեցնում են բնության հազվագյուտ արարվածքները: Նման շինվածքների նկատմամբ հետաքրքրությունն ընկած է նրանց զարդանկարներում՝ բնական ու անկանխատեսելի: Մարդու ձեռքով արված ցանկացած ճաք կիշներ ոչ բնական, մեխանիկական ու կերեւար կեղծ, ոչինչ չի կարող համեմատվել առարկաների բնական ճաքերի հետ:

Կապտա-ճերմակ ճենապակին



Տարվա չորս Եղանակների ծաղիկների նկարներով
պնակ՝ Սյուանդեհ /1426-1435 / տիրապետության
ժամանակներից /Մին հարստություն/:



Կապտաճերմակ պնակ՝ Յուն Դեհ /1403-1424/
կառավարման ժամանակներից: Մին հարստություն:

Պարզությունն ու նրբագեղությունը ճենապակե առարկաների հատկանիշն է, եւ այդ հատկանիշն ավելի շատ ներկայացված է կապտաճերմակ ճենապակու արտադրության մեջ:

Կապտաճերմակ ճենապակին Զինաստանի նյութական արվեստի տիպական ներկայացուցիչն է: Մին եւ Ցին հարստությունների օրոք /1616-1911/ ճենապակու արտահանման ամբողջ ծավալի 80 տոկոսը կազմում էր կապտաճերմակը: Կապտաճերմակ ճենապակու արտադրությունը Զինաստանում սկսվել է Տան հարստության /618-907/ տիրապետությունից զգալիորեն առաջ, սակայն լայն հիմքերի վրա չէր դրված՝ ընդհուպ մինչեւ Յունան հարստության կառավարման գալը: Այդ արվեստի աճը տեղի ունեցավ Մին հարստության օրոք, այն ներկայացնող՝ մեծարիվ արժեքավոր առարկաներ արտադրվել են այդ ժամանակաշրջանում: Կապտաճերմակ ճենապակու արտադրության կենտրոն էր դարձել Ցինդեչժենը: Մին հարստության օրոք այստեղ էին գտնվում ճենապակու արտադրության կայսերական արհեստանոցները: Կապտաճերմակն այսօր էլ է չինական բոլոր տեսակի ճենապակիների շարքում համարվում ամենաներկայանալին:

Կապտաճերմակ ճենապակու արտադրության համար կոբալտի օքսիդ է անհրաժեշտ: Այն օգտագործում են ճենապակու վրա ջնարակումից առաջ զարդանախշեր ուրվանկարելու համար: Ճենապակին բարձր ջերմաստիճանի ենթարկվելուց հետո նրա մակերեսը վերածվում է կապտաճերմակի, քանզի բարձր ջերմաստիճանի տակ կորալտի օքսիդն ստանում է կապույտ գույն: Կապույտ նախշերով ճերմակ մակերեսն ու փայլուն ջնարակը պարզ, նրին ու թափանցիկ տեսք են հաղորդում ճենապակուն:

Տայբեի Պալատական թանգարանում կա կապտաճերմակ ճենապակուց պատրաստված մեկ այլ առարկա. տարվա չորս եղանակների ծաղիկներով պնակ, որը նույնպես արտադրված է Մին հարստության օրոք՝ Սյուանդեռում: Նրա ներքին կողմի զարդանկարում ներառված է 13 ծաղիկ, այդ թվում՝ քրիզանթեմ, լոտոս, գարդենիա, նուռ, չինական խոտաբիոն, հիբիսկուս եւ քամելիա: Արտաքին մասի վրա եւս ներկայացված են մի քանի ծաղիկներ: Պնակի կենտրոնում բուդդիզմի աստվածային ծաղիկ լոտոսն է՝ չինական ճենապակիում հաճախ կիրառվող մոտիվը: Պնակը բյուրեղային մաքրություն է հաղորդում, ու թեեւ ձեւավորումը շատ խառն է, մաքուր սպիտակ գույնն ու նրբագեղ կապույտը սազում են իրար:

Չինաստանում կապտաճերմակ ճենապակին լայն տեղ է գրավում ճենապակու արտադրության մեջ՝ չինական մշակույթի եւ չին ժողովրդի գեղագիտական ոգու հետ իր համապատասխանության, պարզության, բնականության ու հանգստության համար:

Չինացիները գտնում են, որ գերագույն գեղեցկությունը պարզ է ու բնական, այն ամենն, ինչ բռնագըռն է ու հեղված, հակասության մեջ է այդ փիլիսոփայության հետ Որպես չինական ճենապակու ներկայացուցիչ՝ կապտաճերմակ ճենապակին արտահայտում է արտահայտչականություն ու նրբագեղություն, հանգստություն եւ մաքրություն: Լոկ երկու գույնի՝ կապույտի եւ սպիտակի, օգտագործումը կարող է միապաղադ թվալ, բայց դա կապտաճերմակ ճենապակու բնորոշ հատկանիշն է՝ զերծ ավելորդ զարդարանքից եւ չափազանցումներից: Կապտաճերմակ ճենապակին նաեւ ձգտում է թափանցիկության էֆեկտի, ինչին հասել են Յուան եւ Մին հարստությունների պաշտոնական արվեստանոցներում: Այդ առարկաները եղել են ոչ հաստ, թափանցիկ սպիտակ կավի վրա պատկերված նախշերով, եւ դա հարուցում է վեհության ու երկրայինից հեռվության տպավորություն:

Խորաթափանց ու «փակ» աշխարհը

Չինական ճենապակու մեծամասնությունն իր մեջ պարունակում է կոնֆուցիուսական գեղագիտության գծեր: Նրբինության նկատմամբ նրա ձգտման մեջ կարելի է նկատել հակում դեպի այդ գեղագիտությունը. լռակյաց ու փակ ոճի միջոցով կարելի է բացահայտել կոնֆուցիուսական գեղագիտության բնույթը:



Զնարակված կարմիր սափոր: Խուն Ուի
/1368-1398/ կառավարման ժամանակների
շինվածք, Մին հարստություն:



Զնարակված կարմիր սափոր: Խուն Ուի
/1368-1398/
կառավարման ժամանակների շինվածք,
Մին հարստություն:

Սուն հարստության տիրապետության ժամանակաշրջանը եղել է կոնֆուցիոնականության վերածննդի, ինչպես նաև ճենապակու արտադրության բարգավաճման շրջան: Դա հասարակ գուգադիպություն չի եղել: Կոնֆուցիոնականության հռչակն առաջ է մղել Սուն հարստության ակնառու զարգացումն՝ այն դեպքում, երբ նրա բարոյական հիմքերը լուսավորություն են հաղորդել ճենապակու վարպետներին: Սուն հարստության ավանդական ճենապակին ընդգծել է ներքին գեղեցկությունը, որին հետեւում էին շատ սերունդներ, եւ որի նրբագեղ ոճը չինական ճենապակու արվեստը դարձրել է խորհրդածության սնունդ, եւ բերկրանք՝ աչքի համար:

Զուսպ ոճի մյուս ներկայացուցիչը կարմիր ճենապակին է, որը զարգացում է ապրել Ցզինդեչժենում՝ Յուան հարստության տիրապետության օրոք: Կարմիր ճենապակու արտադրությունը շատ ավելի բարդ էր, քան կապտաճերմակինը, դրա համար էլ այն եղել է բարձր ճաշակի արվեստ: Մին հարստության խունու իշխանությունում ստեղծված թանկարժեք սափորն այժմ գտնվում է Տայբեյի Պալատական թանգարանում: Նրա ստորին մասում պատկերված են լուսոսի պսակաթերթեր: Արմավենիները, քարերն ու բանքուկի պուրակները պատկերված են սափորի որովայնային գոտում: Այդ բնանկարը դիտողին խորը պատրանքի զգացողություն է պարգևում:

Չելն ու կերպարը

Ճենապակե շինվածքները համալիր արվեստ են, որտեղ ծեւը, որ այնքան կարեւոր է ճենապակե առարկայի համար, ննան է քանդակի կտորի: Արվեստի համար արժեքավոր ճենապակե առարկաները գրավում են սիրողների եւ գիտակների ուշադրությունը:

Չինաստանում ճենապակու տեսակների շարքում կա սպիտակ ճենապակի՝ զարդարված նույն գույնի ծաղկանկարներով, որոնք հարուցում են բարձրաքանակային քանդակի պատրանք: Անենահոչակավոր սպիտակ ճենապակին պատրաստվել է Դինի արվեստանոցում՝ Սուն հարստության օրոք: Այն կարեւոր ազդեցություն է գործել սպիտակ ճենապակուց պատրաստվող մյուս բոլոր առարկաների վրա: Ցին հարստության ժամանակներում՝ Դաոգուան իշխանությունում /1821-1850/ սպիտակ ճենապակուց ստեղծված փոքրիկ տարողությունը տարբերվում է սպիտակ ճենապակե մյուս բոլոր առարկաներից: Արտաքին կողմից այն, թվուն է, չի տարբերվում սեղանի խաղերի մասերը պահելու համար նախատեսված տարողությունից, բայց ներսի կողմից պատկերված ծաղկատերեւներն ընդգծվում են նրբորեն: Արվեստի այդ նրբագեղ աշխատանքը պետք է որ մեծ բավականություն պատճառած լինի տվյալ սեղանի մոտ խաղացողներին:

Բաց կանաչավուն պնակ՝ քրիզանթեմի
տեսքով: Չարավային Սուն հարստություն:





*Ծովի ջոհի գույնի թեյի բաս, Յուան
հարստություն:*

Զինական ճենապակիում օգտագործվել են նաև գեղանկարչության էֆեկտները: Ճենապակե առարկաները սովորաբար պատվում էին գեղանկարչությունում կիրառվող բնանկարներով, թռչունների եւ ծաղիկների պատկերներով: Խեցեզործության շատ վարպետներ միաժամանակ լավ նկարիչներ էին: Զեւի նրբագեղություն, գույնի հետաքրքրահարույց կիրառում, նույր նյութակազմվածք եւ կենդանի պատկերներ՝ այս ամենը Մին ու Ցին հարստությունների ճենապակե շինվածքներին վեհություն եւ շքեղություն է հաղորդել:

Մին հարստության կառավարման վերջին՝ եւ Ցին հարստության՝ առաջին շրջանում շինական ճենապակին եվրոպական գեղանկարչության ազդեցության ներքո ենթարկվել է որոշ նորամուծությունների: Օգտագործվել են եվրոպական գեղանկարչության գեղարվեստական տեխնիկայի այնպիսի ձեւեր, ինչպիսին են լույսն ու ստվերը՝ ձեւավորմանը եռաչափ տպավորություն տալու համար: Դրա օրինակն է «վարդագույն պոնպադուր» ոճը, որը շատ տարածված է եղել Ցին հարստության ժամանակ:

Վարդագույն պոնպադուրը, հայտնի՝ նաև որպես «փափուկ գույն», անվանումն ստացել է գույնի՝ առանց ստվերային անցման օգտագործումից: Այդ ոճով ստեղծված սափորն՝ ինը դեղձերի պատկերներով, պահպանվում է Պեկինի Պալատական թանգարանում: Նրա ձեւավորման մեջ ավանդական հինգ կրկնվող գույների փոխարեն կիրառվել է վարդագույն պոնպադուր մեթոդը: Այն պատրաստելիս մեծ ուշադրություն է դարձվել նրբերանգային անցումներին՝ ինչպես նաև՝ առարկային կենդանի, ուժեղ ռեալիստական ճաշակով եռաչափ էֆեկտ հաղորդող գույնին ու ստվերներին:



19. Յանցզի գետից հարավ այգիները

Չինացիներն սկսել են այգիներ հիմնադրել ավելի քան 2000 տարի առաջ: Այդ երկար ժամանակաշրջանում գոյություն է ունեցել այգիների երեք ձեւ. կայսերական, տաճարական եւ անհատական այգիներ Ամենահայտնի կայսերական այգին Անառային պալատն է /Իխեյուան/ Պեկինում՝ այն դեպքում, երբ Յանցզի գետից դեպի հարավ առկա անհատական այգիներները հայտնի են իրենց հազվագյուտ մքնոլորտով: Սուչժոուի, Յանչժոուի եւ այլ վայրերի տարածքներում ցրված այդ այգիները Մին /1368-1644/ եւ Ցին /1616-1911/ հարստությունների բողած ժառանգությունն են: Դրանցից յուրաքանչյուրը նման է անգերազանցելի գեղեցկությամբ, գեղազմայլ բնանկարի:

Չիշարժան վայրերը տանող դարձդարձիկ ճանապարհները

Շառերի պուրակներում կորած շենքերի արանքներում գտնվող առաջինը, որ գրավում է այցելուների ուշադրությունը՝ դարձդարձիկ արահետներն են, որոնք տանում են... ոչմիտել: Սակայն դա առաջին հայացքից է այդպես: Թվում է՝ արահետն ահա կվերջանա, բայց հանկարծ այցելուի առջեւ հայտնվում է միանգամայն ուրիշ աշխարհ. տաղավարներ, քարե շինություններ, գետակներ, եւ այդ ամենը հաճելի անակնկալ է դառնում:

Չինական այգու մուտքի մոտ այցելուների հայացքի առջեւ սովորաբար մեծ քար կամ պատ է «բուսնում»: Նման այգու տիպական օրինակ է Անառային պալատը /Իխեյուան/: Արեւելյան դարպասներով մուտք գործելիս ուղիղ փակում է քարե մեծ զանգվածը: Դա արվել է այցելուին հաճելի անակնկալ մատուցելու համար, երբ նա կտեսնի քարե շինություններն ու ընդարձակ, թափանցիկ լիճն՝ ալեօփանքի մեջ:



Սուչժոու: Յանլամի տաղավարային այգու կողոքը:

Անհատական այգիները կորակոր գծերով սփռված են Յանցզի գետի հարավային կողմի երկայնքով: Սուչժոուի Չժոուչժեն այգու միջանցքները զիգզագաձև ձգվում են գետի երկարությամբ՝ լոկ հազվադեպ ընդհատվելով մասնակիորեն ջրում տեղադրված տաղավարներով: Դեպի վեր թեքված քիվերով տանիքները, թեւերը լայն բացած թռչունի պես, ողջ պատկերին շարժման զգացում են հաղորդում: Նույնիսկ ծառերն են «գալարվում»: Լացող ուռենիները, որոնց վարսերը հպվում են ջրին, երկարակյաց ծառերն իրենց հին արմատների հանգույցներով, վիշապածառը՝ բազմաթիվ մագիլներով, հյուսք կապող վազերը, նվազ ճյուղերով սալորենիները՝ ամեն ինչն այստեղ խոսում է այդ կորագծվող աշխարհի գեղեցկության մասին:

Դյուրիչ քարերը



Տուն՝ քամրուկի պուրակում:

Չինական ոճի այգում քարե շինությունները կարեւոր դեր են խաղում: Առանց դրանց այգին չի կարող համարվել հին շինական ոճի այգի: Արեւմուտքից ժամանած զբոսաշրջիկները կարող են նկատել, որ չինական այգիներում չկան քանդակներ, որպիսիք գոյություն ունեն Եվրոպականում: Իրականում քարե կազմավորումները նույնքան նշանակություն ունեն շինական այգու համար՝ որքան, իսկ գուցե եւ ավելին, Եվրոպական այգում՝ քանդակները:

Սուչչոուի Լյույան այգու Պիկ Գուանյունը իրականում Տայխու գետից հանված քարերի կազմավորում է: Այն գտնվում է ջրամբարի մոտ, եւ նրա ձեւը շատ հստակ արտացոլվում է գետում: Քարե կազմավորումը սարքված է իսկական

գագաթի օրինակով: Այդին իրականության եւ արտացոլանքի միջեւ իրենից ներկայացնում է դյուրիչ ու գեղատեսիլ կոմպոզիցիա: Քարե կազմավորման մոտ աճում են նուրբ դեղին, կարմիր ու սպիտակ ծաղիկներ: Գագաթը տանող ուղու վրա կանգնած է տաղավարը:

Յատակից մինչեւ ջրի մակերեսը երեւում է գագաթի քարե կազմավորումը: Ամբողջը միասին իրենից ներկայացնում է տարրեր տեսարանների հարուստ շերտերից կազմված բնանկար, եւ դա հենց հարավային այգու իրականությունն է, որտեղ մանրամասները ներկայացնում են կատարյալ այգու պատկերը:

Տայխու լճից բերված քարերը Յանցզի գետից դեպի հարավ գտնվող այգիներում արհեստական բլուրների կառուցման համար օգտագործվող թանկարժեք շինանյութ էին: Մարդիկ բարձր են գնահատում դրանք՝ նրբության, ծակոտկենության, ինչպես նաև կնճիռների համար: Նրբությունը մարմնավորում է ոչ երկրային սկիզբը եւ անտարբերությունը, ծակոտկենությունը՝ նշանակում է բացություն ու գեղակերտություն, որը ներուժի ազատ հնար է տալիս, նրբագեղողությունը՝ նեֆրիտի պես արտացոլում է գերազանցության ու քննչության հատկանիշները ձեւակազմվածքում՝ այն դեպքում,

Երբ կնճիռները ջրից սնվող կորացած ձեւերն են եւ ալիքածեւ գծերը: Տայխու լճից բերված քարերի այս չորս առանձնահատկությունը բնութագրում է ոչ միայն ձեւերի գեղեցկությունը, այլև՝ արտացոլում կյանքի նկատմամբ մարդկանց վեհ իդեալները:



*Գուանյուն գագաթը Սուչժոուի
Լյույուան այգում:*

Տարածության զգացողությունը

Զինական այգիները հարավում սովորաբար մեծատարածք չեն: Տարածության տպավորություն հարուցելու համար օգտագործվում է «հեռավոր տեսարանի փոխառնան» մեթոդը, որն այցելուներին օգնում է տեսնելու այն, ինչը գտնվում է այգու սահմաններից դուրս, որպեսզի նրանք նոր ու ավելի մեծ տեսարան ընբոշինեն:

Դրա օգնությամբ իրոք հաջողվում է ստանալ տարածության զգացողություն՝ չնայած այգու համեմատաբար փոքր չափսերին:

Այդ տեսակետից պատուհանները շատ կարեւոր են: Զինական այգեզործությունում պատուհանները միշտ հովհարի ծեւ են ունեցել եւ կոչվում էին «հարմար պատուհաններ»: Այդ պատուհանների միջով կարելի էր տեսնել բամբուկի գեղեցիկ պուրակներն ու սարերը: Պեկինում Անառային պալատի երջանիկ երկարակեցության դահլիճում պատուհանները տեղադրված են


բոլոր՝ չորս պատերի վրա, եւ այդ պատուհաններից կարելի է տեսնել Կունմին լիճը: Յուրաքանչյուր պատուհանից երեւացող տեսարանը վերածվում է կենդանի նկարի: Իրականում այդ այգու կոնստրուկտորները ուրիշ անվանում են տվել դրանց՝ «կլլող պատուհաններ», որոնցից տարբեր տեղերի տեսքը փոխկապված էր եւ ազդում էր՝ բնանկարի վրա՝ այդպիսով նրան հաղորդելով շարժման տպավորություն: Ավելի հետաքրքրիրն այն էր, որ պատուհաններից բնանկարները կարելի էր տեսնել տարբեր անկյուններից, ինչի շնորհիվ այգու գբաղեցրած տարածությունը տեսողականորեն մեծանում էր:

«Հեռավոր տեսարանի փոխառման» գաղափարն իրականում կիրառվել է ոչ միայն պատուհանների, այլև այգու մյուս՝ այնպիսի տարբերի համար, ինչպիսին տներն են, տաղավարները եւ մեհյանները:

Անառային պալատի հորիզոնական ցուցանակներից մեկի վրա գրված է. «Լեռների գույնը եւ լճի լույսը հավաքված են այս շենքում»: Դա խոսում է այն մասին, որ շենքը «կուլ է գնացել» տեղային բնանկարի համայնապատկերին, ինչը «հեռավոր տեսարանի փոխառման» լավ օրինակ է:



*Պատուհան՝ Յանցգի գետից հարավ
ընկած այգու տեսարանով:*



Սուչժոուի հնու այգու
անկյուններից մեկը:
Սպիտակ քարերն ու կարմիր
ծառը զարդարում են
միմյանց:



Ալիքաձեւ պատը Սուչժոուի
Սիյուան այգում:

Տաղավարները չինական այգիների բաղադրիչ մասն են: Նրանց գործառույթը այցելուների ուշադրությունը սահմանափակ տարածությունից անսահմանափակի վրա հրավիրելն է: Տաղավարում գտնվող այցելուն կարող է հայացքը նետել հեռվին եւ ըմբոշխնել գեղեցիկ տեսարանը: Ինչպես ասված է Յուան հարստության /1206-1368/ օրոք գրված մի բանաստեղծության մեջ՝ «Անսահման բնանկարը միանում է տաղավարին»: Պեկինի Անա-

ռային պալատում կա «էքսկուրսիա դեպի գեղանկարչություն» կոչվող տաղավար, ինչը չի նշանակում, թե տաղավարն ինքը ինչ-որ կերպ գեղանկարչություն է հանդիսանում, ո՞չ. դա նշանակում է, որ տաղավարից բացվող տեսարանը նման է շրջանակով գեղանկարի: Դրա համար էլ նտնելով տաղավար՝ մտնում եք մեծաչափ գեղանկարի մեջ:



Չժուչժենի այգու
բնանկարը.
սպիտակ պատերն
ու սև տամիքները
շրջապատված են
կանաչով:

Սուչժոուի Ցանլան այգին հանրահայտ է իր տաղավարներով: Բլրի գագաթին գտնվող Ցանլան տաղավարը, թվում է, օժտված է երկինքն ու ամպերը կառավարելու հատկությամբ: Տաղավարից հաճախորդների առջեւ գեղեցիկ տեսարան է բացվում թռչքային բարձունքից: Տաղավարի սյուներից մեկի վրայի երկտող բանաստեղծությունն ասում է. «Եւ գին չունեն նուրբ հովիկը եւ լուսերես լուսնկան, եւ սարերը հեռավոր, եւ գետերը մերձընկա»: Գտնվելով տաղավարում ու հիանալով «հեռավոր սարերով ու գետերով մերձընկա»՝ այցելուն կարող է անդորրել հոգին, եւ սա չին բնանկարիչների կատարելատիան է:

Տարածության զգացողության մեծացնան, տեղի տեղադրվածության, կազմակերպման ու ստեղծման համար չին այգեկոնստրուկտորներն օգտագործել են շատ մեթոդներ, ինչպիսին են «բնանկարի փոխառման», «բնանկարի բաժանման» եւ նույնիսկ «հայելու միջոցով բնանկարի փոխառման» մեթոդները:

«Բնանկարի փոխառումն» այն հիմնական սկզբունքներից մեկն է, որ կիրառել են չինացի բնանկարիչները: Օրինակ՝ գետակի լեռան գագաթի մեխյանն Անառային պալատի բնանկարի մաս է թվում: Սուչժոուի Լյույուան այգու Գուանյուն շենքից կարելի է Վագրի բլուր գրոսայգու բնանկարով հիանալ հեռվից: Չժուչժենի այգում կառուցված արհեստական բլրին գտնվող Լյանիի տաղավարից կարելի է դիտել գեղեցիկ բնանկարն այգու պատերից անդին: Մրանք բոլորը «բնանկարի փոխառման» լավ օրինակներ են եւ հի-

անալիորեն կատարում են իրենց գործառույթը՝ բնանկար փոխառելով դրսից:

Զինական այգիներում շատ շենքերի անվանումներ իրականում արտացոլում են «քնանկարի փոխառնան» սկզբունքը, ինչպիսին են, օրինակ, «Ծխի եւ անձրեւի դահլիճը», «Անձրեւի սրահը». «Լուսնի եւ քամու տաղավարը», «Լոտոսի ու քամու տաղավարը» եւ «Թռչող շատրվանի տաղավարը»։ Այս շենքերի անուններից հետեւում է, որ նրանց գործառույթը բնական բնանկարի մերձեցումն է այցելուներին։

Երկար միջանցքն Անառային այգում բնանկարը կիսում է երկու մասի. մեկը կունմին լծի բնական գեղեցկությունն է, մյուսը՝ մարդու համար հետաքրքրություն ներկայացնող ճարտարապետական համալիրը։ Այցելուները երկու բնանկարով հիանում են միաժամանակ. դա էլ իրենց կոչվում է «բնանկարի բաժանում»։

«Բնանկարի անջատման» սկզբունքի կիրառման հիմանալի օրինակ է Ամառային պալատի Ներդաշնակության այգին։ Դա այդի է՝ այգու մեջ։ Դա անկախ վայր է, որն, այնուամենայնիվ, կախված է մեծ այգուց։ Զին բնանկարիչներն այդ տեսության կիրառման մեջ հասել են հաջողության, որովհետեւ հավատում են, որ որքան շատ է բաժանված տեղը, այնքան շատ է այն տարրողունակ թվում՝ դրանով իսկ ավելի շատ զգացումներ հարուցում այցելուի հոգում։

«Դայելիով բնանկարի փոխառում» է կոչվում պատուհանի դիմաց հայելու տեղադրումը՝ պատուհանից տեսարանի ընդգրկման համար։ Այս մեթոդի կիրառման դեպքում իրական աշխարհը վերածվում է վիրտուալայինի։ Լճակն ու լիճն այգում ունեցել են իրենց այդպիսի «առաքելություն»։

Ի վերջո՝ ինչպիսի մեթոդ էլ որ կիրառվում էր այգու ձեւավորման մեջ, դրանք բոլորն էլ հետապնդել են մեկ նպատակ՝ տարածության զգացողություն ապահովել այգում։ Սա չինական գեղագիտության կարեւոր ասպեկտներից մեկն է, որը կարող են հասկանալ միայն գիտակները։





20. ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱՆ

Օտարերկրացիներից շատերը չինական մշակույթի մասին իմանում են չինական բազմաթիվ ռեստորանների միջոցով, որոնց կարելի է հանդիպել աշխարհի բոլոր կողմերում, եւ նրանք հասկանում են, որ Չինաստանը գերազանց խոհանոցի երկիր է: Երկրորդ տապավորությունը, որ ստանում են՝ սովորաբար Պեկինի օվերան է, որի դիմակները դարձել են Չինաստանի խորհրդանշանը: «Չինական մշակույթի տարվան» նիրված տոնական ցուցապատճառներին շատ երկրներում կարելի է հանդիպել Պեկինի օվերայի դիմակներին: Չինական մշակույթը հասկանալու համար, անշուշտ, հարկավոր է դիտել Պեկինի օվերան:

ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱՅԻ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԻՆՎԵՐՏ

Պեկինի օվերայի գեղեցկությունը ճառագայթում է նրա իրաշագեղ դիմակներից՝ կենդանի, տպավորիչ ու հնայող: Այս արվեստի գեղեցկությունն ընկած է ոչ միայն նրա գումեղ հանդերձներում, այլև՝ փայլուն կարմիրով, մանուշակագույնով, սպիտակով, դեղինով, սերով, կապույտով, կանաչով, եւ մյուս բոլոր գույներով, որպիսիք միայն հնարավոր է պատկերացնել, ձեւավորված բազմաթիվ դիմակներում:

Երկու դերերում՝ «ցղին» /«տղամարդու դեր»/ եւ «չոռու» /«ծաղրածու»/, օգտագործվող դիմակները ծառայել են երկու նպատակի: Մեկը ցույց է տվել պերսոնաժի անձը: Օրինակ՝ «կարմիր դեմքը» նշանակում է, որ անձը հավատարիմ է եւ խիզախ, «սեւ դեմքը»՝ որ ազնիվ է, «սպիտակ դեմքը»՝ որ խորամանկ է ու չար: Դիմակի մյուս նպատակն է բարոյական ու բարոյագիտական տեսանկյունից արտահայտել մարդկանց գնահատականը: Օրինակ՝ հարգարժան է, ատելի է, ազնվակիրը է կամ ծիծաղելի եւ այլն:

Պեկինի օպերա: «Ռիդ լճակը» ներկայացման
հերոս Չժան Ֆեյր:

Լինելով արտահայտիչ Պեկինի օպերայի դիմակներն արվեստ են ինքնին: Օրինակ՝ Չժան Ֆեյր՝ «Երեք թագավորություն» ստեղծագործության /220-280/ հերոսը, որի դիմակի ձեւավորումն ունեցել է թիթեռի տեսք, գլուխգործոց է, որը հիանալի կերպով համատեղել է անհատականությունն ու դերասանական ձեւավորումը: Պեկինի օպերայի դիմակների հետաքրքրություն հարուցող գեղեցկությունն ու գույները գորավչություն են գումարում ներկայացմանը: Չինական արհեստագործական շատ շինվածքներ /ինչպիսին են թռչող «օձը», կավե արձանիկները, գորգերն ու գորելենները/, ինչպես նաև՝ գովազդների ու նորաձեւության առարկաների վրա կարելի է տեսնել Պեկինի օպերայի դիմակների պատկերներ:



**Պեկինի օպերան. Երգեր, բանաստեղծություններ,
գործողություններ եւ մարտարվեստ**

Չինացիները Պեկինի օպերա կամ այլ ներկայացումների են գնում՝ ասելով, թե գնում են «պիես դիտելու»:

Ի՞նչ է նշանակում պիեսը չինացու ըմբռնմամբ: Պեկինի օպերայում «պիեսը» ոչ այնքան պատմություն է կամ սյուժե, որքան՝ բեմում ստեղծված պատկերների աշխարհ, ներդաշնակության հիանալի ասպարեզ զգացնումքների ու ներկայացման միջեւ:

Պեկինի օպերայում ստեղծված պիեսը կամ «պատկերների աշխարհ», բնականաբար, հիմնված է սցենարի սյուժեի եւ, որ շատ կարեւոր է, դերասանների խաղի՝ վրա: Պեկինի օպերայում «պատկերների աշխարհ» ստեղծելու համար սյուժեն ապահովում է լոկ ներկայացման հիմնակնախըն ու հիմնապատառը՝ այն դեպքում, երբ ամբողջ փայլուհմայքը հաղորդում են դերասաններն իրենք: Պեկինի օպերայի մեջ դերասան Մեյ Լանֆանը /1894-1961/ մի անգամ նշել է, որ Պեկինի օպերայի արվեստի առանձնահատկությունն այն է, որ «դերասանը միշտ կենտրոնում է»: Պեկինի օպերայի դերասանները բեմի վրա կերպարներ ստեղծելու արհեստավարժներ են:



ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱ: Դոու Էրդունը «Գողանալով թագավորական ձիուն» մերկայացման մեջ:

ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱՅԻ ԴԵՐԱՍԱՅԱՆՆԵՐԻ ԵՐԼԿԱՅԱԳՈՄՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՄԻԱՎՈՐԵԼ ՀՈՐՍ ԻԻՄՆԱԿԱՆ ԱՍՎԵԿՏՈՆԵՐՈՒՄ. ԵՐԳԵ-
ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՍՄՈՒՆՔ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐ, ՄԱՐՄԱՐՎԵՍՏՈՆԵՐ, ԻՆՉԻ ԷՒԹՅՈՒՆը
ԵՐԳԵԳՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ պարարվեստի հա-
մադրությունն է: Այդ ասվեկտոներից
ամենակարեւորը երգելն է, որովհետեւ
ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱՆ ԵՐԳԵԳՈՂՈՒԹՅԱՆ ար-

ՎԵՍԱՆ Է: ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱՅԻ ցանկացած դերասան կարող է պարծենալ հան-
դիսատեսմերին ծանոթ մի քանի հրաշալի արիաներով: ՄԵՂԵՂԻՆԵՐԻ փայ-
լուհմայքը սովորաբար մարմնավորում է ՊԵ-
ԿԻՆԻ ՕՎԵՐԱՅԻ արվեստի վսեմ ոլորտը:

Չհասկանալով ՊԵԿԻՆԻ օվերայի կախար-
դական արիաները, չի կարելի հասկանալ եւ
ըմբռշխնել այդ արվեստի գեղեցկությունն
ամբողջությամբ վերցված:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԱՍՄՈՒՆՔԸ նույնպես այդ արվեստի կա-
րեւոր ասվեկտոներից է, որն առաջ է մղում
սյուժեի զարգացումը: Արտասանությունն էլ,
երգի նման, պետք է գրավիչ ձեւով կատար-
վի:



ՊԵԿԻՆԻ ՕՎԵՐԱ: ԷՌԼԱՆ ԱՍՏՎԱԾԾ «ԿԱՎԻԿՄԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐԾ ՔԱՆՈՒ Է ԳԱՋՈՒՄ ԵՐԼԱՄԱՅԻՆ ԱՐՔՈՒՄԻՔՈՒՄ»
ՄԵՐԼԿԱՅԱԳՄԱՆ ՄԵՋ:



Պեկինի օպերայի
կոստյումների
շքեղությունը:

Գործողություններն ու մարտարվեստները՝ նշանակում են, որ՝ դերասանները ֆիզիկական շարժումներ են կատարում, որպեսզի ցույց տան իրենց հոլոգերը տարբեր իրավիճակներում: Գործողության մեջ մտնում են շարժումները գլխով եւ աչքերով, մենապարերն ու խմբապարերը եւ այլն: Ներկայացման պարերում առկա են շարժումներ՝ առօրյա կյանքից: Մարտարվեստը բեմում ներկայացվող մարտական արվեստներն են եւ ակրորդատիկ գործողությունները՝ պայքարի կամ պատերազմական պատկերների արտահայտման համար: Քանի որ Պեկինի օպերայի դերասանների շարժումներն արտահայտում են գործողություններ, եւ նրանք միշտ շարժման մեջ են լինում, ապա բեմն էլ սովորաբար մեծ չափս է ունենում: «Նեֆիլսե ապարանջանի գտածոն» օպերայում երիտասարդ կին Սուն Յուցզան ու երիտասարդ գիտնականը սիրահարվում են իրար, նրանց աչքերն ակնդետ նայում են նույն ուղղությամբ՝ ասես անտեսանելի թելով միմյանց հետ կապված: Դետո, երբ խնամախոսն իր ձողիկով վեր ու վար է շարժում թելը, սիրող զույգի աչքներն էլի նայում են մեկ ուղղությամբ: Նման շարժումները ներկայացմանը եւ հումոր են գումարում, եւ ավելի շեշտում նրա գերազանցությունը: Գործողություններն ու մարտարվեստները որպես պիեսի մաս՝ շատ կարեւոր են, սակայն դրանք ինքնին էլ շարժումների ու վարպետության գեղեցիկ արվեստ են: Օրինակ՝ «Չու արքան իրաժեշտ է տալիս հարձին» պիեսում դերասան Մեյ Լանֆանը սրով պարը կատարել է անպատկերացնելի վարպետությամբ, որը շատ է դուր եկել հանդիսատեսին: Դա ձեւերի գեղեցկության յուրօրինակ ձեւ է: Վարպետության գեղեցկությունն իր մեջ ներառում է շատ ծանր ակրորդատիկ շարժումներ:



Պեկինի օպերայի դերասանները բեմում:

Պեկինի օպերայի ներկայացումնեռում ամեն ինչը՝ նրա հազվագյուտությունը կազմող երգեցողությունը, ասմունքը, գործողություններն ու մարտարվեստները, պիեսում սեւեռված են մեկ կամ երկու դերասանի վրա: Այդ խաղացողները կոչվում էին «ցզուեր» «մինցզուեից»: Պեկինի օպերայի աշխարհը մեծապես կախված է երգեցողությունում, ասմունքում, պարում եւ մարտարվեստներում դերասանների ընդունակություններից: Դա շատ է տարբերվում մյուս ներկայացումներից, որոնցում արվեստը ներկայացված է գեղագիտական ըմբռնման ձեւում:

Գոյություն ունի «Պեկինի օպերան՝ դա խաղացողների արվեստ է» արտահայտություն, եւ այն ծիշտ է: Այնպիսի արվեստն, ինչպիսին Պեկինի օպերան է, ավելի քան 200 տարվա պատմություն ունի: Այդ ժամրի դերասանների պրակտիկան ու փորձը հաստատում են, որ նման արվեստի գեղագիտական գեղեցկությունն ընկած է լոկ դերասանների վարպետության հիմքում:

«Վիրտուալ աշխարհի» գեղեցկությունը

«Վիրտուալ աշխարհի» պատկերումը Պեկինի օպերայի տարբերիչ առանձնահատկությունն է: Նրա վիրտուալությունը կազմված է երկու ասպեկտից. առաջինը վիրտուալ շարժումն է, երկրորդը՝ վիրտուալ բեմադրությունը: Վիրտուալ շար ժումներին կարելի է վերագրել նմանակման գործողությունները բեմի վրա: Օրինակ՝ ձի հեծնելը: Խաղացողը ներկայացման ժամանակ չի կարող իսկապես ձի հեծնել, դրա համար էլ ստիպված է սանձը պահել ձեռքերում եւ ինքն «արշավել» բեմում: Այնպես՝ ինչպես իրական ձիավագքում. մարմնի շշադարձը, մտրակի հարվածները, սանձի ձգումը՝ այս ամենը պարզապես երեւակայական ձիու վրա: Վիրտուալ բեմադրությունը նշանակում է բեմի վրա երեւակայական միջավայրի ստեղծում: Վերցնենք, օրինակ, թիավարումը նավակով: Քանի որ բեմում ջուր չկա, ինչպես եւ չկա նավակ, դերասանը սովորաբար վերցնում է թիերն ու «թիավարում՝ հանդիսատեսին հասկացնելով, որ «իսկապես» նավակում է եւ ջրում:

Բեմադրությունը բեմում շատ է պարզ: Այնտեղ սովորաբար մեկ սեղան է լինում ու երկու արող: Սեղանն իր հիմնական գործառութից բացի՝ կարող է կատարել մահճակալի դեր, երբ, օրինակ, դերասանը պետք է նստի նրա վրա՝ գլուխը ձեռքերին հենած: Եթե նա բարձրանա սեղանի վրա ու նայի հեռուն, ապա սեղանը կվերածվի քաղաքային դարպասների աշտարակի: Դերասանի գործողություններով կարելի է հասկանալ բեմի վրայի բեմադրությունը:

Վիրտուալ շարժումների եւ վիրտուալ բեմադրության արդյունավետությունն ընկած է դերասանների արհեստավարժության մեջ, որն օգնում է հանդիսատեսին՝ գգալու օպերայի հարուստ նշանակությունն իր նախասկզբնական ձեւում: Եկեք ուշադրություն դարձնենք երկու օպերայուն երկու պահի վրա: Դրանցից մեկը կոչվում է «Խաչմերուկուն»: Դա օպերա է երկու յամենի մասին, որոնք Ցզյան Ցզանին ուղեկցում են բանտ: ճանապարհին նրանք կանգ են առնում գիշերելու համար: Ժեն Տանխուեյը, որը պարտավոր է պաշտպանել Ցզյան Ցզանին, նույնպես կանգ է առնում այդ հյուրանոցում: Բայց հյուրանոցի տերը կասկածում է, թե ժեն Տանխուեյը ցանկանում է սպանել Ցզյան Ցզանին: Այդ պատճառով նա գիշերը մտնում է ժենի սենյակը, եւ նրանց միջեւ կրիվ է սկսվում: Եվ ինչն է հետաքրքիրը. թե եւ կրիվը տեղի է ունենում գիշերը, բեմը լուսավորված է: Այդուհանդերձ, հանդիսատեսը դերասանների շարժումներից հասկանում է, որ գործողությունը կատարվում է գիշերը: Նրանց շարժումները դանդաղ են եւ ոչ ճարպիկ: Տղամարդկանցից մեկի սուրը երբեմն անցնում է մյուսի դեմքի կողքով, բայց վերջինս ոչինչ չի գգում, որովհետեւ «մթության մեջ չի տեսնում», եւ դա գոավիչ, մասամբ էլ զավեշտական էֆեկտ է հաղորդում ներկայացմանը:

Մյուս պիեսը «Աշնանային գետն» է, որը փոխառված է Սըզուան օպերայից: Պիեսը երիտասարդ միանձնուիի Չեն Մյաոչանի մասին է, որը թողնում է մենաստանը՝ իր սիրեցյալ Պան Բիշտենին գտնելու համար: Բեմում չկա ոչ ջուր, ոչ նավակ, բայց ջահել կնոջ ու ծեր նավազի շարժումներից ու գործողություններից հանդիսատեսները կարող են հստակ հասկանալ, որ գործողությունը կատարվում է գետի վրա: Նավակը սահում է առաջ, եւ ամբողջ ճանապարհին աղջիկը գանգատվում է նրա դանդաղ ընթացքից՝ այն դեպքում, երբ ծեր նավազն ամեն կերպ ձգտում է նրանցից իմանալ սիրեցյալին փնտրելու հետ կապված պատմությունը: Պիեսը լի է սրամտությամբ եւ հումորով:

Այս օրինակները ցույց են տալիս Պեկինի օպերայի արվեստում «վիրտուալ աշխարհի» գործառույթը, որը խաղացող դերասանների պատկերացումներին անսահմանություն է հաղորդում, եւ ի պատասխան՝ հանդիսատեսներն ստանում են կերպարներով ու սրամտությամբ հագեցված հիանալի ներկայացում: Եթե «Խաչմերուկուն» կամ «Աշնանային գետը» ներկայացումների ժամանակ լիներ մոլք եւ իսկական նավակ՝ ջրում, ի՞նչ պիտի անեին դերասանները: Եվ կատանայինը մենք, արդյո՞ք, այնքան սրամտություն ու բարոյախոսություն այդ պիեսներից: Կասկածում ենք...

«Հետեւելով պիեսին՝ հետեւմ ես մեծ դերասաններին»



Ծերուկի դեր՝ Պեկինի
օպերայում:

Պեկինի օպերան գնահատողները սիրում են կրկնել «Հետեւելով պիեսին՝ հետեւում ես մեծ դերասաններին» արտահայտությունը, կամ՝ «Ունկնդրելով օպերան՝ լսում ես մեծ երգիչներին»։ Նման նկատումները դիպուկ ընդհանրացնում են Պեկինի օպերայի ամենագլխավոր առանձնահատկությունները։ Այդ օպերան հասկանալու առանձնահատկությունն ընկած է նրանում ստեղծված կերպարի մեջ։

Պեկինի օպերայի հանդիսատեսները թատրոն են զնում ոչ թե «պիես» տեսնելու՝ այլ «ներկայացում» դիտելու համար։ Նրանք գիտեն, որ պիեսը խաղացվելու է բեմում, իսկ «ներկայացման» իմաստը դերակատարի երգեցողության, ասմունքի, գործողությունների եւ նարտարվեստային խաղի մեջ է։ Ընթացկանուկ օպերան նրանք ընթացիչնում են ոչ մի-

այն պատմության հերոսներին, այլեւ դերակատարներին, որոնք հանդես են զալիս տվյալ դերերում։ Նրանք թատրոն են եկել հաճույք վայելելու հայտնի դերասանների խաղից, ու հենց դա էլ նշանակում է «հետեւելով պիեսին՝ հետեւում ես մեծ դերասաններին»։

Պեկինի օպերայի հանդիսատեսների եւս մեկ արտահայտություն։ «Որքան շատ ես ծանոթ պիեսին, նույնքան շատ էլ հաճույք ես ստանում նրանից»։ Մեկ անգամ կինոֆիլմը տեսնելը, հնարավոր է, բավական է, որովհետեւ դիտել այն երկրորդ անգամ հազիվ թե հետաքրքիր լինի առաջինի պես։ Բայց երբ Պեկինի օպերան ես դիտում, ինչքան շատ ես ծանոթ նրան, սցենարին, պատմությանը, այնքան շատ ես կենտրոնանում դերասանների խաղի, զգացմունքների վրա եւ ստանում դերասանական վարպետության խորը նշանակության ու կախարդանքի ավելի շատ բավականություն։

Պեկինի օպերայի երկրորդ առանձնահատկությունն այն է, որ ներկայացման վարպետության գեղեցկությունը նրանում զալիս է կերպարների աշխարհից։ Կարծ արիան կամ ակրոբատիկ գործողությունը միշտ արժանանում է հանդիսատեսի ծափահարություններին։ Եվ դա շատ է տարբերվում ֆիլմում ընթացող գործողությունից։ Երբ հանդիսատեսները կինոյում դիտում են ֆիզիկական հնարներ կատարողներին, սովորաբար չեն ծափահարում, որովհետեւ տեսնում են միայն դերը։ Իսկ Պեկինի օպերան կարող է հոտնկայս ծափերի մղել, որովհետեւ հանդիսատեսները մեծ ուշադրություն են հատկացնում դերին ու դերասանին, կատարման գեղեցկությանն ու կատարողի վարպետությանը։

Գերմանացի մեծ դրամատուրգ Բերտոլդ Բրեխտը /1898-1956/ մի առիթով նկատել է. «Դիտելով բեմում խաղացող չին դերասանին, այնտեղ տեսնում են առնվազն 3 անձի. մեկ կատարողի /դերասան/ ու երկու կատարվող դերեր /դերասան ու դեր/»: Նա Պեկինի օպերայի ներկայացումն անվանում էր «կրկնակի ներկայացում», Պեկինի օպերայի շատ կարեւոր առանձնահատկությունը: «Կրկնակի ներկայացման» մեջ տարբեր հանդիսատեսներ գնահատում են տարբեր ասպեկտներ: Որոշներին դուր է գալիս իր դերում դերասանի մինչեւ վերջ խորացածությունը, մյուսներին՝ դերասանների ներկայացումներն ինքնին /այս կարգի համբիսատեսը կարող է երգեցողությունը լսել անգամ փակ աչքերով/, բայց մեծամասնությունը տատանվում է այդ երկուսի միջեւ՝ մեծ բավականություն ստանալով «կրկնակի ներկայացումից»:



Երիտասարդ կանանց դեր՝ Պեկինի օպերայում:

Պեկինի օպերայի մեծագույն դերասան Մեյ Լանֆանը

Պեկինի օպերայի պատմության մեջ քիչ չեն եղել ականավոր դերասաններ՝ ներառյալ փառքի բարձունքներին հասած լեզենդար արտիստները: Նմաններից մեկն էր Մեյ Լանֆանը

Նա այն դերասանն էր, ով կատարում էր երիտասարդ կնոջ դերեր /դան/: Չեն Յանցզյուի /1904-1958/, Շան Սյաոյունի /1900-1976/ եւ Սյուն Խուեյշենի /1900-1968/ հետ միասին Մեյ Լանֆանը ներկայացնում էր «Պեկինի օպերայում կանացի դերեր կատարող քառյակը»: Նա մեղեդային ձայն ուներ, հիանալի արտաքին եւ նրբագեղ շարժումների ու պարելու ընդունակություն:

Լանֆանը մշակել էր նուրբ ու բնական կերպար՝ հասնելով կանացի դերերի կատարման բարձունքին: Նա մի շարք նորամուծություններ է ներդրել Պեկինի օպերայի արվեստում. հորինել է բազմաթիվ նոր մեղեդիներ, ներկայացրել դեմքի նոր արտահայտություններ, երաժշտության ներքո շարժումներ ու պարի տեխնիկա: Ստեղծել է նոր պարեր, ինչպիսին են մետաքսի պարը, սրով պարը, թեզանիքների պարը, փալասների պարը: Առաջինն է արխան օգտագործել գզինխուի /ավանդական լարային նվագարան/ հետ՝ կնոջ դերում երգեցողությանը նվագակցելու համար, այդպիսով երաժշտականորեն հարստացնելով Պեկինի օպերան: Լանֆանը նորույթներ է մտցրել նաև դիմակներում, թատերազգեստում, սանրվածքներում:

Նրա դերակատարմամբ մեծ հռչակի են արժանացել «Յարբած հարճը», «Չու արքան իրաժեշտ է տալիս հարճին», «Տիեզերք» եւ «Մու Գուեյին՝ կինգեներալ» պիեսները:



Մեյ Լանֆանը ներկայացման ժամանակ՝
կյանքի վերջին տարիներին:

Մեյ Լանֆանի արտաքինը, կոստյումները, պարերը, շարժումներն ու երգը բեմի վոա շատ են ցնցող: «Յարբած հարճուն» նա կատարում է վայելչագեղ արտաքինով. հարբած կնոջ դերը: «Տիեզերք»-ում՝ Չժան Յանժոնի դերը, որը խելագար է ձեւանում, բայց իր վիճակին չնայած՝ այնպես էլ մնում գեղեցիկ: Մեյ Լանֆանն իր դերերում ցույց է տվել չինական ավանդական գեղեցկությունն՝ իր հավերժական հմայքով: Նա արժանի է կոչվելու «Պեկինի օպերայի վարպետ»: Մեյ Լանֆանը գլխավորել է թատերախմբերի մի քանի պատվիրակությունների այցերը ԱՄՍ, ճապոնիա ու Եվրոպական երկրներ՝ միջազգային հեղինակություն նվաճելով «Պեկինի օպերայի համար:



21. Աքանչելի ժողովրդական արվեստի բազմազանությունը

Չինաստանում ժողովրդական արվեստը զարգացել է շատ դինամիկորեն, նրա որոշ ձեւեր համաշխարհային փառք են նվաճել: Ստորեւ ուշադրության ենք ներկայացնում դրանցից մի քանիսը:

Կլուազոնե. նյութական մշակույթի առարկաներ՝
անգին քարերի փայլով

Կլուազոնեն Չինաստանում եւ նրա սահմաններից դուրս լայնորեն հայտնի ավանդական արվեստ է, Պեկինում ծնունդ առաջ յուրօրինակ ու գերազանց տեղական գիտելիքներ եւ փորձ, որում համատեղված են բրոնզե արվեստի, ճենապակու և փայտի վրա փորագրության ու ժողովրդական արվեստի այլ ձեւերը: Կլուազոնեն շատ բարձր է գնահատվում հավաքածուների երկրպագուների կողմից, այն նաեւ նրբագեղ զարդանախշ է առօրյա կյանքի համար:

Այդ արվեստի հայտնի առարկան է Ցին հարստության ժամանակների /1616-1911/ սափորը, որի վրա պատկերված են դեղձեր ու չղջիկներ: Նրա վերին մասը, որովայնն ու հատակը ամբողջական լինելու փոխարեն միացած են միմյանց: Սափորի մակերեսը նախ փաթաթել են պղնձալարով, ապա պատել գունավոր ջնարակով: Ինը դեղձերն ու չղջիկները երջանկության ու երկարակեցության խորհրդանշաններ են:

Կլուազոնեն առաջին անգամ կիրառվել է Մին հարստության /1368-1644/ Ցզինտայ իշխանությունում /1465-1487/, որտեղ իշխանականում օգտագործել են կապույտ գույն, ինչից էլ ծագել է նրա անվանումը՝ «կապույտ Ցզինտայ»: Այդ ժամանակաշրջանի արտադրանքը ծանր ու վեհասքանչ էր թվում, բայց միաժամանակ դեռ կենսալից էր, հանդիսավոր ու «խոսուն»: Այն միշտ պատրաստել են պղնձե ձուլվածքից եւ պատել են էնալով ու գունավոր ջնարակով, որոնք ստանում էին բնական հանքանյութերից: Դրա համար էլ թվում էր, թե պատված են թամկարժեք քարերով: Մին հարստության՝ մինչ օրս պահպանված կլուազոնեն մեծ մասամբ պատրաստվել է Ցզինտայ եւ Չենխուա իշխանություններում:

Կլուազոնեի արտադրությունը մեծ ջանքեր է պահանջում, որովհետեւ 30 գործողությունից բաղկացած շատ բարդ աշխատանք է: Սկզբում հարկավոր է ձուլվածքից պատրաստել պղնձե կաղապարը. պղնձե սկավառակները տեղադրվում են հատուկ կաղապարների մեջ՝ ձեւ ընդունելու համար ենթարկվում բարձր ջերմության: Իսկ հետո վարպետներն աքցաններ են օգտագործում մակերեսը մազանման պղնձալարով պատելու համար: Նրանք այդպես կլուազոնեին տալիս էին տարբեր ձեւավորումներ: Այդ տեխնիկան կոչվում է ցանցազարդ: Փոսիկները պատվում են էնալով եւ տարբեր գույնի ջնարակով: Այս տեխնիկան էլ կոչվում է «հատիկավոր երկնագույն»: Բարձր ջերմաստիճանի ներքո թրծվելուց հետո էմալ ու ջնարակը մակարդվում են, դրա համար էլ պահանջվում էր զգույշ թրծում: Արտադրանքն ի վերջո ուսկեզօծվում էր եւ՝ կլուազոնեն պատրաստ է:

Հետազայում կլուազոնեն զարգացում է ապրել Ցին հարստության օրոք, եւ այն եղել է ավելի լավը, քան էր Մին հարստության թողարկածը: Սակայն գեղարվեստորեն նրան չի հերիփել նախկինի պարզությունն ու ծանրությունը: Ցին հարստությունից հետո, ըստ երեւույթին՝ գերարտադրության կամ վարպետների վատ հմտության պատճառով, կլուազոնեի որակը չէր կարելի համեմատել Մին հարստության օրոք արտադրվածի հետ:

Տոնական տրամադրությունը բարձրացնող ամանորյա նկարները

Գարնան տոնը /կամ չինական Ամանորը/ ամենակարեւոր ավանդական տոնն է Չինաստանում: Մարդիկ, անկախ նրանից՝ քաղաքում են ապրում, թե գյուղում, այն տոնում են լապտերներով ու ամանորյա կարգախոսներով: Ամանորյա զարդանկարները հանդիսության անփոխարինելի մաս են ցանկացած ընտանիքի համար: Մարդիկ այդպիսի նկարներ են կախում իրենց տանը՝ տոնական մթնոլորտն ավելի հաճելի դարձնելու համար:

Ամանորյա մկար Յանյուցինից:
Մայրը խաղում է մանչուկների հետ:



Անանորյա նկարներում պատկերների մեծամասնությունը խորհրդանշում են հաջողությունը, բարենպաստությունն ու զվարճությունը: «Եկամուտ՝ երջանիկ տարիներին» նկարում պատկերված է առողջ ու սիրունիկ մի տղեկ, որը ձեռքին տանում է մեծ ծածան ու լոտոսի ծաղկեփունց: «Զուկ» եւ «Եկամուտ» բառերը չիներեն արտաբերվում են նույն հնչյունով /յու/: Այդ երկու բառի համանության միջոցով նարդիկ արտահայտում են հնքնաբավ կյանքի նկատմամբ իրենց ցանկությունները:

Չինաստանը հսկա տարածքի տեր երկիր է, այդ պատճառով էլ անանորյա նկարները տեղից տեղ տարբերվում են: Դրանցից ամենալավերը բողոքվում են Յանյուուցինում, Տյանցգինում: Յարավում լավագույնները՝ Յօյանսի գավառի Սուչչոու քաղաքի Տախտուառ վայրում:

Յանյուուցինը փոքրիկ քաղաք է Տյանցգինի հարավ-արեւմտյան մասում: Շուրջ 300 տարի առաջ ամանորյա նկարներն արժանացան մեծ ճանաչման: Յուրաքանչյուր ընտանիք այդ արվեստի ստեղծման փորձագետը դարձավ: Յանյուուցինում ձեռքի աշխատանքի հետ համատեղ օգտագործեցին փորագրանկարի տպագրության մեթոդ՝ այդպիսով ստեղծելով կիսատպագրված ու ձեռքով կիսաներկված նկարների տարբերիչ առանձնահատկությունը: Արտադրության գործընթացը հետեւյալն է. 1/ փայտի վրա փորագրում են պատկերը, 2/ տպագրում են նկարները, 3/ ներկում են նկարները, 4/ եզրակավորում են նկարները: Եվ դիտողն էլ զգում է, որ այդ նկարները փորագրված են փայտի վրա ու ներկված՝ ձեռքով՝ ոչ թե միայն տպագրված: Յանյուուցինի ամանորյա նկարները նուրբ վարպետության շնորհիվ շատ են տարածված Չինաստանում:

Յանյուուցինի նկարներում հիմնալի են արտացոլված տոնական մթնոլորտն ու տրամադրությունը: Այդ բարձ ու կայծկլտուն նկարները ներկայացնում են առօրյա կյանքը: Օրինակ՝ «Մայրը եւ որդին» նկարում պատկերված են լճահայաց բակ, քարե կերտվածքներ ու ծաղիկներ: Յովիարը ձեռքին մայրը կանգնած է պատուհանի մոտ եւ կանչում է խաղացող տղային: Թմբլիկ տղան անուրով է, իսկ ձեռքի ձողիկի ծայրին արհեստական թռչնակ է նստած: Ամբողջությամբ վերցված՝ նկարը դիտողին է փոխանցում ընտանեկան կյանքի նուրբ ու սիրելի մթնոլորտը:

Տախտուառի ամանորյա նկարներն ստեղծվում են ջրաներկային տպագրության ավանդական մեթոդի հիման վրա: Նման նուրբ ու նրբանկատ մեթոդները բնորոշ են Յանցգի գետից հարավ ապրող բնակչության



Յանյուուցինի ամանորյա նկար:
Մայրը խաղում է տղայի հետ:

համար: Թեմատիկ առումով այդ նկարներն ստեղծվում են գեղանկարչական կամ ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների հիման վրա: Բայց դրանք գեղարվեստական են, մեծ մասամբ՝ ճանաչողական ու նրբագեղ, եւ ոչ այնքան ծանր ու վառ, որքան՝ Յանլյուցինի նկարները: Մի ժամանակ Տաղյուառի նկարները տարածվել են ճապոնիայի տարածքում եւ ազդեցություն գործել ճապոնական ուկիյոի կոչվող արվեստի կամ՝ «լույացող աշխարհի» պատկերների վրա: Շուրջ 300 տարի առաջ Տաղյուառի ամանորյա նկարները փոխառել են բրոնզի վրա փորագրության արեւմտյան ոճը, ինչպես նաև ստվերի կիրառումը: Տաղյուառի՝ կանանց մաքուր ու գրավիչ պատկերներով մեծ հոչակի արժանացած ամանորյա նկարները Զինաստանի ժողովուրդների շրջանում շատ են տարածված:

Թղթից կտրածոներ. մկրատի ստեղծած աշխարհ

Թղթե կտրածոն Զինաստանի՝ ավելի քան 1000 տարվա պատմություն ունեցող առանձնահատուկ ժողովրդական արվեստ է: Օգտագործվող նյութերը շատ հասարակ են. սովորական թուղթ եւ մկրատ /կամ՝ փորագրադանակ/: Թղթե կտրածոյի հմուտ վարպետը, գործի դնելով իր հնարները, թուղթը վերածում է կախարդական ինչ-որ բանի:

Կարմիր թուղթը ծալծվում է, ինտո բացվում եւ վերածվում գեղեցիկ նկարի: Որոշ վարպետներ դա կարողանում են անել անգամ փակ աչքերով: Թղթե կտրածոները՝ դա հանպատրաստից արվեստի վառ արտահայտված տեսակ է. թղթե կտրածոյի վարպետը նկարի պատճենի /որին նայելով կտրեր իրեն հարկավոր պատկերը/ կարիքը չունի, նրան պետք է լոկ մի մկրատ՝ արվեստի առարկան ստեղծելու համար: Ամեն անգամ նոր նկարը ինչ-որ բանով տարբերվում է նախորդոցից: Թղթե կտրածոների արվեստը հատկապես շատ է տարածված գյուղական բնակչության շրջանում:



Թղթից երկու կտրածոն:

Մի ժամանակ Շանսի գավառի Սիան քաղաքում մարդիկ թուղթն օգտագործել են պատուհանների ապակու տեղ: Քանի որ սպիտակ թուղթը միագույն է, եւ սպիտակն էլ համարվում էր անդուր գույն, խելոք ու ճարպիկ աղջիկները սկսել են կարմիր թղթից կտրել մանկական երջանիկ պատկերներ կամ գեղեցիկ թիթեռներ, որոնք կպցնում էին պատուհանների շրջանակներին՝ դրանց աշխույժ տեսք հաղորդելու համար:

Դին Չինաստանում մարդիկ բավականություն էին ստանում լապտերներ պատրաստելուց ու դրանք տոնական օրերին, ուրախ միջոցառումներին կախելուց: Նման լապտերները տարբեր ձեւերի են: Օրինակ՝ օդուն կախված կարմիր լապտերները, արշավող ձիերի տեսքով լապտերները, «լոտոս» լապտերը, որը տեղադրվում է ջրի մակերեսին, առյուծանման լապտերը, որը շատ են սիրում երեխաները եւ այլն: Երբեմն մարդիկ նկարում էին լապտերի վրա, բայց ավելի շատ նրանց դուր է գալիս տարբեր ձեւերի թղթե կտրածոներն ամրացնել սոսնձով, թղթե լապտերի ներսից արտաձվող լույսից այն ավելի կենդանի ու հետաքրքիր է երեւում:

Ասեղնագործություն. տասը մատները՝ հանց գարնանային քամի

Չինաստանն անվանում են մետաքսի երկիր, եւ արվեստների շատ տեսակներ կապված են մետաքսի հետ: Այդ տեսակներից մեկն էլ ասեղնագործությունն է: Ասեղնագործող վարպետների մեծամասնությունը կազմել ու կազմում են կանայք, դրա համար էլ ասեղնագործությունն իր մյուս անվամբ կոչվում է «կանացի ձեռագործություն»: Չատ հազարամյակների ընթացքում ձեռագործությունը եղել է չինացիների սիրելի զբաղմունքներից մեկը: Ձեռագործով զարդարել են հագուստը, ծածկոցները, բարձերի երեսները, այն կարող էր ծառայել նաեւ որպես առանձին զարդանախ:

Սուն հարստության օրոք /960-1279/ Չինաստանում արդեն պաշտոնացես ստեղծվել էին Ասլասի եւ Չեռագործի ակադեմիաներ, որտեղ կարի ու ձեռագործի ստանդարտների բարելավման համար հավաքվել էին մեծ թվով դերձակներ ու ասեղնագործողներ: Մին հարստության մեծ նկարիչ Դուն Ցիչանը /1555-1636/ ասել է. «Սուն հարստության բանվածքը կարող էր պարծենալ իր երկու ձեւի նուրբ մգդակակարով, որոնք արվում են մետաքսաթելի եւ բարակ ասեղների միջոցով: Գույները կենդանի են ու հետաքրքրահարույց, գործվածքի կտորը նրբագեղ ստեղծագործության վերածող: Ասեղնագործված լեռներ, գետեր, մեհյաններ, կերպարանքներ, թռչուններ, ծաղիկներ՝ ամեն ինչ թվում էր կենդանի»: Նա գովաբանել է. «Տասը մատները պետք է գարնանային քամու նման լինեն՝ ստեղծելու համար այդշափ կենդանի նկարներ»:

Չինաստանում գոյություն ունի ասեղնագործության չորս հիմնական ձեւ. Սուշժոուի, Գուանդունի, Խունանի եւ Սցչուանի բանվածքները: Յուրա-

քանչյուր ծեւ առանձնանում է իր ոճով ու թեմատիկայով: Սուչժոուի բանվածքները պատմականորեն հայտնի են իրենց կատուներով, խունանինը՝ վագրերով, Գուանդունինը՝ թռչուններով /ամենահոչակավոր բանվածքը՝ «Դարյուրավոր թռչուններ խոնարիվում են Փյունիկին»/ եւ Սըչուանինը՝ իրենց բնանկարներով ու մարդկային կերպարանքներով:

Այդ չորսից ամենատարածվածը Սուչժոուի բանվածքներն են: Սուչժոուի մեծ ասեղնագործուիի Շեն Յունչժիի /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ ասեղնագործած՝ Խտալիայի թագուհու նկարը 20-րդ դարում Խտալիային է ներկայացվել, որպես պետական ընծառ:

Նման բանվածքների կարելի էր հանդիպել եւ Յանչժոու, Ուսի եւ Չանչժոու քաղաքներում: Սուչժոուն եւ նրան մերձակա մարզերը հարուստ են մետաքսով, իսկ տեղացիները՝ հայտնի իրենց մանրակրկիտ աշխատանքով: Այս երկու պատճառով էլ ասեղնագործությունն այնտեղ բարգավաճել է շատ արագ: Տեղական ասեղնագործությունը հանրահայտություն է նվաճել «ասեղների միջոցով բնությանը գերազանցող նկար ասեղնագործելու» համար: 1000 տարվա ընթացքում տեղացիներն զբաղվել են ասեղնագործությամբ, ու գրեթե յուրաքանչյուր օրիորդ տիրապետում է այդ արհեստին: Տեղացիները թեւավոր խոսք ունեն. «Աենճ տան շերամորդ է աճեցվում, եւ ամեն տան զբաղվում են ասեղնագործությամբ»: Կսում են՝ որպեսզի ասեղնագործվի կատվի աչք, ծեռագործուիին օգտագործում է ավելի քան 20 գույնի թել՝ պատկերին պահանջված կենդանությունը տալու համար:


Ստվերային պիես. լույսի եւ ստվերի արվեստը

18-րդ դարի երկրորդ կեսին ֆրանսիայում բեմադրվեց «Ֆրանսիական լույս եւ ստվեր» նոր դրաման, որը մեծ սենսացիա առաջացրեց Փարիզում եւ Մարսելում: Դա գեղարվեստական մի ծեւ էր՝ ստեղծված չինական ստվերային պիեսի հիմնա վրա, այն ֆրանսիային ներկայացրել էին միսիոներները: Քետաքրիրն այն է, որ 2004 թվականին՝ ֆրանսիայում Զինաստանի տարում, չինացի դերասանները ֆրանսիային ներկայացրին նոր ստվերային պիես՝ «Ստվերների պարը»: Կարելի է անվարան ասել, որ ստվերային պիեսը երկու երկրների միջեւ դարձել է յուրօրինակ մշակութային կամուրջ:

Ստվերային պիեսը դրամայի տեղական ծեւն է Զինաստանում: 13-րդ դարում այն ներկայացվել է Արեւմտյան Ասիային եւ 18-րդ դարի վերջին տարածվել աշխարհի մյուս մասերում: Գերմանացի մեծ գրող Գյոթեն /1749-1832/ գովել է այն, իսկ 20-րդ դարի մեծ դերասան Չառլի Չապլինը /1889-1977/ ոգեւորվել է նրանով, երբ ստեղծում էր իր համր ֆիլմերը: Իրականում ստվերային պիեսն ամենաառաջին «կինոարվեստն» էր աշխարհում՝ մարդկային ծայնի աջակցությամբ: Այն ծնվել է 2000 տարի առաջ ու շատ հայտնի դարձել Սուն հարստության օրոք: Սինչ այդ ավանդական չինական դրաման դեռ զարգացած չէր, բայց ստվերային պիեսի միջոցով արդեն առկա էր «Երեք թագավորություն» բեմադրությունը, որը ներկայացվել էր շատ քա-

ղաքներուն եւ հանրահայտ բեմադրություն դարձել տոնական հանդիսությունների շարօնը: Մին հարստության ժամանակ հենց միայն Պեկինում կային մի քանի տասնյակ թատերախմբեր, որոնք բեմադրուն էին ստվերային պիեսներ: Այդ արվեստը հայտնի է եւ մեր օրերում, եւ նրա պատմական հաջողությունը ժամանակակից կինեմատոգրաֆիային մղել է զարգացման:

*Ստվերային պիես.
«Ճովիվ ու
ջուլհակուիհին»:*



Ստվերային տիկնիկների պատրաստման համար հարկավոր են առանձնահատուկ հնտություններ եւ նյութ: Սկզբուն հարկ է պատրաստել գլխային մասը, վերջույթները, մարդու իրանը, որոնք հետո պատվում են ներկով ու միացվուն թելերի միջոցով: Ներկայացման ժամանակ լուսի ճառագայթներն ընկնուն են մարդկային փոքր կերպարանքների վրա, այնտեղից էլ արտացոլվուն էկրանին: Շարժելով այդ տիկնիկները, կարելի է ցույց տալ պատմությունների տարբեր գործողություններ՝ ստեղծելով իրականությանը խառնված պատկերացումների աշխարհ, որոնք հիացմունք են պարգևուն հանդիսատեսի աչքին:

Ստվերային պիեսի գրավչությունը կայանուն է ոչ միայն տիկնիկների ստեղծման, այլև բուն ներկայացման մեջ: Մի քանի դերակատարներ կանգնած են էկրանի հետեւում՝ կառավարելով տարբեր ծեւի խաղատիկնիկներին, եւ այդ ամենը կատարվուն է պատմության կամ մեղեղու ուղեկցությամբ: Ստվերային պիեսների ամենահռչակավոր բեմադրություններն արել են Շաանսի գավառի Խուասյան ավանի թատերախմբերը: Տեղացիներն այդ ժամրին նույնիսկ տվել են այլ անվանուն՝ «հինգ մասնակցի իրադարձություն», որովհետեւ յուրաքանչյուր ներկայացման մասնակցուն են հինգ դերակատարներ. ցյանշենը պիեսի դերերի հնչեցման պատասխանատուն է, ցյանշոուն՝ տիկնիկների շարժումները կառավարողը, ցզոցան՝ կոչնազանգի եւ պնակների հարվածների ու բախազննան պատասխանատուն, շանդանը՝ երկլարանի նվագարանի եւ փողի վրա նվագողը, սյադանը՝ բանխու լարային գործիքի վրա նվագողը, որը միաժամանակ օգնում է

ցանչոուին: Այս հինգ անձինք ջանասիրաբար աշխատում են մինչեւ ներկայացման օրը եւ բուն ներկայացման ընթացքում:

Թե որչափ լավը կստացվի ներկայացումը՝ կախված է տիկնիկների կառավարումից ու հնչեցումից: Բամբուկե հինգ ծողիկներով տիկիկներին կառավարելը հեշտ բան չէ, կատարողները պետք է ունենան ճարպիկ մատներ, եւ լավ տիկնիկավարն ի զորու է իր տիկնիկների շարժումներով ապշեցնել հանդիսատեսին:



Ժողովրդական բարքեր

Նագուսատը, սնունդը, կացարանը, փոխադրամիջոցները նույնպես, ինչպես որ չինացիների ժողովրդական սովորույթները, արտացոլում են նրանց ներաշխարհը, լավատեսությունը, մտքի բացորոշությունն ու բարոյական ճաշակը: Հեռվից եկած ճանապարհորդը դա կարող է հասկանալ Սուն հարստության /960-1127/ մայրաքաղաք Բյանյանի այն ամբողջ աղմուկից ու իրարանցումից, որը պատկերված է «Դրվագ գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ» հանրահայտ կտավում: Այդ ամենին նրանք կարող են հանդիպել եւ ավանդական կյանքի շատ ասպեկտներում: Պեկինի Տյանցյան աշխույժ շրջանում տարբեր ուղղությամբ շարժվող հետիոտն մարդիկ, կապույտ երկնքում ճախրող աղավնիներ, խորտկարանների անշտապ կյանք, ժամանակակից Շանհայի բացությունը, նորաձեւությունը, աշխուժությունը, նրբագեղության մթնոլորտը, որ ստեղծում են թեյարաններն ու բարերը, ստվերամարտերն ու գո խաղը... Չինացիները բազում դարերի ընթացքում ծգուել են հոգեկան բավականություն քաղել աշխարհիկ կյանքից՝ օգտագործելով առօրյային իմաստ եւ ուրախություն հաղորդող տարբեր մեթոդներ:





22. Քաղաքային սովորույթները գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ

«Դրվագ գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ» կտավը պատկանում է Սուն Շյուսիսային հարստության /960-1127/ կառավարման վերջին շրջանի պալատական գեղանկարիչ Չժան Ցզեդուանի վրձնին: Ներկայունս այն պահվում է Պեկինի Պալատական թանգարանում:

Իր համարյա 900-ամյա պատմության ընթացքում այդ գլուխգործոցը ընդորինակվել է շատ անգամ: Այսօրվա վրա նրա 30 պատճենները պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում: Դրանցից մեկը Ցին հարստության Ցյանլունու կայսրին է /կ.տ. 1736-1795/ ներկայացվել որպես բնօրինակ, ու նա ոչինչ չի կասկածել, համոզված՝ թե բնօրինակն է որ կա: Այդ ճշգրիտ պատճենն այժմ գտնվում է Տայբեի Պալատական թանգարանում: Այդ ստեղծագործության պատճենների քանակը միայն հաստատում է թանկարժեք գլուխգործոցի արժեքավորությունը:

Կոնկրետ ի՞նչ է պատկերված այդ նկարում: Եկեք այն դիտենք մոտիկից:

Բյանինե գետի բնանկարը հորիզոնական
թղթագլանի վրա

«Դրվագ գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ»-ը՝ ավելի քան հինգ մետր երկարությամբ հորիզոնական թղթագլան է: Այն աջից ձախ բացելով՝ կարծես թե դեպի գետի պատմությունը տանող դարպասներն են բացում: Ցանդիսատեսի աչքի առջեւ հառնում է Բյանլյանի՝ Շյուսիսային Սուն հարստության մայրաքաղաքի, ծաղկուն բնանկարը:

Նկարում պատկերված են Ցինմին փառատոնի ժամանակ Բյանինե գետի ափի երկայնքով տիրող աղմուկն ու իրարանցումը: Տարվա այդ եղանակին ձյունն արդեն հալչել է, արդեն անցել՝ վաղ գարնան ցուրտը, եւ մարդիկ դի-

մավրում են գարնան ամենակարեւոր փառատոնը՝ Ցինմինը /Մաքրության եւ Լուսի տոն/։ Այդ օրն ընծաներ են մատուցում նախնյաց՝ սովորույթ՝ որ մինչ օրս էլ գործում է Զինաստանում։ Փառատոնը նաեւ խորհրդանշում է գարնանամուտի օրը, երբ տաք արեւը եւ նուրբ զեփյուրը խոտը ներկում են կանաչով։ Նկարն սկսվում է աջից՝ գարնան պատկերով Բյանլյանի ծայրամասում։ Վայրի տեղանքում կարկաչում են առվակները, ծառերի արանքներում թաքնված են քրեջները, հեռվում միմյանց հետ հատվում են ճանապարհները։ Ծերացած ծառերը ողջունում են քամուն, նրանց ճյուղերն արդեն ծածկված են կանաչ գույնով։ Յեռվում անսահման թվացող դաշտեր են՝ պատված մեգով։ Մեկեն հայտնվում է մարդկանց մի խումբ, որն ավանակին քշում է քաղաքի կողմը։ Զախից ուղեւորների շարանն է՝ նրանք ընծաներով գնում են գերեզմանատուն, կամ էլ պարզապես քաղաքից վերդարձող մարդիկ են։ Ավանակներն ու ծիերը խրխնջում են, իսկ մարդիկ՝ զրուցում ու ծիծաղում։

Ավելի բացելով թղթագլանը, մեր առջեւ տեսնում ենք նկարի երկորրդ մասը։ Ահա Բյանիս գետի պատկերն՝ իր ողջ գեղեցկությամբ։ Յարավն ու հյուսիսն իրար կապող այդ գետը, որով շտապ սահում են նավակները, արտացոլում է տվյալ ժամանակի բարգավաճումը։ Սկզբում մենք տեսնում ենք ափին կառանված լոկ երկու նավակ, բայց երբ գետը ոլորան գծելով՝ լայնանում է ու խորանում, արդեն տեսանելի են դառնում գույգ ուղղությամբ լողացող մեծ քանակությամբ նավակները։






Ծայրամասի հատված՝ «Դրվագ գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ» նկարից:

Թղթագլանը շարունակում ենք բացել դեպի երկրորդ բաժանմունքի գլխամասը, որը նույնպես նկարի գլխավոր կետ է հանդիսանում: Այնտեղ պատկերված է Բյանյան գետի կենտրոնը՝ «Ծիածանաձեւ կամուրջը»: Ցիասքանչ է երեւում փայտե կամուրջը՝ նուանով երկու ուղղությամբ գետանցող մարդկանցով, առեւտրականներով, ճանապարհորդներով, զբոսաշրջիկներով: Շատերը քայլում են դանդաղ՝ կամրջի բազրիքից բռնած ու ցած՝ գետին նայելով: Ոմանք իրենց շարժուձեւով ցույց են տալիս, որ խոսակցության կեսում են, ոմանք էլ բացականչում են հիացմունքից, երրորդները՝ պարզապես կանգ են առել վախից: Ներքեւում նավակն է, որը փորձում է սահել-անցնել կամրջի տակով: Նրա ցրուկը ջրի մակարդակից ցածր է՝ քան կողերը: Ցուուկի վրա կանգնած ու ձեռքը թափահարող տղամարդու բերանը լայն բացված է, ասես թե նա ցուցումներ է տալիս: Ինչ-որ մեկը ձգտում է իր թիակով շտկել նավակի ուղղությունը: Մի քանիսը եւս ջանում են թափ հաղորդել թիակներին: Մյուսներն իրարանցման մեջ են տախտակամածին. փորձում են արագ բաց թողնել կայմը: Նավակն առաջ է ընթանում՝ իր հետեւից ծագարներ թողնելով: Այն բախտորոշ պահին, երբ նավակը մտնում է կամրջի տակ, կամրջի վրայի ու տակի մարդիկ այդ իրադարձության սպասման մեջ՝ ավելի շատ են ուշադրություն դարձնում՝ հայացքները ծագարներից տեղափոխելով նավակում գտնվողների վրա:

Նկարի երրորդ բաժանմունքում պատկերված են փողոցները: Այդ տեղում Բյանյան գետը ոլորան է կազմում եւ հոսում արեւելքի ուղղությամբ: Գետի երկարությամբ ձգվում է լայն ճանապարհը, որը տանում է դեպի քաղաքային դարպասները, որոնցից ներս մտնելով՝ մարդիկ հանգստանում

«Դրվագ գետի մոտ՝
Ցինմին
փառասոնի
ժամանակ»
Ակարից «Կամրջի
մոտ» հատվածը:



Են, զրուցում կամ պարզապես դիտում շրջական: Քաղաքային դարպասներով անցնում են ուղտերը, բեեւ նրանց միայն գլուխներն են երեւում: Անեն ինչ այդտեղ ներկայացնում է շատ զբաղված ճանապարհը: Քաղաքային դարպասներն անցնելուց հետո սկսվում է Բյանլյանը՝ մինյանց հետ խաչվող փողոցներով, խանութներով, թեյատրներով, խորտկարաններով, գոյ խաղի ակունբներով, մարտարվեստների մրցահրապարակներով, տաճարներով: Այս ամենը տեղադրված է փողոցի զույգ կողմերում: Փողոցներում շատ ինտենսիվ շարժում է տիրում. սլացող սայլակառքեր, մարդիկ զույգերով կամ երեքական կազմով շտապում են ինչ-որ տեղ կամ կանգնել՝ աչք են հածում շուրջը, նյոււնները խմբերով հավաքվել՝ զրուցում են ինչ-որ հարցի շուրջ կամ նայում աջ ու ձախ: Խանութպանները ներս են հրավիրում գնորդներին: Յանկարծ հայտնվում է մի սայլակառք, որին չորս ջորիներ են լծված: Դա տոնական իրադրությունում տեղի է տալիս զարմանքի: Այստեղ կան վաճառորդներ, սպասավորներ, գիտնականներ, հոգեւորականներ, ծերունիներ, երեխաներ, բոլորը շատ շարժունակ են ու դեմքերի տարբեր արտահայտություններով:

Նկարի երեք բաժանմունքներում ներկայացված է երեք պատկեր. գյուղական վայրը, գետը, քաղաքը: Պատկերներից յուրաքանչյուրը կենտրոնացած է մեկ դրվագի վրա. լացող ուռենիներն՝ առաջինում, ծիածանաձեւ կամուրջը՝ երկրորդում, քաղաքային դարպասները՝ երրորդում: Գլխավոր դրվագների խտացվածության շնորհիվ նկարը թվում է բավականին կանոնավորված, բեեւ այնտեղ չափազանց շատ են տարբեր մանրամասները: Յուրաքանչյուր դրվագի հաղորդած մթնոլորտը տարբեր է: Առաջինում հանգստության եւ անկախության անհոգ մթնոլորտ է, երկրորդում՝ ջրում ձագարների առկայությունից ուժեղացած լարվածություն եւ գրգռվածություն, երրորդում՝ անսահմանություն եւ տարբեր մանրութներով հաղորդվող հարստություն:

Երեք մասերից բաղկացած կտավը ներկայացված է ռիթմիկ ու համադրականորեն: Նկարի սկզբում հեռվությունն ուղիղ հակադրական է լարվածությանը կամրջի վրա եւ քաղաքի աշխույժ փողոցներին: Բնանկարի տեղաբաշխման մեջ կան բարձր ու ցածր պահեր: Առաջին բաժանմունքի դանդաղ սկզբից հետո նկարն անցնում է կամրջի վրայի կլիմայական պատկերին, եւ դիմապատկերների տեղամասից հետո քաղաքից դուրս ու ներս ձգված փողոցներով պատկերը համկարծ ընդիատվում է:

Այդ նկարում մարմնավորված են եւ իրացված չինական գեղարվեստի նրբությունները:



«Դրվագ գետի մոտ՝ Ցինմին փառատոնի ժամանակ»
նկարից, «Քաղաքից դուրս»
հատվածը:

Յյուսիսային Սուն հարստության ժամանակների քաղաքային կյանքը

Քաղաքային կյանքը զարգացած էր արդեն իսկ Տան հարստության օրոք /618-907/: Չանանը՝ այն ժամանակվա մայրաքաղաքը /ներկայիս Սիանը՝ Շաանսի գավառում/ եղել է աշխարհի ամենամեծ քաղաքը: Կային ուրիշ մեծ քաղաքներ էին՝ ինչպես Լոյանը Չանանից դեպի առեւելք եւ Յանչժոում՝ հարավի առեւտրային կենտրոնը: Այս երկու քաղաքների բնակչությունը հասել էր միլիոնի՝ այն դեպքում, երբ Չանանի բնակչությունը գերազանցում էր 1,5 միլիոնը...

Յյուսիսային Սուն հարստության տիրապետության ժամանակ քաղաքային մշակույթն արդեն լավ զարգացած էր: Բյանյան մայրաքաղաքն իր միլիոնանոց բնակչությամբ դարձել էր աշխարհի ամենամեծ քաղաքը: Թեեւ այն Տան հարստության մայրաքաղաք Չանանից փոքր էր, առեւտրային



առումով ավելի էր զարգացած: «Դիմք հարստությունների» ժամանակաշրջանում /907-960/ Լոյանում սկսեցին փողոցների երկարությամբ կառուցել կրպակներ, եւ Սուն հարստության ժամանակ արդեն դա նտավ նորաձեւության մեջ: Բյանյանում ավելի շատ կրպակներ կային, քան որեւէ այլ քաղաքում: Չանան եւ Լոյան քաղաքներում կրպակները կառուցվում էին «առեւտրական շուկաներ» կոչվող վայրերում, քայլ Բյանյանում նման սահմանափակում չկար, եւ կրպակը կարելի էր տեղադրել փողոցների երկարությամբ՝ գետի ափին եւ պարզապես մարդակուտակ տեղերում: Կրպակների մեջ քանակությունը նպաստում էր քաղաքի բարգավաճմանը:



«Դրվագ գետի
մոտ՝ Ցինմին
փառատոնի
ժամանակ»
Ակարից
«Քաղաքային
դարպասների
առջեւ»
հատվածը:

Սուն հարստության գրող Մեն Յուանլաոյի /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ «Երազն արեւելյան մայրաքաղաքում» /Դունցգին մենխուա լու/ ստեղծագործության մեջ նկարագրվում է Բյանլյանի առատությունը: Գրքում հիշատակված են 72 ռեստորաններ՝ իրենց բազմաթիվ մասնաճյուղերով եւ այլ փոքր խորտկարաններ՝ սփոված բաղաքով մեկ: Առեւտրային գործունեությունը շատ երուն էր: Յայտնի մի շուկա՝ տոնավաճառը Դասյանգուու տաճարի մոտ, բաց էր լինում ամսվա հինգ օրը, որտեղ վաճառում էին կենդանիներ, բանջարեղեն, առաջին անհրաժեշտության առարկաներ, ասեղնագործական բանվածքներ, գրքեր, հնության իրեր, համեմունքներ, դեղաբույսեր: Մեն Յուանլաոն այդ տոնավաճառը կոչել է «Յազարավոր ընտանիքների տոնավաճառ»: Բաղաքի յուրաքանչյուր շրջանում կային ժամանցի վայրեր՝ բիզնեսի, առեւտրի տեղերով ու թատրոններով: Որոշ թատրոններ կարող էին տեղավորել հազարավոր հանդիսատեսների: Գիշերային կյանքը Բյանլյանում հարուստ էր ու բազմազան՝ իր ռեստորաններով, թատրոններով, շուրջօրյա բաց կրպակներով: Եվ քաղաքը լավ լուսավորված էր:

«Դրվագ գետի մոտ Ցինմին փառատոնի ժամանակ»-ում խնամքով ցույց է տրված կյանքը Յյուսիսային Սուն հարստության մայրաքաղաքում: Բարձր զարգացած քաղաքային մշակույթը ոգեւորել է պալատական նկարիչ Չժան Ցզեղուամին՝ ստեղծելու այդ գլուխգործոցը: Նրա ընտրությունը կանգ է առել տոնական օրվա արեւային առավոտի վրա, երբ ամեն ինչ թվում է շնչավորված: Կանաչ խոտը, հոսող ջուրը, մարդկային ամբոխները փողոցներում: Իր ուշադիր վրձնով նկարիչը ցույց է տվել քաղաքը՝ շարժման ու ռիթմի իր զգացումով: Կտավն արթնացնում է գնահատողների հոգեկան հույզերը, որոնք, նկարչի նման, կուգենային ընկղմվել ջերմ, բերկրալից եւ արբեցնող մթնոլորտի մեջ:



23. Հին Պեկինի սովորույթներն ու հրապույրը

Խոսելով հին Պեկինի մասին, ականայից պատկերացնում ես ուղտերի քարավաններն Առջեւի դարպանների մոտ, Տյանցզյաոյի մարդաշատ ու աղմկալից տարածքը, ծառուղիները՝ լցված առեւտուր անողների ձայներով, կյանքը բակերում, տարրբեր խորտիկներն՝ ինչպիսին են դոնդողանման տոփուն, սոյայի կաթը, խաչմերուկային կատակերգակները, պեկինյան երաժշտական պատումները՝ փոքրիկ թմբուկի կամ մեկ լարանի գործիքի նվազակցությամբ, այս ամենը միասին ննան է հեռու ժամանակների մշուշի միջից կրկնվող հինավորց երգի:

Ուտելիքը հին Պեկինում

Մարդիկ ասում են, որ հին Պեկինում ամենաանմոռանալին նրա ուտելիքն է՝ տեղական հատուկ համուճաշակով. տեղացիներին առավել համապատասխանող մշակույթ: Պեկինյան բառերի «Ցուանցզյույե» ռեստորանը, որ ամենահայտնին է քաղաքում, հիմնադրել է Յան Ցուանժենը /կյանքի տարեթվերը հայտնի չեն/, 1886 թվականին՝ Տունչժի կայսեր /տիրապետության տարիները՝ 1862-1874/ կառավարման հինգերորդ տարրում: Յանն աշխատանքի էր հրավիրել համբավավոր խոհարարի, որը մի ժամանակ աշխատել էր Ցին հարստության /1616-1911/ կայսեր խոհանոցում: Նրանց համատեղ հնարանքը եղավ վառարանում կախվող պեկինյան բաղը: Միայն բաղով ընթրիքը բաղկացած է տաք ու սառը կերակուրներից, անգամ ապուրի լրացումներն են բաղից:

«Դունլայշուն» մահմեդական ռեստորանը հայտնի է ոչխարի մսի պատրաստման՝ «կրակե կաթսայում» /խուզք/: Դրա հիմնադիրը եղել է Դին Ղեշանը /կյանքի տարեթվերը հայտնի չեն/: Ոչխարի միսն այստեղ խնամքով կտրտված է ու համեմված տարբեր համեմունքներով: Բացի ոչխարի

խուռագոյից, ռեստորանում մատուցում են նաեւ կարկանդակներ՝ ոչխարի մանր կտրտված մսով, բրնձի շիլա եւ պելմենի, այդ ամենը դուր է գալիս բոլոր տարիքների մարդկանց:

1741 թվականին՝ Ցյանլունա կայսեր /տ.թ. 1736-1795/ կառավարման վեցերորդ տարում հիմնադրված «Շագողզյույ» ռեստորանը հայտնի է իր երեք կերակրատեսակներով. խոճկորի լավ տապակած յարդք կամ եղջերուի պոչը, խոզի շոգեխաշած մոռուք եւ պարզապես ջրի վրա պատրաստված՝ բարակ կտրտված միսը: Մսի կտորները կարող են մատուցվել սոյայի սոուսով, քնջութիւ յուղով, կտրտված սխտորով, շատ տաք ու կծու յուղով: Կամ էլ այն պատրաստում են կաղամքի, վերմիչելի, չորացրած մանր ծովախեցգետինների, սնկերի հետ՝ խուռագոյի արգանակում: Մյուս հայտնի կերակրատեսակներին են պատկանում երեք սպիտակ խուռագոն, մսե գնդիկներով խուռագոն, շոգեխաշած կաղամքը եւ այլն:

«Բարբեքյու Ցզի»-ն հիմնադրել է Ցզի Դեցայը /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ 1848 թվականին՝ Ցին հարստության Դառլանա կայսեր /տ.թ. 1821-1850/ կառավարման 28-րդ տարում: Այստեղ բարբեքյու են մատուցում ոչխարի մսից՝ այն համեմելով արքայախմնձորով, արմավով ու նոճիով: Կրակի ու ծխի հարեւանությամբ նստած՝ ճաշողները մի ծեռքում պահում են կամ ոգելից խմիչքով թասը, կամ քնջութիւ սերմերով կարկանդակը, մյուսում՝ 33 սանտիմետրանոց ծողիկների գույգը, որոնցով վերցնում են տարբեր համեմունքներով թթու դրած միսը եւ այն անձանբ դնում մետաղէ գրիլի վրա եւ պատրաստ լինելուց հենց իրենք էլ վերցնում՝ ճաշակում: Մյուս բարբեքյու-ռեստորանում, որ կոչվում է «Բարբեքյու Յուան», ոչխարի փոխարեն մատուցվում է հորթի միս:

«Ֆանշան» ռեստորանը բացվել է 1925 թվականին՝ կայսերական արքունիքի նախկին սպասավոր Չժան Ժենչժայի /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ կողմից: Ռեստորանը գտնվում է Պեկինի Բեյխայ լճի հյուսիսային ավիճան: Կերակրատեսակները պատրաստվում են նույն բաղադրատոմսսերով, ինչ եւ կայսերական խոհանոցում՝ հատուկ ուշադրություն դարձնելով գույնին, համին, հոտին ու ծեւին: Այստեղ պատրաստում են շուրջ հարյուր կերակրատեսակներ, ներառյալ՝ շոգեխաշած ծովականջիկ, շոգեխաշած եղջերվամիս, տապակած ճուտ, ծովախեցգետիններ եւ այլն: Մատուցվում են նաեւ խորտիկներ, ինչպես սիսեռայուրից կարկանդակները, լորայուրից ռուլետները, եգիպտացորենի այսուրից փքարլիթներն ու կարկանդակները, եւ մսով այդ ամենը պատրաստվում է համով ու գեղեցիկ:

Պեկինում կա եւ «պաշտոնական խոհանոցի» ռեստորան՝ «Տան ընտանիքի խոհանոցը»: Նրա հիմնադիրը Տան Ցզունցզյունն է /1846-1888/, որը Ցին հարստության կայսերական ակադեմիայի անդամ է եղել: Այստեղ պատրաստում են Գուանդուն գավառի կերակրատեսակները. ծովականջիկ, ծովավարունգ: Ռեստորանի կահույքը պատրաստված է վարդագույն փայտից, եւ նրա վրա կան հայտնի նկարիչների գեղանկարչական շատ պատկերներ:

Յին Պեկինի սննդի մշակույթը օգնել է ստեղծելու հաճելի համի աշխարհ: Ժամանակակից չին մեծ գրող Սյան Ցյանը /1910-1999/ վերիիշել է Պեկինի խորտիկների մասին. «Անդրադառնալով այն տարիներին, երբ ես տեղից տեղ էի դրեյֆում, Պեկինն եմ իիշում: Նրա սոյայի կաթը, սիսեռալուրից կարկանդակները, «ավանակ» ռուլետները, կորեկի հնորակ ալյուրը՝ պատրաստված մեծ թեյամանից լցված տաք ջրի վրա. Եւ լավ տապակված նրբերշիկները»: Պեկինից Տայվան տեղափոխված շատ ինտելեկտուալներ են կարուտուն Պեկինի կերակուրներին ու խորտիկներին՝ պեկինյան բաղին, ոչխարի մսից բարբեքյուին եւ խուզոյին, լորազիների ալյուրից կարկանդակներին, ձմեռային ցուրտ գիշերը սառեցված տանձին:


Ծառուղիներն ու վաճառորդների աղմկալից կանչերը

Յին Պեկինի նրբագեղությունը ոչ միայն քաղաքային դարպասների գեղեցկության մեջ է, այլև՝ ծառուղիների, կամ տեղական բարբառով՝ խուտունների, մեջ: Ծառուղիները Պեկինում երեւան են եկել Յուան հարստության օրոք /1206-1368/: «Գիտնական Չժանը» դրամայում՝ սպասավորն ասում է. «Ուու ինձ կարող ես գտնել Չժուանտար խուտունում», եւ դա վկայում է այն մասին, որ հարավային Սիսը փողոցից դեպի արեւմուտք ընկած Չժուանտար ծառուղին Յուան հարստության ժամանակ արդեն գոյություն ուներ:

Յին պեկինի ծառուղիներն իրենց առանձնահատուկ հրապույրն ունեն: Դրանք շատ բանաստեղծական անուններ ունեն, որոնք ցուցանում են մարդկային երեւակայությունը, օրինակ՝ Շեղածաղկի օր, Ծաղկե վարոց, Լուսնի լույս, կամ սովորական մարդկանց կյանքը ցույց տվող գործնական անուններ՝ Թեյածաղկի ծառուղի, Ոգեկից ըմակելիքների ծառուղի, Սմբուկի ծառուղի: Եվ ինչն է հետարքիր՝ որ յուրաքանչյուր ծառուղի, քաղաքի հնաբնակների վկայությամբ, ունեցել է իր հոտը: Օրինակ՝ Փողի ու հացահատիկի ծառուղին կաղամբի հոտ էր կրում, Գլխարկների ծառուղին՝ ալոճի հոտ, Պատգարակների ծառուղին՝ սոյայի թթված կաթի հոտ:

Յին Պեկինի ծառուղիներուն արձագանքվել են վաճառորդների աղմկալից կանչերն ու լարից կախված տարրեր նվազարանների արձակած հնչյունները: Բարձր ու ցածր, մոտ ու հեռու՝ այլ ձայներն ոիթմիկ էին ու երկար: Ինչպես օրինակ՝ բոված տոֆուի խորանարդիկ եւ քնջութի սերմներով կարկանդակ վաճառողների՝ առավոտյան, մրգեր վաճառողների՝ երեկոյան եւ արիշտա, փքաբլիթներ ու վինտան ապուր վաճառողների կեսօրյա աղմկոտ կանչերը: Որոշ վաճառորդներ ականջ ծակող ձայնով չին տալիս իրենց ապրանքի անունը, այլ թափահարում էին գործիքները՝ գնորդների ուշադրությունը գրավելու համար: Եթե մարդիկ լսում էին մետաղե զնգոցի ձայնը, իսկույն հասկանում էին, որ գալիս է սափրիչը, կոչնազանգի հնչյունները հայտնում էին կրկեսի ժամանակ մասին, փայտե ճշանակի ձայնն ազդարարում էր յուղ վաճառողի մուտքը ծառուղի՝ այն դեպքում, երբ փայ-

տի վրա թմբկանման թիւկրիսկոցները նշանակում էին առաջին անհրաժեշտության ապրանքներ վաճառողի ներկայության մասին:



Դարպասասյուն

Ծառուղիներում հատուկ ուշադրություն էր դարձվում զնորդներին դեպի իրենց հրավիրող կանչերի տոնուոծին: Կանչերը պետք է լինեին եական, ձայնը՝ ելեւէջվող, բառերը՝ հստակ, տոնը՝ մեղեդային ու սահուն: Շատ կարեւոր էր ձայնի ձգումը, հատկապես՝ վերջին բառի վրա: Կանչերը պեկինյան բարբառով էին՝ համենված տեղական հարուստ երանգով: Երաժշտա-

կան լինելով՝ կանչերը նաեւ պարունակում էին գրական հրապույր, հանգավորված էին եւ ուրախությամբ ու հումորով շաղախված: Օրինակ՝ ձմերուկավաճառը կանչում էր. «Սոտեցիր փորձիր սառն ու չըթչրթան միրօք, լուսնաձեւ կտորը նրա մեջ է հանց իսկ նավակ, միջուկը քաղցր՝ գարնանակեսի տոնի կարկանդակի պես, արմավենու տերեւներն անգամ ի զորու չեն քշելու մեղուներին, որոնք ուզում են տանել իրենց փեքակների համար, նոտեցի՞ր, քաղցրացրու՝ թեզ ընդամենը մեկ դրամով»: Այսպիսի կանչերը ներծծված էին սովորական մարդկանց բերկրանքով ու ծիծաղով:

Աղմկաշատ Տյանցգյան


Յին Պեկինի Տյանցգյան շրջանում ժողովրդական հավաքների հայտնի վայր կար՝ ավանդական ներկայացումների տարբեր ծեւերում մասնագիտացված իր թատրոններով, զվարճությունների հարթակներով, խորտկարաններով, թեյատներով, ուտելիքների, առաջին անհրաժեշտության ապրանքների կրպակներով: Այստեղ առկա էր ներկայացումների գրեթե ամբողջ «տեսականին». Պեկինյան օպերան, խերեյ բանցզըն, Պինսի օպերան, տիկնիկային շոուն, ստվերային պիեսները, ծաղրածուներն ու աճպարարները, ակրոբատները: Այստեղ նաեւ կարելի էր համտեսել ավելի քան հարյուր խորտիկներ, ներառյալ՝ դոնդողանման տոփուն, այսուրաշիլան, լավ տապակված տոփուն, կարկանդակները եւ այլն: Բազմաթիվ խամութերում վաճառվում էին տարբերազան ապրանքներ, ինչպես օրինակ՝ առաջին անհրաժեշտության առարկաները, հագուստը, կահույքը, կոշկեղենն ու երկրորդ ծեռքից գործերը, անտիկվարիատը: Նմանապես կային ատամնաբուժարաններ, դեղատներ, ապագա գուշակող սափրիչներ եւ տարբերագան վաճառորդներ: Դա կանչերով ու հիացմունքով լի աղմկոտ վայր էր:

Տանցգյանի զվարճությունների շարքում կային ակրոբատիկան եւ ցյու-

յին /չինական ժողովրդական վոկալ արվեստ՝ տեղային երանգով, ներառյալ՝ բալլադների ասմունքը, պատմություններ պատմելը, կատակերգական ներկայացումները, ճշանակի ներքո զրույցները, երկխոսությունները եւ այլն/, ինչպես նաև տեղական օպերաները, կրկեսն ու մարտարվեստները: Դրանց շարքում կային արտաքինով, ձայնով, վարքով եւ, որ ամենագլավորն է, կատարման գերազանց որակով երեք խմբեր: Նրանք կոչվում էին «Ութ տարավարդորդներ» եւ ցուցադրում էին կատակերգական ներկայացումներ, կատարում ձայնային նմանակում, երգում բալլադներ ու չիգուն: Նրանցից մեկին, որը կարողանում էր ձեռքի ափով փշրել 20 սանտիմետր հաստության քարը կամ ցուցանատ-միջնամատ-մատնեմատով այն կիսել երկու մասի, կոչում էին «Ծաղրածուների արքա»: Ութ տարօրինակների ներկայացումները հիացնում էին հանդիսատեսներին:

Հանդիսատեսների շրջանում հայտնի ուրիշ խմբեր էլ են եղել: «Բոլորը երջանիկ են» խմբի կրկնօրինակող դերասանը ձայնի միջոցով դեմքը ծածկելու հովհար է ներկայացրել՝ այն դեպքում, երբ նմանակել է տարրեր մարդկանց ձայներ եւ հնչյուններ: Նրա ամենահետաքրքիր ներկայացումը կոչվում էր «Դպրոցում չարաճճիություն անող իինգ երեխա»: Ներկայացման սկզբուն հանդիսատեսները լսում են խոնչիոց, որից հետո՝ աքլորի առավոտյան կանչը: Կինն արթնացնում է ամուսնուն, կրծքով կերակրում երեխային, ավագ որդին գնում է միզելու: Ամուսինը հորանջում եւ գնում է ջրաղացն՝ առաջ հրելով իշուկին: Դուռը մեկ փակվում է, մեկ բացվում, լսելի է ավանակի սմբակների թխկթխկոցն ու զանգակի զնզգնգոցը: Կինը տղային պատրաստում է դպրոց գնալու, որդին փքարլիքով նախաճաշի համար փող է պահանջում նրանից ու քթի տակ դնդնալով գնում դպրոց: Լսելի է երեխաների ընթերցանությունը դպրոցում, շշնջոց, ծիծաղ, ճիշեր ու վեճեր: Յայիոյանք՝ դասարանից ուսուցչի հեռանալուց հետո: Բոլոր ձայները ծշտորեն կրկնում են առօրյա կյանքի հնչյունները:

Տյանցգյաոյի այցելուների մեծամասնությունը սովորական մարդիկ են: Բուռն բեմապատկերները, աղմկոտ ամբոխները, գունավոր ցուցավահանակներն ու համեղ խորտիկները բավականություն, ուրախություն եւ, որ ավելի կարեւորն է, հոգեկան մխիթարություն են պարզեւում:



Աշնան գույմերը Պեկինում:

Տոնավաճառները հին Պեկինի տաճարներում

Տոնավաճառներն անցկացվում էին հին Պեկինի հայտնի տաճարներում: Դրանք ունեցել են իրենց հատուկ երանգներն ու ոճը: Տաճարներին կից տոնավաճառ այցելելը եղել է Պեկինի բնակչութիւն գլխավոր ժամանցը: Ըստ տվյալների՝ 1930 թվականին Պեկինում եղել է 20 տաճար, որոնցից 16-ը՝ քաղաքից դուրս, 4-ը՝ քաղաքում: Ամենահայտնի տոնավաճառները գործել են Սպիտակ մեհյան, Խուզո, Լունֆու, Բայյուն, Պանտառ, Չանդյան տաճարներին ու լամայիստական Յունիս մենաստանին կից: Իր տեսակի մեջ Լունֆուի տոնավաճառն ամենամեծն է եղել: Թատերագիր եւ տոնավաճառների հաճախակի այցելու Վեն Օխունը /1908-1994/ մանրամասն նկարագրել է այդ գրավիչ հանդիսությունը:

Լունֆու տաճարի տոնավաճառն սկսվում է դեպի տաճարի դարպասները տանող փողոցներից: Դրանց երկարությամբ կան տարբեր կրպակներ ու քիոսկներ, որտեղ վաճառվում են երկրորդ ձեռքից ապրանքներ, հազվագյուտ թռչուններ, հազվագյուտ ցեղի շներ ու կատուներ, գրքեր /իհն գորեր, որոնց հազվադեպ կարող ես հանդիպել վաճառքում/ եւ թեյ: Տաճարի ներսում ընկած են երեք փողոցներ: Փողոցի երկայնքով՝ կենտրոնում առաջին անհրաժեշտության ապրանքներով ու խորտիկներով կրպակներն են, ինչպես նաև այնպիսի ներկայացումների համար նախատեսված թեմը, ինչպիսին են պարանի վրա քայլելը, ծաղրածուների երկյակը /ժողովրդական արվեստ, որի ժամանակ մեկը բացատրվում է շարժումներով, մյուսը՝ թաքնված՝ ինչեցնում նրան/ եւ պինչուն /ժողովրդական արվեստ, երբ հովհարը, թաշկինակն ու մոլորդիկը ձեռքին դերասանը պատմություններ է ներկայացնում/: Արեւմտյան փողոցի երկարությամբ տեղադրված կրպակներում վաճառում են ոսկե ձկներ, բաղմինտոնի վոլաններ, երաժշտական գործիքների մանրամասեր ու Պեկինյան օպերայի պատկերներ: Արեւելյան դարպասների երկարությամբ վաճառվում են տարբեր նյութերից՝ կաշվից, այսուրից, փայտից պատրաստված կերպարանքներ: Պեկինյան օպերայի մեջ դերասանների կերպարանքները պատրաստված են շատ ճշմարտանման:

Տաճարներին կից կազմակերպվող տոնավաճառները ժամանցի վայր են եղել հասարակ մարդկանց համար, դրա համար էլ դրանցում ամեն ինչ կապ է ունեցել առօրյա կյանքի հետ: Այդուհանդերձ, այդ տոնավաճառները նաև տարբերվել են առօրեականությունից, որովհետեւ ամեն օր չէ, որ անցկացվում էին: Դրանք այցելուների մոտ, սերից ու տարիքից ամկախ, ֆիզիկական ու հոգեկան բավականություն էին հարուցում:

Ժամանցը հին Պեկինում

Հին Պեկինում մարդկանց ազատ ժամանակի անցկացումը կրել է հնագույն մայրաքաղաքի հրապույրով լցված, նրբագեղ, հաշվեկշռված ու անհոգ բնույթը: Պեկինում ազատ ժամանակի անցկացումը կարելի է նկարագրել մեկ բառով՝ «զվարճություն», կամ էլ պեկինցիների ասած՝ «զվարճությունների որոնում»: Չին ժամանակակից գրող Չեն Ցզյանգունը /ծ.թ. 1949/ մի անգամ նկատել է. «Պեկինցիները սիրում են հածույքը եւ շատ լավն են բավականության որոնման մեջ»: Թռչուններ բուժելը, թռչող «օձեր» բաց թռնելը, սխտորի պճեղով գինի վայելելը, Պեկինյան օպերայի արիաներն ունկնդրելու գնալը՝ այս ամենը մեծ բավանկանություն է: Բայց ամենամեծ հաճույքը պեկինցիներն ստանում են թեյ ու գինի ընպելուց:

Հին Պեկինում եղել են շատ թեյատրներ, եւ բնակչության տարբեր խավերի մարդիկ հանդիպել են այստեղ՝ գրուցելու թեյի գավարի շուրջ. գրողներ ու լրագրողներ, դերասաններ, շաշկի սիրողներ, ուսուցիչներ, ուսանողներ, վարպետներ /վերջիններս գալիս էին հիմնականում գնորդ գտնելու համար/: Մարդիկ այստեղ կանգ էին առնում՝ իրենց փոքր-ինչ հանգիստ նվիրելու:

Թռչուններ վարժեցնողները վանդակները կախում էին սյուներից կամ դնում սեղանի վրա, նստում ու թեյ վայելելով՝ հետեւում վանդակների ներսի «բնակիչներին»: Թեյատրները փոխշփման հասարակական վայրեր էին,



ճերմակ աղավնիները Պեկինի հին տներից մեկի տամիքին:

ու դրա համար կարելի էր հանդիպել առօրյա կյանքի կատակերգության ու ողբերգության: Չին մեծ թատերագիր Լան Շեն /1899-1966/ իր «Թեյատուն» /Չագուան/ պիեսում բավակին վառ կերպով նկարագրել է թեյատներուն տեղի ունեցող իրադարձությունները: Այդ պիեսը դարձել է Չինաստանի գործականության դասական ստեղծագործություն:

Մեծ թվով ռեստորաններ ցրված էին հին Պեկինով մեկ, բայց դրանցից ամենամեծերը գտնվում էին գործարար շրջաններում, մինչդեռ փոքրերը տեղադրված էին ծառուղիների մոտ /խուտուններ/: Այդ խորտկարաններում սովորաբար մատուցվում էին հասարակ ուտեստներ, որոնք համարվում էին գինու խորտիկ, օրինակ՝ եփած գետնընկույզ, ոլորած տոֆու, թթու դրած ձվեր, ապխտած ձուկ, տապակած փոքր ծովախեցգետիններ: Այդ խորտկարաններում սովորաբար կային մի քանի մեծ տաքարներ՝ ծածկված կարմիր ներկված մեծ խուփերով: Տաքարները ծառայում էին որպես սեղան, եւ այդ պատճառով նման խորտկարաններն ստացել էին «Գինու մեծ տաքարներ» անվանումը:

Պեկինցինները թեյից ու գինուց բացի՝ սիրում էին նաև աղավնիներ ու ոսկեգույն ձկներ աճեցնել, թռչող «օձեր» բաց թողնել, տանը ճռիկներ ու ծղրիդներ պահել, ճենապակե իրերի, դիմակների, թաղարային բույսերի, կավե ու խմորե կերպարանքների հավաքածուներ ունենալ: Նրանք հաճույք էին ստանում տարբեր մանրութենքներից՝ իրենց կյանքը դրանով դարձնելով ուրախ ու հետաքրքիր:

Պեկինցինների մոտ տանը ոսկե ձկնիկներ պահելու սերն սկիզբ է առել դեռ Ցզին /1115-1234/ եւ Ցուան /1206-1368/ հարստությունների օրոք: Նրան ըմբոշխնում էին արքայախնձորի ծառերի եւ ամբարտակներում ոսկե ձկների գեղեցկությունը, որոնք Սըխեյուանի ավանդական արքունիքում դարձել էին անփոխարինելի դեկորներ:

Պեկինի բնակիչները նմանապես սիրել են աղավնիներ պահել՝ բավականություն ստանալով նրանց թռիչքից: Ոմանք սիրում էին սուլիչ ամրացնել նրանց պոչին: Բանահավաք Վան Շիյանը /ծնվ. 1914թ/ աղավնու սուլիչը Պեկինի խորհրդանշան է անվանել: Նա ասել է. «Պեկինում, տաք գարուն լինի դրսուն, թե շոգ ամառ, մաքուր աշուն թե ցուրտ ձմեռ, կարելի է երկնքից սուլոց լսել. մեկ հաճախակի՝ մեկ հազվադեպ, հեռու կամ մոտ, ցածր թե բարձր, արագ թե դանդաղ՝ այդ հնչյունները միշտ տատանվում են եւ արձագանքում՝ ասես ամպերի թարմացուցիչ երաժշտություն»: Ապա հավելել է. «Այդ գրավիչ հնչյունը մարդկանց արթնացրել է քնից, ստիպել հայել հեռում՝ ո՞վ գիտի՝ քանի՞-քանի՝ անզամ ուրախություն հարուցելով երեխանների ու մեծահասակների մոտ»:

Ժամանակի ընթացքում պեկինցինների ապրելակերպը փոխվել է: 20-րդ դարի վերջերին եւ 21-րդ դարի սկզբներին ազատ ժամանակ կյանքի հաճույքները վայելել սիրողների համար Սանլիտունում երեւան է եկել բարերի փողոցը, Դունչժիմենում Գույցե փողոցը եւ էլի բարերի մեկ փողոց Շիշախայ լճի մոտ: Շիշախայը, որ նախկինում պարապուտ էր, դարասկզբին

մեկեն դարձավ «հրապուրիչ»: Այժմ այնտեղ միմյանց քիա-կպած բազմաթիվ բարեր կան հետաքրքիր անուններով. «Կապույտ լոտոս», «Ունկնդրելով լուսնին», «Շելլով բար»: Եթե այդ բոլոր անվանումները մեկտեղելու լինեն, կարող ես արդի հիանալի բանստեղծություն հորինել, որից մարդիկ կզգան Շիշախայ /որն օտարեկրացիներին ավելի շատ հայտնի է Խոխայ անվանք/ լճի շրջանի բանահյուսական նրբերանգը՝ 21-րդ դարի Պեկինի նուրբ հրապույրով:

Ինչպես նկատել է մի գիտնական՝ Պեկինն անցյալի, ներկայի եւ ապագայի քաղաք է, եւ դա ճիշտ է:





24. Հին Շանհայի ժամանակակից նորբագեղությունը

Հին Շանհայը եղել է ժամանակակից Զինաստանի գործարար ու մշակութային կյանքի ամենախնտերնացիոնալ կենտրոնը: 1935 թվականին Շանհայում հրատարակված «Ամեն ինչ Շանհայի մասին» անգլիական գրքում քաղաքն Արեւմուտքին է ներկայացված այսպես. Շանհայն իր չափերով եղել է վեցերորդն աշխարհում, այն Արեւելքի Փարիզն է ու, հավանաբար, Երկրագնդի ամենակոսմոպոլիտ քաղաքը: Այն ժամանակվա չին ժողովորդի մտքում Շանհայը եղել է «ժամանակակից» քաղաք՝ մի ընկալում, որը հաստատում է հին Շանհայի վերաբերմունքը գործարար ու մշակութային կյանքի կենտրոնի հանդեպ: «Արդիականությունը քաղաքի բաղադրիչ մասն է. բաց, նորաձեւ ու եռանդուն վայր՝ լի ժամանակների հրապույրով»:

Ամենաբաց քաղաքը

Որպես բաց միջազգային քաղաք, հին Շանհայն ամենավաղն ու ամենաարագն է գաղափարներ փոխառել ժամանակակից Արեւմուտքից: Ինչոր մեկը նշել է, որ Շանհայը աշխարհագրականորեն տեղադրված լինելով Բունդի գետի երկայնքով, սահմանի ու բաժանարար գծի հասկացություն չի ունեցել, ինչն էլ, հնարավոր է, նրա բացության պատճառներից մեկն է:

Պատմական հիշատակությունների համաձայն՝ 19-րդ դարում Շանհայում Արեւմուտքի շնորհիվ ու օրինակով ստեղծվել են քաղաքային շատ հարմարություններ եւ կառույցներ. առեւտրային բանկերը՝ 1848 թվականին, Եվրոպական ոճի փողոցները՝ 1856-ին, գազային լապտերները՝ 1865-ին, հեռախոսակապը՝ 1881-ին, ջրատարը՝ 1884-ին, ավտոմեքենաները՝ 1901-ին, տրոլեյբուսները՝ 1908-ին, Լումիեր եղբայրները Ֆրանսիայից 1895 թվականին հայտնագործեցին կինոն, եւ դրանից հազիվ 8 ամիս անց Շանհայի խունկու շրջանում՝ Չժապու ավենյուի վրա կառուցվեց կինո-

թատրոն: 1930 թվականին մոտ Շանհայը ժամանակակից հարմարությունների տեսակետից արդեն քայլում էր աշխարհի ամենազարգացած քաղաքներին համընթաց:

Շանհայի՝ որպես գործարար եւ մշակութային աշխարհի կենտրոնի, առանձնահատկությունն արտաքին աշխարհին բացահայտվել է որպես դարպասներ, որոնցով Արեւմուտքի մշակույթը ճանապարհ է գտել դեպի Չինաստան: 1840-1949թթ. ընկած ժամանակահատվածում վերոնշյալ գյուտերից բացի, Շանհային ներկայացվել են արվեստի այլ տեսակներ՝ նյութական եւ մտավոր: Ներառյալ՝ լրագրերը, երաժշտությունը, նկարները, ներկայացումները, պարը, կրկեսը, աճպարարական ներկայացումները, գրամնֆոնը, լուսանկարչա եւ կինոխցիկները, հեռակապը, էլեկտրական օդափոխչները, կարի մեքենաները, ցողիչները, գործարարական համագգեստները, սուրճը, տարբեր ուտելիքներն ու ուտեստները, գրիգորյան տոնմարը, շաբաթային համակարգը, արեւմտյան ոճի հարսանեկան հանդիսությունները, գրադարանները, թանգարանները, ոստիկանական համակարգը, ընկերությունում տնօրենների խորհրդի պրակտիկան: Այս բոլոր երեւույթները հետագայում տարածվել են մայրցամաքային ողջ Չինաստանում: Արեւմտյան ակադեմիական դասական գրականությունը Յան Ֆուի /1854-1921/ եւ Արեւմտյան վեպերը Լին Շուի /1852-1924/ թարգմանությամբ առաջին անգամ նույնպես Շանհայում են հրատարակվել:

Շանհայի կոսմոպոլիտական բացությունն արտացոլվել է գետափնյակի երկայնքով ծգված շինություններում: Այնտեղ 10 եւ ավելի հարկանի 28 շենքեր են կանգնած, որոնք ներկայացնում են Եվրոպայի 17 ճարտարապետական ոճերը՝ ներառյալ անգլիականը, ռուսականը, գերմանականն ու ավստրիականը, ինչի համար էլ գետափնյակն ստացել է «համաշխարհային ճարտարապետության տոնավճառ» անվանումը: Օրինակ, «Գետափնյակի, 20» հասցե կրող 13-հարկանի Սասսուն տան /այժմ՝ «Խաղաղություն» հյուրանոցի հյուսիսային մասնաշենքն է /սենյակները կահավորված են տարբեր երկրների, ներառյալ՝ Չինաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճնշկաստանի, ճապոնիայի, իտալիայի եւ իսպանիայի, ոճերով: Այդ շենքը նաև ստացել է «Հեռավոր Արեւելքի համար 1 տուն» անվանումը: Մյուս օրինակը «Գետափնյակի, 2» թվահամարով շենքում Մեծ Բրիտանիայի Ակումբն էր, ավելի ուշ՝ Շանհայ Ակումբ, իսկ այժմ՝ «Դունֆեն» ռեստորանը, որն զբաղեցրել է 300 քառ.մ. տարածք՝ առանց իսկ մեկ սյան: Յայտնի է արեւմտյան խոհանոցով: Նրա բարը 36 մետր խորը է ունեցել, ինչը նրան տվել է «Հեռավոր Արեւելքի ամենաերկար բար» անվանումը: Եվս մեկ օրինակ. Շոնկոնգի եւ Շանհայի բանկային կորպորացիայի շենքը /ներկայումս՝ Պուլունի զարգացման Շանհայի բանկ/ կառուցված է հունական ոճով՝ իտական սյուներով ու երկու բրոնզե առյուծներով, որոնք բերվել են Մեծ Բրիտանիայից: Դահլիճի սյուները, պատի տախտակադրվագներն ու հատակը ծածկված են եվրոպական թանկարժեք մարմարով, պատերի վերին մասն ու կողասրահները՝ 200 քառ.մետր որմնանկա-

րով: Ամբողջ ծեւավորումը կատարվել է անգլիացի արվեստագետների մտահղացման համաձայն, իսկ խճանկարը կատարել են իտալացի վարպետները: Այդ շենքն ստացել է «Սուեզի ջրանցքի մինչեւ Բերինգի նեղուցը Յեռավոր Արեւելքի ամենաքստորավագանտ ճարտարապետական կառույց» անվանումը:

Զինաստանի ամենաբաց քաղաքը լինելով, Շանհայը եղել է Զինաստանի՝ հսկայական թվով օտարերկրացի բնակիչների տունը: 1942 թվականին 58 երկրներից, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Հնդկաստանից, ճապոնիայից, Եկած նրա արտասահմանցի բնակիչների թիվը գերազանցել է 150 հազարը, որոնց թվում կային եւ հարուստ, եւ աղքատ մարդիկ: Որոշների համար, ովքեր կյանքին չեն հարմարվել տանը, Շանհայը դարձել է ցանկությունների կատարման քաղաք: Գոյություն ունի նույնիսկ այդ թեմայով գրված դասական ստեղծագործություն՝ «Շանհայական փորձանք»:



Շանհայ: 20-րդ դարասկզբի
օրացուցային նկար:

Գործարար եւ մշակութային միջազգային քաղաք լինելով՝ Շանհայը դեպի իրեն է ձգել գրականության շատ համբավավորների, որոնք այստեղ հանդես են եկել դասախոսություններով: Օրինակ՝ ամերիկացի Ջոն Դեվին /1859-1952/, բրիտանացի Բերտրանդ Ռասելը /1872-1970/, մեծագույն ֆիզիկոս Ալբերտ Էյնշտեյնը /1879-1955/, հնդիկ բանաստեղծ Ռաբինդրանատ Տագորը /1861-1941/ եւ ամերիկացի դերասան Չառլի Չապլինը /1889-1977/: Այս մարդիկ Շանհայ են բերել համաշխարհային մշակույթի եւ արվեստի ամենավերջին ու թարմ գաղափարները:

Շանհայի բացությունն արտացոլվել է եւ պատմական իրադարձության մեջ, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ապաստան է

տվել 30 000 հրեաների: Այդ թիվը գերազանցում է նույն ժամանակ Կանադայում, Ավստրալիայում, Շնդկաստանում, Հարավային Աֆրիկայում ու Նոր Զելանդիայում ապաստանած՝ Եվրոպացի բոլոր հրեաների թիվը: Նացիստների ճիրանմերից փախած հրեա ժողովուրդն ապավիճել է Շանհային, որովհետեւ այս քաղաքը մուտքի համար հարկավոր չի եղել ոչ շագրություն, ոչ այլ փաստաթուղթը: Շանհայը փրկության տապան է դարձել Եվրոպացի փախստականների համար, եւ նրանք այստեղ ապրել են մինչեւ համաշխարհային պատերազմի վերջը:

Շանհայ այցելողներն, անկախ նրանից, թե որ երկրից են եկել, միշտ զերմություն ու հանգիստ են զգացել այնպես, ասես իրենց համար ոչ թե հյուրանոց՝ այլ տուն են գտել: 1937 թվականին Շանհայի վրա ճապոնական զավթիչների հարձակման գիշերը մի անգլիացի գրել է. «Մեզնից շատերի համար Շանհայը ժամանակավոր՝ բայց տուն է»: Դա լավ է բացատրում, որ Շանհայը միջազգային մետրոպոլիս է եղել ոչ միայն նյութական ու տեխնիկական զարգացման, այլև՝ ներքին մշակույթի հայացքի խորն զգացման տեսակետից:

Նորաձեւություն որոնողները

Դիմ Շանհայի բնակիչները սիրել են նորաձեւությունը. քաղաքի տիպական կոսմոպոլիտ ընկալում: Այդ ընկալումն արտացոլում է Շանհայի բնակիչների ոչ միայն բարքերն ու սովորությունները, այլև հոգեկան ըմբռնումն ու մշակույթը:

Դիմ Շանհայի բնակիչների մոտ նորաձեւության ձգտումը հիմնականում արտահայտվել է կյանքի արեւնտյան ոճի մեջ, որում առաջին հերթին սրճարանն էր ու պարը: Սրճարան հաճախելը շատ էր տարածված, եւ ամենահայտնի սրճարաններն էին «Սինյա»-ն՝ և «Սալիվան»-ը՝ Նանցզին փողոցում, «Կոնստանտին»-ն ու «Բալկան»-ը՝ Ցզինյան տաճարի խաչմերուկում, «Փոքր մարդիկ»-ը՝ Կասեյ կինոթատրոնի դիմաց: Շանհայի մտավորականության համար մոդայիկ էր մայրամուտին գնակ սրճարան ու վայելել բուրումնավետ սուրճ՝ գրուցելով մտերիմների հետ: Չափազանցություն չի լինի ասել, որ Շանհայի գրական շրջանները 1920-1930 թթ. խորասուզված են եղել սրճարանային մբնոլորտում:

Դիմ Շանհայը պարծենալ կարող էր նաեւ պարասրահների մեծ թվով: 1946 թվականին այնտեղ գրանցված են եղել 3300 արհեստավարժ պարուհիներ: Շանհայը հռչակվել էր «Առանց գիշերվա արեւելյան քաղաք», ինչը ցույց է տալիս նրա գիշերային հարուստ կյանքը՝ մեծ տեղ գրավող պարարահներով: Դրանցից ամենահայտնիները եղել են Պարամառնթը, Մետրոպոլիտեն Գարդենը, Լիոն եւ Սուլը Աննան: Պարամառնթի նվազախումբը կազմված է եղել ուսւ երաժիշտներից, որոնք նվագում էին ժամանակակից ամերիկյան ջազ: Այդ պարասրահն այժմ էլ է հայտնի, որովհետեւ ժամանակակից գրող Բայ Սյանյունը /ծնվ. 1937/ այն հիշատակել է իր երկու պատ-

մություններում՝ «Տիկին Ցգինի վերջին գիշերը» եւ «Հավերժական Ին Սյուլէյանը»:

Դին Շանհայի բնակիչները հետեւել են նորաձեւության ու արեւմտյան ապրելակերպին, բայց դա չի նշանակում, թե բոլոր ասպեկտներով եվրոպականացվել են: Առօրյա կյանքի բարքերում ու սովորություններում հին Շանհայի բնակիչները միշտ առաջնորդվել են հարազատ մշակույթով, որում ընկած են Ցզյանու և Չժեցզյան մշակույթների հիմունքները:

Օրինակի համար վերցնենք ուտելիքը: Դին Շանհայում եղել են արեւմտյան խոհանոցով շատ ռեստորաններ, որոնցից մեկն էր «Խայնայան»-ը՝ հայտնի իր արտասովոր կահավորանքով, ներառյալ՝ ուտելուն գուգահեռ զվարճանալու համար վանդակում գտնվող ընձառյուծը: Ցին հարստության տիրապետության /1616-1911/ վերջին շրջանի գրող, «Հատուցման ծովի ծաղիկները» /Նիեայխուա/ վեպի հեղինակ Ցզեն Պուն /1872-1935/ նկարագրել է «Խայնայան»-ում ընթրելու տեսարանը: Շանհայի հարուստ շատ բնակիչներ են ծանրք եղել արեւմտյան խոհանոցին, ինչպես նաև ավելի հասարակ մարդիկ են իրենց ընտանիքներով տոն օրերին ընթրել նման ռեստորաններում: Արեւմտյան խոհանոցի ռեստորանում ընթրելը մոդայիկ էր ու հայտնի՝ «լավ ընթրել», «շատ համեր բաներ ուտել» ենթատեքստով: Դրսից Շանհայ այցելողները եւս բաց չէին թողնում արեւմտյան խոհանոցով ռեստորանում ճաշելու հնարավորությունը:

Արեւմտյան խոհանոցը երբեք հիմնական ուտելիք չի եղել, այն համարել են լրացում՝ Շանհայի խոհանոցին, ավանդական խոհանոցն, այսինքն, պահպանել է իր մշակույթն ու ճաշակը:

Վաղնջական ժամանակներից տեղական գլխավոր գյուղատնտեսական մշակաբույսը եղել է բրինձը, եւ շանհայցիներն այն ուտում են օրը երեք անգամ: Տեղական ռեստորանների հիմնական սննդամբերը եւս բրինձն է, որին երբեն խառնում են բանջարեղեն, թթու դրած միս, երշիկ կամ խոզի միս՝ տարբեր համեր հաղորդելու համար: Շանհայի խոհանոցի կազմ մտնող մթերային բաղադրիչներից են խոզի, հավի, բաղի միսը, ձուն, բամբուկի չորացրած ծիլերը՝ շոգեխաշած մսի հետ, կանաչ սիսեռը, տոֆուն, սնկերը: Դրանցից ամենահայտնիներն են բամբուկի չորացրած ծիլերը շոգեխաշած մսի հետ, կտրտված միսը կանաչ սիսեռի հետ, լավ տապակած տոֆուն շոգեխաշած մսի հետ, որոնք եւ համեր են, եւ խնայողաբեր: Շանհայի խորտիկները եւս համով են, օրինակ՝ կաթնահացը Նանյանի մսախճողակի հետ, Նինբոյի քաղցր պելմենները, արիշտան կտրտված կանաչ սոխի հետ եւ այլն: Այս խորտիկները պատրաստվում են խնամքով, համով են եւ էժան, ու տիպական՝ Յանցզի գետից հարավ ընկած շրջանների խոհանոցի համար:

Շիկումենը եւ ծառուղիների սովորույթները

Շիկումենը ճարտարապետության տարատեսակ է, որը երեւան է եկել Չանհայի զարգացման հետ: Այդ շենքերը շանհայցիների համար կացարան են ծառայել շատ տարիների ընթացքում:

Ճարտարապետական այդ ոճը Չանհային ներկայացել է 1850-1860 թվականներին: Նման շենքերի կառուցման համար պահանջվում էին ավելի քիչ հողատարածքներ, շինանյութեր ու գումարներ: Շենքը սովորաբար կազմված էր լինում երեքական սենյակներից՝ առաջին ու երկրորդ հարկում: Առաջին հարկի կենտրոնական սենյակը դահլիճ էր ծառայում: Միջին չափսի երկիարկանի շիկումենի սենյակների թիվը երկուական էր, ավելի ուշ սկսեցին կառուցվել եւ մեկական սենյակով երկիարկանի շիկումեններ: Շիկումենի մուտքի դուռը պատրաստված էր սեւ լայն փայտից՝ բոլորված հերձաքարային գրանիտի կամ նիմբոյից /Զժերցօյան գավառ/ բերված կարմիր քարի շրջանակով: Դրանից էլ ստացվել է «շիկումեն» անվանումը, որ նշանակում է «քարե դարպասներով տուն»: Ավելի ուշ Չանհայի հարուստ բնակիչներին բավարարելու համար երեւան է եկել շիկումենի նոր ոճը. բարձր ու սեւ պատերը վերացրել են, ավելացրել լոգասենյակ ու գագասալիկ, փոքրիկ բակը վերածել այգու: Այդ ոճը կոչվեց «նորացված շիկումեն»:



Շիկումենի դարպասները:

Շիկումեն շենքում թանկ վարձավճարի պատճառով սովորաբար ապրում էր հինգ-վեց ընտանիք, բայց երբեմն, հավանաբար, անգամ տասից ավել: Դրանց բնակիչները Զինաստանի տարբեր անկյուններից եկածներ էին եւ զբաղվում էին տարբեր արհեստներով: Յուրաքանչյուրն ուներ իր ապրելակերպը եւ հետաքրքրությունները, բայց բոլորն էլ ապրում էին մեկ տանիքի տակ: «Ճանհայի տանիքի տակ» դասական պիեսը, որ գրել է ժամանակակից թատերագիր Սյա Յանեմը /1900-1995/, շատ կենդանի կերպով նկարագրում է 1930-ական թվականներին Շանհայի արեւելյան նասում գտնվող շիկումենում ապրող սովորական մարդկանց մի խմբի տրագիկոմետիան:



Հին Շանհայի ճարտարապետական կառույց:

Շիկումենի երկրորդ հարկում կար մի սենյակ, որը կոչվում էր տաղավար կամ ավելի ճիշտ ձեղնահարկ: Այն սովորաբար գտնվում էր խոհանոցի գլխին եւ ուներ 10 քառ. մետր տարածք: Այնտեղ երբեք չէր թափանցում արեւի լույսը, ձմռանը ցուրտ էր լինում, ամռանը՝ շոգ: Վարձը ցածր էր, սովորաբար չորս արձաթադրամից ոչ ավել: Այն վարձող մարդիկ տարբեր նաև գիտությունների տեր էին՝ գրասենյակային գրագրից մինչեւ ֆաբրիկայի բանվորը, խանութում աշխատող աշկերտներ, ուսանողներ, դերասաններ, թատերագիրներ, երաժիշտներ: Երբեմն մի քանի գրողներ կիսում էին այդ սենյակը: 1920-ական թվականներին մի շաբթ հոչակավոր գրողներ՝ Լու Սյունը /1881-1936/, Սառ Դունը /896-1981/ եւ Բա Ցզինը /1904-2005/, դերասաններ Սյույ Բեյխունը /1895-1953/ եւ Լյու Խայսուն /1896-1994/ ինչ-որ մի ժամանակ վարձակալել են շիկումենի սենյակները եւ անգամ նույն ձեղնահարկը:

Չիկումենները կառուցվել են պատ-պատի եւ այդպիսով կազմել ծառուղիներ /կամ՝ լիլուններ, իսկ Չանհայի բարբառով՝ լունտաններ/: Ծառուղիների լայնությունը տատանվել է ամենալայնը չորս մետրի եւ ամենանեղը՝ երեք մետրից պակաս սահմաններում: Այդ ծառուղիները Չանհայի ամենօրյա կյանքի վկաներն էին. ով է այդտեղ ճաշել, ով՝ լվացել հագուստը, ով էլ՝ մաքրել բանջարեղենը, անգամ՝ թափել գիշերանոթի պարունակությունը: Ամրանը յուրաքանչյուր ընտանիք սեղանը դուրս էր տանում ծառուղի, եւ բոլորակի նստում էին ընթրիքի: Երեկոյան շատերը ջրցողում էին ծառուղին, տնից հանում փայտե ծալովի աթոռները կամ բամբուկե բազկաթռոններն ու դրանց վրա տեղավորվելով՝ վայելում երեկոյան զովը:

Լիլուններում կյանքի առանձնահատկություններից մեկը բացորոշությունն էր: Նրանցում անձնական կյանքը կապված էր հասարակականի հետ՝ համարյա թե նասնակոր կյանքի բացակայությամբ: Ինչ են կերել, ինչ՝ հագել, ինչպիսի ֆինանսական դրություն է ընտանիքում, կամ ովքեր են այդ ընտանիքի բարեկամները՝ գիտեին շրջապատում ապրող բոլորը: Ոմանք ասում են, որ շանհայցիների բացությունը գալիս է ծառուղիներում մասնավոր կյանքի անբավարարությունից:

Ծառուղիների մուտքի մոտ եղել են բազմաթիվ խանութներ, ներառյալ՝ հագուստինը, բրձինը, մսինը, եղել են եւ արհեստանոցներ: Բնականաբար, շատ են եղել եւ վաճառորդ-

保
健
社



«Վոնտոն ապուր վաճառողը». ծաղրանկար՝ Ֆեն Ցզիկայի /1899-1975/:

販
賣
子




«Ցզունցզի գմելով». ծաղրանկար՝ Ֆեն Ցզիկայի /1899-1975/:

Աերը, որոնք առավոտից մինչ երեկո քայլել են ծառուղիներով ու խորտիկներով վաճառել: Նրանց կանչերը հնչում էին ծառուղիներով մեկ: Այդ առումով նմանություն կա Պեկինի հետ: Բայց այն խորտիկները, որ Շանհայում էին վաճառվում, պատրաստված էին հարավի ոճով: Այնպիսին, ինչպիսին վոնտոն ապուրն է, խոզապուխտով զգունցզին /եղեգնի տերեւներում փաթաթած կպչուն բրինձ/՝, լոտոսի սերմերով քաղցր բրնձի շիլան, պաղպաղակը, լավ տապակած չոր տոֆուն: Եթե երկրորդ հարկում ապրող բնակիչները լսում էին առետրականի կանչը, պարանի ծայրը կապում էին կճուճով ու փողով բամբուկե օամբյուլին եւ այն պատուհանով իջեցնում ցած: Մի քանի րոպե անց զամբյուլը բարձրանում էր վեր՝ վաճառականի լցրած ապուրով կամ զգունցզին: Առեւտրականներն ու բնակիչները ճանաչում էին միմյանց, եւ առաջինները երբեմն առանց ասելու էլ գիտեին, թե ինչ են ուզում վերջինները:

Թեեւ ծառուղիներում ապրում էին հասարակ մարդիկ, նրանք շատ մոտ էին արտաքին աշխարհին, եւ զգացվում էր Արեւմտյան արդիականության ազդեցությունը, որը բխում էր հատկապես՝ միջին խավից ու մտավորականներից: Գրողներն շտապում էին գրախանութմերը, որտեղ կարող էին զմել Արեւմուտքի երկրների նորագույն գրքերը: Ժամանակակից գրող Ե Լինֆենը /1905-1975/ վերիշել է այն օրը, եթե գրախանութուն տեսել է Ձեյմս Ջոնսի /1882-1941/ «Ուլիս» վեպը, որը հրատարակել էր «Շեքսպիր եւ Կո»-ն՝ Փարիզում: Յուզված՝ նա գրքի համար վճարել է 70 ցենտ, որը հավասար էր ամերիկյան 10 դոլարի: Շանհայի որոշ բարձրզարգացած մտավորականներ թեեւ ապրում էին շիկումնեներում, նրանց մտքերն ու հայացքները ենթարկվում էին արեւմտյան մշակույթի ազդեցությանը:

20-րդ դարի վերջին-21-րդի սկզբին Շանհայում երեւան եկավ հանգստի հայտնի վայր՝ Սինտյանդին: Դա նորացված շիկումներից մեկի ծառուղին էր, որտեղ եւս օգտագործվել էր սեւ այյուս: Ներսի կահավորանքը ժամանակակից ոճի էր: Այստեղ ներկա էր ամեն ինչը. սրճարաններ, ռեստորաններ, երաժշտական բարեր, նորաձեւության բուտիկներ, կինոթատրոններ: Իր արդիականությամբ ու վայելչագեղությամբ, հանգստությամբ ու եռանդով այդ վայրը խոր տպավորություն էր թողնում զբոսաշրջիկների վրա: Մարդիկ այն նկարագրել են յուրովի: Տարեցները կարոտախտ են զգացել, երիտասարդները համարել են մողայիկ վայր, արտասահմանցինները՝ գտել են, որ այն շատ է շինական, շինացիններն էլ՝ նրանում տեսել են արեւմտյան ազդեցություն: Եղել են անհատներ էլ, որոնք այդ վայրը կոչել են Շինաստանի «ձկնորսական նավաշինարան»: Դրա համար էլ չի կարելի չասել, որ Սինտյանդին հանգստի ու հաճելի ժամանցի վայր է, յուրատիպ ու նորաձեւ առարկաների ստեղծման համար արդիականն ու ավանդականը համատեղող շանհայցիների հանճարեղության ցուցադրման վայր:

Շանհայը Շինաստանի ամենամորածեւ ու եռանդուն քաղաքն է, մի կոսմոպոլիս, որի վեհագեղությունն ընկած է իր բացության, նոր միտումների հանդեպ հակվածության եւ ամենատար ներուժի մեջ:



25. Ավանդական հագուստը

Չինաստանը կարող է պարծենալ հագուստի մեջ ու հարուստ պատմությամբ: Չինական որոշ գգեստներ ստեղծվել են 4000 տարի առաջ, երբ չինացիները հայտնագործեցին մետաքսը: Սոտավորապես 18-րդ դարում, երբ Եվրոպայում ծնվեց ռոկոկո ոճը, Եվրոպացի ազնվականության համար մոդայիկ դարձավ պարահանդես ներկայանալը չինական հանդերձով: Իրականում Տան հարստության ժամանակներում /618-907/ Չինաստանն աշխարհում առաջնային տեղ էր գրավում հագուստի արտադրությամբ: Այն ժամանակ արդեն հագուստը վառ էր, թերեւ, փափուկ, հարթ ու նուրբ. մշակույթի տեսակետից վերցված՝ արժեքավոր: Դրա վառ ապացույցը Տան հարստության հագուստն է, որը մինչեւ օրս պահպանվում է Շոսոյի /ճապոնիա/ գանձարանում:

Տան հարստության նրբագեղ նորաձեւությունը

Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության համաժողովի կարեւոր պահ է հանդիսանում մասնակիցների կոլեկտիվ լուսանկարն՝ ընդունող երկրի ազգային հանդերձում: Այդ հագուստի ծեւավորումն ստեղծելիս յուրաքանչյուր երկիր ուշադրության է առնում գեղագիտական ճաշակներն ու մշակութային ավանդույթները: 2001 թվականին ԱԽՏՀ համաժողովն անցկացվել է Չինաստանում, եւ ներկայացած երկրների ղեկավարներն ստացել են Տան հարստության հագուստներ, որոնք բարձր են գնահատվել հարուստ ոճի եւ յուրահատկության համար: Այդ հագուստն այդպես է կոչվել Տան հարստության՝ որպես Չինաստանի պատմության լու-

սաբացի ժամանակաշրջանի, պատվին: «Տան հարստության ոճի հագուստ» անվանումը հանդերձին տալիս է չինական մշակույթի նրբերանգ, թեեւ դա չի նշանակում, թե այդ հագուստը տարածված է եղել միայն Տան հարստության օրոք: Այդ անվանումը ներկայումս պարզապես հատուկ եղույթ է՝ չինական ոճով հատուկ հանդերձն ընդգծելու համար:

Տան հարստության ոճն իրականում Ցին հարստության /1616-1911/ մանչու ոճի եւ Արեւմուտքի կոստյումների ոճի համարդությունն է: Նման դիզայնը մատչելի էր եւ տղամարդկանց համար, եւ կանաց:

Տան հարստության ոճով հագուստը բաղկացած է չորս հիմնական տարրեց. նախ՝ այն կոճկվում է առջեւից, դրա համար էլ կանացի հանդերձների մեջ մասը կոճկվում է ձախ կողմից /այդ դիզայնը ոչ միայն արտահայտում է չինական ոճի առանձնահատկությունը, այլեւ ավելի վայելչագեղ է երեւում/, երկրորդ՝ նման հագուստը միշտ կրում է ուղղահայաց օձիք, որը ցույց է տալիս հանդերձը կրողի վարքը, երրորդ՝ զգեստի գլխավոր մասի ու թեզանիքների միջեւ կարեր չկան, ու չորրորդ՝ դրա վրա օգտագործվում են ձեռքով պատրաստված կոճակներ:

Տան ոճով հագուստի ձեւավորման մեջ ազգային տարագի շեշտված նրբերանգ կա: Այդ դիզայնում սովորաբար առկա են լինում քաջվարդի, սալորի, խոլորձի, բամբուկի ու քրիզանթեմի պատկերներ, որոնք հաջողություն, մաքրություն եւ արժանապատվություն են խորիրդանշում, կամ՝ բարօրություն, երկարակեցություն, կրնակի երջանկություն նշանակող չինական հիերոգլիֆների պատկերներ:

Տան հարստության հանդերձները դուր են գալիս եւ ռեժիսորներին: Լի Շառիսունի /ծնվ. 1955թ./ բեմադրած «Սարինցներ» հեռուստադրամայում Տան ոճի տասնյակ կարմիր զգեստներում հանդես եկող գլխավոր հերոսուհուց կիրք էր ցոլանում: Այդ հանդերձները հատուկ կարվել են Ցին հարստության արքայադրստրերի զգեստների օրինակով՝ ուղղահայաց փոքր օձիքով: Որակյալ նետաքսից կարված եւ չինական ոճով տարբեր գույներով ասեղնագործված այդ զգեստները նրբաճաշակ են, գեղեցիկ ու պերճաշուր:

Գեղեցիկ չեղնագամը

Չեղնագամը /Չինաստանում հայտնի է «ցիպառ» անվամբ/, որը հատկապես մեծ համբավ է վայելել քսաներորդ դարի 20-ական թվականներին, առաջին անգամ մշակվել է շանհայյիների կողմից: Նրանում չինական ավանդական մանչու հանդերձը միավորվել է հարավչինական ոճի հանդերձի ու Եվրոպական երեկոյան զգեստի հետ: Այն անթեւ է ու սեղմում է իրանը, բարձր պարանոցով է, ներքեւում՝ կտրվածքով: Այն հազմող կինը գանգրացնում էր մազերը, բարձրակրումկ կոշիկներ ու նեյլոնե զուգագուլպաներ հագնում, կրծքին մետաղագարդ կրում, որպեսզի լիովին ցույց տա կանացի կերպարանքի գեղեցկությունը, պերճաշուր կեցվածքն ու նրբագեղ ոճը:

20-րդ դարի առաջին կեսին Եվրոպական ոճի թիկնոցով ու բաճկոնակով չեղնագամը շատ էր տարածված չինական կինոաստղերի շրջանում, եւ նրանց բազմահազար երկրպագուիհներն էլ սկսեցին հետեւել այդ նորաձեւությանը: Չեղնագամը հարգի էր եւ չինական կինոյի ռեժիսորների մոտ: 21-րդ դարի սկզբին Վան Ցյավեյը /ծնվ. 1958թ./ միջազգային ճանաչում գտավ Վան Կարվեյ անվան տակ՝ «Սիրային տրամադրություն» ֆիլմի շնորհիվ, որտեղ հերոսուհին փոխնիփոխ հագնում է 26 չեղնագամ: Դրանք բոլորն էլ ունեն նույը գույներ ու ձեւավորում եւ աշխարհին հնարավորություն են տալիս հիանալ չեղնագամ հագնող չինացի կանանց գրավչությամբ:

Չեղնագամի գեղեցկությունը «քարենված» է ու նրբանկատ, թրթրացող է, բայց եւ գուսայ, վեհ է, բայց՝ բնական: Այդ գենստր հաշվի է առնում չինացի աղջկա կերպարանքի բոլոր առանձնահատկությունները՝ օգտագործելով տարրեր գործվածքներ, գույներ ու ոճեր, որպեսզի ավելի լավ ցույց տա վայելչագեղությունն ու վեհությունը: Չեղնագամը փոխել է չինական հագուստի մասին միջազգային հաճրության ընկալումը, որը մինչ այդ այն հնառած ու հնադաշտական է համարել:

Բնական մոմից կնիքներ

Ծուրզ 2000 տարի առաջ Զինաստանում երեւան եկան մոմե կնիքներն ու բատիկը, որով առեւտուր էին անում Մետաքսի մեջ ճանապարհի վրա, Խան հարստության օրոք /մ.թ.ա. 206-220/: Այն հայտնաբերվել է նաեւ Յյուսիսային հարստությունների /386-581/ աճյունների մոտ, որոնք գտնվել են Սինվայանի ինքնավար մարզում: Տան հարստության տիրապետության օրոք մոմե կնիքներն արդեն շատ էին զարգացած: Դունխուանում՝ Մոգաոյի հ.130 քարայրում /Գանսու գավառ/ գտնվել են բատիկի պատրաստման պատկերով որմնանկարներ:

Մոմե կնիքները դարեր շարունակ տարածված տեխնիկա են եղել Զինաստանի նորաձեւության պատմության մեջ: Դրանք օգտագործում էին ամբողջ երկրում՝ հյուսիս-արեւմուտքից մինչեւ հյուսիս-արեւելք, հարավ-արեւմտյան սահմանից մինչեւ Յանցզի գետից հարավ ընկած լճերի մարզը: Անգամ այժմ էլ գավառի որոշ մասերում կանացի հագուստը, գլխի պարագաները, գոգնոցներն ու կիսաշրջազգեստները մեջ մասամբ պատրաստվում են բատիկից: Իր բնական ու դինամիկ գեղեցկության պատճառով բատիկն այսօր էլ է հարգի:

Ներկման գործընթացի ժամանակ գործվածքի որեւէ մաս պատվում է մեղրամոնով, որպեսզի այն ներկվելուց հետո ստանա հատուկ տեսք: Գործընթացն ինքնին հետեւյալն է. սկզբում հալեցնում են մոմը եւ պղնձե դանակով այն զարդանախշի ձեւով քսում հագուստին: Հետո, երբ մոմը չորանում է, հագուստը տեղափորում են ինդիգոյով /կապույտ ներկ/ անորի մեջ՝ ներկելու: Դրանից հետո էլ զգեստը զցում են ջրի մեջ ու եռացնում՝ մոմից ազատվելու համար, ապա ողողում մաքուր ջրով: Այդպես սպիտակ դիզայնը հայտնվում է կապույտ ֆոնի վրա:




Կայսեր հարճ Ցյանլունը
զարդահարդարում է մազերը:



Գեներալի տիկինը խոնարիվում
է Բուղդային /դրվագ/:
Գտնվել է Շունինուամում՝
h. 130 քարայրում:

Ներկման ընթացքում երեւան են գալիս հատուկ «սառցե ճաքեր», որոնք գոյանում են՝ երբ մոմը չորանալու ընթացքում ճաքճպում՝ փշրվում է, ու ճաքերի միջով ներծծվում է ինդիգոն՝ ստեղծելով բնական սառույց հիշեցնող գեղեցիկ գծեր: Վերջիններս շատ են բնական ու հիշեցնում են յուրօրինակ ճաքեր, որոնք ներկայացնում են բատիկի գեղեցկությունն ու հոգին:



Այսո ժողովրդի բատիկը:

Թատերական շքեղ կոստյումները

Թատերական կոստյումները չինական ավանդական հագուստի մաս են կազմում: Դրանք փոխառվել են առօրեական հագուստից՝ չինական ավանդական հանդերձի առանձնահատկություններով: Չիներենով թատերական կոստյումները կոչվում են «սինտոու»: Յուրաքանչյուր դերի համար դրանք ընտրվում են շատ խնամքով: Յանդիսատեսները սովորաբար թատերական կոստյումով կարողանում են հասկանալ դերասանի դերը: Օրինակ, երիտասարդ կանանց դերերը բաժանվում են երկու տեսակի՝ ցինիի եւ խուադանիի: Առաջինը սովորաբար մեծավարպետ ու նուրբ դերեր խաղացող հերոսուհի է, ինչպիսին տիկին Մենցզյանն է «Տիկին Մենցզյան»-ում, որը սգում է ամուսնու մահը Չինական մեծ պարսպի մոտ, կամ՝ Շուն Շանսյանը «Զոհաբերումն գետին» ներկայացման մեջ: Նրանց զգեստները սովորաբար պարզ ու նորին են եւ հիմնականում՝ սեւ գույնի: Խուադանները երիտասարդ ու սիրունիկ աղջիկներ են, դրա համար էլ նրանց զգեստները պարզ ու վառ գույնի են: Խուադանը սովորաբար կրում է թիկնոց, կիսաշրջազգեստ, անթերկ, զարդանախշով գոտի: Խուադանի կոստյումները համարվում են ամենագեղեցիկ թատերազգեստ:

Չինական պիեսներում օգտագործվող կոստյումները լավ են սազում անձնավորությանն ու դերի տրամադրություններին: Օրինակ՝ ցինիները սովորաբար ծանր կյանք են վարել եւ ունեն մելամաղձոտ բնավորություն, դրա համար էլ նրանց կոստյումները միշտ եղել են սառը գույների՝ այն դեպքում, եթե խուադանի դերերը միշտ եղել են եռանդուն ու սրտապնդիչ, եւ վառ հագուստները միշտ համապատասխանել են նրանց լավատեսական բնավորությանը:

Չինական թատերական կոստյումներն արտացոլում են նորին գեղեցկությունը՝ փոխառված չինական գեղագիտությունից: Դրա լավ օրինակը կարող է հանդիսանալ Երեք պետությունների / 220-280/ ժամանակաշրջանի պատմական գործող անձ ու Պեկինյան օպերայի «Չանբանի լանջերը» հայտնի ներկայացման հերոս Չժառ Յունը /?-229/: Չանբանի լանջերում ընթացող ճակատամարտի ժամանակ Չժառ Յունը մենակ թափանցում է թշնամու ճամբարը, որպեսզի փրկի իր տիրոջը՝ Լյու Բեյին /161-223/: Դա պատմություն է հավատարմության, խիզախության ու հերոսական տոկունության մասին: Բեմում Չժառ Յունը հանդես է գալիս կարմիր գույնի դեմքով, որը խորհրդանշում է հավատարմությունն ու հերոսությունը, կրում է գեղեցիկ հանդերձ ու վիշապի պատկերով թիկնոց՝ չորս ժապավենով թիկունքին ամրացված: Նրա շարժումների ժամանակ ժապավենները ոլորներով թրթում են օդում, թիկնոցը փայլում իր զարդանկարով՝ ցուցանելով նրա քաջարի ու հերոսական բնավորությունը:

Չինական թատերական ավանդական կոստյումներում ուշադրության արժանի են կանանց զգեստի երկար թեզանիքները: Ազատ ու երկար՝ դրանք դերասանների շարժման ժամանակ «պարուն» են ալիքների պես,

կամ՝ ինչպես թռչող ամպերը, եւ դրա համար ստացել են «ալիքավոր թեզանիք» անվանումը: Պեկինյան օպերայում կանացի դեր տանող յուրաքանչյուր դերասան պարտավոր է ալիքավոր թեզանիքները ետ ու առաջ նետել սովորել, բարդ մի շարժում՝ անգամ արհեստավարժի համար: ճկուն ու նրագեղ շարժումների եւ մեղեղային երգեցողության հետ մեկտեղ՝ թեզանիքների այդ շարժման գերազանց կիրառման շնորհիվ կանացի դեր տանողները դրամատիկ տպավորություն են գործում համովիսատեսների վրա՝ նրանց խորասուզելով կանանց զգայական աշխարհը:



Տան հարսուության ժամանակների գեղանկարիչ Չժոու Ֆանի
կտավներից. «Գլխազարդով արքունի տիկինը» /Դրվագ/:



26. Զինաստանի խոհարարական նրբահամակները

Զինական խոհանոցը չինական մշակույթի նշանավոր ասպեկտն է, ինչը հաստութում է չինական ռեստորանների առկայությունն աշխարհի բոլոր անկյուններում: Խոհարարական արդյունաբերությունն այժմ զարգանում է ավելի արագ, քան նախկինում. տասը տարի առաջ Պեկինում եղել է մի քանի հազար ռեստորան՝ այն դեպքում, երբ այսօր քաղաքում հաշվվում են տարբեր չափերի ավելի քան 100 հազար ռեստորաններ:

Տեղական չինական խոհանոցը

Դայտնի է, որ Մին /1368-1644/ եւ Ցին /1616-1911/ հարստությունների տիրապետության ժամանակներից սկսած՝ Չինաստանում ստեղծվել է խոհարարական ուրեմնություն: Չանրունի, Սըչուանի, Գուանդունի, Ֆուցյանի, Չժեցյանի, Խունանի եւ Անխուեյի: Դրանց ի լրումն՝ Չինաստանի խոհարարական արդյունաբերությունը ենթարկվել է մեծ փոփոխությունների, որպեսզի ցանկացած տեղում հնարավոր լինի պարծենալ խոհարարական իրենց տեղական առանձնահատկություններով: Պեկին, Շանհայ, Գուանչժոու մեծ քաղաքներում կարելի է համտեսել երկրի բոլոր շրջանների խոհանոցների ուտելիքները:

Որպես «բնության գանձարան» հայտնի Սըչուանը կարելի է նաեւ կոչել «խոհարարական արվեստի գանձարան»: Այստեղ յուրաքանչյուր ռեստորանում կարելի է համտեսել համով ու մատչելի գներով ուտելիքներ: Սըչուանյան խոհանոցի բաղադրիչները շատ պարզ են, իսկ համեմունքները՝ չափազանց արտասովոր: Այս խոհանոցը հայտնի է իր սուր եւ ուժգնաբուրունք կերակրատեսակներով, թեև լոկ դրա համար Սըչուանի խոհանոցը

հազիվ թե տարբերվի խումանի եւ Գուեյչժոուի խոհանոցներից, այստեղ, իրոք, առանձնահատուկը փշոտ կաղամախու սերմերի օգտագործումն է, որի համը բերնում ու լեզվի վրա թողնում է թմրության զգացողություն: Բացի այդ հազվագյուտ համեմունքից, Սըչուանի կերակուրները համեմում են չիլի սուր պղպեղով: Եփեկ բակլայից պատրաստված սոյայի սոուսի եւ սննդի պատրաստման հազվագյուտ մեթոդների օգտագործման շնորհիվ Սըչուանի խոհանոցը մեծ համբավ է վայելում ամբողջ աշխարհում: Վերջին ժամանակներս բացվել են այդ խոհանոցով մասնագիտացված շատ ռեստորաններ, ինչպիսին «Տան ընտանիքի ձկան գլուխն» է:



Պատկեր՝ Յանչժոուի /Յզյանսու/ Արեւմտյան լճի ավից:

Գուանդուն գավառը գտնվում է Չինաստանի հարավում: Այն բարեխառն կլիմա ունի: Նավահանգստային առաջին քաղաքներից մեկը հանդիսացող եւ միջազգային առեւտրի համար բաց Գուանդունի խոհանոցը ազդեցություն է գործել Չինաստանի մյուս մասերի խոհանոցների վրա: Այն հայտնի է իր ծովանթերքներով, ինչպես նաև պատրաստման գործընթացի յուրահատկությամբ ու նրբությամբ: Այս խոհանոցի տարբեր ապուրները համբավ են վայելում ամբողջ երկրում:



Յանցզի գետից հարավ ընկած շրջանի խոհանոցը ներկայացնող Չժենցզյանի խոհանոցը նուրբ է ու թեթև: Նրա մի շատ հայտնի կերակրատեսակը, որ կոչվում է «Արեւմտյան ծովի ձուկը՝ քացախով», թարմացուցիչ բնական համով նրբախորտիկ է: Զինաստանի, ինչպես նաև աշխարհի շատ ռեստորաններում մասուցում են այն, սակայն սովորաբար նվազ յուրատիպ համով՝ քան Չժեցզյան գավառի Խանչժոնու մայրաքաղաքում: Որովհետեւ այդտեղ Արեւմտյան լճի ձուկ ու ջրից օգտվելու համար կա մուտքի հնարավորություն:

Յուրաքանչյուր կերակրատեսակ իր պատմությունն ունի

Զինական խոհանոցի կերակրատեսակները հետաքրքիր անվանումներ ունեն, ու յուրաքանչյուր անվանման հիմքում հետաքրքիր էլ պատմություն է ընկած: Դյուրին մտապահվող անվանումը մեծացնում է կերակրատեսակի արժեքը, թեև որոշ անվանումներ այնքան տարօրինակ են, որ օտարերկրացիներին, անգամ չինացիներին, ստիպում են մտածել: Փորձիր բառացի թարգմանել դրանք՝ կստացվի ծիծաղելի մի քան:

Վերցնենք, օրինակ, «Գոռուբուլի փքարլիթներ»-ը՝ խորտիկներ Տյանցյանից, որոնք շատ հայտնի են եւ պատրաստվում են ձեռքով ու բոլորը՝ մի չափսի: Մատուցարանի վրա շարված՝ դրանք նման են քրիզանթեմի կոկոնների: Բարակ ու նուրբ խմորից են, ներսից՝ հյութեղ, նուրբ ու դյուրիչ համով եւ ամենեւին ճարպոտ չեն, ել որտեղից է վերցվել նման անվանումը:

Դրա հետեւում հետաքրքիր պատմություն կա: Շոգեփի «Գոռուբուլի փքարլիթները» Տյանցզյանում սկսել են վաճառվել 150 տարի առաջ: Գո-

ուցգի /շուն/ անվանք տեղացի մի երիտասարդ աշկերտ էր աշխատում կրպակում, որտեղ բառցգի /շոգեվի փքարլիթներ/ էին վաճառում: Բառցգիի գերազանց համի շնորհիվ կրպակը համբավ ձեռք բերեց: Որքան էլ արագ էր աշխատում երիտասարդը, մեկ է, չէր հասցնում ընդունել, բավարարել բոլոր այցելուներին: Մարդիկ ստիպված էին լինում երկար սպասել: Նրան երեմն շտապեցնում էին, բայց տղան, բլիթների պատրաստմանք զբաղված, չէր պատասխանում: Դրա համար էլ մարդիկ նրան «Գոռլըուլի» կոչեցին, որը նշանակում է «շունը ուշադրություն չի դարձնում»: Այդ տարօրինակ մականունը հետագայում բարձրացրեց նրա համբավը: «Գոռլըուլին» այժմ Տյանցգյանի համար ժամանակի կողմից քննություն բռնած որականից է:


Չժեցյանի խոհանոցում մի կերակրատեսակ կա, որը կոչվում է «Դունպոյի միսը»: Այն պատրաստվում է բույլ կրակի վրա, բաղադրիչների մեջ են մտնում մեծ կտորներով կտրտված ու շերտավոր խոզի միսը, կանաչ սոխից խավարտը, կոճապղպեղը, տապակածի գինին, սոյայի սոուսը եւ շաքարը: Պատրաստ կերակրատեսակը կարմիր գույն ունի, նուրբ է ու հյութեղ, եւ ճարպոտ չէ: Կերակրատեսակն այդպես է կոչվել Սուն հարստության /960-1127/ մեջ բանաստեղծ Սու Դունպոյի /1037-1101/ պատվին, որը խանչոնու քաղաքում աստիճանավոր աշխատելու ժամանակ մտահղացել ու պատրաստել է այն: Ասում են, թե Արեւմտյան ծովի մոտ կոյուղու աշխատանքների պատասխանատու աշխատելիս, Սու Դունպոյն բանվորներին պարզեւատրել է սոյայի սոուսում շոգեխաշած խոզի մսով, եւ հետագայում այդ կերակուրը կոչվել է տաղանդավոր ու առատածերն բանաստեղի պատվին:

Ֆուցցյան գավառը կարող է պարծենալ «Բուդդան ցատկում է պատի վրա» կոչվող կերակրատեսակով: Նրա մեջ մտնում են 20 բաղադրիչներ, ներառյալ՝ հավ, բադ, ծովավարունգ, չորացրած ծովակատարիկ, ջիւ, շնաձկան լողակ, ձկան փոր, խոզապուխտ, տասնյակ տեսակի սնկեր՝ խավարտի մեջ, ձմեռային բամբուկի ծիլեր, աղավնաձվեր: Այս ամենը տեղավորում են խեցե կճուճում, ավելացնում տապակածի գինի, հավի արգանակ, դնում բույլ կրակի վրա՝ մինչեւ մսի նուրբ ու հյութեղ, իսկ ապուրի՝ միատարր ու բանձր դաշնալը: Այն համտեսելուց հետո մարդ բերնում երկար ժամանակ որոշակի համ է գգում: Այդ կերակրատեսակի անվան պատմությունն այսպիսին է. հորինվել է ֆունցցյան գավառի ֆուչժոուի «գարնանային այգի» ռեստորանում՝ Գուանսյու կայսեր /1875-1908/ կառավարման օրոք: Կերակուրն սկզբում կոչվում էր «Կճուճում շոգեխաշված ութ հրաշալիք», հետո փոխվեց «Գարնանային այգու»:

Մի անգամ այստեղ ընթրելու են գալիս ութ գիտնականներ: Երբ մատուցվեց կերակրատեսակը, նրանցից մեկը բանաստեղծություն կարդաց. «Խուփը բացվում է թե ոչ՝ /Կերակրի հոտն է տարածվում չորս դին,/ Մի գդալ կերար՝ Բուդդան ցատկում է պատի վրա/ Ցգեն պատգամներին հակառակ»: Եվ կերակրատեսակն իր անվանումն ստացավ հանպատրաստից հնչած ոտանավորից:



Պարզ կանաչ գույնի, ջնարակված,
կամքավոր կծուճ:



Ջնարակված պնակ՝
ծաղկանման եզրերով:

Զերմություն եւ հյուրընկալություն՝ արտահայտված ուտելիքում

Արեւմուտքում հնուց անտի ընդունված է «առանձին կերակրատեսակի» ընթրիքը: Նույնիսկ ճաշկերույթների ժամանակ ամեն ոք իր պնակն է առնում՝ ինչ ուզում է եւ ուտում, ոչ թե կիսում ընդհանուր կերակուրը: Զինական սովորություններին դա չի համապատասխանում: Զինացիների կարծիքով՝ ուտելու ժամանակ կարեւոր են մթնոլորտն ու տրամադրությունը: Ընթացքում ահել թե ջահել նստում են տարեց կարգով, ասել-խոսելով, կատակ ու ծիծաղով:

Ով տարիքով մեծ է՝ կերակուր է ընտրում փոքրերի համար, իսկ փոքրերը՝ կենաց նշում մեծերի պատվին: Դա աշխույժ, ջերմ ու ներդաշնակ ընտանեկան ընթրիք է: Տանտերն ու տանտիրուիկին հյուրերի հետ կիսում են սեղանը: Առաջինը կամ երկրորդը օգտագործելով մաքուր ու հարթ ձողիկները՝ խաշած ձկան լավագույն մասերը մաքրում են ամենակարեւոր հյուրի համար: Սննդի բաշխման այդ սովորությունը ցարդ էլ տարածված է տարեց սերնդի չինացիների շրջանում: Դրանով նրանք արտահայտում են հարգանք, հոգածություն եւ հյուրասիրություն:

Սեղանի շուրջ նման սովորությունները որոշակիորեն ազդել են չինացիների բնավորության վրա: Դայտնի ինաստով վերցված՝ դա զորացրել է ազգի կոլեկտիվ ոգին: Դրավիրովի երեկոյի կամ ճաշկերույթի ժամանակ յուրաքանչյուրն առաջին հերթին ուշադրության է առնում խմբի կարիքները: Սնվելու գործընթացը՝ դա ժամանակ է՝ դրսեւորելու անձնական համեստությունը եւ հոգալու ուրիշների մասին: Սա տարբերվում է Արեւմուտքի ճաշկերության ավանդույթներից, որտեղ յուրաքանչյուրն ուշադրություն է հատկացնում իր անձին:

Չինաստանում մարդիկ խորապես են մտահոգվում տոնական օրերի ու տելիքներով եւ տարբեր տոնների համար տարբեր էլ ընտրություն են կատարում: Օրինակ՝ Գարնան տոնի նախօրեին երկրի հյուսիսային մասի բնակչությունը նախընտրում է ցայացզին՝ մսի ու բանջարեղենի խճողակով «ականջիկները» /պելմեններ/: Լապտերների տոնին մարդիկ ուտում են «յուանյայո», քաղցր պելմեններ պատրաստված բրնձի ալյուրից՝ դրանով խորհրդանշելով ընտանիքի վերամիավորումն ու կատարելությունը: Դուանու տոնի ժամանակ ուտում են զգունցզի. կպչուն բրինձ՝ եռանկյունաձեւ փաթաթած եղեգնի տերեւմերում, հարգելով հիշատակը սիրելի բանաստեղծ Ցյու Յուանի /մ.թ.ա. 339-278/, որը բանսարկվելուց հետո կյանքին վերջ է տվել Միլո գետում ջրահեղճ լինելով: Լեգենդն ասում է, որ այն ժամանակ մարդիկ զգունցզի են նետել գետը՝ հուսալով, թե ջրավիշապը չի տանի նրան: Դա աստիճանաբար վերածվել է Դուանու տոնին զգունցզիի պատրաստման եւ օգտագործման սովորության:

Չին խոհարարների գերազանց ընդունակությունները

Չինական խոհարարական արվեստում խորհրդանշորեն կարեւոր է ուտելիքը ձեռքով պատրաստելը: Դա պատրաստման որակի պատճառներից մեկն է: Երեմն սննդի պատրաստման գործընթացը նմանվում է ակրոբատիկ ներկայացման: Օրինակ՝ արիշտայի պատրաստումը Շաանսի գավառի խաղանիշն է: Խոհարարը կաթսայից մետրի չափ հեռու կանգնած, որում եռում է ջուրը, մի ձեռքում պահում է տախտակը, որի վրա խմորի գունդն է, մյուսում դանակը եւ սկսում կտրտել խմորը: Ցուրաքանչյուր կտորիկ ակնթարթորեն հայտնվում է կաթսայում: Այդ գործողությունն ինչ որ բանով ձկների կերակրում է հիշեցնում: Տեսարանն առաջին անգամ դիտողը խոհարարի վարպետությունից այնքան է ապշում, որ մոռանում է ուտելու մասին: Ավելի հետաքրքիրն այն է, որ ինչ որ մի ժամանակ խոհարարները խնորով տախտակը դնում էին գլխներին ու երկու դանակով կտրտում արիշտան՝ կտորները նույնպես ակնթարթորեն նետելով կաթսան: Դա ավելի շատ նման է ակրոբատիկայի՝ քան սննդի պատրաստման:

Սըզուանի դանդանը մասնակիորեն Շաանսիի արիշտան է հիշեցնում՝ հասարակ մարդկանց ուտելիքը: Դանդանը պատրաստում են շատ արագ ու հմտորեն՝ օգտագործելով հատուկ մտածված՝ քնջութի, կծու պղպեղի, փշոտ հացենու, մանանեխի, սխտորի, սամիթի յուղերով սոուս, ինչպես նաև ավելացմելով բակլայի գինի, կտրտած կանաչ սոխ, բակլայի ծիլեր: Նախկինում նման արիշտա վաճառում էին առեւտրականները, որոնք գնորդների ուշադրությունը գրավելու համար խփում էին փայտե ճշանակներին: Լսելով ծանոթ ձայնը, մարդիկ խռնվում էին վաճառականի շուրջը: Ցուրաքանչյուր համտեսող գլխի շարժումով հավանության նշան էր անում: Որոշ մարդիկ ասում են, որ դանդանի մեկ պնակում առկա է Սըզուանի բնակչության խոհարարական արվեստի ողջ վարպետությունը:

Զինացիները շատ լավ են կողմնորոշվում խոհանոցային կերակրատեսակի համում, գույնում, ձեւում, բուրմունքում: Օրինակ՝ «Ցյուանցօյույդե» ռեստորանում պատրաստվող «պեկինյան բաղն» իր մեջ համատեղում է այդ չորս ասպեկտները: 150 տարվա պատմություն ունեցող հռչակավոր կերակրատեսակն այժմ փառաբանված է աշխարհով մեկ:

Որակյալ «պեկինյան բաղն» պատրաստումը երկար ու բարդ գործընթաց է՝ կազմված բազմաթիվ գործողություններից, սկսած բաղն ընտրությունից մինչեւ սեղանին մատուցելը: Յուրաքանչյուր գործողություն խնամքով մտածված է, ինչը երաշխավորում է փայլուն մաշկով, մարմելադակարմիր գույնով, բուրումնալից ու տաք բաղն մատուցումը սեղանին: Ռեստորանում բաղը պատրաստում են այցելուների պատվերով: Բաղը պատրաստ լինելուց դնում են մեծ մատուցարանի վրա, սայլակով բերում հաճախորդի մոտ, որի աչքի առջեւ խոհարարը բաղը հմտորեն կտրտում վերածում է բարակ, նուրբ ու հյութեղ մասերի: ճճճան մաշկ ու միս: Սկզբում բաղի կտորները թաքախում են քաղցր սոուսի մեջ՝ պատրաստված եփած ալյուրից, հետո այդ կտորներն ու կանաչ սոխը դրվում են փոքրիկ բլինչիկների վրա, եւ միայն այդքանից հետո համտեսում այն: Բաղի ոսկորները շոգեխաշում են համով սպիտակ ապուրի պատրաստման համար: Եթե դուք ռեստորան եք գնում ընկերներով, որոնք սիրում են խմել, ապա իմացեք, որ բաղի թեւիկների լողակները, սիրտն ու յարդը հաճելիորեն ուտվում են գինու հետ: Այդպիսով՝ ընթրիքը վերածվում է անմոռանալի խնջույքի, որտեղ ամբողջ ընթրիքը բաղկացած է բաղից:



27. Կյանքը բուրումնալից թեյի հետ

Թեյը հիանալի ընպելիք է՝ ի սկզբանե հայտնագործված Զինաստանում, սրանից 4000 տարի առաջ: Տան հարստության /618-907/ ժամանակ ճապոնացի հոգեւորականներն այն ներկայացրին ճապոնիային՝ վերջինիս միավորելով Ցզեն բուդդայականության հետ, հեղինակեցին ամբողջ աշխարհում հայտնի «թեյի արարողությունը»: 17-րդ դարում հոլանդացիները չինացիներից ընդօրինակեցին թեյելու սովորությունը՝ դրանով իսկ այն ներկայացնելով Եվրոպային: Մասնավորապես Անգլիայում՝ ետկեսօրյա թեյախմության սովորությունը: Մինչեւ 19-րդ դարն ամբողջ աշխարհում թեյն աճեցվել է անմիջաբար Զինաստանում: Նույնիսկ անգլերեն «tea» /թեյ/ բառի «թի»-արտաքերման գրադարձությունը Ֆուցզյանի բարբառով նշանակում է Զինաստան: Թեյը Զինաստանի կարեւոր ավանդն է համաշխարհային մշակույթում:

Տնային թեյախմության ավանդույթն այժմ էլ է տարածված: Հազարամյակների ընթացքում թեյը եղել է չինացիների ամենասիրելի ընպելիքը: Այնպիսի մի հսկայական երկրում, ինչպիսին Զինաստանն է, թեյախմության սովորույթը հյուսիսցիների ու հարավցիների մոտ տարբեր է, տարբեր սովորությունները նպաստել են տեղական սովորությունների առաջացմանը: Թեյը սերտ կապված է սովորական նարդկանց առօրյա կյանքի հետ:

Ինչպես սրբարաններն Արեւմուտքում՝ թեյատներն էլ Զինաստանում հանդիսանում են մի վայր, որտեղ տեղի են ունենում կարեւոր շատ իրադարձություններ: Թեյատները միշտ ել չինացիների կյանքի կարեւոր մաս են կազմել:

Թեյի կախարդական հատկությունները

Եվրոպայում թեյն ընդունել են շատ ջերմորեն եւ նույնիսկ այն կոչել «Աստծո պարգեւ», իրենց երջանիկ են համարել, որ ապրում են մի ժամանակ, երբ հայտնագործված է թեյը: Զինաստանում սերը թեյի հանդեպ նույնապես ուժեղ է, եթե ոչ՝ ավելի ուժեղ:



Փորագրված կնիք: Ցին հարստություն:
Ի Խուանզի /1744-1802/:

Տան հարստության թեյի գիտակ Լյու Չժենյանը /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ առաջ է քաշել «թեյի տասը արժանիքների» տեսությունը. «Թեյը համով է, նպաստում է առողջությանը, հեռու է քշում տիհած հոտերը, կարող է պաշտպանել հիվանդությունից, մարդու մարմնին կարող է ներուժ հաղորդել, լիցքաբափել ընկճախտը, փոխել վարքը, լուսավորել միտքը, հարգանք հաղորդել, սատարել արդարությանը»: Լյու Չժենյանի այս սկզբունքները կիսել է չինացիների մեծանասնությունը:

Թեյն օգտագործում են ինչպես մարմնի պահանջմունքի, այնպես էլ մտքի համար: Մեկ թաս թարմացուցիչ թեյը կարող է մարդուն հեշտորեն ազատել ծարավից՝ նրան հաղորդելով հարմարավետություն ու բավականություն: Չինական ավանդական բժշկության համաձայն, թեյի օգտագործումը կարող է ազատել շատ հիվանդություններից, որովետեւ դառնավուն ու դարադող թեյը պարունակում է օրգանիզմի համար օգտակար տարրեր: Դա ապացուցվել է նաև ժամանակակից բժշկության կողմից: Չինացիներին թեյը դուր է գալիս, որովհետեւ կարող է բավարարել նրանց ֆիզիկական ու հոգեւոր կարիքները: Նրանք թեյն օգտագործում են նաև հարգանքի արտահայտման, մտքի մաքրման եւ կյանքի էությունն ավելի լավ ընթառնելու համար:

Թեյի սիրահարները թեյ օգտագործելուց առաջին ու ամենագլխավոր բավականությունն ստանում են «մաքրման նպատակով»: Թեյը նախընտրում է աճել մաքրող վայրում: Որքան մաքրու է տեղը, այնքան ավելի լավն է թեյի որակը: Գերազանց թեյը սովորաբար աճում է բարձրլեռնային տեղանքում՝ ամպերով ու մշուշով շրջապատված մաքրու մթնոլորտում: Նման միջավայրում աճում են թեյի մաքրու տերեւները՝ պատված ցողի կաթիլնե-



Լյու Յույը թեյ է թրմում: Ստեղծագործության հեղինակ՝ Չժառ Յուան
/կյանքի տարեթվերը հայտնի չեն/: Լյու Յույին /733-804/, որն ապել է
Տան հարստության օրոք, համարել են չինական թեյի սուրբը:

Րով: Մեկ թաս բարձրորակ, բյուրեղյա մաքրությամբ ու բուրումնալից, թարմացուցիչ թեյն օգնում է մարդու մարմնին՝ դառնալ ուժեղ ու ներդաշնակ:

Երկրորդ ասպեկտը «քուլանալու որոնումն» է: Ծփոթմունքով ու վեճերով, հոգնածությամբ ու տկարությամբ լի աղմկոտ աշխարհը քայքայում է մարդու միտքն ու հոգին: Մի բաժակ թեյը կարող է այդ աղմուկից գոնե մեկ ձեռքի չափ հեռացնել մեզ: Թեյօգտագործման ժամանակ ուղեղը կարող է հանգստանալ, ինչպես լիճն՝ անքամի գիշերը, եւ պարզ լուսինը, որ լուսավորում է աշխարհը: Մի բաժակ թեյն ի զորու է մեր առջեւ բացել նոր ու անսահման աշխարհ:

Թեյի երրորդ կարեւոր առանձնահատկությունը «հարգանքն» է: Չինացիների հարգանքի արտահայտման սովորություններից մեկն էլ թեյով հյուրասիրելն է: Նրանք թեյի բաժակով հարգանք են մատուցում, հյուրերն էլ այն ընպելով՝ իրենց զգում են թարմացած ու եռանդով լի: Բարձրակիրք մարդիկ իրենց երեկոյան հյուրերին դիմավորում են ոչ թե գինիով, այլ՝ թեյով: Չինաստանի որոշ մասերում սովորություն կա թեյ մատուցել երեք անգամ. առաջինը՝ որպես ողջույն, երկրորդը՝ հյուրասիրության նշան, երրորդը՝ բարեմաղթանքների համար: Թեյ մատուցելը ցույց է տալիս ոչ միայն հյուրասիրություն, այլև հարգանք հյուրի նկատմամբ:



Յուն Չժեն Կայսեր
/1723-1735/
տիրապետության
օրոք Խսինում
արտադրված
«բռկարո» թեյնիկը:

Թեյից հաճույք ստանալու ուղիները

Զինացիները թեյըմպումին վերաբերվում են ինչպես արվեստի, որի մասին կուտակված են շատ գիտելիքներ: Թեյի համը պետք է լինի փափուկ, միաժամանակ հարուստ ու հագեցած: Թեյ պատրաստելիս չինացիները մեծ ուշադրություն են դարձնում ջրին, թեյի տերեւներին, թեյնիկին ու կրակին:

Թեյապատրաստման համար ամենակարեւոր տարրը ջուրն է: Լավ թեյի համար հարկավոր է որակյալ ջուր: Յին չինացիները թեյի մասին ասում էին. «Թեյը պետք է լինի քարմ, ջուրը՝ կենդանի կամ հոսող»: Տան հարստության թեյի վարպետ Լյու Յույը նշել է, որ լավ թեյ պատրաստելու ամենալավ ջուրը լեռնային բարձունքներից վերցված՝ բյուրեղայ մաքրության ջուրն է, որից հետո՝ աղբյուրներին ու գետերինը: Առուների պարզ ջուրը եւս վասը չէ, բայց այն կրում է հողի համը: Երրորդ տեղում, կարելի է ասել, աղբյուրի ջուրն է, թեեւ արհեստական սարքած աղբյուրները սովորաբար աղի հոտն են ունենում: Դրա համար էլ ամենալավ ընտրությունը կլինի սարերից բխող, չաղտոտված աղբյուրի ջուրը: Դժբախտաբար, մեր ժամանակներում մատչելի չէ անգամ երրորդ ընտրությունը, մենք օգտագործում ենք ջրատարի՝ կամ էլ արհեստականորեն մաքրված ջուրը:

Զինացիները սիրում են նաև թեյի համար ծյուն հավաքել: Անցյալում կրթված շատ մարդիկ են սիրել ձմեռային ցուրտ օրերին հավաքած ու հալեցրած ծյան ջրից պատրաստված թեյ ըմբոշինել լամաի լույսի տակ: Ի սկզբանե ծյունն, իհարկե մաքուր է լինում, սակայն ոյուրին կարող է կեղտոտվել, ուստի թեյ պատրաստելու համար հավաքում էին նոր տեղացած ծյունը:

Քանի որ լավ թեյի համար հարկավոր է լավ էլ ջուր, չինացիները զարգացրել են աղբյուրների գնահատման ավանդույթը: Աղբյուրներն այդպես՝ թեյի նկատմամբ սիրուց, դարձան հռչակավոր: Ասում են, թե Լյու Յույը ոտքի տակ է տվել ողջ Չինաստանը՝ փորձելով ջրերի համն ու որակը: Նա, ի վերջո, հանգել է եզրակացության, որ թեյի համար ամենալավը Ուսիի /Ցզյանսու գավառ/ Խուեյշան աղբյուրի ջուրն է: Երրորդ տեղում եղել է Խանչժոուի /Չժեցզյան գավառ/ Խուապատ աղբյուրը:



«Երկնատակում»
/Չինաստան/ h.1
հաշվվող Բոմու
աղբյուրը:

Թեյի պատրաստման երկրորդ կարեւոր տարրը թեյի տերեւներն են: Չինաստանում վաղուց են սկսել տարբեր սորտերի թեյ աճեցնելը: Մշակման տեսակետից թեյը բաժանում են կարգերի. կանաչ թեյ, սեւ թեյ, թեյ ուլուն, մուգ թեյ ու հոտավետ թեյ: Կանաչ թեյն ամենատարածվածն է, նրա արտադրությունը երկրում տարեկան ընդհանուր արտադրության մեջ կազմում է 70 տոկոս: Կանաչ թեյի հայտնի սորտերն են. «Լունցզին»-ը /Խանչժոու գավառ/, «Բիլչուն»-ը /Ցզյանսու/, «Խուանշան Սանֆեն»-ը եւ «Լյուան Գառւայյան»-ը /Անխուեյ/: Ամենահայտնի սեւ թեյը «Ցիմեն»-ն է /Անխուեյ/ եւ «Դյան»-ը /Յուննան/: «Ուլուն» թեյն աճեցվում է հիմնականում Տայվանում եւ Ֆուցզյան գավառի Ուի լեռներում: Մուգ թեյի ներկայացուցիչը «Պուար»-ն է՝ Յուննան գավառից: Մուգ թեյն արտադրում են՝ ջուր ավելացնելով թեյի տերեւներին, որոնք հետո թթվեցվում են: Գոյություն ունեն հոտավետ թեյի շատ տարատեսակներ, օրինակ՝ քրիզանթեմի թեյը, հասմիկի թեյը. սրանք Չինաստանի հյուսիսում սիրված սորտեր են:



«Քոլարո» երկու թեյամամ: Ցին հարստություն:

Լավ թեյը պետք է մատուցվի թեյի լավ սպասքակազմով: Զինացիները հատուկ ուշադրություն են դարձնում վերջինիս եւ պատրաստում են ճենապակուց, խեցեղենից, ապակուց, փայտից: Թեեւ Զինաստանը ճենապակու, այն էլ՝ շատ լավ ճենապակու, հայրենիքն է, պարտադիր չէ, որ թեյասպասքի համակազմը լինի ճենապակուց: Թեյի սիրահարները դրա փոխարեն նախապատվությունը տալիս են կավե համակազմին: Նման համակազմերի ներկայացուցիչներից մեկն է Ցօյանսու գավառում գտնվող Տայխու լճի մոտ՝ Խինում արտադրվող «քոլարո»-ն, որը հնուց է մեծ համբավի տեր:

Լավ թեյի պատրաստման վերջին՝ չորրորդ կարեւոր տարրը կրակն է, որն առաջին հերթին պետք է «կենդանի» լինի: Կնշան Սուն հարստության /960-1279/ մեծ բանաստեղծ Սուն Շունապոյի /1037-1101/ բանաստեղծության մի հատվածում է ասված. «Յոսող ջրին կենդանի կրակ է պետք»: Այսուղ «կենդանի կրակ»՝ նշանակում է փայտածուխի կրակը: Երկրորդը՝ կրակը պետք է լինի թույլ, եւ փայտածուխի կրակը համապատասխանում է դրան: Փայտածուխի կրակը շատ ավելի թույլ է լինում, քան մյուս վառելիքներինը: Եվ որ ավելի կարեւորն է՝ այն ավելի է բնական, չի արձակում ծուխ, որն այնպես չեն սիրում թեյի սիրահարները:

Զինաստանում թեյախմնության արարողությունում կա չորս սկզբունք. գույնը, հոտը, համը եւ ձեւը:

Առաջինը՝ հարկավոր է հետեւել գույնին: Թեյի տարրեր սորտերը՝ սեւը, կանաչը, սպիտակը /որի տերեւները պատված են փափուկ ու թափանցիկ աղվանազով/, ուլունը եւ մուգն ունենում են տարրեր էլ գույներ: Մարդիկ տարրեր ճաշակ ունեն թրմած թեյի գույնի նկատմամբ:

Կանաչ թեյը պետք է թարմ լինի, եւ լավագույն կանաչ թեյը հավաքում են գարնանը: Կամ մինչեւ Ցինմին տոնը, կամ էլ Բերքի անձրեւի օրը, որը սովորաբար համընկնում է ապրիլի 19-ին, 20-ին կամ 21-ին: Մարդկանց դուր է գալիս այդպիսի թեյը, որովհետեւ նրա տերեւները նուրբ են, թարմ ու կանաչ դեղինի նրբերանգով: Եթե նման թեյը լցնես ապակե բաժակի մեջ՝ թափանցիկ կերեւա: Ուլուն թեյը մուգ դարչնագույն է լինում եւ հաղորդում է

կարեւորության ու առանձնության զգացողություն: Այն հարկավոր է թրմել թեյամանում: Երբ լցնում ես բաժակի մեջ՝ մուգ ոսկեգույն է երեւում:

Երկրորդը՝ հարկավոր է ուշադրություն դարձնել բուրմունքին: Լավ թեյը պետք է ունենա իր լավ բույրը: Չինացիները բուրմունքը վայելելու երեք միջոց գիտեն. տերեւները բաժակի մեջ գցելուց անմիջապես հետո հոտ քաշել նրանից, երբ թեյը հայտնվել է բերնում՝ այն փորձել լեզվով ու գնահատել սրտով՝ որպես անմոռանալի բուրմունք, մի ակնթարթ պահել բերնում՝ թարմ շնչառությունից հաճույք քաղելու պես:

Երրորդը համն է: Խոսելով համի մասին, առաջինը, որ կնշեն թեյի սիրահարները, թեյի դառնությունն է, որը ցանկացած սորտի թեյի համի ամենակարեւոր տարրն է հանդիսանում: Թեյին բնորոշ է նուրբ դառնությունը, որը մեկ կումից հետո վերածվում է քաղցրի: Այդ պահին թեյի դառնությունը դադարում է, եւ սկսվում՝ քաղցրությունը:

Չորրորդը ձեւն է: Օգտագործման ժամանակ կարեւոր է տերեւների ձեւը, հատկապես՝ կանաչ թեյի: Օրինակ՝ մշուշով հավաքած «Լունցզին» թեյի նուրբ տերեւները բարձրանում են տաք ջրի մակերեսը, հետո դանդաղ բացվում, ճգվում եւ իջնում հատակ: Այդպիսի թեյը սպիտակ գավաթիկի մեջ հիշեցնում է տերեւների հրաշալի պար: Մեկ այլ օրինակ կարելի է համարել «Լյուան Գուայանը». այս թեյի յուրաքանչյուր տերեւիկ ոլորվում կուչ է գալիս վերեից, նրա գույնը բաց կանաչ է:

Տաք ջրում տերեւները հիշեցնում են լոտոսի տերեւներ, ու դրա համար նման թեյը շատ է սիրված չինացիների կողմից:

Լավ թեյը գույնի, բուրմունքի, համի ու ձեւի համատեղվածությունն է եւ գնահատման ժամանակ համբերության կարիք ունի: Դրա համար էլ չինացիները «թեյ խմել»-ու փոխարեն ասում են «թեյ ընբոշխնել»: Ցանկացած շտապողականություն այդ գործում արգելք է համարվում:



*Տեսարան Լառշեի
թեյի տան
«Երախտագիտություն
թեյին»
արարողությունից:
Պեկին:*

Թեյզմպումը եւ ժողովրդական սովորությունները

Թեյզմպումը չինացիների շրջանում տարածված վաղեմի սովորություն է եւ բազմաթիվ միջոցներով շատ կապված է նրանց կյանքի հետ: Այն ոչ միայն բարձրացնում է միտքը, այլև կյանքին բանաստեղծականություն է հաղորդում:

Վերիիշելով Յարավ-արեւմտյան Միության Կունմինի հալսարանում իր ուսանողական տարիները, Զինաստանի արդի բանաստեղծ Վան Ցգենցին /1920-1997/ հիշատակել է իր մի բանաստեղծությունը, որ գրել է համալսարանին մերձ թեյատան պատին.

*Այն լավ ու հեռու օրերում անխոս
հորս հետեւից գնում թեյատուն
եւ մուտքի առջեւ ավազին նստում,
ծովախեցիով խաղում էի ես:*

Վան Ցգին հավատում էր, որ դա շատ «ճշմարտացի բանաստեղծություն» է: Նեղինակը նկարագրում է դեպի թեյատուն իր մանկական «արշավ-ները» հոր հետ: Թեյատան մուտքի մոտ նա խաղում էր խեցիով ու ավազով: Ինչպիսի երջանիկ ժամանակ է եղել դա: Բանաստեղծությունը լիովին հագեցած է նուրբ ու հուզիչ հուշերով եւ խորը պոետական ճաշակով:

Զինաստանի ժողովրդական սովորություններից շատերը կապված են թեյի հետ: Օրինակ՝ հարսանեկան արարողությունը: Թեյի ծառերը աճում են սերմերից, եւ կտրել դրանք հեշտ չէ, դրա համար էլ նորապսակները, սովորութիւն համաձայն, թեյի սերմեր են ցանում՝ խորհրդանշելով սիրո հավատարմությունը: Նշանվելու արարողությունը Զինաստանում կոչվում է «թեյի արարողություն», որն այսօր էլ դեռ տարածված է երկրի մի շարք վայրերում:

Թեյին նվիրված են շատ երգեր: Սուն հարստության բանաստեղծ Լու Յուի /1125-1210/ հիշատակարանի համաձայն, Զինաստանի որոշ տեղերում երիտասարդ տղաները հաճախ էին երգում. «Զահել աղջիկ, որ նույնքան գեղեցիկ եք՝ որքան թեյի տերեւը, /Չէի՞ց ցանկանա ինձ հետ թարմ թեյ ընպել»: Երգի մեջ գեղեցիկ աղջիկը համեմատվում է թարմ թեյի տերեւի հետ: Այդ ձեւով երկրպագուն արտահայտում է իր սերմ աղջկա նկատմամբ եւ նրան հրավիրում թեյի:

Թեյզմպումը սիրո զգացման հետ կարող է լիքը լինել շատ ռոմանտիկ ու գեղագիտական տարրերով: Ցին հարստության /1616-1911/ գոռղ Պու Սուն-լինի /1640-1715/ «Լյառ Չժայի տարօրինակ պատմությունները» /Լյոչժայ չժիի/ կարծ պատմվածքների ժողովածուի մեջ կա Վան Գուեյանի եւ Յունյանի սիրո պատմությունը: Եղբ երիտասարդ Վան Գուեյանը երազում այցելում է Յունյանի տուն, նրա առջեւ հայտնվում է «ծաղկած մետաքսի ծառի» պատկերը, որը նա նկարագրում է ժողովրդական երգում.

*Տունս գտնվում է Պանտո գետի մոտ,
Արի, թեյ ըմպենք, սիրելիս,
Պատ ու ծղոտե տանիքի միջեւ
Ու ծաղկած ծառի առջեւ մետաքսի:*

Մետաքսի ծառն ու թեյընպումը խորհրդանշում են սերն ու ամուսնությունը: Այդ երկու կերպարով ռոմանտիկ երգն ավելի է կենդանի եւ բանաստեղծական հնչում:



28. Բնակելի շենքերն ու ծառուղիները

Զինաստանը հսկայական տարածքի տեր երկիր է՝ բազում սովորություններով հանդերձ, որոնք հաճախ քանակությամբ ժողովրդական ճարտարապետական կառուցքների երեւան գալուն: Այս գլխում մենք քննության կառնենք ճարտարապետական չորս ոճ. սրբեյուանը՝ Պեկինի ներքին բակերը, հին քաղաք Լիցզյանը Յունանում, բնակելի շենքերը Անխուեյ լեռնային գավառում եւ հին քաղաք Սիտանը՝ Յանցզի գետից հարավ: Այդ շինություններից յուրաքանչյուրը հազվագյուտ է ու միաժամանակ արտահայտում է չինական ոճերը բնակչինարարությունում:


Սրբեյուանը Պեկինում

Ճարտարապետական ոճերը ներքին բակերի տեսքով առկա են Զինաստանի եւ հարավում, եւ հյուսիսում: Յունանում ներքին բակերը հայտնի են իրենց սպիտակ պատերի, սեւ կղմինդրի, զանազանագույն զարդակարների, քարի եւ աղյուսի վրա փորագրության ու թանձր կանաչ զարդանախշերի վայելչագեղությամբ: Պեկինի ներքին բակերը ներկայացված են քաղաքի խորհրդանշից հանդիսացող սրբեյուանի կառուցքներով:

Պեկինի սրբեյուանի տարբերիչ առանձնահատկությունը բակն է, որը չորս կողմից ծածկված է շենքերով ու դեպի փողոց տանող միակ դարպասով: Եթե կան պատուհաններ՝ ապա միայն հարավային շենքի հարավային մասում, գետնից բավականին բարձր: Դարպասը փակվելուն պես այդ առանձնահատկությունը կառուցքը վերածում է առանձնացված աշխարհի:

Սրբեյուանը որպես Պեկինի կառուցքների գլխավոր ոճ՝ առաջին անգամ երեւան է եկել Յուան հարստության /1206-1368/ օրոք, երբ Պեկինը դարձել է Զինաստանի մայրաքաղաքը: Այն ժամանակվա քաղաքային դիզայնի համաձայն՝ բնակելի շենքերի շինարարությունում կար ներքին բակերի առկայության պահանջը, որոնք միանալով: Կազմում էին ծառուղիներ ու բլոկներ: Թեեւ յուրաքանչյուր կառույց անկախ էր, ներքին բակերը կազմում էին քաղաքային բնանկարի հիմնական մասը: Յետագայում երեւան եկան փակ

բակերի ոճերը, ինչը համապատասխանում էր տեղանքի աշխարհագրական առանձնահատկություններին: Պեկինում՝ մեծ քաղաքում եւ տրանսպորտային կենտրոնում, կային պատկառելի քանակությամբ վերաբնակեր: Անվտանգությունն ուշադրության առնելու կարեւոր գործոն էր: Ներքին բակերն իրենց ամուր պատերով, փակ դարպասներով ու բարձր պատուհաններով հարմար էին դրա համար:



Չույխուա դարպասը սըխեյուանում:

Պեկինում գարնանը հաճախ են ավագահողմեր լինում, ձմռանն էլ՝ ցուրտ քամիներ: Պատուհանների նվազ քանակությունն օգնում էր քամուց պաշտպանվելուն: Ներկայումս շատ սըխեյուաններ քանդված վերացված են, իսկ նրանց բնակիչները՝ տեղափոխված բազմահարկ շենքեր: Սակայն ցուրտ գիշերներին եւ քամու վայոցի տակ մարդիկ հաճախ են մտաքերում իրենց խաղաղ բակերը, որոնք հարմարավետ կացարան են եղել իրենց ու նախնիների համար:

Սըխեյուանի ներքին բակերը շատ հավաք էին: Բակի հիմնական դարպասի մուտքն անցնելուց այցելուի առջեւ հայտնվում է չույխուա կամ ներքին դարպասը՝ ծածկված դեկորատիվ տանիքով, որից կախված են փորագրությամբ պատված չորս սյուներ: Ներքին

դարպասը տանում է դեպի բակը՝ կառույցի կենտրոնը: Նրա դիմաց գլխավոր տունն է, որին երկու կողմից սենյակաշար է հարում: Սենյակների բոլոր դռները բացվում են բակի վրա: Բակում կարելի է տեսնել ջրավազան՝ ոսկե ձկնիկներով եւ տարբերազան բույսեր ու ծառեր, սալորենիներ, արմավենիներ, չինական խնձորենիներ, նուենիներ, դափնեվարդեր, չինական թիթեռնածաղիկներ: Այդպիսով, բնակիչները կարող են գարնանը վայելել ծաղիկների, ամռանը՝ զովի, աշնանը՝ բերբ-բարիքի հաճույքը: Ինչպես նկատել է ժամանակակից չին գրող Յու Դաֆուն /1895-1945/, «հաճույք՝ ամեն օր, կլոր տարին»:

Ներքին բակերը եղել են ոչ միայն բուրումնալից ծաղիկների ու կենդանի բույսերի, այլեւ՝ մեծ ընտանիքի ներդաշնակ աշխարհ: Սըխեյուանը սովորաբար պատկանել է մեծ ընտանիքի մի քանի սերունդների: Նրանք սենյակներում ապրել են՝ հարգելով ու սիրելով մեկը մյուսին, հոգալով միմյանց մասին: Անկախ նրանից, թե դարպասներից այն կողմ ինչ է կատարվում, ընտանիքում միշտ եղել է գարուն, եղել են ջերմություն ու սեր, անդորր ու հանգստություն՝ ողջ ընտանիքի համար:

Հետագայուն սըխեյուանում ապրել են տարբեր ընտանիքներ, բայց դրանից չեն տուժել լավ որակները: Ընտանեկան լավ մթնոլորտ է տիրել եւ այդ ընտանիքներում, որոնք, ինչպես մեկ մեծ ընտանիք, սատարել են միմյանց, հոգածություն որսեւորել մեկը մյուսի նկատմամբ: Այդ մթնոլորտը մինչեւ հիմա էլ մնում է այն մարդկանց սրտերում, ովքեր երբեւ ապրել են սըխեյուանում:

Պեկինի սըխեյուանը գնահատում են նաեւ նրա արվեստի համար: Սըխեյուանի յուրաքանչյուր դարպաս արհեստականորեն զարդարված է փորագրությամբ ու զարդանկարներով: Արվեստի նման աշխատանքը, ներառյալ՝ դարպասներն ամուր պահող քարե սյուները, ցույց են տալիս տեղի եւ գույնի «կառավարման» խնդրում չին վարպետների հազվագյուտ որակները: Չույխուա դարպասի տանիքից կախընկա սյունիկներն ու փորագրությամբ պատված սյուները ներկայացնում են հազվագյուտ արվեստ: Այդ դարպասի դիմացի փակապատնեշը, որը միշտ պատված է լինում փորագրություններ ունեցող յուրատիպ այսուսիկներով, նյութ է ծառայում երեւակայության համար: Սարդիկ գնահատում են սըխեյուանը, որովհետեւ դրանցից յուրաքանչյուրն արվեստի աշխարհ է, որը գեղեցկություն է գումարում կյանքին:

Սըխեյուանի կարեւոր առանձնահատկությունն է բնության հետ նրա ներդաշնակությունը: Զնուանը դեպի հարավ նայող սըխեյուանի վրա են ընկնում արեւի ճառագայթները, իսկ ամռանը՝ զով քամին: Յյուսիսային կողմից տունը գտնվում է լավագույն դիրքում՝ ստանալով բակի ամենալավ էներգիան: Դարպասները բացվում են դեպի հարավ-արեւելք: Բակ մտնելու համար հարկավոր է շրջանցել աղյուսե կամ քարե պատը՝ դարպասի դիմաց: Եթե անգամ դարպասները բաց են, փողոցի անցորդները չեն տեսնում, թե ինչ է կատարվում բակի ներսում: Այդ ծածկը միաժամանակ ուղիղ քամուց պաշտպանում է եւ բաց դարպասի դեպքում, ինչպես նաեւ տարբե-

րազանություն է հաղորդում բակի խիստ հատակագծին: Միջանցքներն իրար են կապում սենյակները, բնակիչներին էլ անձրեւի ու ձյան ժամանակ ապաստան տալիս: Քանի որ տան հարավային մասն ամռանը խիստ տաքանում է արեւից, սըխեյուանը կազմված է շարք կազմած երեք բակերից: Սըխեյուանը սովորաբար արեւնուտքից արեւելք է կառուցված լինում եւ ավելի երկար՝ հարավից-հյուսիս. դա նվազեցնում է արեւից ուժեղ տաքանալու վտանգը:


Սըխեյուանը չափազանց ստեղծագործական բնակելի կառույց է մարդկանց համար, որտեղ ուշադրություն է դարձված բնության «բնավորությանը», եւ օգտագործված են նրա շահերը: Դա բնության հետ մարդու ներդաշնակ համակեցության լավ օրինակ է:

Դին քաղաքը Լիցզյանում

«Հավագույն վայրը, որտեղ արեւի ճառագայթներն ընկնում են Ցզյանտանի վրա, արեւելքում է, եւ ամենագեղեցիկ վայրը մարդկային աշխարհում Շանգրիլան է՝ Նայզի գետի մոտ». այսպես է ասուն Յուննանի գեղեցիկ բնանկարը նկարագրող տիբեթյան ժողովրդական երգը: «Շանգրիլա» անվանումն առաջին անգամ երեւան է եկել 1933 թվականին՝ անգլիացի գրող Ջեյմս Ֆիլքրոնի /1900-1954/ «Կորսված հորիզոն» վեպում: Այն հավերժական երջանկության վայր է՝ մեկուսացված արտաքին աշխարհից: Ներկայումս Շանգրիլա բառն զուգորդվում է երկրագնդի վրա ցանկացած դրախտային վայրի հետ: Տիբեթցիների երգում Շանգրիլան հանգստության վայր է՝ ձյունածածկ լեռնային բարձունքներով, անարատ անտառներով, հոյակապ լճերով, ընդարձակ մարգագետիններում արածող չարածի կենդանիներով: Դրախտային վայր է հիշեցնում եւ Յուլուն ձյունածածկ լեռնապարի ստորոտում գտնվող Լիցզյան հին քաղաքը, որը կառուցվել է 13-րդ դարի երկրորդ կեսին: Անցել է ավելի քան 800 տարի, իսկ այն էլի նույն գեղեցիկ տեսքն ունի: Այնտեղ ապրել են Նասիի, տիբեթցիների, Բայի, իի եւ Խանի սերունդները:

Դինավուրց Լիցզյանը գեղեցիկ է՝ ինչպես Յուլուն լեռները եւ խորհրդավոր ու հանգիստ՝ ինչպես Շանգրիլան: Տիբեթի լեզվով Շանգրիլա՝ նշանակում է «սրտի արեւ եւ լուսին»: Այդ վաղնջական քաղաքն իրապես հանդիսանում է նաև ժողովրդի արեւն ու լուսինը:

Մարդկանց ու բնության միջեւ ներդաշնակությունը եղել է հնագույն քաղաքը կառուցողների բարձրագույն ծեռքբերումը: Երեք կողմից բարձր լեռներով շրջապատված Լիցզյանը մի քանի հազար բնակիչների համար հարազատ տուն է: Բոլոր շենքերն այնտեղ նայում են դեպի հարավ՝ բնության պարզեւ արեւի ճառագայթներն ստանալու համար: Տեղիս մարդիկ փողոցներում ծառեր են տնկում, իսկ տանն աճեցնում ծաղիկներ: Եթե ամառային վաղ առավոտյան քայլես նրա փողոցներով, ապա յուրաքանչյուր անկյունում կարող ես վայելել քարմ ծաղիկների բուրմունքը:



Դանգստության տեսարան
Լիցզյանում:

Ի տարբերություն այլ քաղաքների՝ այստեղ չկան ոչ լայն փողոցներ, ոչ դրոշակի հատակագիծ: Թվիւմ է, թե ամեն ինչ բնության կամքով է արարված՝ ազատ ու անարատ: Քաղաքը դրսի կողմ է տարածվում առանց դույզն ինչ կանխորոշված կարգի: Այն խաղողայգու ազատ վազերի նման դեպի վեր է ձգվում ու զարգանում ազատ՝ ենթարկվելով միայն բնության ուժին:

Լիցզյանում ազատություն է արտահայտում եւ ջրային համակարգը: Քաղաքի ողջ գոյությունը կախված է ջրից, իսկ Լիցզյանում ջրերը հոսում են ամենուր: Նրա հյուսիս-արեւելքում գտնվում է Սեւ Վիշապի արհեստական լճակը, որտեղ հավաքվում է լեռնային բարձունքների հալչած ձյունը: Լճակից ջուրը հոսում է դեպի յուրաքանչյուր նրբանցք եւ տուն՝ նեղ փողոցների երկարությամբ: Փողոցներն ու նրբանցքները դարձուարձվում են առվակների հետ: Տները կառուցված են ջրից վեր, դրա համար էլ ջուրը հոսում է յուրաքանչյուր տան մոտով: Քաղաքն ունի տարբեր չափս ու ձեւի շուրջ հարյուր կամուրջ. քարե կամարաձեւ եւ քարե հարթամեջք կամուրջներ, կամուրջներ սայլակառքների համար, փորագրություններով կամուրջներ, նեղ առուների համար կամուրջներ: Վերջիններս մարդ կարող է անցնել մեկերկու քայլով, դրանք թվում են ոչ գործնական եւ կառուցված, այսպես ասած՝ ոչ այնտեղ... թեեւ նույնպես հետաքրքրություն են հաղորդում շրջակա բնանկարին:

Չին Լիցզյանի կենտրոն Սըֆան փողոցն իրականում փոքր իրապարակ է: Այստեղից շատ փողոցներ են ծայր առնում ու տարածվում տարբեր ուղղություններով, իսկ հետո միանում նրբանցքներին: Քաղաքն իր փողոցներով մեծ տերեւ է հիշեցնում, որի երակները ձգվում են թափանցիկ առվակների երկարությամբ՝ դեպի առաջ անվերջ ընդյանվելով: Բոլորը, փողոցի կենտրոնից սկսած, պատված են գունավոր քարերով:

Փոքրիկ կամուրջ
Լիցայանում:



«Շարքով երեք տներ ու մեկ պատճեշ»։ Նախկինում այսպես են նկարագրել նասի ժողովրդի բնակելի կառույցները։ Մուտքից ներս՝ նորից արգելապատ, նրա հետեւում՝ գլխավոր սենյակները, որոնցում ապրում են տարբեցները։ Այդ սենյակները նայում են դեպի հարավ։ Ցածում սենյակները տեղադրված են հարավի եւ արեւմուտքի կողմում, դրանցում էլ երիտասարդ սերունդն է ապրում։ Բակը սովորաբար պատված է աղյուսներով կամ քարերով։ Որոշ մասերում տեղ է թողնված բույսեր ու ծաղիկներ աճեցնելու համար։ Քիվերը կիսածալված են, իսկ տանիքները սովորաբար կտրուկ զարիթափի ծեւ ունեն, ինչը կենդանություն է պարգևելուն ճարտարապետական խիստ ոճին։

Լիցայանում բնակելի կառույցները սովորաբար կազմված են առջեւի ու հետեւի, կամ էլ կողք-կողքի գտնվող, բակերից։ Դա տարածության զգացնություն է հաղորդում։ Կլիման կլոր տարին բավականին հաճելի է, որա համար էլ բնակիչները սիրում են հանգստանալ փողոցում, ընթել պատիոյում եւ հյուրեր ընդունել։



*Յուննան գավառի
Լիցզան քաղաքում
տաճարի քիվերը՝ թեւերի
տեսքով:*

Անխուեյի սպիտակ պատերն ու սեւ կղմինդրը

Անխուեյ հարավային գավառում սպիտակ պատերով ու սեւ կղմինդրե տաճարներով բնակելի համայինները կանգնած են կանաչ դաշտերի եւ փարթան սարերի շրջանում: Ժողովրդական արվեստի թանգարաններ անվանվող այդ կառույցները հանդիսանում են Յանցզի գետից հարավ գտնվող մեծ ու փոքր գյուղերի խորհրդանիշը: Առաջին հայացքից դրանք կարող են այնքան էլ հետաքրքիր չքվալ, բայց մի անգամ ոտք դնելով այնտեղ՝ զգում ես այդ սեւ-սպիտակ աշխարհի պարզության ու մաքրության հատուկ գեղեցկությունը: Կանաչ սարերի եւ թափանցիկ ջրերի պաստառին նրանց ուրվագծերն արտահայտված են աղոտ: Գետերը ձգվում են դեպի հեռուն ու խառնվում կանաչ գույնին: Ամպերով պատված անպարզ սարերը մերվում են հեռվին: Այդ ամենը վերածվում է հովվերգական առկայժուն աշխարհի:

Անխուեյ հարավային գավառում պահպանված ավանդական բնակելի շենքերը կառուցվել են Մին /1368-1644/ եւ Ցին /1616-1911/ հարստությունների օրոք: Նրանցում հատուկ ուշադրություն է դարձվել հազվագյուտ ճարտարապետական ոճին: Խիստ հատակագիծ եւ փորագրությունների առատություն: Այսօրվա վրա առկա են 45 լավ պահպանված գյուղեր եւ ավելի քան 7000 վայրերում մեծ թվով արժեքավոր հին տներ: Սիդին, Խունցունն ու Չենկանը միավորել են՝ խուեյչժուի ժողովրդական արվեստի հսկա թանգարանի ստեղծման համար:

Սիդին Խուեյչժուի կառույցների ոճով ամենավաղ բնակավայրն է, եւ ամենավաղ համայնքը՝ ստեղծված Խու ընտանիքի կողմից: Այստեղ տեղադրված գլխավոր շենքերից մեկը Լուֆու դահլիճն է՝ կառուցված 1691 թվականին, փորագրական բազմաթիվ աշխատանքների առկայությամբ:

Դահլիճի ներսի կահավորանքն ընտրված է խնամքով եւ ջերմ է ու նրբին: Այս տաճան զգացվում է գիտական ճաշակը: Ինչպես պատմվում է այնտեղ կախված երկտող բանստեղծություններում՝ մարդիկ պետք է լավ սովորեն, ազատություն պարգևեն իրենց զավակներին եւ աշխատեն ջանասիրաբար: Բոլոր մակագրությունները հուշում են, որ տաճտերը եղել է կոնֆուցիոնականության կողմնակից:

Բնակելի տաճ
դահլիճ:
Խուեյչժոու,
Անխուեյ
գավառ



Զբոսանքը խաղաղ ծառուղիներով մեծ բավականություն է պարգեւում: Խուեյչժոուի ոճով շինության կազմության առանձնահատկությունը կարելի է համարել քարապատ ծառուղիները՝ ձիու գլխի նման գագաթներով բարձր ու սպիտակ տանիքների կամ պատերի շրջապատման մեջ: Գյուղերում ապրում են ընտանիքների սերունդներ, որոնք կրում են նույն ազգանունը: Տների խտությունը շատ մեծ է, եւ մեծամասնությունը կառուցված է փայտից: Դրա համար էլ պատերն ու տանիքները բարձրացված են՝ իրդեհից պաշտպանելու համար: Պատերի տանիքները տարրեր չափսեր ունեն ու ելունդածածկ են, ինչը թրչչի զգացողություն է հաղորդում: Շարժականության այդ զգացումը հնչականություն է տալիս հոծ գյուղին: Բարձունքում կանգնած կարելի է դիտել գյուղի համայնապատկերը. դեպի վեր միտված բարձր ու սպիտակ պատերը կենսականորեն ուժեղ են երեւում:

Տյանցգինը /կամ՝ բակը/ եւս խուեյչժոու ոճի կացարանի առանձնահատկությունն է: Այն սովորաբար երկու բակից է կազմված. մեկը՝ դրսում, մյոււսը՝ ներսում: Խուեյչժոուի բնակիչները ներքին բակը կոչում են տյանցգին, որը նշանակում է հաջողության կուտակման տեղ, քանի որ, նրանց կարծիքով, այն իր վրա է առնում ջուրն ու էներգիան: Դրա համար էլ հարուստ ընտանիքները տունը կառուցելու ժամանակ մեծ ուշադրություն են հատկացնում ներքին բակին: Ներքին բակի պատերն ու քիվերը յուրատեսակ ծագար են կազմում, եւ այդ պատճառով անձրեւն ու հալչող ծյունը հայտնվում են ուղիղ բակում: Այդ ներքին բակերը ապաստան են այն բնակիչների հա-

մար, ովքեր աճեցնում են ծաղիկներ, հաճույք են ստանում ակվարիումի ձկներից եւ սիրում են ունկնդրել անձեւի ձայնը:

Տեղացիների համար ջրի համակարգը շատ կարեւոր է: Կարեւոր է հատկապես այն շինությունների համար, որոնք կառուցվել են խուեյչժոու ոճով՝ լեռների ստորոտներում: Խուեյչժոուի բնակիչները հարցը լուծել են՝ աղբյուրի ջուրը հասցնելով ամեն տան: Խունցուն գյուղը, որն աշխարհի մշակութային ժառանգությունների ցուցակ է մտցված, հայտնի է իր ջրային համակարգով: Այդ գյուղում ապրում են մի քանի հարյուր ընտանիքներ: Գյուղի տեսքը հիշեցնում է ցուլի: Չուրը հոսում է սարերից, ապա գալարվելով քարերի եւ կամուրջների միջով, հասնում տերին եւ, ի վերջո, Լուսնային կոչվող արհեստական լճակը: Այնտեղ զտվելով՝ հոսում է գյուղից դուրս ու հեռվի ցածում թափվում Հարավային լիճը: Այդ դեպքում առուները խորհրդանշում են ցուլի աղիքները, լճակը՝ ստամոքսը, լիճը՝ որովայնը: Դա շատ հետաքրքիր դիզայն է ջրային համակարգի համար:

Սիտանը խաղաղ ջրի աշխարհ է

Յանցգի գետից հարավ ընկած բնակավայրերը հայտնի են իրենց հանդուգն ու նրբագեղ ոճով եւ տարբերիչ առանձնահատկություններով: Յին քաղաք Սիտանը նման բնակավայրի օրինակ է: Այն գտնվում է Յօյասինում /Շմեցյան գավառ/, Շամհայի եւ Խանչժոուի միջեւ: Այդ հինավուրց ու փոքր քաղաքը կարող է պարծենալ իր երկար պատմությամբ: Ի սկզբանե կառուցվել է Գարնան եւ Աշնան /մ.թ.ա.770-476/ ժամանակաշրջանում՝ Ու եւ Ցուե ենթագավառների սահմանին: Քաղաքն այժմյա տեսքն ունեցել է եւ Սուն հարստության /960-1279/ ժամանակ: Սիտանի հայտնի կամուրջը՝ Վանցյանը, այդ հարստության թողած ժառանգությունն է: Մին եւ Ցին հարստությունների տիրապետության օրոք Սիտանը դարձել է գյուղմթերքների, մետաքսի եւ խեցեգործական արտադրանքի առեւտրի կենտրոն: Այդ բոլոր ապրանքներն արտադրվում էին մերձակայքում եւ հայտնի էին ամբողջ Երկրին:

Սիտանի բոլոր շինությունները կառուցված են ջրի երկայնքով: Այս հնագույն քաղաքն այսպես են նկարագրում. «Մարդիկ ապրում են ջրի, գետի վրայով ձգված կամուրջների շրջանում, նավակները սահում անցնում են կամուրջների տակով, կրավակները կանգնած են կամուրջների գլխին, եւ նրանց պատկերներն արտացոլվում են ջրում»: Քաղաքում առաջին անգամ գրունողն արագ միախառնվում է այդ արբեցուցիչ բնանկարին:

Սիտանը տեղադրված է Տայխու լճի ափերին, եւ նրա միջով անցնում է Մեծ ջրանցքը: Մինչանց հետ հատվող ինը գետեր են անցնում Սիտանով՝ այն բաժանելով ուր մասի: Ցուրաքանչյուր տուն, ինչպես նաև խանութ, կառուցված է ջրի մոտ: Փողոցներով ու ծառուղիներով գնալու փոխարեն սիտանցիները իրենց հարկավոր կետին են հասնում փոքրիկ նավակներով: Գետակերի երկարությամբ ածում են լացող ուռենիներ ու բազմագույն ծա-

ղիկներ, ջրում խաղում են թռչուններն ու սպիտակ սագերը, ջուրը որոշ տեղերում ծածկված է ճահճածաղիկներով։ Կիսալուսին հիշեցնող՝ տարբեր ձեւ ու չափսի մի քանի հարյուր հին կամուրջներ են ձգված գետերի վրայով։ Ամենախոշորներն են Ուխունը, Ուլունը, Խուանյուն եւ Սունցզըլայֆենը։ Զբոսանքն այդ կամուրջներով թվում է զբոսանք ամպերի փողոցներով։

Սիտանի տների առանձնահատկություններից մեկը նրանց մեկուսացվածությունն է եւ անդրդրը։ Քանի որ այստեղ հողը սահմանափակ է, բնակիչները շենք կառուցելուց առաջ մանրագնին հաշվարկներ են անում։ Նրբանցքներից յուրաքանչյուրը լայնքով մետրից պակաս է, երկարությամբ՝ 100 մետրից ավել։ Այդ պատճառով էլ նման փողոցում կանգնած՝ առջեւում տեսնում ես ամպերի գծերը։ Զբոսնելով քարապատ նրբանցքներով ու լսելով սեփական ոտնաձայները, գգում ես նրանց խորհրդավորությունն ու լրությունը։ Այդ ծառուղիներից ամենահայտնին Քարե դանակի ծառուղին է, այդպես կոչված՝ բարակ ու փայլուն սալիկներով պատված լինելու համար։ Քարե դանակի ծառուղու երկարությամբ կանգնած են քաղաքի երկու ամենահայտնի շենքերը՝ Չժունֆու եւ Ցզունվեն դահլիճները։

Սիտանի հանգստությունն ու առանձնությունը արտացոլված է նաև նրա տներում, որոնք բնակելի շենքերի չինական գեղագիտության կատարելատիպ են։ Յարուսատ բնակիչների մեծ մասը տունն կառուցում է շարք կազմած մի քանի բակերով։ Երեք ներքին բակով շենքերը սովորական բան են՝ այն դեպքում, եթե կարելի է հանդիպել ավելի մեծ կառույցների էլ՝ հինգ կամ յոթ բակով։



Տեսարան Յանցզի գետից հյուսիսից։

Քիչ առաջ նշված Չժունֆու դահլիճում ութ բակ կա. առաջինը՝ դա բարձր դարպասներով, հեսանների վրայի փորագրություններով ու ձգանակներին՝ զարդանկարներով մուտքի դահլիճն է, երկրորդը՝ պորտշեզների համար, երրորդը՝ գլխավոր դահլիճը, չորրորդը՝ ծաղիկների համար, հինգերորդը՝ բնակելի կացարաններն են, վեցերորդը՝ պահեստը, յոթերորդը՝ սպասավորների համար: Յետեւի այգին էլ հաշված՝ այդ կառույցի երկարությունը հասնում է հարյուր մետրի: Նման ճարտարապետական ոճը կարելի է անվանել «մինչ ի ծայր խորություն»:





29. Մարտական արվեստները Եւ Ցուցայույը

Չնուց անտի չինացիները սիրում են սպորտը՝ եւ որպես կազմվածքի ու ինքնազգացողության պահպաննան միջոց, եւ հետաքրքիր ու զվարճալի գրադարձները: Ժողովրդի շրջանում շատ են տարածված այնպիսի մրցությունները, ինչպիսին են «Վիշապ» նավակներով մրցալողը Դուանու տոնի ժամանակ, Ցինմին տոնի ժամանակ՝ Ծլորթին, Երկու իննյակի տոնին՝ Լեռնագնացությունը: Չինացիները սպորտը համարում են կյանքի ընկալման բարձրացուցիչ: Օրինակ՝ զո խաղն ու ճատրակը: Որպես մի երկիր, որտեղ տարրեր մշակութային ավանդույթներ են սերնդե-սերունդ փոխանցվել, Չինաստանում զարգացած են եղել շատ մարզաձեւեր, ներառյալ՝ ցուցայույը /ավանդական ֆուտբոլ/, սումոն եւ մենամարտի այլ ձեւեր, ձիասպորտը, մարտարվեստներն ու ակրոբատիկան: Սպորտի այդ տեսակների թվուն վերջին երկուսը կարելի է կոչել Չինաստանի «հիմաքանչ» վարպետություն:

Մարտարվեստները Շաոլին տաճարում

Երբ մարդիկ խոսում են մարտարվեստների կամ կունֆուի մասին, անպայման հիշում են Բրյուս Լիին /1940-1973/ ու նրա մեծ ավանդը մենամարտությունում եւ դանակախաղում, սրանարտում ու ձողախաղերում: Կունֆուի իր անգերազանցելի ընդունակություններով Լին դարձավ Չինաստանի մարտարվեստների մարմնավորումը: Նրա ապշեցուցիչ տիրապետումը երեք սեկցիաներից բարկացած ձողին անմոռաց տպավորություն էր թողնում հանդիսատեսների վրա: Բրյուս Լիի կունֆուն արմատներով խորապես գնում է դեպի չինական ավանդական մենամարտերը:

Շառլին տաճարը Զինաստանի մարտարվեստների շրջանում հոչակ է վայելում իր տարբերիչ ոճի՝ մշակութային ժառանգության նրբին առանձնահատկության համար: Շառլինը գտնվում է Սունշան լեռան /Խենան գավառ/ վրա: Այն կառուցվել է հինգերորդ դարի վերջին: Բուդդայականության ուսուցիչ Բոդհիհարնան վեցերորդ դարի վերջին եկել է այստեղ ու պատի առջեւ իննամյա մեղիտացիայի միջոցով մշակել Ցեն Բուդդիզմը /Զինաստանում հայտնի՝ որպես Չան/: Դրանից հետո տաճարը հայտնի դարձավ անբողջ երկրին: Յետագա սերունդները նրան էին վերագրում Շառլինի մարտարվեստների հիմնադրումը: Երկար մեղիտացիաների ընթացքում նա մշակել է «ցի» /կամ՝ չի/ ներքին շրջանառության ու մտքի եւ բանականության բուլացմանն աջակցող մի շարք շարժումներ: Երկար տարիների ընթացքում զարգացվել է Շառլինի մարտարվեստների 72 տեսակ: Յեռու բռնցքամարտ, մոտիկ բռնցքամարտ, տիրապետում դանակին ու ձողին, սուսերամարտ, այս ամենը որոշակի հնտություններ է պահանջում: Շառլին տաճարը շատ խոր ազդեցություն է թողել Զինաստանի մարտարվեստների զարգացման վրա:

Շառլինի մանկական կունֆուն լայնորեն հայտնի արվեստ է եւ ճանաչված է մարտարվեստներով զբաղվող շրջանակների կողմից: Այդ ձեւի մեջ մտնում են տարբեր շարժումներ ու դիրքեր՝ ինչպիսին են «քնած արխատը», «Գուանյինին ծնրադրող երեխան», «Բուդդային ծնրադրող երեխան» եւ այլն: Մանկական կունֆուն մենամարտության համեմատաբար բարդ տեսակ եւ փութեռանդ պրակտիկա է պահանջում մանկուց:

Շառլին մենամարտության մեջ կա մի շարժում, որ կոչվում է ցզի մեկ մատով եւ շառլինի գաղտնիքներից մեկն է: Ասում են՝ այդ արվեստի լուծումն ընկած է ներքին կարգապահության մեջ, որը ողջ ուժերն ու էներգիան հավաքում կենտրոնացնում է մեկ մատում: Այդ շարժումը գործածող անձը կարող է առանց դժվարության ոտքերը վեր ցցած կանգնել՝ մեկ մատին հենված:

Արխատ բռնցքամարտը Շառլին տաճարում հիմնադրված բռնցքամարտի տեսակներից մեկն է: Այն մշակել է շարժումների մի քանի համակազմ եւ հավանություն գտել անբողջ երկրում: Այդ մենամարտը գրոհի եւ պաշտպանության համար նուրբ է եւ թեթեւ, ուժեղ է եւ անկանխատեսելի: Երկար ժամանակ այն համարվում է շառլին մարտարվեստներից լավագույնը:

Շառլին մարտարվեստների հիմքում ընկած է պրակտիկան: Նույնիսկ հինա էլ Շառլին տաճար այցելողները կարող են Քազար Բուդդաներ դահլիճում գետնի վրա տեսնել մարզումներից հետո անցած սերունդների թողած մանր անցքերը: Շառլին մարտարվեստների մեջ տարածվածությունը պարտական է նրանց ինաստնությանն ու ջանքերին:

Սահուն մարտ ստվերի դեմ

Կազմվածքի պահպանման համար սպորտի հիմնական տեսակներից մեկը հանդիսանալով՝ տայցօֆի ցյուանը կամ՝ ստվերի դեմ մարտը /աշխարհում հայտնի՝ որպես տայչի չուան/ չինացիների շրջանում շատ է տարածված: Այն ժամանակին եղել է մարտարվեստի տեսակ, բայց քանի որ նրանում միավորված են ինքնապաշտպանությունն ու աջակցությունն առողջությանը, արագ զարգացում է ստացել որպես ֆիզիկական վարժությունների տեսակ: Ստվերի դեմ մարտը կարող է մարդու օրգանիզմում շտկել նյարդային, շնչառական, ուղեղային համակարգերն ու արյան շրջանառությունը, ինչպես նաև հիվանդություններից պաշտպանվելու միջոց ծառայել:

Տայցօֆի /ամենաբարձր սահնակ/ չինական փիլիսոփայությունում մի եզրույթ է, որը, համաձայն Փոփոխությունների գրքի /Իցզին/, Ութ տրիգրամների հիմքն է: Յյուսիսային Սուն հարստության /960-1127/ ժամանակների չին հմաստասեր Չժոու Դունյիի /1017-1073/ հեղինակած «Տայցօֆի դիագրամների բացատրություն»-ում տայցօֆի վերագրում են աշխարհում ամեն ինչի աղբյուրին: Տայցօֆի մի շրջան է, որտեղ տեղադրված են ինն ու Յանը: Ստվերի դեմ մարտն ստեղծվել է այդ հիմքի վրա:

Շրջանաձեւությունը ստվերի դեմ մարտի կարեւոր առանձնահատկություններից է: Ստվերի դեմ մարտի կատարումը օդում շրջանների եզրագծումն է վերստին ու նորից: Ստվերի դեմ մարտի լավ ներկայացման ամենակարեւոր հատկանիշը սահունությունն է եւ կլորությունը: Երկնքի ու Երկրի շուրջը շրջանառվում է Երկնային էներգիան՝ այն դեպքում, եթե մարդկային մարմնի ներսում շրջանառվում է կենսական էներգիան: Ստվերի դեմ մարտը շարժումների, ցատկերի, թեքումների ու շրջադարձների միջոցով նկարում է կյանքի շրջանները՝ էներգիայի արտաքին շրջանները վերածելով ներքինի:

Ստվերի դեմ մարտի մյուս առանձնահատկություն կարելի է անվանել ինը յանի փոխարկվելու միջեւ սահուն օիքմը, ինչը համապատասխանում է տայցօֆի՝ ինի ու յանի հերթագայվելու, ներլցվելու եւ փոխանակվելու փիլիսոփայությանը: Յիմնվելով դրա վրա, ստվերի դեմ մարտն ընդգծում է կարծրի ներլցվող փոխարկումը փափուկի, եւ արտահայտում է Տիեզերի մշտական փոփոխությունները՝ նուրբ ու ճկուն, հավասարաչափ ու դանդաղ շարժումներով: Ընդհանուր առմամբ, ստվերի դեմ մարտը ցույց է տալիս ճախրող ամպերի եւ հոսող ջրի գեղեցկությունը: Իր զարգացման ընթացքում այն իր մեջ ներառել է չինական ավանդական բժշկության եւ դառնականության կառավարման գաղափարի տարրերը: Ստվերի դեմ մարտն արտաքինի ու ներքինի համակցումն է, մարդիկ դրանով զբաղվում են առողջական վիճակի բարելավման, շնչառության մեջ սահունության հասնելու եւ բանականության հանգստության համար: Ստվերի դեմ մարտով զբաղվելիս հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել բերնով շնչառությանը: Քեզնից դեպի դուրս շարժման ժամանակ թարմ օդը ներս շնչել

քրով, իսկ կատարելով շարժում դեպի քեզ՝ արտաշնչել: Դրա համար էլ մարդիկ սիրում են ստվերի դեմ մարտով գրաղվել առավոտյան:

Ե՛վ ստվերի դեմ մարտը, եւ շառլին մարտարվեստներն ունեն ինաստասիրական խոր նշանակություն: Նրանք իրենց մեջ մարմնավորում են չին ժողովրդի հազվագյուտ ինաստնությունը, արտացոլում չինական մշակույթի իսկականությունը:

Մարտարվեստներ սրտից

Շարժունության եւ անշարժության վերահսկողությունը Զինաստանի մարտարվեստների առանձնահատկություններից մեկն է: Օրինակ՝ ստվերի դեմ մարտը վայելչագեղության ու հանգստության գացում է հաղորդում՝ ընդգծելով փոփոխությունները հանգստության մեջ: Զբաղվելով տայցգի ցյուանով՝ սկզբում հարկ է ուղղել մարմինը, փակել աչքերը, պահել էներգիան, ցած թողնել ձեռքերը, հեռու վաճել ամբողջ հուզմունքն ու անհանգստությունը, հետո արդեն սկսել մարզումը: Ստվերի դեմ մարտը մարզում է շնչառության հավասարությունը եւ բանականության անդորրը, եւ ինչպես ասում են մարդիկ՝ «հավերժ փոթորկվող օվկիանոսի գացում է հաղորդում»:

Շառլին դինամիկ մարտարվեստները նաեւ ընդգծում են շարժունության ու հանգստության համակցությունը: Ինչպես ասված է երգում՝ «պառկել՝ ինչպես սոխմը, կանգնել՝ ինչպես արմավենին, նստել՝ ինչպես զանգակը եւ քայլել՝ ինչպես քամին»: Շառլին մարտարվեստների լավագույն հատկությունը շարժումների միասնությունն է եւ Զեն Բուդդիզմը, որին կարելի է հասնել լուր աղոթքի միջոցով: Մարտարվեստների պարապմունքից առաջ հարկավոր է նստել լռության մեջ՝ հասնելով հանգստության եւ էներգիա հավաքելով, ու լոկ դրանից հետո դանդաղ կանգնել՝ ազատված աշխարհիկ հոգսերից: Շառլին մարտարվեստները նկարագրում են որպես «դատարկությունից կամ անհոգիությունից եկողներ»: Դա բանականության մարզում է եւ շարժունության ու անշարժության միավորում:

Զինական մարտարվեստների մյուս կարեւոր տարրը փափուկ պաշտպանությունն է ուժեղից: Օրինակ՝ Շառլին մարտարվեստով գրաղվողը պետք է ցատկի, վայրէջք կատարի, հարձակվի, նահանջի, ետ շրջվի եւ այլն՝ ուղիղ գծի վրա: Դա արվում է ներքին ներուժի ժողովնան նպատակով: Դարձակվողը մեծ արագությամբ եւ ուժով ուղիղ հարվածում է հակառակորդի կենսականորեն կարեւոր մասերին: Որոշ մարդիկ շառլին մարտարվեստները նկարագրում են որպես «նրբագեղ՝ ինչպես կատուն, եւ կատաղի՝ ինչպես վագոր, շարժվող՝ ինչպես վիշապը, կտրուկ՝ ինչպես կայծակը որոտի ձայնի հետ»: Թեեւ ստվերի դեմ մարտը տեսողականորեն կտրել է միացումն էներգիայի ուղիղ գծի հետ: Ստվերի դեմ մարտը, որ նաեւ կոչվում է «ճկուն ձեռքեր» կամ «բամբակե շրջաններ», նուրբ արվեստ է: Այն ասես դանդաղ ու հմայիչ պար է, որը դանդաղ սկսվում՝ դանդաղ էլ ավարտվում

է, թեև գրաղվողներն արդյունավետ ինքնապաշտպանության համար երբեմն սկսում են անսպասելի գրոհի դիմել: Դրա համար էլ մարդիկ ստվերի դեմ մարտը համեմատում են ջրի հետ՝ նուրբ, բայց ուժեղ:

Չինական մարտարվեստներն ընդհանրապես մենամարտերի տեսակ են ինքնապաշտպանության համար, որտեղ հարձակումը գլխավոր նպատակը չէ: Չառլին մարտարվեստների երեք նպատակներն են տաճարի պաշտպանությունը հարձակվողներից, ինքնապաշտպանությունն ու կազմուծելի պահպանումը՝ ոչ թե ուրիշների վրա հարձակվելը: Չինաստանի ռազմական տեսության եւ չինական մարտարվեստների առանձնահատկություններից մեկը միայն անելանելի իրավիճակում ուժին դիմելն է: Չառլին տաճարի պատգամներից մեկն ասում է. «Բարքերդ պահիր հարգանքի մեջ՝ եւ ոչ թե ուժի»: Դրա ապացույք կոնֆուցիոնականության «բարյացականության» կոնցեպցիայի եւ «չիարձակվելու» սկզբունքի միավորումն է: Եթե անհրաժեշտ լինի ուժի կիրառում, շառլին մարտարվեստներում կա «ութ մի»: Այդ սկզբունքներն են. մի՛ հարձակվիր տաճարների վրա, մի՛ գրոհիր կրծքի վրա, մի՛ խփիր փափուկ կողերին, մի՛ խփիր անութափոսերին, մի՛ խփիր ինտիմ տեղերին, մի՛ խփիր գոտկատեղին, մի՛ խփիր աճուկին, մի՛ խփիր ականջակոնքին: Մարմնի այդ մասերը շատ են նուրբ, եւ «ութ մի»-ն մտցված է մահը կանխելու համար:

Ցուցայու՝ դեպի բարձր երկինք

Ցուցայու կամ ցուցյու՝ նշանակում է «հարված գնդակին». դա հին չինական ֆուտբոլի տեսակ է: Ցուցայուն արդեն ֆուտբոլ էր անվանվում Սուն հարստության օրոք /960-127/: Դրա ապացույցն է Յան Ի/974-1020/ «Սիկունի երգերի ժողովածու» /Սիկուն չոռչան զգի/ գիրքը, որը պարունակում է հետեւյալ տողը. «Ցուցայուի ժամանակ գնդակին խփում են ոտքով, այդ-տեղից էլ՝ ժամանակակից «ֆուտբոլ» անվանումը»:

Ցուցայուի տեսարաններ են պատկերված մեծ թվով չինական նկարներում: Դրանցից մեկի՝ Սուն հարստության գեղանկարիչ Սու Խանչենի /1094-1172/ հեղինակած «Երկարակեցություն եւ հարյուրյակ երեխաներ»-ի վրա պատկերված է ցուցայու խաղացող երեխաների խումբ: Նրանցից մեկը բարձրացրել է մի ոտքը՝ հարվածի նախազմբոշխման մեջ: Մեկ ուրիշում՝ Յուան հարստության /1271-1368/ նկարիչ Ցյան Սյուանի «Ցուցայու խաղի տեսարան» նկարում, պատկերված է Սուն հարստության Տանցու կամ Չժան Կուանին կայսրը /1239-1299/ ինք նախարարների հետ ֆուտբոլ խաղալիս, գնդակի համար պայքարող վեց խաղացողներ: Նույնիսկ կայսրն է մի պահ մոռացել իր դիրքի մասին՝ բոլորի պես վայելելով խաղը:

Խան հարստության /մ.թ. 206-220/ գրող Լյու Սյանը /մ.թ.ա. 77- 6/ իր ժողովածուներում /թելու/ հիշատակել է. «Ասում են, որ ցուցայույք հորինել է Ղեղին կայսրը կամ՝ Պատերազմող պետությունների ժամանակաշրջանում /մ.թ.ա. 475-221/: Ի սկզբանե դա եղել է զինվորներին մարզելու տարատե-

սակ, նրա միջոցներով կարելի էր տաղանդավոր գինվորներ գտնել: Զինվորները սիրում էին ազատ ժամանակ զվարճության համար ցուցայու խաղալ»:

Այդպես ասվում է, եւ սակայն պատմական փաստաթղթերը հավաստում են, որ սպորտի այդ ձեւը՝ Պատերազմող պետությունների ժամանակաշրջանում /մ.թ.ա. 475-221/ արդեն տարածված է եղել 8ի հշիսանությունում: Մարզաձեւով սկզբում զբաղվել են զինվորները: Խաղի ժամանակ նրանց հետեւել են եւ ըստ ընդունակությունների ընտրել լավ զինվորներին: Խաղը նաեւ լավ միջոց է եղել մարմնի վարժեցնան համար, ինչպես նաեւ՝ որպես բարաքների ձանձրակի կյանքից զվարճանալու միջոց:

Խան հարստության օրոք ցուցայուը դարձել է շատ տարածված: Խուան Տանը /՝-56թ./ իր «Յանտե» դասագրքում հիշատակել է. «Ազնվական ընտանիքները ներգրավված են եղել ցուցայուում եւ աքլորակռիվներում»: Ցուցայուի դաշտը եղել է ուղղանկյուն, իսկ գնդակը՝ կլոր, ինչը համապատասխանել է «ուղղանկյուն երկրի կլոր երկնքի» չինական գաղափարին:



*Ցուցայու խաղի
տեսարան: Նկարի
հեղինակն է Յուան
հարստության
գեղանկարիչ Սյան
Սյուանը /1239-1301/:
Նկարում պատկերված
են ցուցայու խաղացող՝
Սուն հարստության
հիմնադիր Չժառ
Կուանինը /թագավորել է
960-976թ./ եւ նրա
նախարարները:*

Յայտնի հյուրերի համար կառուցում էին հատուկ տրիբունաներ՝ այն դեպքում, երբ դաշտը պատված էր լինում բարձր պատերով: Խան Արեւելյան հարստության օրոք /25-220/ Լի Յուի /կյանքի տարեթվերը հայտնի չեն/ «Գնդակը եւ դաշտը» ակնարկում հիշատակվում է անկյունային քարը, որի վրա գրված էր, որ խաղին սովորաբար մասնակցում է երկու թիմ, յուրաքանչյուր թիմում՝ 12 խաղացող: Երկու կողմում կանգնած են դարպասներն ու մրցավարները: Այդ խաղի կանոնների մասին հիշատակություններ մեզ չեն հասել: «Արեւմտյան մայրաքաղաքի մասին ժողովածուներ»-ի /Սիցին ցացգի /համաձայն՝ Խան հարստության հիմնադիր Լյու Բանը /մ.թ.ա. 206-

195/ գահն ընդունելուց հետո կարգադրել է, որ իր հայրն ապրի Վեյյան պալատում, բայց ծերունու օրն անցնում էր վատ տրամադրության մեջ: Պարզվում է, որ նա ապրել է սովորական կյանքով ու սիրում է աքլորակրիվ եւ գնդակախաղ դիտել: Այդ մասին իմանալով, Լյու Բանը հոր պատվին նոր քաղաք է կառուցում՝ ցուցայուի մեծ դաշտով հանդերձ, ու դրանից հետո հայրն իր մոտ է հրավիրում իին ընկերներին եւ ապրում երջանիկ:



*Տաճ հարստության ժամանակների հայելի՝
պոլո խաղի պատկերով:*

Արդեն այն ժամանակ ցուցայուի խաղագնդակը եղել է կաշվե, բայց օդի փոխարեն՝ լցված պինդ նյութով: Օդով լցված գնդակը հայտնագործվել է Տաճ հարստությունում /618-907/: Դա դաշտում հետաքրքիր է դարձրել խաղը, որովհետեւ կաշվե գնդակն ավելի առաձգական է եւ կարող է բարձր թռչել դեպի ամպերը: Մարդիկ մեծ ուշադրություն էին հատկացնում խաղի մքնուրտին: Խաղի ընթացքում նրանք թմբուկ էին զարկում՝ այն ավելի հետաքրքիր դարձնելու համար: Բայց պայքարը փոքր-ինչ թուլացավ, երբ որոշվեց երկու կողմի դարպասները կանգնեցնել դաշտի կենտրոնում: Բավականությունը, սակայն, մեծացավ նրանից, որ հաղթողին ի հայտ բերելու համար հարկավոր էր հաշվել գոլերը: Օդով լցված գնդակը թեթեւ էր, եւ դրա համար մարդիկ ուրիշ զվարճություն մտածեցին. գնդակը ոտքով խփում էին դեպի վեր՝ բարձրությամբ: Յաղթող էր հանդիսանում ամենաբարձր տարածության վրա խփողը:

Ցուցայուը նպաստել է Տաճ հարստությունում սպորտի մեկ այլ տեսակի՝ պոլոյի զարգացմանը: Պոլոն առաջին անգամ երեւան է եկել Եռապետության /220-280/ ժամանակաշրջանում: Ավելի ուշ փոխանակությունն Արեւմտյան մարզերի եւ Չինաստանի միջեւ բարձրացել է, ու պոլոն այդ մարզերից հայտնվել է Չինաստանում, եւ դա հարստացրել է նրա սպորտը: Ցուցայուի տարածվածության շնորհիվ աճել է եւ պոլոյի հոչակը: Մի անգամ Տաճ հարստությունում պոլոյի մրցություն է տեղի ունեցել «Տուբո»

/Տիբեթ/ Եւ «Տան» թիմերի միջեւ: Ավելին՝ Տան հարստության 19 կայսրերից 11-ը տարվել են պոլոյով: Քաղաքից դուրս ու հենց մայրաքաղաք Չանանում կային պոլոյի շատ դաշտեր: Բացի նրանից, որ պոլոն զվարճության խաղ էր, այն նաև զինվորների մարզման միջոց էր: Այն քաղաքներում ու գյուղերում, որտեղ զորք կար, իսկ այդպիսիք շատ կային, կարելի էր հանդիպել պոլոյի խաղադաշտերի: Արքայազն Չժան Խուայյայի թաղման թունելի «Զարկելով սուրբ» որմնանկարում /Լի Սյան, 652-684/ հստակ երեւում է պոլո խաղի տեսարանը:



Պոլո խաղացողներ:
Տան հարստության
ժամանակների
արձանիկներ:

Սուն հարստության բնակավայրերի մշակութային զարգացումը մեծ հռչակ է բերել ցուցայույնին: Փոխվել է եւ հայացքն այդ խաղի նկատմամբ, որը դարձել էր ավելի զվարճային: Սուն հարստության մարդիկ ֆուտբոլը համեմատում էին թատրոնի հետ, նույնիսկ երեւան էին եկել ժամանակակից ֆուտբոլային միությունների նման կազմակերպություններ: Ցուցայուի լավ խաղացողը հասարակության մեջ բարձր դիրք էր գրավում: «Քայլերգի օրենքից դուրս» /Շուեյխու չժուան/ վեպում Գառ Ցյու անվան տակ կա մի աստիճանավոր, որն իրական պատմական անձնավորություն է եղել, եւ որին Սուն հարստության խուեյցզուն կայսրը /կ.թ.1101-1125/ բարձր էր գմահատում լոկ նրա համար, որ նա ցուցայուի լավ խաղացող է եղել:

Տան հարստության օրոք ցուցայուը դարձել է տարածված ժողովրդական խաղ, որը խաղում էին «Սառն ուտելիքի օրը»՝ Ցիննին տոնից մեկ օր առաջ: Տան եւ Սուն հարստությունների շատ պոետներ հորինել են բանաստեղծություններ, որոնցում նկարագրել են ցուցայու խաղն ու ճլորթին՝ հետաքրքիր կերպար հաղորդելով ժողովրդական այդ սովորույթներին:

Նմանապես Տան հարստության տիրապետության ժամանակ են ցուցայու խաղալ սկսել կանայք: Ցուան հարստության կառավարման ժամանակ արդեն կային կանանց արհեստավարժ թիմեր: Ցուան հարստության թատերագիր խան Ցինը /՝ մոտ.1300/ նույն վերնագրով /«Սյառվեյի կինը»/ երկու

բանաստեղծություն ունի, որոնցում նկարագրվում է ցուցայույ խաղացող կանանց տեսարան: «Սյառվեյը» եղել է արհեստավորների ամենաբարձր տիտղոսը Ցուցայույի միության Ցիյուն ընկերությունում: Նրանք հանդես են եկել ոչ միայն կանանց մրցություններում, այլև կանանց դեմ՝ տղամարդկանց: Նման տեսարաններ են պատկերված ցուցայույի տեսքով բրոնզե երկու հայելու վրա, որոնցից մեկը պահպանվում է Զինաստանի պատմության թանգարանում, մյուսը՝ Խունանի:



30. Գո՝ ուղեղների խաղ

Գոն սեղանի խաղ է եւ Զինաստանում ծնվել է շուրջ 4000 տարի առաջ: Իսկ ավելի քան 1000 տարի առաջ այն ներկայացվել է Կորեական թերակղզուն ու ճապոնիային՝ դաշնալով տեղի բնակչության սիրելի ժամանցը: Գոն հիմա էլ անգամ մշակութային փոխանակության առարկա է ծառայուն Զինաստանի, Կորեայի եւ ճապոնիայի ժողովուրդների միջեւ, որոնք տարին մի քանի անգամ կազմակերպում են տարբեր մրցախաղեր:

Գոն ոչ միայն մրցակցային, այլև զվարճության խաղ է: Վաղեմի ժամանակներում կրթված մարդկանց աշխատասեղաններին միշտ առկա է եղել գո խաղով տուփը: Երբ տունը հյուր եկող էր լինում, տանտերը նրա հետ հաճելի գինու հետ միասին գոյի մի ավարտուն խաղ էր վայելում: Ինչպես ասված է բանաստեղծության մեջ՝ «Թեյը վայելել մինչեւ մայրանուտ, / Շետո խաղալ գո՝ մինչեւ տարվա վերջ»: Քաղաքներում ու գյուղերում միշտ կարելի էր հանդիպել գո խաղացող գույգերի՝ շրջապատված անցորդներով, որոնք խաղին հետեւելուց բավականություն էին ստանում ոչ պակաս, քան խաղացողները՝ խաղից:

Խաղը Փոտած կացնի սարում

Գոյություն ունի լեզենդ գոյի նկատմամբ խոր կապվածության մասին: Մի անգամ Ցզին հարստության /265-420/ փայտահատ Վան Չժին փայտի համար սար է գնում եւ ճանապարհին հանդիպում գո խաղացողների: Նա կանգ է առնում, հետեւում խաղին ու մոռանում փայտի մասին: Խաղացողներից մեկը խաղի կեսին նրան հիշեցնում է. «Քեզ հարկավոր է տուն գնալ, նայի՞ր՝ կացինդ արդեն փտել է»: Վան Չժին սարից շտապ գյուղ է աճապարում, բայց երբ տեղ է հասնում, տեսնում է ընտանիքն այլեւս այնտեղ չէ, գյուղի մարդիկ էլ բոլորովին անծանոթ են: Սիայն հին ջրհորն է նրան համոզում, որ դա իրոք իրենց գյուղն է:

Այս պատմությունը «Յոթ օրը սարերում՝ ինչպես հազար օրն աշխարհում» իին չինական ասացվածքի աղբյուրն է դարձել: Չժենցզյան գավառի Ցյույչժոու տարածքում իսկապես գոյություն ունի Փտած կացնիսար: Ասուն են, թե դա հենց լեգենդի տեղն է: Շետագայում գո խաղի մեկ այլ անվանումը դարձավ «Վիտած կացին»: Բարձր մակարդակի գո խաղացողները երբեմն հովհարների կոթերին գրում են չին. /Վիտած կացին/ ու նվիրում ավելի ցածր մակարդակով խաղացող մտերիմներին:

Ավանդական
ամանորյա նկար:
Աջ կողմի երկու
կանայք
պատրաստվում են
գո խաղալ:



Գո խաղալն օգնում է բանականության հանգստացմանը: Պարզ օրը կարելի է գո խաղալ՝ գրուցելով կյանքի ու պատմության մասին: Կամ էլ լուսնյակ գիշերով երկու ընկեր կարող են նստել գոի խաղատախտակի առջև՝ բաժակից դանդաղ թեյ վայելելով: Նման պահերին թվում է, թե լուսնյակի լույսից բացի ոչինչ գոյություն չունի, երկու ընկերով ընկել եք խոհերի գիրկը:

Խաղի իմաստնությունը

Գո խաղից կարելի է իրական կյանքի համար շատ եզրահանգումներ անել: Յենց դրա համար էլ այն համբավ է ձեռք բերել ինչպես խաղացողների, այնպես էլ հանդիսատեսի դերում խաղին ներկա գտնվողների համար:

Գոն իրենից ներկայացնում է սեւ-սպիտակ խաղանիշներով /181՝ սեւ, 180՝ սպիտակ/ քառակուսի սեղան: Գոյի աշխարհը կազմված է քառակուսի խաղատախտակից եւ կլոր խաղանիշներից: Տախտակն անշարժ է, իսկ խաղանիշները կարելի է տեղաշարժել անհաշիվ անգամ: Այդպիսին է եւ կյանքը՝ բազմաթիվ շրջադարձերով:


Գոյի խաղատախտակի վրա կան 361 /ավանդության համաձայն՝ տարվա օրերի չափ/ տրամախաչումներ կազմող հորիզոնական եւ ուղղահայաց 19-ական հատվող ուղիղներ: Ուղիղների հատման տեղերում ինը կլոր կետերն արտահայտում են երկնքի աստղերը:

Գո խաղը կարող է շատ դասեր տալ կյանքի համար. Երկընտրանք՝ երբ դու գերազանցություն ունես, հանդուգն քայլ անել՝ երբ չորս կողմից շրջապատված ես, ինքնագոհություն՝ երբ հաղթանակն արդեն հեռու չէ, չափից ավել հուզմունք՝ հաղթանակի կամ պարտության հանդեպ, չափազանց ուժեղ հարձակում՝ երբ ամեն ինչ հակված է պարտության: Գո խաղի վարպետները միշտ մտածում են, որ իրենք խաղում են կենդանի խաղ. Երբեմն հարկավոր է ուժեղացնել հարձակման թափը, երբեմն էլ թուլացնել, երբեմն՝ հակառակորդի հետ հանդիպել երես առ երես, երբեմն էլ՝ շրջանցել կողքից: Գոյի փոքրիկ խաղանիշների ճիշտ դասավորվածությունը նման է կյանքի խնդիրները լուծելուն:

Խաղաղ խաղ

Գո խաղացողները սեւ խաղանիշները կոչում են «ազռավ», սպիտակները՝ «որոր»: Դրանք խաղատախտակի վրա դասավորված են գետափի թռչունների պես:

Խաղում թռչունների անվան օգտագործումն ապացուցում է, որ գոն բանարվեստի խաղ է՝ ոչ թե հակամարտության:



Դրվագ «Խունլոմեն» դասական վեպից: Գեղանկարի հեղինակը Ցառ Սյուցինն է /մոտ. 1724-1763/: Գո խաղալը լավագույն ժամանցն է այս վեպի ազնվականների համար:

Գո խաղացողները չեն «սպանում» մրցակցի խաղանիշին: Դրա փոխարեն պարզապես ձգտում են շահել ավելի շատ տարածք՝ տեղ թողնելով նաեւ մրցակցի համար: Խաղավերջին երկու խաղացողի համար էլ տեղ շատ է լինում: Յաղթողն, անշուշտ, ավելի մեծ տարածք է զբաղեցնում, թե՛ւ սովորաբար առաջ է լինում ընդամենը մեկ քառորդի չափ խաղանիշներով: ճատրակում, այդ թվում՝ եւ չինականում, ընդհակառակը՝ խաղացողները ձգտում են ոչնչացնել մրցակցի խաղաքարերը, եւ հաղթող համարվում է մրցակցի հրամանատարին մերյալ անկյուն քշողը: Գո խաղն ընդգծում է խաղաղ մրցակցությունն ու գոյակցությունը՝ այն դեպքում, երբ ճատրակում մրցակցային մարտ է ընթանում: Թեեւ չինական ճատրակը Չինաստանում նույնական տարածված խաղ է, գոն պարունակում է ավելի խոր մշակութային եւ ինաստասիրական գիտելիքներ:

Գոյ նպատակը միայն հաղթանակը չէ, այլեւ, ինչն ավելի կարեւոր է, գործընթացուն ինաստանության որոնումը: Յաղթանակն ու պարտությունը ժամանակավոր են, ոչ ոք չի կարող մնալ անհաղթ: Գոյ մասին տարածված արտահայտությունն ասում է. «Յասարակ հաղթանակի հաստատումը չի կարող լավ խաղ արարել»: Սա ցույց է տալիս չինական փիլիսոփայության մեջ չիաստատման սկզբունքի նշանակալիությունը, որը նկարագրել է Չժուանցզին /մ.թ.ա.369-286թ./: Քննադատելով Խուեյցզիի /մոտ մ. թ.ա. 370-310 թթ./ տրամաբանությունն այն բանի համար, որ նա լավ է եղել միայն վեճերում, Չժուանցզին ասել է. «Վեճ շահելն անհմաստ է»: Վեճից ինաստնություն չի գումարվում:

Գո խաղի բարձրագույն նպատակը հանդիսանում է ներդաշնակությունը: Խաղատախտակի առջեւ խաղացողները միանում են միմյանց: Որպես հակառակորդ կռվելու փոխարեն նրանք համագործակցում են լավ խաղի համար: Այսինքն՝ գո խաղացողները երբեք չեն մտածում հակամարտելու մասին: Խաղացողի իսկական ստուգում կարելի է կոչել նրա գերազանցությունը հաղթանակի կամ պարտության գաղափարի նկատմամբ: Սուն Յյուսիսային հարստության /960-1127/ ականավոր բանաստեղծական տաղանդ Սուն Դունայն /1037-1101/ գոյ լավ խաղացող է եղել եւ կիսել է «Յաղթելը հաճելի է, զիջելը՝ նույնական» գաղափարը: Գո խաղի գծով ժամանակակից տաղանդ Ուն Ցինյուանը /ծնվ. 1914թ./, որը տեղափոխվել է ճապոնիա եւ այնտեղ կարիերա ստեղծել, ասում է՝ գո խաղը «խաղաղ ներդաշնակության որոնում է»:

Խոսակցություն ձեռքբերով

Զինաստանում գո խաղը կոչում են «խոսակցություն ձեռքբերով», որոնց միջոցով խաղացողները շփվում են միմյանց հետ: Այլ կերպ ասած՝ «խոսել» խաղատախտակի խաղանիշները տեղաշարժելու միջոցով: Այս փոխարերությունը հորինել է Ցզին հարստության /265-420/ բուդյայականության ուսուցիչ Չժի Դաոլինը /314-266/: Այն ժամանակ, երբ գիտնականները բանավիճում էին կյանքի ու Տիեզերքի մասին, նա գո էր խաղում, որը, նրա խոսքով, լի է կենսական հարցերով:

Մի խոսքով՝ գո խաղի խաղընկերները սովորաբար միմյանց հարգող մտերիմներ են: Միայն միմյանց սազական խաղացողները կարող են ոգեշնչել իրար: Ասիա թե ինչու գո խաղի վարպետները երբեմն գանգատվում են արժանի «մրցակիցների» բացակայությունից: Ժամանակակից խաղացող Մա Սյառչունը /ծնվ. 1964/ մի անգամ ասել է. «Երբ ես խաղում եմ այնպիսինի հետ, ով կարող է զգալ իմ քայլերը, ես բավականություն եմ ստանում նման յուրաքանչյուր քայլից»:

Դրա համար էլ խաղալով գո՝ խաղում ես ոչ թե մրցակցի, այլ բարեկամի հետ: Սկսելով դատարկ խաղատախտակից՝ երկու խաղընկերները ձգտում են այն լցնել միասին: Լավ խաղի համար նրանք պետք է մրցակցեն, որովհետեւ անգամ մեկ անհմաստ շարժումը կարող է փչացնել խաղից ստացած անբողջ հաճույքը: Գո խաղի փիլիսոփայությունը մրցակցության փիլիսոփայություն է եւ ամբողջությամբ վերցված՝ կյանքի՝ փիլիսոփայություն:

Չինաստանի պատմության համառոտ ժամանակագրություն

夏	Այս հարստորյուն	2070-1600 մ.թ.ա.	
商	Շան հարստորյուն	1600-1046 մ.թ.ա.	
周	Չժոռն հարստորյուն	1046-256 մ.թ.ա.	
周	西周 Չժոռն Արևմտյան հարստորյուն	1046-771 մ.թ.ա.	
	东周 Չժոռն Արևելյան հարստորյուն	770-256 մ.թ.ա.	
秦	Ցին հարստորյուն	221-206 մ.թ.ա.	
汉	Խան հարստորյուն	206 մ.թ.ա. - 220	
汉	西汉 Խան Արևմտյան հարստորյուն	206 մ.թ.ա. - 25	
	东汉 Խան Արևելյան հարստորյուն	25-220	
三国	Երեք պետություններ	220-280	
三国 Երեք պետություններ	魏 պետություն	220-265	
	蜀 պետություն	221-263	
	吴 պետություն	222-280	
晋	Ցզին հարստորյուն	265-420	
晋	西晋 Ցզին Արևմտյան հարստորյուն	265-317	
	东晋 Ցզին Արևելյան հարստորյուն	317-420	
南北朝	Հարավային և Հյուսիսային հարստորյուններ	420-589	
南北朝 Հարավային և Հյուսիսային հարստորյուններ	南朝 Հարավային հարստորյուններ	420-589	
	南朝 Հարավային հարստորյուններ	宋 Սուն հարստորյուն	420-479
		齐 Ցի հարստորյուն	479-502
		梁 Լյան հարստորյուն	502-557
		陈 Չեն հարստորյուն	557-589
	北朝 Հարավային հարստորյուններ	386-581	

南北朝 Հարավային և Հյուսային հարստություններ	北朝 Հյուսիսային հարստություններ	北魏 Վեյ Հյուսիսային հարստություն	386-534
		东魏 Վեյ Արևելյան հարստություն	534-550
		北齐 Ցի Հյուսիսային հարստություն	550-577
		西魏 Վեյ Արևմտյան հարստություն	535-556
		北周 Չժոռ Հյուսիսային հարստություն	557-581
		隋 Սույ հարստություն	581-618
五代 Հինգ հարստություններ	五代 Հինգ հարստություններ	唐 Տան հարստություն	618-907
		五代 Հինգ հարստություններ	907-960
		后梁 Ուշ Լյան հարստություն	907-923
		后唐 Ուշ Տան հարստություն	923-936
		后晋 Ուշ Ցին հարստություն	936-947
		后汉 Ուշ Խոան հարստություն	947-950
宋 Սուն հարստություն	宋 Սուն հարստություն	后周 Ուշ Չժոռ հարստություն	951-960
		宋 Սուն հարստություն	960-1279
		北宋 Սուն Արևմտյան հ-ն	960-1127
		南宋 Սուն Հարավային հ-ն	1127-1279
		辽 Լյան հարստություն	907-1125
		金 Ցզին հարստություն	1115-1234
明 Չինաստանի Հանրապետություն	明 Չինաստանի Հանրապետություն	元 Յուան հարստություն	1206-1368
		明 Սին հարստություն	1368-1644
		清 Ցին հարստություն	1616-1911
		中华民国 Չինաստանի Հանրապետություն	1912-1949
		中华人民共和国 Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	Հիմնադրվել է 1949 թ. հոկտեմբերի 1-ին

Տեղանունների տեղեկատու

Անվանում	Պի՛շին	Հիերոգլիֆներ	Լ:ջ
Բեյխայ լիճ	Բեյխայ	北海	162
Չանգակատուն	Չժուն Լոռու	钟楼	80,78
Յանլան այգի	Յանլան Տին	沧浪亭	133
Չինաստանի դարպասներ	Չժունխուա Մեն	中华门	133
Երկնքի զոհասեղան	Յուանցյուն	圜丘	38
Դասյանգուն տաճար	Դասյանգուն Սը	大相国寺	160
Դացզուի քարե հուշարձանները	Դացզու շիկե ֆույան	大足石刻佛像	99
Խմբկային աշտարակ	Գու Լոռու	鼓楼	78
Թոշող շատրվանի տաղավար	Ֆեյցուան Չեն	飞泉亭	134
Արգելված քաղաքը	Ցզըցզին Չեն	紫禁城	77, 78, 80
Առջևի դարպասներ	Ցյան Մեն	前门	161
Երկնային բարենպաս- տության դարպասներ	Չևայան Մեն	承天门	78
Մշակման Աստծոն տաճար	Շենու Մեն	神武门	77
Զմեռային հանգստության դարպասներ	Դիան Մեն	地安门	78
Հավերժական հանգս- տության դարպասներ	Յունդին Մեն	永定门	80
Երկնային հանգս- տության դարպասներ	Տյանան Մեն	天安门	78

Անվանում	Պինհա	Հինգոլիքներ	ԼՇ
Ազնվորյան դարպասներ	Դուան Մեն	端门	78, 81
Չինական մեծ պարիսպ	Չանչեն	长城	46, 71-75
Գուանյուն շենք	Գուանյուն Լոռու	冠云楼	129
Գուանյուն գագաթ	Գուանյուն Ֆևն	冠云峰	129
Ոգու զարգացման դահլիճ	Յանսին Դյան	养心殿	108
Անձրեսի դահլիճ	Տինյու Սյուան	听雨轩	134
Ներդաշնակության պահ-պանան դահլիճ	Բաոլյան Դյան	保和殿	79
Լրիվ ներդաշնակության դահլիճ	Չժունյան Դյան	中和殿	79
Երկրային հանգստության դահլիճ	Կուննին Գուն	坤宁宫	80
Երկնային մաքրության դահլիճ	Ցյանցին Գուն	乾清宫	80
Գրական փառքի դահլիճ	Վենյուան Դյան	文华殿	79
Ռազմական արիության դահլիճ	Ուին Դյան	武英殿	79
Հնաձի աղոքքների դահլիճ	Ցինյան Դյան	祈年殿	35-36, 38
Թարձրագոյն ներդաշնակության դահլիճ	Տայլյան Դյան	太和殿	79-81
Միավորման և խաղաղության դահլիճ	Ցյանցին Գուն	交泰宫	80
Ներդաշնակության այգի	Սեցոյ Յուան	谐趣园	134
Կայսերական ընտանեկան սրբավայր	Տայ Սյան	太庙	78
Կայսերական պետական սրբավայր	Շեցզի Տան	社稷坛	78
Երկնիքի կայսերական դամբարան	Խուանցյունյու	皇穹宇	38
Նեքրիստն գետակի լեռը	Յուցուան Շան	玉泉山	133
Երջանիկ երկարակեցորյան դահլիճ	Լեշոն Տան	乐寿堂	130

Անվանում	Պիմին	Հիերոգլիֆներ	Էջ
Կունմին լիճ	Կունմին հով	昆明湖	131, 134
Լյանի տաղավար	Լյանի Տին	两宜亭	133
Լյույուան այգի	Լյու Յուան	留园	133
Լունմենի քարայրներ	Լունմեն Շիկու	龙门石窟	99, 102-103
Լոտոսի և քամու տաղավար	Խափսն Սըմյան Տին	荷风四面亭	134
Մայզզիշանի քարայրներ	Մայզզիշան Շիկու	麦积山石窟	101
Միջօրեական դարպասներ	Ու Մեն	午门	78
Մոգաոյի քարայրներ	Մոգան Կու	莫高窟	99-100
Լուսնի և քամու տաղավար	Յուզյան Ֆենլայ Տին	月到风来亭	134
Պալատական թանգարան	Գուգուս Բոուգուան	故宫博物院	108, 121
Բարգավաճման բլուր	Յզին Շան	景山	78, 80
Շանգրիլա	Սյանգելիյա	香格里拉	205
Շաոլին տաճար	Շաոլին Սը	少林寺	214, 217
Ծլսի և անձրեսի դահլիճ	Յանյու Լոռ	烟雨楼	134
Ամառային պալատ	Իխս Յուան	颐和园	127, 130, 131, 133, 134
Սուն Յարսեն գրոսայգի	Չժունչան Գունյուան	中山公园	78
Մշակման Աստծո տաճար	Սյաննուն Տան	先农坛	77

232 / Չինաստանի մշակույթի քրեստոնատիա

Անվանում	Պինին	Հինրողիկօներ	Էջ
Վաղնջական պաշտամոնքի տաճար	Ֆենյան Սը	奉先寺	103
Երկնի տաճար	Տյանտան	天坛	35-38
Թրծակավե գորք	Բիննա Յուն	兵马俑	93-94
Երեք արժեքավոր աշխատանքներ	Սանսի Տան	三希堂	108
Տյանանման իրապարակ	Տյանանմեն Գուանչան	天安门广场	78
Վազրի բլոր գրոսայզի	Խուցյու Գունյուան	虎丘公园	133
Վանցյան կամուք	Վանյան Ցյառ	望仙桥	210
Բանվորների մշակութային պալատ	Լաորուն Ծենսին Վևնյուագուն	劳动人民文化宫	78
Յուլուն լեռ	Յուլուն Սյուեշան	玉龙雪山	205
Յունգանի դամբարաններ	Յոյզան Ծիկոն	云冈石窟	99
Չժոչժեն այգի	Չժոչժեն Յուան	拙政园	128

ԶԻՆԱՏԱՆԻ ՄԵՍԿՈՒՅԹԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

Հեղինակներ՝
Ե Լանգ
Չժու Լյանչժի

Թարգմանություն ռուսերեն տարբերակից:

Թարգմանիչ՝ Նվարդ ԱՎԱԳՅԱՆ

Հրատ. Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Էջաղբումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձևավորումը՝ Մ. Դրավյանի



Ոգի-Նարի

Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

Հեռ.: +37497252323

Թուղթը՝ օփսեթ, չափսը՝ 70x108 $\frac{1}{16}$; Ծավալը՝ 14.75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզայն պլոտ» հրատարակության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

Գրքի՝ չինարենից ռուսերեն թարգմանությունն իրականացրել է

Պեկինի արտասահմանյան լեզուների համալսարանին կից՝
չինարենի միջազգային զարգացման բազմալեզու կենտրոնը:

Ռուսերեն թարգմանությունը՝ Տուկին Յունուսովի:



网址: <http://www.fltrp.com>

«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչություն» (Պեկին, Չինաստան)